906.2
Ե-86

ԵՐԵԲՈՒՆԻ ԵՐԵՎԱՇԵՆ

Ս. Փ. ՄՈՒՐՈՂՅԱՆ
Վ. Ե. ՈՍԿԱՆՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՆ

Ս. Փ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Վ. Ե. ՈՍԿԱՆՅԱՆ

ԷՐԵԲՈՒՆԻ ԵՐԵՎԱՆ

Ակոնատեսների համար

865

«ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1974

902-6(С43)
Է 86

Հազարամյակների իրադարձությունների վկան է եղել Էրեբունի Երևանը։ Հայոց հնագույն ամրոց-քաղաքը ստեղծման իսկ օրից և, մանավանդ, հետագա դարերում, պատերազմական գործողությունների թատերաբեմ է հանդիսացել։ Այդ մասին են պատմում ոչ միայն մեր լեռնաշխարհի նյութական մշակույթի հնագույն պատառիկները, այլև հայկական ու օտարալեզու շատ գրավոր աղբյուրներ, որ կարելի է գտնել թանգարաններում, արխիվներում, գրապահոցներում...

Լրագրողներ Սարգիս Մուրադյանն ու Վարուժան Ոսկանյանը տարիներ շարունակ ի մի են հավաքել Երևանի մասին վկայություններն ու տեղեկությունները, որ ներկայացնում ենք ընթերցողին։

Գրքի առանձին բաժիններում ընթերցողը կգտնի վիմագիր արձանագրություններից, պատմական հուշարձաններից, ինչպես նաև Երևանին նվիրված գրական, գեղարվեստական գործերից, օտար լեզվով ու դրսում ժամանակագրական աղբյուրներից քաղված արժեքավոր նյութեր։

Саргис Пилипосович Мурадян
Варужан Ервандович Восканян

«Эребуни — Ереван»

(На армянском языке)

Издательство «Айастан»
Ереван — 1974

ՀԻՆ ԵՐԵՎԱՆԸ

Աշխարհում քաղաքներ շատ կան։ Կան մեծ, փառաբանված քաղաքներ, կան փոքր՝ աննշան քաղաքներ, կան քաղաքներ, որ նոր են ծնվում և թերևս քարտեզների վրա դեռ չեն նշված։ Այդ քաղաքներից յուրաքանչյուրն ունի իր դեմքը, ճարտարապետական իր ոճը, բարքերը, ավանդույթները, ունի իր զարգացման հեռանկարները։ Քաղաքը, ինչպես և ամեն մի ուրիշ բնակավայր, կառուցվում ու շենանում է սերնդից սերունդ՝ միևնույն է, նոր է այն, թե հին։ Յուրաքանչյուր քաղաքացի իր օրրանի երկրպագուն է, իր քաղաքի զավակը՝ նախանձախնդիր նրա բարգավաճման ու ապագայի նկատմամբ։

Երևանը հազարամյակների պատմություն ունի։ Աշխարհում շատ քիչ քաղաքներ ունեն նման պատկառելի հասակ։ Մենք հպարտ ենք մեր քաղաքի հզոր գործարաններով, նորակառույցներով, նետասլաց պողոտաներով, ծառաշատ պու-

բակներով, պաղպաջուն լճակներով և այն ամենով, ինչը նոր է, ինչը ծնվել է երեկ, ծնվում է այսօր և ծնվելու է վաղը։

Որքան սքանչելիքներ կան մեր քաղաքում։ Անցնում ես նոր փողոցներով ու զարմանում. այս ե՞րբ կառուցվեց, այս ո՞վ կառուցեց... Ու, թերևս, մի վայրկյան մոռանում ես, որ քո արյունից մի կաթիլ, քո բազկից մի մկան, քո մտքի փայլատակումն ես տվել այս ամենի համար։ Մի պահ գլուխ ես խոնարհում այն մարդկանց առջև, որոնք այս ամենի համար արդար քրտինք են թափել և ում բազուկը քարը քարին է դրել ու քեզ հանձնել այսօրվա Երևանը։

Խոնարհիր գլուխդ, ով երևանցի և մի մոռացիր, որ խոնարհվում ես ամենից առաջ քո ժողովրդի հանճարի առջև, հանճարեղ Թամանյանի նախագծած շենքերի և այն ամենի առջև, ինչը հիացում է պարգևում ամեն մի այցելուի։ Մի մոռացիր, որ դու ես քո երկրի, քաղաքի տերը, որ տքնել ու կառուցել ես քո սերնդի ու քո որդոց բարօրության, քո հայրենիքը շենացնելու համար։ Ու այն ամենը, որ կա ու կլինի, վկայելու է քո ժողովրդի ճարտարապետության, անկոտրում ուժի ու վսեմ ոգու արժանիքների մասին։

«Այս ե՞րբ կառուցվեց, այս ո՞վ կառուցեց... Ո՞վ դրեց հիմնաքարը մեր հին ու նոր Երևանի»։

... Պեղում էր հնագետը աշխարհը հայոց. պեղում էր, դարերի հողը դեն նետում, լույս աշխարհ հանում տաճարներ շքեղ, պալատներ հնամենի, հուշարձաններ անցած օրերի հերոսների ու անթիվ գանձեր հինավուրց մշակույթի։

Պեղում էր...

Ու մի օր էլ նրա բրիչը քարերի երկիր Հայաստանի Արին-

Բերդում լույս աշխարհ հանեց այս քարե վկայականը Երևանի ու կարդաց.

«Խալդյան մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս բերդը հոյակապ կառուցեց սույն 10 հազար քարից, կոչեցին քաղաք Էրեբունի անվամբ (որպես) Բիայնա երկրների փառք, Թշնամու երկրներին ի սարսափ»։

Մարդկային քաղաքակրթության արշալույսին մեր նախահայրերը՝ ուրարտացիները, շինարարության ասված են ունեցել։ Էրեբունի՝ նշանակում է հաղթանակ. դա հաղթանակ էր ոչ թե թշնամուն պարտության մատնելու, կամ ճակատամարտը շահելու, այլ մի բովանդակ ժողովրդի շինարարության մղելու համար։ Էրեբունին հայ ժողովրդի շինարարության անձնագիրն է։

Էրեբունիի հիմնադիրը՝ Արգիշտի արքան համոզված էր, որ աշխարհում աղեղները լարված չեն մնա, և մարդկային սխրանքի, առաքինության չափանիշը ոչ թե զենքի հաղթանակն է, այլ բրիչով կերտվածը։ Հայերը այս աշխարհում պետք է ապրեն կառուցողի իրավունքով.

«Հայկա զավակներ։ Ես ձեզ եմ ասում.

Կարճ կյանք ունեն բոլոր նետերը։ Ես չեմ կարծում, որ մեր հետնորդները մի նետաչափ հեռավորությունից կտեսնեն փոքրիկ ասեղը։ Նետով ձեռք բերած մեր փառքը ասեղի չափ կերևա նրանց աչքին։

Հայկա զավակներ։ Հանուն Բիայնա երկրի հզորության, ես պատգամում եմ.

Սովորեցեք ջրանցքներ ու պալատներ կառուցել, սովորեցեք մշակել հողը, քաղցրահամ դարձնել խաղողի ողկույզները։ Ձեր բազկի ուժով շենացրեք Բիայնան։ Թող մեր շտեմա-

թանները միշտ լցված լինեն միայն մեր հողի բարիքներով։ Հիշեցեք և հաղորդեցեք որդից-որդի, որ ավարը մկան պես կկեղտոտի Բիայնայի ամեն մի շտեմարան։

Բիայնա երկրի յուրաքանչյուր գերդաստան պետք է ունենա առնվազն մի շինարար այր»[1]։

* * *

Ու շինարար վարպետի երգով Արարատյան դաշտում, Մասիսների հայացքի տակ ծնվեց Երևանը։

Արին-Բերդի այս կոթողի ստեղծող ճարտարապետի կյանքը, թերևս, կարճատև է եղել։ Բայց նրա մտքի արգասիքը մեր սերնդին 2754 ձիգ տարիներ հետո էլ երազանքի է մղում։ Հայաստանի պատմության թանգարանի հուշարձանների շարքում ցուցադրվում է փայտյա մի արձանիկ, որը վերջերս է պատրաստվել։ Այն պատկերում է նիզակով, նետ ու աղեղով և սրով զինված մարդու։ Ռազմիկը կրում է ծոպերով և ուրարտական զարդանախշերով հագուստ։

Դա ուրարտական Էրեբունի հնագույն քաղաք-ամրոցի խորհրդանիշն է, որը, հնագետների կարծիքով, ստեղծվել է բնակավայրի հիմնադրման ժամանակ՝ մ. թ. ա. 782 թվականին։

Այդ արձանի համար հիմք են ծառայել պեղումների ժամանակ հայտնաբերված իրերեն ապացույցները, գիտական ուսումնասիրությունները։ Դրանցից ամենակարևորը և հավաստին ուրարտական թագավոր Արգիշտի Առաջինի վկայությունն է, որը տարիներ առաջ Կարմիր Բլուրում հայտնաբերել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկու ղեկավարած արշավախումբը։ Այստեղ գտնված բրոնզե սկավառակի վրա Էրեբունիի հիմնադիրը գրում էր, որ քաղաքը կառուցելու ժամանակ պատրաստվեց փայտյա մի առարկա։

Հետագայում հնագետները նույն տեղում փլատակներից դուրս բերեցին փայտյա արձանիկներ։ Դրանք թեև զգալիորեն վնասված էին, բայց պահպանվել էին զենքերի հետքերը, գլխի օղերը և այլն։ Այս հանգամանքը կասկած չի թողնում ասելու, որ բրոնզե պատվանդանի վրա պետք է կանգնեցված լինի այս արձանիկներից մեկը։

Գիտնականների տեսակետը հաստատում է նաև այն, որ Էրեբունին եղել է ամրոց, մի հզոր զորանոց Ուրարտական պետության հյուսիսային սահմանապահին։

Հետևաբար, նրա հիմնադրման պատվին ստեղծված քանդակը ամենից առաջ պետք է խորհրդանշեր տերության սահմանները պահպանող մարտիկին։

* * *

«Երևան,
Քաղաք Նոյան լեգենդի,
Ապրում ես՝ ոտքդ դրած անցյալին,
Դարերին անտիկ,
Դու՝ հնագույնը այս աշխարհի մեջ,
Հնագույն քաղաք,
Չնայած դրան՝ քո ժողովուրդը, ժողովուրդ է նոր,

[1] Հ. Խաչատրյան, «Էրեբունի», 1968 թ., Երևան։

Սոցիալիստական,
Լուսավոր երկիր,
Որը տանիքն է այս Հին Ասիայի»։

Ճապոնացի բանաստեղծ Սուգավարա Կացումիի երգած՝ «Հին Ասիայի տանիքը» սակայն միշտ չէ, որ կանգուն է մնացել։ Դարերը, ժամանակի անողոք ձեռքը ավերել են քաղաքը, հրի ու սրի մատնել...

Մոտ 1500 տարի Էրեբունի-Երևանը մնացել է անհայտության մեջ։

Երևան անունը առաջին անգամ հիշվում է VII դարի սկզբին՝ Աբրահամ կաթողիկոսի կողմից Դվինում զումարված եկեղեցական ժողովում։ Այդ ժողովին մասնակցած մյուս նշանավոր կրոնապետների հետ միասին, հրավիրվել է նաև «Դավիթ Երեց Երևանայ»։ Արաբական արշավանքների սկզբներին պատմագիրների մոտ Երևանը հիշվում է իբրև գյուղաքաղաք՝ իր ամուր բերդով։

Պատմիչ Սեբեոսը նշում է. «Եվ մյուս տարվա սկզբին (642—643 թթ.) Իսմայելի զորքը եկավ Ատրպատական ու բաժանվեց երեք մասի։ Մի մասը առաջացավ (գնաց) դեպի Այրարատ, մյուս մասը՝ սեփական գնդի կողմերը, երրորդը՝ դեպի Աղվանք (Աղվանից աշխարհ)։ Սեփական գնդի կողմերը արշավողները տարածվեցին և անցնելով տեղից տեղ, սրով, սուսերով (սրի ուժով) գրավեցին ավար և գերեցին մարդկանց։ Եվ եկան հավաքվեցին Երևանում և կռվեցին Բերդում և չկարողացան գրավել (բերդը)»[1]։

[1] Պատմութիւն Սեբէոսի Ի Հերակլ, Թիֆլիս, 1913 թ.

* * *

Վերոհիշյալ պատերազմի մասին իր «Պատմություն Հայոց» գրքում ակնարկում է X դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին.

«Ասում են՝ այն ժամանակ (այսինքն՝ Անաստաս պատրիարքի օրոք՝ 661—665 թթ.) Երևան քաղաքագյուղում՝ գյուղաքաղաքում կռիվներ են եղել, որոնք շատ բան են ասում, ուսուցանում են այն պատերազմի հանգամանքները, նախքան մեր պատմագրելը»[1]։

* * *

Երևանի մասին տարբեր ժամանակներ հիշատակել են նաև Ղևոնդ Երեցը, Ասողիկը և Սամվել Անեցին։

Անիի վիմագիր արձանագրություններից մեկում հիշատակվում է, որ «Տիգրան Հոնենցը 1215 թվականին Անիում կառուցել է Սուրբ Գրիգորի վանքը և ուրիշ շատ նվերների շարքում վանքին պարգևել է մեկ այգի՝ «Երևանից»[1]։

Մի ուշագրավ փաստ ևս։ Երևանի Կաթողիկե եկեղեցու 1936—37 թթ. պեղումներից բացված՝ XIII դարին պատկանող փոքր հուշարձանի՝ ժամատան հարավային պատի վրա փորագրված Մահմադինի արձանագրությունից պարզվում է, որ Անիի խոշոր առևտրա-վաշխառուական կապիտալի աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը 1264 թվականին գնել է Երևանը՝ իր հողով ու ջրով։

XV դարի հայերեն ձեռագրերի մի շարք հիշատակարան-

[1] Տե՛ս. Ա. Միրզոյան, «Հին Երևանի պատմությունը», Երևան, 1957 թ.։

ներում Երևանը անվանվել է գյուղաքաղաք, քաղաք, իսկ մի այլ հիշատակարանում՝ գրված մինչև 1405 թվականը, նաև մայրաքաղաք.

«Այդ և ես՝ եռնյալ և զառամյալ Ներսես անուն, որ Մոգերի երկրի Սուրա գյուղից եմ, դուրս եկա, ելա իմ երկրից, հասա մայրաքաղաք Երևան»[1]։

* * *

Հայտնի է, որ 1441 թվականին կաթողիկոսական գահը Կիլիկիայից էջմիածին տեղափոխելու ժամանակ Թովմա Մեծոփեցին 300 վարդապետների, եպիսկոպոսների և քահանաների հետ անցել է Երևանով։ Երևանը նա կոչել է գյուղաքաղաք, իսկ նրա տիրակալ Ազուպ-Բեկին որակել է որպես բռնակալ։

Այս ժլատ պատմական տեղեկությունները հիմք են տալիս ասելու, որ VII դարի սկզբից մինչև XV դարի կեսը այսօրվա Երևանի տեղը եղել է մի փոքր գյուղաքաղաք՝ Ծերենցի խոսքերով ասած՝ «Մեծ ավան», որը հռչակվել է իր անառիկ բերդով և եղել է օտար բռնավորների նստավայր։

* * *

Երևանի անունը հիշվում է նաև «Մաշտոցում»։ Իսկ Գաբրիելին Սրվանձտյանի «Հնոց և նորոց պատմություն Դավթի և Մովսէսի Խորենացւոյ» գրքույկում ասված է.

«Իսկ Դավիթը հայտնի մնաց (չթաքնվեց) հայոց աշխարհում և Մովսեսը, որ կարկատած դգեստ էր հագնում և գծուծ

[1] Նույն տեղը։

կերպարանքով էր, գնաց քաղաքաղաշտում գտնվող մի գյուղ և այնտեղ մնաց իբրև մուրացիկ, և ոչ ոք նրան չճանաչեց։ Իսկ Մովսեսի ընկերները՝ Դավիթը, Մամբրեն, Պողոսը և Աբրահամը մնացին Երևանում։ Եվ այն ժամանակ հայոց Կաթողիկոսը Մովսեսի աշակերտակից տ. Գյուտն էր»։

* * *

Նախկինում մոռացության մատնված Երևանի անվանը միջին դարերում արդեն հաճախ կարելի է հանդիպել պատմական աղբյուրներում։ XIV դարում Երևանը ոչ միայն քաղաքական կենտրոն էր, այլև մշակութային։ Ահա թե ինչ է գրում միջնադարի հայ խոշոր առակագիր Վարդան Այգեկցին.

Ես՝ Տիրացուս... քհյ... յերկրէն եկի այն Հայաստան,
Ի քաղաքէն այն պատուական,
Որ իւր անունն է Երեւան
Ու Վիրապին ու էջմիածնին է հարեւան...[1]

* * *

Բազմիցս հրի ու սրի ճարակ է դարձել Երևանը, հիմնահատակ քանդվել են նրա հուշարձաններն ու պատմական այլ արժեքները։ Օտար նվաճողները այրել կամ թալանել են մատենադարանի ձեռագրերը... Այնուամենայնիվ, հրաշքով մեզ հասած հատուկենտ մասունքները ժլատ տեղեկություններ

[1] Մատենադարան, ձեռագիր № 811։

են տալիս հինավուրց այդ քաղաքի անցյալի մասին։ Լենկ-Թեմուրի արշավանքներից փրկված մի ձեռագիր, օրինակ, ծանուցում է.

«Արդ, ինձ նման բոլոր փոքրերից ես՝ անարժանս և անպիտանս, Վիշապի որդի Հակոբ անունով, Երևան գյուղաքաղաքից... արարչի կամքով ստացա հոգեփրկանք այս սուրբ Ավետարանը իմ հալալ վաստակի համար և հիշատակ իմ ծնողների ու բոլոր մերձավորների արյան[1]։

«Արդ, ես՝ Հակոբս, այս աստվածախոս սուրբ Ավետարանը և մեկ ձեռք զգեստ ու արծաթյա սկիհ, որ ստացա իմ հալալ ջանքերի դիմաց, ընծայեցի Երևանի հրաշալի վանքերին, որպեսզի ամեն տարի հայտնության և հոգու գալստյան պատարագով և Քրիստոսի որդի ասելով հիշեն մեզ»։[2]։

Վերոհիշյալ գրիչը, որ ձեռագրի երկրորդ հիշատակարանի հեղինակն է՝ բջնեցի Մանուելը գրել է. «Տիրոջ աստվածատուր բազում սքանչելիքներից մեկն է, որ տեսնում ենք աչքով և անկարող ենք իմանալ մտքով... ըստ որում այս Հակոբ եղբայրս, Երևան գյուղաքաղաքից, որ մանուկ հասակից միշտ ձգտել է բարի և արդյունավետ գործերի... իր հալալ աշխատանքի դիմաց դարձյալ ստացավ աստվածախոս սուրբ Ավետարան և արծաթյա սկիհ և մի ձեռք զգեստ, այս դառն ու անձուկ ժամանակ, շատ երկրների նույնպես և Հայոց ու Պարսից արևելյան կողմերում աստվածասաստ Թեմուր Լանգի և նրա որդի Միրզա Միրոնշի բռնակալության ժամանակ, որը արևելյան կողմից Սմրղան (Սամարղանդ) քաղաքից անհամար հեծելազորով, մեր մեղքերի պատճառով, վտանգ սպառնաց և մոգաբար բազում չարիք գործեց մեր հայոց երկրին և շատ աշխարհների, որ բոլորը չէինք կարող գրել նույնիսկ։ Բայց այս ջերմ, հավատացյալ Հակոբը, այս նեղ ու դժվար ժամանակներում ստացավ ընծաներ և նվիրեց երկսեղան (երկու երես ունեցող եկեղեցուն) ի հիշատակ իր և իր ազգակիցների։ Եվ մենք տեսանք սրա ուժեղ հավատը ու բարեգործությունը բոլոր հայերի նկատմամբ։ Դրա համար էլ Կ... ստիպելով համաձայնեցրին մեզ բերել իր և իր բոլոր ստացվածքների մասին, որպեսզի ամենքը տեսնելով այդ ձգտեն դեպի բարին»։

* * *

Պատմական Հայաստանը միշտ էլ հրապուրել է օտարերկրյա ճանապարհորդներին, որոնք, լինելով արևամոտ այս երկրում, առատ նյութ են քաղել նրա մասին հետագայում գրած աշխատությունների, ուսումնասիրությունների համար։

XVI—XVIII դարերում Հայաստանով անցել են մի շարք առևտրական գործիչներ, դեսպաններ։ Նրանցից մեկը՝ անգլիացի առևտրական Ջոն Նիուբերին, թերևս, առաջին եվրոպացի ճանապարհորդն էր, որ իջևանեց Երևանում, ուր մնաց երեք օր (1581 թվականի դեկտեմբերի 9-ից մինչև 12-ը)։

---

[1] Էջմիածնի թանգարանի 4060 մագաղաթյա ձեռագիր ավետարան։
[2] Մատենադարան, ձեռագիր 811։

«Իններորդ օրը (դեկտեմբերի 9-ին,— հետագայում գրել է Զոն Նիուբերին,— (Կամբելելյայից) մեկնեցինք և նույն օրը (հասանք) Երևան. այստեղ մետաքսի յուրաքանչյուր բեռը վճարվում է 5 չեկի։ Երևանում շատ հայեր կան, և տակավին կանգուն է քրիստոնեաների մի եկեղեցին։ Այս քաղաքի հյուսիսային կողմը, մոտ մի մղոն հեռու, մի քարե կամուրջ կա, որի տակից անցնում է Զանգու կոչված գետը... 12-րդ օրը մեկնեցինք Երևանից։ Նախիջևանի և Երևանի միջև մի տեղ կա, ուր գետնից աղ են փորում...»[1]

* * *

XVI դարից սկսած Հայաստանը մոտ 150 տարի նոր արյունահեղ պատերազմների թատերաբեմ էր դարձել Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև։

Ժամանակի թուրք պատմիչ Քեշևին թուրքական ավերածությունների մասին հետևյալն է գրել. «Թուրքական զորքերը քանդեցին ու ավերեցին բարեշեն գյուղերը, ոչնչացրին շինությունները և հողին հավասարեցրին։ Նրանք Երևանում ամեն ինչ կրակի տվին, այրեցին ու հողին հավասարեցրին։ Չկար թուրքական զինվորական մի վրան, որը երեքից ավելի գերի չունենար։ Քիչ չէին նաև 5—10 և ավելի գերիներ ունեցող վրանները»[2]։

Այդ ժամանակների ահավոր վիճակի մասին պատմում

[1] «Հայրենիքի ձայն», 10 ապրիլի, 1968 թ.։

[2] Հայ ժողովրդի պատմություն, 1-ին մաս, Երևան, 1956 թ., էջ 319։

է Առաքել Սարկավագը. «...Ութ տարի դաժանություն եղավ մեր աշխարհում, չորս պատուհաս եկավ մեր վրա՝ սուրը, սովը, աղը, անժամանակ մահը... շատ տեղեր ավերվեցին»[1]։

Երևանի պաշտպանությունը հայ ժողովրդի հազարամյա պատմության ամենապայծառ ու հերոսական էջերից մեկն է, երբ մահը գիտակցված էր, և ամեն մարտնչող՝ անձնուրաց հերոս։ Այն ունեցավ ոչ միայն բարոյական, այլև ռազմական կարևոր նշանակություն։

Ահա մի ուրիշ հիշատակագիր.

«Գալով անթիվ ու անհամար զորքերով, Վազիր փաշան գնաց Արևելք, դեպի Շահասան, Ղարգա բերդի շինության համար։ Քրիստոնյաներին շարշարեցին հարկապահանջությամբ, և այնտեղից գալով գերեցին Երևանի գավառը և անմեղ հայերին դեպի սուր ու գերություն վարեցին. ոմանք փախան լեռներն ու ժայռերի ծերպերը՝ հուսալով ատծու օգնությունը»[2]։

1579 թվականին Մուստաֆա Լալա փաշայի գլխավորությամբ օսմանյան բանակի հարձակման ժամանակ Արարատյան երկրի ու հատկապես Երևանի բնակիչների անլսուր տառապանքները այսպես է պատկերել Հովհաննես հիշատակագիրը.

Թիւրն հազար քսան և ութին[3]
Յաւուր աշնան մուտ ձրմեռին,

[1] Գ. Ագիշան, Հայապատում, Վենետիկ, 1901 թ., էջ 598—599։

[2] Գ. Ագիշան, Այրարատ, էջ 300։

[3] Նկատի ունի Հայկական 1028 թվականը, որ է 1579 թ.։

Հրոտից[1] ամսուն տասնուերկուսին,
Սև լուսացաւ երկուշաբթին,

Յանկարծ տեսին յեղաղին հասեալ
Շուրջ ու բոլոր զքաղաք պատեալ,
Մեծ ու պզտիկ զամեն կալեալ,
Լալոտ աչօք գերի տարան։

Վայ տանք երկրին Արարատեան,
Մայրաքաղաքն ի յԵրևան,
Եւ գեղանուն ամենեքեան,
Զեռն այլազգաց գերի անկան[2]։

* * *

1604 թվականին Շահ Աբասը չկարողանալով դիմադրել թուրքերին, որոշեց ամայացնել Հայաստանը՝ բնակչությանը Պարսկաստան քշելով։

Ճիվաղ Ամիրգունա խանը իրագործեց Շահի հրամանը, որի զոհը դարձավ նաև Երևանը։ Ժամանակակից ու ականատես Հովհաննես Մակվեցին այդ մասին գրել է.

«Սարերն ամեն սուգ մտան.
Ծովք ու գետք ի լաց շարժեցան.

[1] Հայոց Հրոտից ամիսը համապատասխանում է հուլիսի 7-ից օգոստոսի 5-ը ընկած ժամանակամիջոցին։
[2] Գ. Ալիշան, Այրարատ, էջ 300—301։

Շաբաթ էր, լուս կիրակի,
Որ կրակ ավին Երևան[1]։

* * *

Երևանի ամրությունների սիստեմում XVII դարում կային 3 առանձին բերդեր, որոնցից գլխավորը 1583 թվականին Ֆահրադ փաշայի կառուցածն էր, որ կոչվում էր «Հին բերդ»։ Այս բերդը ուներ ամուր պարիսպներ և շրջապատված էր խորը փորված խանդակներով։ Երկրորդը մի փոքրիկ բերդ էր Հրազդանի աջ ափին, հին բերդից դեպի հարավ-արևմուտք ընկած բլրի վրա, որը կոչվում էր «Գյուղչի-կալա» («Հսկա բերդ»)։ Երրորդը՝ Նախիջևանից նահանջած զորքերն էին կառուցել, հին բերդին շատ մոտ, դեպի հարավ ընկած հատվածում։

Բերդի պաշարումը տևեց ավելի քան 8 ամիս, որի ընթացքում առավել կոտորվում էին շրջակա գյուղերի բնակիչները, քան պատերազմող կողմերը։

«Եվ այս օրերում,— գրում է Առաքել Դավրիժեցին,— շահը հրամայեց պարսից զորքերին գնալ այդ երկիրը և նրա շրջակա բոլոր գավառները, հանել բոլոր տեղերից տղամարդկանց՝ որ կոչվում են ռայաթ, քրիստոնյա լինեն թե մահմեդական, և ինչ ազգից էլ լինեն, հավաքել ու բերել պարսկական բանակը, որպեսզի պարսիկներին զինակից լինեն (սիբայներին) քեշ քշելու և նրանց այլ գործողություններում օգնական լինեն։ Եվ պատերազմի ժամանակ, երբ հարձակվում էին և սիբայներին ետ քշում, հայերին առաջ

[1] Նույն տեղ, էջ 302

մղելով՝ հրի ու սրի բերանն էին մատնում. որով էլ հայ ազգը երկու կողմից ոչնչանում էր՝ առջևից օսմանցիների կողմից, իսկ ետևից՝ պարսիկների»[1]։

17-րդ դարի Երևանի, նրա անառիկության, կենցաղի մասին շատ բան է ասում շոռոփեցի Տեր-Հովհաննեսի որդի, բանաստեղծ Նաղաշ Հովնաթանը իր «Գովասանություն Յերևանա քաղաքին» երգիծական բանաստեղծության մեջ։ Ահա այդ բանաստեղծությունը.

Կամիք գովել դուք՝ Երևան...
Հաւեն վնաս որպես ըզհուր,
Ջերմ և կանանչ աղտեղի՝ ջուր,
Գորտի ք.. է և փիս փրփուր,
Որպես ծառի ժանգ և թրթուր։

Առավօտուց կերթաս բազար,
Բոլ կու ծախեն բողկ ու գազար,
Թթու մածուն, չանախ-հազար,
Խմոր հացն կուտայ Նազար։

Սափոր և կուժ՝ ամենն ծակ,
Քանի ջուր կածես՝ թե դարտակ,
Ոչ աղբյուր կա և ոչ վտակ։

Բարուն չուխէն պորկչոց շալակ,
Գտակ կարեն, ձգեն թալակ,

[1] «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները», էջ 13։

Մայրն երկայն որպես սալակ։
Մեջն պատի հաստ քոչալակ։

Թե մեյտանն անես օրօն,
Շատ կա տտիպ շըպլեղ տորօն,
Շերեփ, գդալ՝ խիստ խտորօն,
Ամենն ածես մեկ վառ թորոն։

Ջունի մեկ գովելոյ պատճառ,
Բազաստանն փնթի, մուտառ,
Կու ծախեն խիստ խաշար, աստառ,
Թորփա, քէչա աթառ-փաթառ։

Հավուզի փող տաս մեկ բուռն
Հարկիզ մէկն չառնիլ ձեռն,
Աչքն կոխես շամփուրի ձեռն
Խմեցնես էլի ...ն։

Կուզեն ելնեն ամենն քոշ,
Լի է մոծակ, մժիկ, բղոջ,
Ալիշվերիշն է խիստ փոշ,
Տալոյ՝ նամարդ, առնելոյ՝ ղոշ։

Նաղաշն Երևան շատ կացաւ,
Ջիկարն այրեց, հիվանդացաւ,
Սպիտակ սառուցին զարմացաւ,
Խմեց՝ սրտիկն հովացաւ[1]։

[1] Ն. Հովնաթան, բանաստեղծություններ, Երևան, 1952 թ., էջ 99։

Թեև շահի կողմից խիստ հրաման կար, որ քանի դեռ թուրքերի հետ հաշտություն չի կնքվել՝ Երևանի շրջակայքում և հատկապես սահմանամերձ շրջաններում վարուցանք չկատարվի, սակայն Ամիրգունա խանը կարողանում է համոզել շահին և Երևանի մերձակա շրջաններում ձեռնարկել որոշ հողագործական աշխատանքներ։

Մատենադարանում պահվող պարսկերեն ձեռագիր գրքում Շահ Աբասի պալատական պատմիչ Իսքանդար Մունշին պատմում է. «Երևանի նահանգապետի բարձր պատվին արժանանալուց հետո Ամիրգունա խանին հաջողվեց անցյալ տարի (1607 թ.) և այս տարի (1608 թ.) որոշ հաջողություններ ձեռք բերել, որոնց մասին հարկ ենք համարում առանձին պատմել։

Երբ հաղթական զինվորները ձեռնամուխ եղան Երևանի բերդի նորոգմանը և այն լցրին անհրաժեշտ պաշարով ու զինամթերքով, այդ ժամանակ Ամիրգունա խանին և նրա հպատակներին, որոնք մինչև այդ երբեմն Երնջակում, Օրդուբադում և երբեմն էլ Նախիջևանում էին լինում, կարգադրվեց գնալ և հասնել այդտեղ։ Նորին բարեծնության նկատմամբ տածած անհուն սիրուց և նվիրվածությունից դրդված և ապավինելով աստծո ողորմածությանը և արքայական անվախճան բարեխղճությանը, Ամիրգունա խանը գնաց բնակություն հաստատելու այդ ավերակ ու անմարդաբնակ վայրում, որտեղ կենդանության ու շինության հետք անգամ չէր մնացել։ Իր հպատակներից ու ենթակա մարդկանցից նրանց, որոնց նկատմամբ նա առավել վստահություն ուներ, տեղավորեց բերդի ներսում, իսկ մյուսներին բնակեցրեց բերդից դուրս (քաղաքում) և ավերակ գյուղատեղերում։ Ազերբայջանում գտնվող զանազան էլերից և թարաքյամաներից շատ մարդկանց նա համոզեց ու բերեց Երևան։ Կաջարների Աղջա-կոյունլու օյմաղին և Մուսա-օղլի Բայաթ էլին, որոնք բարձրագույն հրամանի համաձայն, Արաղից (Պարսկական Իրաքից) հատկապես եկել էին ծառայելու նրան, բոլորին էլ Երևանի ու Շարուրի հարմար վայրերում յուրդեր ու կշլաղներ տվեց։

Որովհետև ամեն անգամ օսմանյան բանակը արշավելիս Երևանի կողմերով էր անցնում, դրա համար էլ կարգադրված էր, քանի դեռ Ազերբայջանի գործերը չեն վերջացած, այդ կողմերի հողերը չմշակվեն և ավերակ թողնվեն, որպեսզի հակառակորդի բանակը, այդտեղից անցնելիս, չկարողանա պաշար ձեռք բերել։ Բայց Ամիրգունա խանը խնդրեց շահին թույլատրել, որպեսզի զինվորները իրենց ձիերին կերակրելու համար բերդի մերձակա վայրերում որոշ չափով վարուցանք կատարեն, և եթե մինչև հունձը լուր ստացվի, որ հակառակորդը մոտենում է, ոչնչացնել ամբողջ բերքը, իսկ եթե ոչ, մեկ օրվա մեջ կարելի է հնձել ու փոխադրել բերդը և դրանով ավելացնել պաշարը։

Այսպիսով, զինվորները բերդի շրջակայքում և մոտակա այլ վայրերում բավական վարուցանք կատարեցին։ Այդ ժամանակ Երևանի հասարակ ռայաթներից շատերը, որ թաքնվել էին և չէին կարողացել Արաղ գնալ, շինարարության հոտ առնելով՝ մեկ-մեկ, երկու-երկու դուրս էին գալիս և յուրաքանչյուր վայրում 2—3 տուն հավաքվելով սկսում էին հողագործությամբ զբաղվել»[1]։

[1] Ժ. Բ. Տավերնիեն, *Ֆրանսիացի ճանապարհորդ, 1665 թ.*։

* * *

«Երևանի բերդը նման է մի անկանոն աղեղի։ Նրա հիմքը կազմել է այն պարիսպը, որ գետի բարձր ափով ձգված է եղել ապարանքի մոտից մինչև այնտեղ, ուր Գետառը թափվում է Հրազդանի մեջ»։

Հանգամանորեն ընթերցողին ներկայացնելով Ամիրգունա խանի գործունեությունը, Իսքանդար Մունշին մասնավորապես պատմում է նաև նրա գլխավորած հաղթական կռիվների մասին, որ մղվում էին հատկապես Կարսի շրջանում։ Այստեղ տրված է Մաղասբերդի, Մշնկերտի, Կարսի, հետագայում նաև Մակուի ու Բայազետի բերդերի գրավման մանրամասն պատմությունը։ «Ասպատակության, ավարառության բնակչության մասսայական տեղահանության նպատակով կազմակերպվող այս հաճախակի արշավանքների ընթացքում փոփոխվում էր նաև Արևելյան Հայաստանի և հատկապես, Արարատյան երկրի դաշտային շրջանների բնակչության էթնիկական կազմը։ Հողագործ ռայաթների զգալի մասը, թեև նորից կազմում էին հայերը, սակայն փոքր թիվ չէին կազմում նաև ամայացած գյուղերում հաստատված քոչվորության բեկորները, որոնք արդեն սկսել էին հողագործությամբ զբաղվել։

Ամիրգունա խանը հատուկ նախաձեռնություն էր ցուցաբերում երկրի հայ ազգաբնակչության բազմապատկման գործում, որը մեծ եկամուտներ էր խոստանում նրան։ Հայ ռայաթները, բազմաթիվ այլ հարկերից բացի, կանխիկ դրամով վճարում էին նաև գլխահարկ՝ «ջիզյա», որը չափազանց մեծ գումար էր կազմում։ Այդ էր պատճառը, որ 1604 թվի

արտագաղթից մի քանի տարի հետո նա ամեն կերպ նպաստում էր գաղթականների վերադարձին, սիրաշահում և օգնում էր նրանց, և չբավարարվելով միայն դրանով, արևմուտքից ևս մեծ թվով հայ ընտանիքներ բռնի կերպով բերում և բնակեցնում էր Արարատյան երկրում։

Երկրի արագ վերականգնմանը նպաստում էր նաև այն հանգամանքը, որ Արարատյան դաշտը լինելով համեմատաբար ավելի արգավանդ բնակավայր վերաբնակվողներին հնարավորություն էր տալիս արագորեն հիմք դնելու և զարգացնելու նոր տնտեսությունը։

1612 թվականին հաշտության պայմանագիր կնքվեց Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև։ Հաշտության բանակցություններին, որոնք տեղի էին ունենում Սալմաստում, գործուն մասնակցություն ուներ նաև Ամիրգունա խանը, որը հատկապես զբաղվում էր սահմանագծի ճշման հարցերով։

Այս հաշտությունը, սակայն, երկար չտևեց։ Այն ընդհատվեց 1616 թ. ամռանը թուրքերի կողմից Երևանի վրա կատարված նոր հարձակումով։ Բայց այս անգամ թուրքերին չհաջողվեց գրավել բերդը։ Երկու ամիս ու կես տևած պաշարողական մարտերից հետո թուրքական բանակի հրամանատար Օքյուզ Մուհամեդ փաշան համոզվեց, որ իր զորքերը կտրված են թիկունքից, և որ ոչ միայն նրան չի հաջողվել լիովին պաշարել բերդը, այլ հենց ինքը գտնվում է չափազանց վտանգավոր ծուղակում։ Զգալով իր վիճակի անհուսալիությունը, նա հաշտության առաջարկով դիմեց շահին, միաժամանակ խնդրելով, որ հանձնարարի թիկունքում գործող կղզբաշներին թույլ տալ թուրքական զորքերին անցնելու

դեպի Էրզրում։ Թուրքական զորքերը այս արշավանքի և նահանջի ժամանակ ծանր կորուստներ կրեցին։

Թուրքերի նահանջից անմիջապես հետո Շահ Աբասը Գեղարքունիքից իջավ Երևան, անձամբ ստուգելու բերդի ամրությունները, որոնք նրա հատուկ հանձնարարությամբ կառուցվել էին 1607 թվականին»[1]։

Երևանի վրա կատարված արշավանքներից մեկի մասին է պատմում 1589 թվականին գրված «Շարակնոցի հիշատակարանի» ձեռագրերից մեկը.

«Փառք... Ահա գրվեց հայոց ՌԸ և Է (1589) թվականին և այդ տարին ունի կենդանակերպ կշեռքը, որովհետև այդ տարում տեղի ունեցավ ահռելի դժոխք մեր ծովացած մեղքերի պատճառով. գալով Վագիր փաշան արևմուտքից, բազմաթիվ զորքերով և անհամար հեծյալներով, գնաց դեպի արևելքի Շահաստանը՝ Երևան բերդի շինության համար. և խիստ նեղեցին ու շարշարեցին մեր քրիստոնյա ազգին, տեղահան վտարեցին դեպի հեռավոր կողմեր. այնտեղ որը ցրտից սառեց, որը սովից ջարդվեց։ Աղաչում ենք, հայր աստված, որ խղճաս քո ծառաներին։ Արդ զրեցին դեպի Արզրում երկիրը, Դրվիկ գյուղը։ Ահա ես՝ ծով մեղաց տեր և սուտ անուն Առաքել սարկավագս, աղաչում եմ, մի մեղադրեք, որովհետև այդ էր մեր վիճակը»[2]։

---

[1] «Մատենադարանի պարսկերեն հրովարտակները», Երևան, 1959 թ. էջ 19—21։

[2] Մատենադարան, ձեռագիր № 300։

* * *

Հայաստան աշխարհը տարբեր ժամանակներում ունեցել է մի քանի մայրաքաղաքներ՝ վարչական կենտրոններ։ Իբրև այդպիսին՝ Երևանի մասին առաջին անգամ նշվում է 1405 թվականին, նկարագրելով ձեռագիր ավետարանի հիշատակարանում։ Սկսած 12-րդ դարից Երևանի անունը հիշվում է նաև հայկական վիմագիր արձանագրություններում։ Կեչառիսի Ս. Նշանի հյուսիսային պատին, օրինակ, կա հետևյալ վիմագիրը.

«Ի ՌԺԲ (1563) կամաւ բարերարին այ ես վարդրմբել, որ դնեցի ի յԵրևան զմեղիտոնայ դուն շարէքն և ետու ի սբ. Գրիգորս սպասավորք սորայ աւանդեցին տարին։ Բ։ ժամ որ խափանէ իմ մեղացս տէր է առաջի այ ամեն»։

* * *

Սուրբ Գևորգի քարայրի Աստվածածնի պատին ՌԻԶ թվականին (1177) փորագրված արձանագրության մեջ հիշված Մարեմտուրը, ինչպես ցույց է տալիս Հաւուց Թառի Ամենափրկիչ վանքի արևմտյան ճակատին փորագրված արձանագրությունը, երևանցի է եղել։

Ահա XVII դարի Երևանը Ժան Շարդենի նկարագրությամբ. «Երևանը մի մեծ, տգեղ ու աղտոտ քաղաք է. նրա մեծ մասը բռնում են պարտեզներն ու այգիները. նրա մեջ գեղեցիկ շինություններ չկան։ Երևանն ընկած է մի հովտում, որը ամեն կողմից շրջապատված է լեռներով և ոռոգվում է երկու գետով՝ հյուսիս-արևմուտքից հոսում է Զանգուն, իսկ

հարավ-արևմուտքից Կրխբուլաղը, որ թարգմանաբար նշանակում է 40 աղբյուր. ասում են, որ այդ գետը ճիշտ որ ջուր է ստանում այդքան աղբյուրներից։

Երևանում գտնվող բերդն ինքնըստինքյան կարող է մի փոքրիկ քաղաք համարվել. նա ձվաձև է, 4000 քայլ շրջապատ ունի և բովանդակում է իր մեջ 800 տուն։ Բերդի մեջ ապրում են միայն պարսիկները, իսկ հայերը այդտեղ ունեն միայն խանութներ, որտեղ նրանք աշխատում և առևտուր են անում ցերեկները, իսկ երեկոները, փակելով խանութները, ցրվում են իրենց տները։ Բերդը շրջապատված է երեք կարգ ժանիքավոր պարիսպներով, կառուցված հում աղյուսից, գույշ և միայն հողից. պարիսպներն ունեն աշտարակներ և, բերդն ամրացնելու համար, հին արևելյան սովորությամբ, անկանոն ձևով քաշված մի թումբ։ Եվ ավելի կանոնավոր ձևով չէր էլ կարող շինված լինել, քանի որ բերդը դեպի հյուսիս արևմուտք ընկած է մի ահռելի, անգնդախոր ձորի եզերքին, լայն, ուղղաձիգ 100 սաժեն խորությամբ, որի խորքում հոսում է գետը։ Այդտեղ, ինքնըստինքյան լինելով շատ անմատչելի, ուրիշ ամրություններ չկան, բացի մի հողե թմբից, որի վրա շարված է հրեատանին։

Բերդի պահապան զորքը բաղկացած է 2000 հոգուց. պարիսպներից ամեն մեկն ունի երկաթագամ զարպաս, վեր ու վար քաշվող փականավոր վանդակապատով և հատուկ պահապաններ։ Փոխարքայի ապարանքը գտնվում է բերդում՝ հիշյալ ահռելի անդունդի եզերքին։ Դա մի գեղեցիկ և շատ մեծ շինություն է, որ ամառը շատ լավ ապավորություն է թողնում։

Բերդի մոտ, միայն մի հազար քայլ հեռու զրանից,

գտնվում է մի բլուր, որ իշխում է նրա վրա. դա ամրացած է երկկարգ պարսպով և ունի հրեատանի. այնտեղ կարող է տեղավորվել 200 մարդ. այդ փոքրիկ ամրոցիկը կոչվում է Դեչի-Կալա (Այծաբերդ)։ Ինքը՝ Երևան քաղաքը հեռու է բերդից մի ռումբընկեց տարածություն։

... Երևանի հրապարակը, որի շորս բոլորը ծառատունկ է, մի քառակուսի տարածություն է, որի տրամագիծը հավասար է 400 քայլի. դա զբոսանքների, զոտեմարտի, ձիարշավների և ամեն տեսակ մարզանքների տեղ է թե հետևակների, և թե հեծյալների համար։

Քաղաքում և Բերդում շատ բաղնիքներ և իջևանատներ կան. իջևանատներից ամենագեղեցիկը գտնվում է ապարանքից 500 քայլ հեռու. այդ իջևանատան գլխավոր մուտքն ունի 80 քայլ երկարություն և կազմում է մի սիրուն սրահ՝ խանութներով։ Շինությունը քառակուսու ձև ունի և պարունակում է իր մեջ երեք մեծ ու փոքր առանձին շինություններ՝ ընդարձակ գոմերով և մեծ խանութներով։ Նրա առջևում կա մի հրապարակ՝ շրջապատված խանութներով, որտեղ վաճառվում է ամեն տեսակ ուտելեղեն, իսկ կողքին կա մի գեղեցիկ մզկիթ և երկու սրճարան։

Հայաստանը՝ ընդհանրապես լավ երկիր է, շատ պտղավետ։ Հողը առատ բերք է տալիս։ Հայկական ավանդությամբ նոյը խաղողի որթը տնկել է Երևանի մոտ։ Ոմանք մինչև իսկ ցույց են տալիս այդ տեղը։

Երևանը հայերի կարծիքով աշխարհիս ամենամեծ ավանն է, որովհետև, նրանց ավանդությամբ, այդտեղ ապրել է Նոյը իր ամբողջ ընտանիքով մինչև ջրհեղեղը։ Հայերը նաև պնդում են, որ հենց նույն տեղում եղել է երկրային դրախտը։ Այդ

ավանդությունները, իհարկե, քիչ հավանական են։ Գրողներից ոմանք ասում են, թե Երևանը հենց այն քաղաքն է, որ Պտղոմեոսը կոչում է Տերվա և համարում է Հայաստանի մայրաքաղաքը. մյուսները կարծում են, որ դա հագարական Արտաքսատն է։ Թուրք պատմության մեջ այն կոչվում է Երիտցե։

Թուրքերը Երևանը վերջնականապես նվաճել են 1582 թվականին և այնպես են ամրացրել, որ նա կարողացել է դիմանալ ամեն մի ռմբակոծության։ 1615 թվին նա ենթարկվել է չորսամսյա պաշարման և դիմացել է։ Բերդը շրջապատող թումբը, թեև հողից է, դիմացել է թուրքական մարտկոցին, և թուրքերը ստիպված են եղել ետ քաշվել»[1]։

* * *

«Երևանի շինություններն այնքան խախուտ են, որ զարմանալի չի լինի, եթե ասածու ուված մի օր նրանք խսպառ կործանվեն»— Շարդենի այս երկյուղը 1679 թվականի հունիսի 4-ին իրականանում է։ Երևանը հիմնահատակ կործանվում է երկրաշարժից։

Երևանի գլխին եկած այդ զարհուրելի աղետը ականատեսներից Զաքարիա սարկավագը հետևյալ կերպ է նկարագրում.

«ՌՃԻԸ (1679) թվականին, հունիս ամսին ասածո սաստիկ բարկությունը իջավ Արարատյան երկրի վրա, որովհետև

[1] Путешествие Шардена по Закавказью в 1672 –1673 гг., перевод Бахмутовой и Косовича. Тифлис, 1902 г.

գայրույթով նայեց ասված իր արարածներին և համբարձմանը հաջորդող երրորդ շաբաթ օրը, ժամը երեքին հանկարծակի գոռաց երկիրը, և ինչպես ամպերը գոռոցից հետո, ահավոր թնդյունով շարժվեց. ամբողջ Արարատյան երկիրը դողում ու երերում էր, ասվածը կատարվում էր. ով է տնօրինում երկիրը և դողդողացնում նրան. և երկիրը հիմքից էր շարժվում. և այդ շարժմունքը հասավ մինչև Գառնիի կողմերը՝ խորտակվեցին բոլոր շինություններն ու գեղեցկահարկ բնակարանները, վանքերն ու եկեղեցիները։

Ահա սրանք են ավերված եկեղեցիները՝ Աղջոցվանք, Այրի-վանք, Հավուց թառ, Տրդատակերտ, Խորվիրապ, Ջրվեժ, Ջառավանք, երեք եկեղեցիներ՝ Երևանում, Նորագավիթ, Նորագյուղ, Զորագյուղ, Նորք, Գամրեզ և Երևանի բերդը հիմքից տապալվեց, մզկիթ ու մինարեներ. բազմաթիվ տեղերից աղբյուրներ բխեցին և բազմաթիվ աղբյուրներ փակվեցին։ Եվ քարափներ փլվեցին, լցվեցին առուներն ու արգելեցին ջրերի հոսանքը։ Եվ բազմաթիվ գյուղեր քանդվեցին։ Քանաքեռում մի հավի բուն անգամ չմնաց. և զարմանալի էր, որ նույն Քանաքեռում մի տան չորս որմերն ընկան, բայց կտուրը չորս սյուների վրա անշարժ մնաց՝ կարծես օդի մեջ կախված լիներ։ Շարժը հասավ մինչև Կարբի գյուղաքաղաքը և չորս մարդ մեռավ։ Հովանա վանքի սուրբ ուխտի բոլոր գեղեցիկ ապարանքները փլատակների վերածվեցին, եկեղեցին խախտվեց, և մենք հազիվ ազատվեցինք մահից։ Եվ նրանք, որոնք հողի տակ մնացին, ինչ որ կարող էին հանել՝ հանեցին, և ինչ որ չկարողացան հանել՝ իրենց գերեզմանը իրենց տունը եղավ։ Եվ մեռածներն ավելի շատ էին, քան ողջերը։ Եվ չնայած չկարողացանք իմանալ բոլոր տեղերում մեռած-

ներին, բայց միայն իմ հայրենի Քանաքեռ գյուղում մեռածների թիվը հասավ ՌՄԻԸ (1228)-ի, ոչ շուն մնաց, ոչ կատու, ոչ հավ։ Օրեր շարունակ երկիրը դոռում էր, երեք օր, չորս օր, հինգ օր, որից հետո եկավ շարժը, բայց վնասը առաջին օրը եղավ. նրանք, որ կենդանի մնացին կարպետե վրանների տակ էին ապրում, այգիներում ու պարտեզներում և անբնակ տեղերում...»[1]։

Ոսոխը ասպատակել, իսկ բնության տարերքը հիմնահատակ կործանել է Երևանը։ Բայց ի ծնե շինարար Հայկա որդին վերստին փլատակների վրա քաղաք է հիմնել ու հանձնել հետնորդներին։

* * *

Երևանը միշտ վիճարկել են օտարները՝ օսմանյան Թուրքիան ու շահական Պարսկաստանը։ 17-րդ դարի սկզբին այդ մրցասպարեզում հաղթանակ են տանում պարսիկները։ Անգլիացի հնագետ Կեր Փորտրը 1817 թվականին գրել է.

«Երևանը այնքան անգամ է փոխել իր տերերին և այնքան անգամ ավերի, կոտորածի ու կողոպուտի ենթարկվել, որ նրա անցյալի փառավորությունը վեր է ածվել խեղճության։ Բնակչությունը, որ այդ արյունահեղ պատերազմներից առաջ այնքան բազմաթիվ էր, այժմ մնում էր միայն նրա ցանցառ ու անհոգի բեկորը»։

Ահա և նրա ժամանակակից Ջեյմս Մորիերի նկարագրությունը։

[1] Զաքարիա սարկաւագի պատմություն, 1870 թ., Վաղարշապատ։

«Դա (Երևանը) բաղկացած է մի անպարիսպ ավանից ու մի բերդից։ Երկուքն էլ գետեղված են մի ձորում, եղերված բլուրների շարքով... Քաղաքը կեղտոտ է ու հետամնաց,—19-րդ դարի Երևանի մասին այսպես է գրել ականատեսներից Եվրոպացի դիվանագետ-ճանապարհորդ Ջեյմս Մորիերը ու շարունակել.— Սարդարի գլխավոր հարկաբաժինը բացվում է Զանգու գետի անդունդի վրա... Այս հարկաբաժնի մի լուսամուտից է, որ Սարդարը զվարճանում է մի հրացանով փորձելով իր վարպետությունը և գնդակահարում է գետի մյուս կողմի ճանապարհից անցնող գյուղացիների էշերին։

Երևան քաղաքը բացառություն չի կազմում բոլոր նման այն տեղերից, որ ես անցել եմ... Քաղաքի բնակելի մասերի հետ խառնված են ավերակներ։ Բավական ընդարձակ է՝ բաց տարածություններով և հին, ցեխե տներով։ Քաղաքի մի մասը գտնվում է Զոմլեքչի բլուրի վրա, որ ավելի հին քաղաքի տեղն է և այնտեղից ամենից տիրապետող տեսարանն ունի Արարատը։

Ժամանակակիցներից Երևանի բերդի մասին ամենաուշագրավ և հանգամանալից նկարագրությունը պատկանում է Խաչատուր Աբովյանին։ Հայ մեծ լուսավորիչը, հանգամանքների բերումով ավելի մոտիկից և հաճախ է տեսել Երևանը, անցնելով նրա փողոցներով և միշտ սարսափով նայելով Երևանու հազար տարեկան «պառված բերդին»։ Իր «Վերք Հայաստանի» վեպում նա գրել է.

Երևանու բերդն, Երևանու բերդն, ախ աչքս դուրս գա, քանի՞ բանի ողորմելի հայի միս ա կերել, բանի՞ բանի անմեղ

հոգի՝ տարիքներով չարչարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլլելուց, կրակի, բոցի, երկաթի շամփրի, թոխմախի, կրակած քարփջի տանելուց, համբերելուց եղը, կամ թոփի գյուլլի հետ ա թռել, հազար կտոր եղել, տարաղաջի (կախաղանի) վրա յա՝ գոռալով... հոգին ավանդել... որ պրծնի... էն կատաղի գազանների ձեռիցը։ Քանի՞ քանի ջահել երիտասարդ՝ մեկ սաղ օջախի մեն մենակ որդի, մի աղքատ, չքավոր տան սին..., մեկ տասը գլուխ քյուլֆաթի տեր ու ապավեն, իր ծաղկած դալար հասակին... կամ սաղ-սաղ քերթվել ա, կամ իր պատվական գլուխը գառան պես թրին դեմ արել», որ երկինքը իր ջահելության մուրազն առնի, վայելի, չունքի երկիրը նրա անարատ արնին էր ծարավ, որ շուտով խմի ու բալքի կշտանա։

...— Լեռ քարափի վրա՝ ցից գլուխը բարձրացնում, թամաշա յա անում հանդարտ հազար գլխանի դևի պես՝ Երևանու հազար տարեկան քավթառ, պառաված, չորս կողմը խանդակով կապած, բրջերով ղայիմացրած, սուր-սուր ատամները գլխին շարած, հինգ գաղաչափ հաստապատով, երկու տակ բռնած, մեկ ոտը Կոնդումը, մեկ ոտը Դամուր-Բուլաղի գլխին դրած, մեկ բերանը հյուսիս, մեկը հարավ բաց արած, չորացած գլուխը երկինքը ցցած, լեն փեշերը երկրումը փռած, անամոթ երեսը կոկած, սվաղած, հազար բնով, հազար փանջարա աչքերը դես ու դեն շռած, գլուխը չանգերով՝ Զանգվի քարոտ, զարհուրելի, սևագեմ ձորը խտտած, դոշին կպցրած, անմեղ, անմակ, անլեզու, մարդակեր բերդը, ու դեղնած երեսը հեռու տեղից ծածկում, աղահ աչքերը դեռին գցում, որ միամիտ տեսնողին դհա շուտով խաբի— դհա հեշտ իր ծոցը քաշի, ու բիրադի, անձեն, անսաս կուլ տա, փշացնի»[1]։

Հայ ժողովրդի մեծ բարեկամ Ա. Ի. Գրիբոյեդովը նույնպես շատ է եղել Երևանում, մոտիկից ծանոթացել նրա կյանքին։ Ընկերոջը գրած նամակում Երևանի ու նրա բերդի մասին նա նշել է.

«Մենք հասանք բերդի ժանիքավոր պարիսպներին, հետո մի քանի ճեղքերից, որոնք կոչվում են փողոցներ, դժվարությամբ անցնելով հասանք սարդարի միջին դարպասին։ Մի անվթար բան չկա, ընդամին այնքան ծուռումուռ բաներ, ոլորաններ, նրբանցքներ, կից շինություններ, մուտքեր, անցքեր, անձուկ, մռայլ ու բոլորովին խավարշտին, որ բան չես հասկանա։

Երևանը ընդարձակ է, բայց գեղեցիկ չէ. երկարաձիգ ցանկապատերը, ավերակները և ռուսական զորքերի վերջին պաշարման հետքերը նրան հաղորդում են մի թախծալի տեսք[2]»։

* * *

«Երևանը սովորական ասիական քաղաք է՝ նեղ, ծուռումուռ փողոցներով, հում աղյուսից և մանր քարերից շինված,— կարդում ենք ռուս վիճակագիր Ի. Շոպենի հուշագրություններում.— Գլխավոր փողոցներով անցնում են առուներ, որոնց միջով ջուրը բաշխվում է պարտեզներին և, միևնույն ժամանակ,

[1] Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, 8 հատորով, Հ. 3, Երևան, 1948 թ., էջ 58—60։

[2] **А. Грибоедов,** полное сочинение сочинений т. I, с. Петербург, 1889 г.

քանդելով ճանապարհի պատերի հիմքը, գոյացնում է խորդուբորդեր և վտանգավոր փոսեր, անձրևից հետո՝ լճակներ, որ նեխում ու քաղաքում գարշահոտություն են զցում, առիթ ստեղծելով հիվանդությունների համար...

Քաղաքի տխրալի դեմքը փոխվում է ամռանը, երբ նրա փողոցները կազմող այլանդակ պատերը անհետանում են չքնաղ այգիների փարթամ կանաչով, որտեղ ճոխ բնությունը՝ հողի մշտական խոնավությամբ և հարավի կիզիչ արևով զրզրված, անսովոր ուժով բաց է անում իր բուսական հարստությունն ու հմայքը։

Կյանքը եռում է տներում, որոնք շինված են ընդարձակ ծաղկանոցներով ու շատրվաններով զարդարված բակերի մեջ այդ տները գեղեցիկ են, ունեն պարտեզներ՝ ընկուզենիներով և թթենիներով։

Տները շինված են այնպես, որ դրսից ուշադրություն չդրավեն. նրանք իրենց ճակատով նայում են դեպի բակն ու պարտեզը և փողոցների վրա լուսամուտներ կամ բոլորովին չունեն, կամ շատ քիչ ունեն՝ այն էլ նեղ ու փոքր։ Սենյակները լուսավորում են գլխավորապես մեծ լուսամուտները՝ ցածից վեր ու վար քաշվող գույնզգույն ապակիներով զարդարված փեղկերով, որոնք բռնում են տան համարյա ամբողջ ճակատի պատը։

Ունևոր քաղաքացիների սենյակները շատ կոկիկ են, պատերը գաջով ծեփած և ծեփարվեստի հորինվածքներով զարդարված։ Կառարաններ չկան, կան բուխարիկներ, որոնք ավելի գեղեցկության համար են, քան տաքացնելու։ Հատակներին փռված են թանկագին գորգեր. պատերի մեջ կան փորվածքներ, որտեղ շարված են արկղիկներ, տուփեր, վարդաջրի սրվակներ և բյուրեղյա հախճապակե գեղեցիկ ամաններ։

Յուրաքանչյուր տան մուտքը բացված է ճակատից. 8-10 աստիճաններ տանում են նախասենյակը, որ բռնում է տան ամբողջ լայնությունը. դրա միջից աջ ու ձախ բացվում են երկուական դռներ, որոնցից առաջին երկուսը տանում են աջակողմյան և ձախակողմյան հյուրասենյակները, որոնք զարդարված են արևելյան ճարտարապետության ու նկարազարդության հատուկ ճաշակով՝ երկհարկանի վարագուրածածկ պատուհաններ, թուղթների, ծաղիկների նկարներ՝ դռների, պատուհանների, բուխարիկների եզերքին, ճակատին, կողքին, իսկ մյուս երկուսը տանում են կից սենյակները, որոնցից մեկը խոհանոցն է, մյուսը՝ մթերանոցը։

Տները ընդհանրապես շինված են հում աղյուսից, լեռնաքարից կամ քավանգից, միջնապատերը՝ թրծած աղյուսից՝ կրաշաղախ. պատերի ամբողջ երկարությամբ հաճախ դրվում են գերաններ, որոնք պահում են շինությունը կրկնվող երկրաշարժերի ավերումներից։ Շինությունների առաջին հարկը սովորաբար արտաքուստ երեսապատում են կոփածո քարերով, երբեմն էլ տան ամբողջ ճակատը ծածկում են թրծած կրաշաղախ կիսաղյուսիկներով։

Տներից շատերը, բացի վերոհիշյալից, ունեն և «այվաններ», այսինքն՝ ընդարձակ և բարձր ամառային սենյակներ, որոնց մի կողմը կամ երեսը բաց է և հենված նկարազարդ սյուների վրա։

Երևանի շինություններից առանձին ուշադրության է արժանի Սարդարի ապարանքի ապակյա դահլիճը կամ «շուշաբանդը»։ Դա փարթամորեն զարդարված է որմերի ու առաս-

տաղի մեջ հագեցած հայելիներով և պատերի վրա պարսկական ոճով ու ճաշակով նկարված պատկերներով։

Հետաքրքրական են նաև բերդի մզկիթներն իրենց ճարտարապետությամբ և, վերջապես Սարդարի «Թալար» կոչված ապարանքը, որը գտնվում է Հրազդանի աջ ափին՝ «Թիլդուշա Թալար» կոչված սարդարական այգում։

Ապարանքը շինված է չինական ոճով և ճարտարապետությամբ, դա շատ ինքնատիպ մի շինություն է, որի մեջ Սարդարն անցկացրել է իր ազատ ժամերը։ Այդ սենյակները լուսավկաներն են այն բաքոսական ցոփ կյանքի ու տեսարանների, որ հաճախ իրենց զվարճությունների համար, սովորաբար, սարքել են Երևանի սարդարները։

Քաղաքատեղի տարածության մի ընդարձակ մասը բռնում են այգիներն ու պարտեզները։ Պարտեզները գտնվում են տների առաջ, իսկ այգիները՝ քաղաքաթաղերի մոտ և շրջակայքում, ոչ հեռու բնակատեղերից. միայն Հրազդանի աջ ափին գտնվող այգիներն են, որ գտնվում են բնակատեղերից հեռու։

Պարտեզների և այգիների ընդհանուր թիվը Երևանում հասնում է 1473—ի»[1]։

* * *

19-րդ դարի սկզբին Հայաստանը գտնվում էր Թուրքիայի և Պարսկաստանի լծի տակ։ Թուրք-պարսկական զավթիչները այն բաժանել էին խանությունների, որտեղ իշխում էին։ Ծանր էր ժողովրդի, հատկապես գյուղացիների վիճակը, որ ավելի

[1] Ի. Նոպեն, «Երևանի նահանգի հուշագիրք» 1927 թ.,

ծանրացավ Վրաստանը և Ադրբեջանը Ռուսաստանին միանալուց հետո։

1827 թվականի սկզբներին ռուսական զորքերը պատրաստվում էին արշավել Երևանի վրա։ Այդ կարևոր իրողությունը նոր հույսեր էր ներշնչում հայերին, որոնք երազում էին Հայաստանի մյուս շրջաններն էլ Ռուսաստանի օգնությամբ ազատագրել պարսկական բռնակալների լծից։ Հայաստանում և Վրաստանի հայաբնակ վայրերում կազմակերպվեցին կամավորների զինված ջոկատներ։ Խրախուսելով կամավորներին, ժամանակի ազդեցիկ գործիչներից Ներսես Աշտարակեցին ասում էր. «Հասավ ժամը, երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատությունը... Ոտքի կանգնեք, հայոց քաջեր, թոթափեցեք պարսից լուծը, ուրախացրեք ալեզարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցեք հայրենի հողերը և ապա ապրեցեք ազատ»։

1827 թ. գարնանը ռուսական զորքերը գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ արշավեցին Երևանի վրա, նպատակ ունենալով գրավել Երևանի և Նախիջևանի խանությունները*)։ Սեպտեմբերին Երևանի բերդը պաշարվեց։ Արևելքի այդ հզոր ամրոցի պաշտպանությունն իր վրա վերցրած Հասան խանը պարծենկոտությամբ հայտարարում էր, որ թեկուզ 4—5 թագավոր միանան, դարձյալ չեն կարող Երևանի բերդը գրավել։ Պարծենում էր, բայց իզուր։ Անառիկ համարվող այդ ամրոցի

* Ծանոթություն։ Վրաստանի և Ադրբեջանի հետ միասին Լոռու, Ղազախի, Շամշադինի, Իջևանի, Շիրակի, Ղարաբաղի, Զանգեզուրի, Դափանի հայաբնակ շրջանները արդեն միացել էին Ռուսաստանին։

հզորությունը չդիմացավ ռուսական զորքերի գրոհին։ Սեպտեմբերի 30-ի գիշերը 40 հրանոթ մինչև լույս ռմբակոծեցին Երևանի բերդը, նետելով ավելի քան 1000 ռումբ։ Մարտը երկուստեք ուժեղ էր։ Բերդը կորել էր փոշու և ծխի մեջ։ Ռուսական զորքերին ամեն կերպ օգնում էին ներսում գտնվող հայ հայրենասերները։

Եվ, վերջապես, 1827 թվականի հոկտեմբերի 1-ի առավոտյան ռուս զինվորները և հայ կամավորները հաղթանակի դրոշը բարձրացրին գրավված բերդի վրա. Պարսիկները հանձնվեցին. 3000 գերիների մեջ էր նաև Հասան խանը։

«1827 թվականի սեպտեմբերի քսանհինգն էր, որ Երևանու բերդը ծխումը կորավ։ Երկնքի կրակը ջոկ էր վեր թափում խեղճ կենդանների գլխին, թոփի, թոխփանի գյուլլեն ջոկ, հինգ օր, հինգ գիշեր սար ու ձոր դրմփում, դրմդրմբում էր... Երևանու բերդը ձեթը հատած պատրույգի պես թե մեկ ճրթ-ճրթում էլ էր, մեկ սհաթ քիմի էլ ետ հանգչում... խավարում էր. էնքան թոփի գյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել։

Սարդարը, Շահզադեն վաղուց էին իրանց սև օրը լաց ըլլելով Երևանա երկրիցը ձեռ քաշել, Իրան փախել»։

(Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի»)։

* * *

Ռուսական զորքերի կողմից Երևանի վրա կատարված գրոհը և նրա գրավումը հիանալի կերպով նկարագրել է նաև

այդ մարտերի մասնակից, ռուսական կայսրության կողմից Կովկաս աքսորված դեկաբրիստ Ե. Լաչինովը։ Ահա նրա նկարագրության համառոտագրությունը.

«Սեպտեմբերի 30-ին մարդիկ հողակողովներով, ջախերով և գործիքներով եկան դեպի փոսը։ Ուժեղ հրաձգությունը ցույց տվեց, որ մեզ նկատել են...։ Պարսիկները ենթադրում էին, որ ռուսները գրոհի են գնում և մտադրվել էին կատաղի պաշտպանությամբ իրենց փրկել նրանց սարսափներից։ Պարիսպների վրա աղաղակով և լացով ու կոծով խռնվել էին բնակիչները... Պայթում էին հրանոթները, և հազարավոր հրացանների համազարկերը խլանում էին նրանց որոտներից.. Կամաց-կամաց բերդը սկսեց լռել, կրակոցները ավելի ու ավելի հազվադեպ դարձան, ավելի ու ավելի լսելի դարձավ պաշարվածների աղմուկը։ Շուտով ամեն ինչ լռեց... Հասան խանը իր յուրայիններով փորձեց այստեղից դուրս գալ, սակայն, ամենուրեք հանդիպելով արգելքների, ստիպված եղավ վերադառնալ...։ Ժամը 8-ին պարիսպների վրա երևացին սարբազներ ու բնակիչներ և թափահարեցին թաշկինակները, ճեղքերով ընկան փոսը և մեզ մոտ փախչելով հայտարարեցին՝ բնակիչներն ու սարբազների մի գումարտակ հանձնվում են, բայց սարբազների մյուս երկու գումարտակը որոշել է դեռ դիմադրել։ Մերոնք նետվեցին դեպի ճեղքը..., մագլցելով անցան պարսպի վրայով, և այնտեղ դրեցին ժամապահներ։ Մի քանի վաշտեր մոտեցան շեղապատնեշների վրայի դարպասներին և քարեր նետեցին դեսուդեն։

...Քաղաքի գրեթե ամբողջ բնակիչները փակված էին բերդում, և դրանից առաջացած նեղվածքը մեծապես օգնեց մեզ։ Աննկարագրելի սրտառուչ էր ուրախության այն պատկերը,

որով մեզ հանդիպեցին հայկական ընտանիքները, երբ մենք գրավեցինք այն»[1]։

* * *

Քանի Հայաստանը իր փառքը կորցրել էր, քանի հայը իրենց գլուխն էին թիրի տեղ թշնամու ձեռքը գցել, էս օրը, էս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել,— գրում է Խ. Աբովյանը, արտահայտելով ժողովրդի տրամադրությունը։

Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ, հազար տեղից հազար փանջարից լայն արտասուքը էլ չէին թողնում, որ մարդի բերան բաց ըլի։ Բայց ով սիրտ ուներ, լավ էր տեսնում, որ էն ձեռներն, էն աչքերը, որ քարացել, սառել երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ ասում էին, որ դժոխքի քանդվելը մեղավորների համար էն գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնելը հայերու համար։

...Բերդի միջև ու շորս կողմը ասեղ գցեիր, գետին չէր հասնիլ... աշխարքը իրարով էր դիպել։ Աչք էր՝ որ խնդում էր ու լալիս, բերան էր, որ գովում էր ու օրհնություն տալիս, ազգական բարեկամք էին, որ իրար փաթաթված՝ մնացել էին փետացած։ Լեզվի տեղակ արտասուքն էր նրանց էրված սիրտը հովացնում։ Սար ու ձոր խնդացին, բաղ, բաղաստան ցնծացին, որ իրենց տերերն էլ ետ ճամփա էին ուզում ընկնել, որ գնան, նրանց զվարթացնեն. բերդի դռներն ու քուչեքը դրմդրմբում էին ոտի ուրախության ձենից»[2]։

[1] **М. Нерсисян.** Из истории армяно-русских отношений, кн. первая, „Документы", стр. 346—348.

[2] Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի», Երևան, 1948 թ.։

Այսպես ընկավ Երևանի բերդը, որի ամրությունները երկար ժամանակ անառիկ էին համարվել, որոնց մեջ ժողովուրդը ընդհանրապես և երևանցիները մասնավորապես, հաճախ անլուր տանջանքների էին ենթարկվել և դարերի ընթացքում հաղարավոր նահատակներ տվել։

Հաղթանակի առթիվ ուշադրավ է կոմս Պասկևիչի ողջույնի խոսքը բերդը գրաված ռուս զինվորներին.

Դուք շատ եք աշխատել թագավորի փառքի համար, ռուս զենքի պատվի համար։ Ես գիշեր-ցերեկ ձեզ հետ եմ եղել, վկա եմ եղել ձեր արիուն, զգաստ գործողության, անդրդվելի արիությանն ու հաղթությանը, որ ամենուրեք ուղեկցել են ձեզ։

Չորս օրվա մեջ դուք նվաճեցիք Սարդար-Աբադը, 6 օրվա մեջ՝ Երևանը, այն հայտնի ամրությունը, որ Ասիայի անմատույց պատվարի հռչակ էր վայելում։ Առաջ ամիսներով պաշարել են այն, և ժողովրդի մեջ համբավ է տարածված եղել, որ տարիներ են հարկավոր այն նվաճելու համար։ Ձեզ համար բավական էր, որ մի քանի գիշեր մնացիք, և դուք քարուքանդ արիք նրա պարիսպները, կանգնեցիք փոսի եզերքին և ահ ու սարսափ ձգեցիք նրա պաշտպանների վրա։ Երևանն ընկավ ձեր առաջ, դուք այլևս ախոյան չունեք բովանդակ պարսից պետության մեջ, ուր էլ գնաք, թշնամիների բազմությունը կոչընչանա ձեր առաջ, Աբբաս Աբադը, Սարդար-Աբադը և Երևանը նվաճողներից առաջ, քաղաքները կբանան ձեր առջև իրենց դռները, բնակիչները դուրս կգան իրենց կեղեքիչների դժոխքից և կհանձնվեն ձեր մեծահոգությանը և պաշտպանությանը։ Ռուսաստանը ձեզ երախտագետ կլինի, որ դուք պահպանեցիք նրա մեծությունը, նրա գորությունը։ Շնորհակա-

լություն ձեզ ի սրտե, Կովկասի կորպուսի քաջակորով սպաներ և զինվորներ։

* * *

Պասկևիչի զեկուցագիրը 1827 թ. հոկտեմբերի 3-ի

«...Ձերդ կայսերական մեծության դրոշը ծածանվում է Երևանի պարիսպների վրա։ Այսքան փառավոր այս բերդի բանալիները, նրա ամբողջ կայազորը, որը գերի վերցվեց նրա բոլոր գլխավոր զորապետների՝ հենց իրեն՝ Հասան-խանի հետ միասին, որն այս անգամ չկարողացավ ոչ փախչել, ոչ էլ ճեղքել գիծն ու ճողոպրել, վերցված ռազմամավարը՝ 4 դրոշակ, 37 հրանոթ, 2 հաուբից, մինչև 50 ֆալկոնետ, վերջապես հպատակությունն ու երախտագիտությունը բնակիչների, որոնց մենք ազատագրեցինք նրանց առերես պաշտպաններից և մոլի կեղեքիչներից—սույն այս ամենը աճապարում եմ ներկայացնելու Ձերդ ամենագթառատ հայեցողությանը, արքա...

Հոկտեմբերի 1-ին դարպասները փշրեցինք, մերոնք խուժեցին այդտեղ, և սարբազների տատանվող երկու գումարտակը զցեց զենքերն ու անձնատուր եղավ։ Պարիսպների վրա մերոնք արագորեն տիրացան հրանոթներին, քանի որ ներս էին մտել փլվածքներից։ Հասան խանի մասին հայտնի էր, որ նա տեսնելով քաղաքի պետերի՝ անձնատուր լինելու կամքը և կայազորի տրտունջները, մի քանի հավատարիմ մարդկանցով փորձեց դեռ գիշերը փրկվել, սակայն քաղաքից դուրս եկող փողոցները փակել էին մեր հետևակն ու հեծելազորը, իսկ Զանգվի մյուս կողմը բռնել էր գեներալ-մայոր Շաբելսկու հրամանատարության ներքո գործող հեծյալ ջոկատը, որը յուրաքանչյուր գիշեր գործի էր դրվում փախչողներին բռնելու և գետանցը խանգարելու համար։ Տեսնելով, որ ինքը շրջապատվել է բոլոր կողմերից, նա դեռ մտածում էր ցերեկը թաքնվել ընդհանուր շփոթության շնորհիվ։ Սակայն, գեներալ-լեյտենանտ կոմս Սուխտելենը, վերցնելով հավաքական գվարդիական գնդի 2 վաշտ, գնաց նրա ապաստանի վայրը՝ մզկիթ, սարդարի պալատի մոտ. զինաթափեց նրան և դրեց պահակախմբի հսկողության տակ։ Սուբխան-զուլի-խանը, որը բերդի պարետն էր, ենթասպա Զևկինի կողմից ի հայտ բերվեց մի ներքնահարկում, որտեղ հագուստները փոխած, մի քանի օրվա ուտելիք վերցրած, մտադիր էր մի կերպ ազատվել հաղթողների ձեռքից։ Մյուս խաներն ու պետերը՝ Կասիմ խանը՝ խասերի գումարտակի հրամանատարը (Աբաս Միրզայի գվարդիական լավագույն զորքը), Զաֆար Զուլի-խան Մարանդացին, Ալի-Միրզան-խան Թավրիզցին, Ասլան-խան Առաբլեցին և Ֆաթ-Ալի խանը՝ ձուլարանի պետը՝ բոլորը գերի վերցվեցին։ Այսպիսի անցքերի ժամանակ անխուսափելի անկարգությունը երկար չտևեց, երկու ժամ հետո վերականգնվեց անդորրը...

Նշանավոր Երևանը, որի նվաճումը, ինչպես ենթադրում էին, պետք է արյան հեղեղներ խլեր մեզանից, ընկավ հաղթական ռուսական զենքի առջև առանց մեր կողմից մեծ զոհաբերությունների։

Ամենախոնարհ կերպով Ձեր կայսերական մեծությանը շնորհավորելով սույն նոր հաղթության առթիվ, որը ամենափայլուն շրջադարձ է ստեղծում պարսկական պատերազմում,

իմ խիզախ աշխատակիցներին ներկայացնում եմ Ձերդ ամենասիրելիի հայեցողությանը»[1]։

* * *

Ի դեպ, մինչ այդ անառիկ համարված բերդի մասին 1813 թվականին Պարսկաստանում Անգլիայի դեսպանության քարտուղար Մորիեանի հետ ունեցած զրույցի ժամանակ, Հյուսեին խանը գոռոզությամբ ասել էր. «Եթե մինչև իսկ 3 ֆրանկ թազավոր միանան այս բերդն առնելու համար, նրանք, համենայն դեպս, ստիպված կլինեն ետ քաշվել ձեռնունայն, և նրանց բոլոր ջանքերը իզուր կանցնեն»։

Իսկ ռուս ազատարար զորքը, իհարկե, ձեռնունայն ետ չքաշվեց։

* * *

Երևանի մասին հարուստ տպավորություններ ունի կոմսուհի Ուվարովան՝ կոմս Ալեքսեյ Ուվարովի կինը, որը եղել է Երևանում 1880 թ. հոկտեմբերին, Ալեքսանդր Երիցյանի հետ և պեղումներ կատարել Հին Արմավիրի տեղում։

Թեև հնագետ տիկնոջ այդ նկարագրությունը վերաբերվում է ավելի ուշ ժամանակի, բայց նկատի ունենալով, որ դրա զգալի մասը վերաբերում է հին Երևանին՝ վերցված հելվետացի հայտնի ճանապարհորդ Դյուբուա-դե-Մոնպերեու-

[1] Шербатов, I, II, СПБ, 1890 г, стр. 256, приложения, журнал Паскевича.

յի ճանապարհորդության նկակրագրությունից, Դյուբուայի, որ եղել է Երևանում 1843 թվին և նկարագրել նրա բերդը։ Ահա այդ նկարագրությունը.

«Երևանը,—ասում է Ուվարովան,—կառուցված է ծովի մակարդակից 3229 ոտնաչափ բարձրության վրա, մի ընդարձակ հովտում, որ գոյացել է Բայազեդի լեռների և Ուշ-Բաշալարի լեռնալանջերի մեջ։ Մենք նույնիսկ քաղաքի մեջ գտնվելով, համարյա չենք նկատում նրան և հարկավոր է լինում դուրս գալ Երևանի խճուղով, բարձրանալ մինչև պահականոցը՝ տեսնելու համար քաղաքը ամեն կողմից։ Ստորին քաղաքն ընկղմված է պարտեզների և այգիների կանաչների մեջ։ Ստորին և վերին քաղաքի միջև ընկած աղատ տարածությունը տարեց-տարի պակասում է, որովհետև նոր փողոցները, ճեմելիքը, պարտեզները հետզհետե զբաղեցնում են այդ տարածությունը։ Աննկատելիորեն մարդ հասնում է այդ վերին քաղաքին կամ բերդին, որ 1843 թվականին նկարագրել է Դյուբուան։

Բերդը հավանաբար, կառուցվել է հում աղյուսից՝ մի ընդարձակ տարածության վրա, ամրացվել է պարիսպներով։ Պատմում են, որ Նիկոլայ կայսրը, բերդը դիտելուց հետո, զղջացել է, որ Պասկևիչին «Երևանի կոմս» տիտղոս է շնորհել, որովհետև բերդը կայսերը հեռվից թվացել է ոչ թե ամրոց, այլ «կավե կճուճի» նման մի բան։

Այդ պարիսպների և աշտարակների մեջ կանգնած է եղել Սարդարի ապարանքը՝ ստորերկրյա անցքով, ներքին շատրվանազարդ բակերով, բաղնիքներով, հարեմով և 2 մզկիթներով։ Այդ ամբողջ վեհությունից պահպանվել է միայն Սարդարի ընդունարան-դահլիճը ամբողջովին քանդակված, դուտ

արևելյան ճաշակով շինված, հայելիներով և նկարներով զարդարված, ինչպես թեյի տուփը։

Դահլիճի խորքում գտնվում է մարմարե շատրվանը և գունդգունդ, վեր քաշվող լուսամուտը՝ փայտյա մանրակերտ շրջանակներով, որտեղից գեղեցիկ տեսարան է բացվում դեպի Հրազդան գետը, դեպի այգիները, Արարատն ու Արագածը։

Ես արդեն ասել եմ, որ Երևանը հարուստ է այգիներով, որոնց խաղողից պատրաստում են խպանականի նման թունդ գինիներ։ Այնպիսի խաղող, ինչպիսին այստեղ է, մենք ուրիշ տեղ դեռ չենք տեսել ինչպես իր համով, այնպես էլ խոշորությամբ և բազմատեսակությամբ (35 տեսակ)։

Պարսկական բազարը քաղաքի մեջ բռնում է մի ընդարձակ տարածություն և նման է Թիֆլիսի մեյդանին և մի ինչոր առանձին, արևելյան բնույթ ունի ոչ այնքան առևտրի բազմատեսակությամբ, որքան իրեն շրջապատող աղտոտությամբ և ծախվող ապրանքների պարզությամբ[1]»։

* * *

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանի թե՛ ժամանակակիցների և թե հետագա սերունդների ներկայացուցիչների կողմից դիտվել է որպես հայ ժողովրդի նոր շրջանի պատմության կարևոր իրադարձություններից մեկը.

«Շատ պատերազմներ են եղել Հայաստանի վրա,— գրել է հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը,— բայց

[1] Кавказ, путевые заметки Гр. Уваровой, Москва, 1887 г.

1826—28 թվականների ռուս-պարսկական պատերազմը կըմնա հայ ժողովրդի հիշողության ու պատմության մեջ երբևէ տեղի ունեցած ամենամեծ պատերազմներից մեկը. այդ պատերազմով հայ ժողովուրդը ազատվում էր մի դժոխքից, որ նրա համար ստեղծել էր պարսկական կոպիտ ու խավար բռնակալությունը, մի բռնակալություն, որի վայրագությունը ոչ մի սահման ու չափ չէր ճանաչում, ոչ օրենք, ոչ իրավունք, ոչ աղաչանք, ոչ կրոն, ոչ սրբություն, ոչ կայք, ոչ կին, ոչ պատիվ, ոչ ամոթ, ոչ խղճմտանք...»։

Երևանի բերդի գրավման ուրախագին լուրը ցնծությամբ ընդունեցին տարաշխարհում գտնվող շատ նշանավոր հայորդիներ։

Մեսրոպ Թաղիադյանը Հնդկաստանից նամակով շնորհավորում է երևանցիներին՝ մասնավորապես գրելով.

«Աչքներդ լույս, որ մեր քաղցր աշխարքն պարսից դառն շարշարանքիցն ազատվեց, քրիստոնեի տերության ներքո ընկավ։ Փառք բարերարին աստծո, որ այսուհետև ավելի նեղություն չեք ունենալից, ազատ քաղաքի քաղաքացի պիտի անվանիք, ձեր ազգասիրության և իմաստասիրության լուրն և արվեստից հառաջադիմությունն բոլոր Աշխարհ պիտի տարածվին։

Ահա էսա իմ ցանկությունս իմ քաղցր աշխարհիս համար, եթե որ հաճելի կլինի վերն գրածիս համաձայնիլ և կատարել, ուրեմն հեշտ է մենք հիմն կդնենք և աստված կլինի, և ես ուրախ կլինեմ ապրիլ ձեզ համար՝ և մեռնիլ մեզ համար»[1]։

[1] Հ. Մկրյան, կենսագրություն Մ. Դ. Թաղիադյանց, Թիֆլիս, 1886 թ., էջ 24։

1827 թվականի հոկտեմբերի 12-ին Թիֆլիսից Ներսես Աշտարակեցուն ուղարկված ողջույնի նամակում Հարություն Ալամդարյանը գրել է.

«Վերջապես, բազմադարյան ակնկալությունից հետո, երկնային նախախնամությունը մեզ արժանացրեց տեսնելու և լսելու մեր ամենասիրելի հայրենիքի ազատությունը, բռնակալների լծի տակ մեր ժողովրդի կրած տառապանքների ապառվելը, ավարտը:

Այս բարի լուրը (ձայն ավետյաց) այս քաղաքում նախ հնչեց ամսույս 5-ին, ապա գրավոր հասավ 8-ին, ռնպատմելի ուրախությամբ լցնելով բոլորի սրտերը:

Շնորհավորում եմ իմ Հայաստան աշխարհի փրկությունը անագորույն պարսիկների երկաթե հնոցից...»[1]:

«Եվ այդ ժոխքի միջնաբերդը Երևանն էր»[2]:

Հովհ. Թումանյան, Ռուս-պարսկական պատերազմը և Աբովյանը («Սովետական գրականություն» հանդես 1941, № 9—10, էջ. 115: Այս աշխատությունը Թումանյանը սկսել է գրել 1908 թվականից:

* * *

Իսկ խաչատուր Աբովյանը հոգու խորքից բացականչել է. «Օրհնվի էն սհաթը, որ ըռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած շար շունչը մեր երկրիցը հալածեց: Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է գիշերցերեկ մեր քաշած օրերը մտքներս բերենք ու ըռսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց»[1]:

* * *

Երևանի գրավումը ցնծություն էր առաջացրել ոչ միայն բուն երևանցիների, այլև ռուս զինվորների՝ հայերի ազատարարների մեջ: Հայ ժողովրդի մեծ բարեկամ, ականավոր գրող ու պետական գործիչ Ալեքսանդր Գրիբոյեդովը, որը գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի Ռուսաստանին միանալուն ու մասնավորապես ռուս զորքերի կողմից Երևանի բերդի գրավմանը, հոկտեմբերի 3-ին բերդից Ախվերդովային գրած նամակում նշել է.

«Այստեղ, մեծաքանակ և աղմկալից բազմության մեջ, մենք բոլորս արբեցած ենք հաղթանակով: Սարդարապատի գրավումը 4 օրում և Երևանինը՝ 6 օրում, այ թե ինչը կզարմացնի ձեզ, ճիշտ չէ՞, արդյոք...

... Երեկ մեզ մոտ տեղի ունեցավ մեծ զորահանդես՝ բերդի պատերի ետևում և գոհաբանական մաղթանք՝ փլվածքների առջև (իմիջայլոց ասած քաղաքը սարսափելի ավերվել է պաշարման ամբողջ ժամանակ կատարված դժոխային ռմբակոծությունից): Երբ երգեցին «Տեր ողորմյան», կաստիլների վրա հենված երևաց Սիմոնիչը, շրջապատված իր բոլոր սպաներով: Չգիտեմ ինչու աչքերիցս արցունքներ թափվեցին»[2]:

---

[1] Կաթողիկոսարանի դիվան, թ. 55, փ. 20:

[2] Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի», Երևան, 1948 թ.:

[1] Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի», Երևան, 1948թ.:

[2] А. С. Грибоедов, Полное собрание сочинений, т. I, с Петербург, 1889 г.

* * *

19-րդ դարի երկրորդ կեսին աննշան փոփոխություններ են նկատում Երևանի արտաքին դիմանկարում։ Երևում են համեմատաբար ուղիղ փողոցներ։ Այդ մասին ժամանակակիցներից մեկը գրում է.

«Երևանը մի հետամնաց, գավառական քաղաք է, որի տները հողածածկ են, կավե պատերով, նեղլիկ՝ ամռանը քամու բերած առատ փոշով, ձմռանը կոշտացած (ամրացած) ցեխով։ Արևելյան ձևով ոտքերը ծալապատիկ նստում է տան առջև վաճառողը և մուշտարի կանչում։ Հարևան գյուղերից մարդիկ Երևան են գալիս ձիերով, ուղտերով, ավանակներով։ Դարբինը երկաթը կռում է փողոցում հարմար հենած սալի վրա, սափրիչը ծառի շվաքում է սափրում քաղաք եկած գյուղացուն, նահանգապետի տան մուտքի մոտ շեկ բեղերն է ոլորում ոստիկանը։

Եթե շիկամորուս ոստիկանը չլիներ, կթվար, թե միջնադարյան շրջանում ես, ուր անպակաս է պարսիկ հետևակայինի՝ սարբազի մտրակը։ Պարսկական շահերի պալատում՝ տխրահռչակ բերդում բազմագույն ապակիներով զարդարված պատուհանին նստած է Սարդարը՝ ղեյլանը բերանին»[1]։

* * *

Թիֆլիսի կողմից երբ մոտենում ես Երևանին,— գրում է XIX դարի վերջին Հայաստան այցելած անգլիացի ճանապարհորդ Լինչը,— նրա լանդշաֆտը այնպիսի տպավորություն է ստեղծում, որ երբեք չեմ մոռանա։ Արարատի ամբողջ զանգվածը՝ գագաթից մինչև ստորոտը, ելնում է դեմդ, բայց շինարիները այնքան բարձր են, այնքան փարթամ, մրգատու ծառերը այնքան շատ, որ մզկիթների գմբեթներն ու ոտքերիդ տակ փռված ողջ քաղաքը հալվում, կորչում է նրանց կանաչի մեջ։

Այդ փարթամ բուսականության համար Երևանը ամենից առաջ պարտական է Զանգու գետին, որ սկիզբ է առնում Սևանա լճից։

Երևանում դուք չեք տեսնի ոչ մի արտասահմանցի արդյունաբերող, ոչ մի լեզվով լրագիր չկա, բացի ռուսերենից։ Նույնիսկ տեղացի հայերին են շահագրգռում բնական հարստությունների օգտագործմամբ։

Այո, Երևանը այգիների քաղաք է, որտեղ ոռոգող առուների ցանցը պահպանում է կանաչի իդեալական թարմություն՝ վաղ գարնանից մինչև ուշ աշուն։

Երևանի մրգերը գրեթե իրենց մրցակիցը չունեն աշխարհում, բայց ոչ մի տեղ չի կազմակերպվում դրանց վաճառքը կամ պահածոյացումը»[1]։

* * *

1855 թվականին առաջին անգամ պլանավորվում է քա-

---

[1] Ю. Овалов, «Наша страна», 1. 1937 г., Москва.

[1] Армения, путевые очерки и этюды Х. Ф. Б. Линча, перевод с английского Елизаветы Джукговской, том первый,—русские провинции. Тифлис 1910 г., стр. 203.

զաքի բարեկարգման գործը, կազմվում է նրա վերակառուցման ու զարգացման հատակագիծը։

«Այստեղ օդը այնպես հեղձուցիչ է, ինչպես Կովկասյան երկրամասերի շատ այլ բնակավայրերում,— գրել է ժամանակակիցը,—բացի դրանից, Երևանը աչքի է ընկնում մի ուրիշ հեղձուցիչ հատկությամբ ևս, որից վարակի բույն է ստեղծվում, դա Երևանի առասպելական կեղտն է»։

* * *

1880 թվականի մարտի 15-ից «Պսակ» թերթի հրատարակությունը նշանակալից իրադարձություն հանդիսացավ Երևանի մշակութային և քաղաքական կյանքում։ Դա Երևանի առաջին տպագիր օրգանն էր, որին, հետագայում ավելացան ուրիշները։

«Պսակ» թերթի թղթակիցներից մեկը 1882 թվականին գրում է.

«Այս ձմեռվա անմոռանալի խիստ ցրտերի շնորհիվ Երևանում կաքավը, նապաստակը, վայրի բադն ու սագը առատ են։ Գայլերն այնքան համարձակություն ստացան, որ ցերեկով քաղաքիս մեջ անգամ մտան, եղել են կատաղածները, որոնց զոհ դնացին Նորքում և քաղաքիս Դամբը-Բուլաղ մահում մի քանի հոգի։ Դա պատահական երևույթ չէ 90 քառ. վերստ տարածություն ունեցող, բայց իր բնակչության թվով փոքր Երևանի համար։

Ականատեսները պատմում են, որ ձմռանը նապաստակի, աղվեսի ու զանազան թռչունների որսը սովորական երևույթ էր քաղաքի արվարձաններում և ծայրաթաղերում»[1]։

* * *

Երևանի բազում ականատեսներից մեկն էլ ընկերոջը ցավով հայտնել է.

Ես քեզ պիտի գրեմ Երևանի մասին։ Պիտի գրեմ այն տպավորությունների մասին, թե տեղացի և թե նորեկ կամ օտարական, միայն այն զանազանությամբ, որ տեղացիք շատ քիչ են զգում կամ համարյա չեն զգում այդ տպավորությունը, իսկ նորեկը զգում է շատ խիստ և որոշ։

Պիտի գրեմ քեզ, որովհետև այդ տպավորությունները շատ ծանր են, ճնշող և անտանելի մի մարդու համար։

Երեկոյան ժամը 7-ին հասա Երևան։ Կես ժամ անց դուրս եկա քաղաքը մտնելու. լուսնյակ գիշեր էր, և եղանակը ոչ ցուրտ։ Մոտ 3 ժամ շրջում էի ինձ լավ ծանոթ փողոցներով, ինչպես ասում են, ոչ մի տեղ շուն չէր հաչում, բայց, իրոք, ոչ մի տեղից մարդու հոտ չէր գալիս. ժամը 8-ից սկսած մարդկային ամեն կյանք, հարաբերություն դադարել էր։

Այդ ժամին ամեն մի ամուր կողպած դռնից, ամեն մի մութ և խոր քնի մեջ թաղված լուսամուտից, պարտեզների ու բակերի այդ մեկուկես սաժենանոց բարձրություն ունեցող պատերից, այդ խուլ և ամայի փողոցներից, որոնք բացի լուսնի լույսից, ուրիշ լույսով համարյա չեն լուսավորվում,

1 Թ. Հակոբյան, «Երևանի պատմությունը» հ. II.

մի խոսքով ամեն տեղից, ամեն անկյունից անշարժություն ու մեռելության հոտ էր բուրում։

Զգում ես, որ այստեղ կյանքը շատրվանի պես չի խփում և արագահոս գետի պես շարունակ առաջ ընթանում, այլ շնորհիվ ինչ-ինչ հանգամանքների, կանգ է առել, լճացել ու նեխել։ Գուցե այդ գիշերվա տպավորությունները այդպիսի մռայլ կերպարանք չստանային իմ մեջ և գուցե իսպառ անհետանային, եթե վերջը հաստատ չհամոզվեի, որ այդ գիշերվա ժամը 8-ը միատեսակ շարունակությունն է նոր օրվա ժամը 7-ի, 6-ի, 5-ի, 4-ի և այլն, որ ցերեկով ավելի առիթներ կան նույն ճնշող ու մեռնող տպավորություններին ենթարկվելու...

Մյուս օրը տեսնվեցի ծանոթներիս ու բարեկամներիս հետ և նրանց հետ ունեցած տեսակցությունից ու խոսակցությունից նույն տպավորությունն ստացա, ինչ տպավորություն որ ստացել էի նախընթաց գիշերը Երևանի ամայի ու խուլ փողոցներից։

Ում հետ խոսում ես, ում հետ մի գործ ես ունենում, միշտ և բոլորի մեջ ամենից առաջ նկատում ես մի խորը, անորոշ և թաքուցյալ վախ։ Այդ վախով լի է բոլորի սիրտը, այդ վախով են առաջնորդվում այստեղացիք իրանց բոլոր գործերի մեջ։ Այդ վախն է պատճառը, որ այստեղ մարդիկ ապրում են բաժան-բաժան, ամեն մարդ իրան համար և միմիայն իր գործով, այդ վախն է պատճառը, որ Երևանում մարդկանց մեջ վերացել են կենդանի մարդկային հարաբերությունները։ Ամեն ոք իրեն զգում է ոնց որ թշնամու բանակում, ամեն ոք աշխատում է, որքան կարելի է շատ զգույշ լինել և իր գլուխը ամեն տեսակ անակնկալ փորձանքից ազատ պահել։ Կարծես

բոլորի գլխին մի մեծ քար է կախ արած, և բավական է մի չնչին շարժում, հերիք է մեկը մի ազատ շունչ քաշի, որ այդ քարը պոկ գա, վայր ընկնի և իսկույն նրան էլ, մյուսներին էլ ջախջախի։ Այդ է պատճառը, որ մարդիկ այստեղ բացի իրանց գլուխը պահելու միջոցներից ուրիշ ոչ մի բանի մասին չեն ուզում մտածել... որ հանկարծ քարը պոկ չգա և գլխներին չընկնի։ Տեսնել, որ Երևանի պես մի քաղաքի համարյա բոլոր բնակիչները ապրում են միայն իրենց ֆիզիկական գոյության հոգսերով և լիապես օգտվում են միայն բուսական իրավունքներով. ապրել մի այսպիսի քաղաքում և զգալ, որ գտնվում ես գայլից սարսափած ու ցիրուցան եղած ոչխարների մի մեծ հոտի մեջ — այդ բոլորը շատ ծանր բաներ են։

Գուցե հարցնես՝ ի՞նչն է այդ բոլորի պատճառը։ Այժմ շատ դժվար է պատճառները գրել. դա այսպիսի նամակների նյութ լինել չի կարող։ Մեկ էլ մի բան պիտի երբեք չմոռանաս, որ թե այս, և թե այսուհետև գրելիք նամակներս կլինեն լոկ տպավորություններ և ոչ երբեք՝ հետազոտություն։ Բայց իբրև Երևանը քիչ թե շատ մոտ ճանաչող մարդ, կարող եմ ասել, որ վերը կրած բոլոր տխուր երևույթների պատճառները շատ խորն են և հին։ Այդ պատճառները պետք է որոնել պարսից տիրապետության մեջ և մեկ էլ այն մշտական ազդեցության մեջ, որ մինչև այսօր էլ ունենում է Երևանի թուրքտարրը հայերի վրա։ Իսկ թուրքերը Երևանում կարծես իշխող տարր լինեն։ Այնքա՜ն զգացվում է պարսից երկարամյա տիրապետության խոր հետքը կյանքի բոլոր երևույթների վրա։ Թուրք տարրի սպանիչ և մեռցնող կնիքը հայ տարրի

վրա այնքան նկատելի է, որ կարծես երեկ է վերացել նրանց իշխանությունը այս երկրից»։

(Երվանդ Թադիանոսյանց. 1891 թ., մարտ, Ջուլֆա, ընկերոջը գրած նամակներից)[1].

* * *

XX դարի արշալույսին Երևանում երևացին արդյունաբերական ձեռնարկություններ, աշխուժացավ քաղաքային տնտեսությունը։ Այստեղ մուտք գործեց էլեկտրականությունը։ Մայրաքաղաքի միակ կենտրոնական փողոցում Աստաֆյանում, շարք մտավ ձիաքարշ տրամվայը։ «Հրազդան» թերթը հետևյալ կերպ է նկարագրում քաղաքի ձիաքարշի աշխատանքը. «Ոչ մի տեղ չկա այնպիսի ձիաքարշ, ինչպիսին Երևանինն է, ոչ մի քաղաքում չկա ձիաքարշի գիծը այնպես փողոցների մեջ դուրս ցցված, ինչպես Երևանի Միրզոյանի ձիաքարշի գիծը, շնորհիվ այս տգեղ գծի, ոչ միայն փողոցները կորցրել են իրենց գեղեցկությունն ու կոկությունը, այլև դարձել են կառքերի, ֆուրգոնների և մասնավորապես սայլերի համար մի չարիք, մի պատուհաս...։

Այդ չարաբաստիկ դուրս ցցված գծին դեմ տալով, խեղճ սայլապանը կոտրում է իր սայլի կամ ակը կամ սոնակը, կամ մի այլ մասը և շշմած ու շվարած կանգ առնում, մնում կես ճանապարհին...[2]»։

[1] «Գարսկական աղբյուրները Հայաստանի մասին», 1892 թ., էջ 18—19։
[2] «Հրազդան» լրագիր, Երևան 1908 թ., № 1։

* * *

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Երևանում երկհարկանի տները սկսեցին շատանալ, բայց դրությունը անմխիթար էր։ Մահը հնձում էր հազարավորների։ Այդ արհավիրքին ի տես հայ բանաստեղծը գրում էր.

Ելնում է ահա ուզեղիս ֆոնին
Հին Երևանը ահառած ու գորշ,
Փողոցներում լաց է գաղթականների,
Աչքերում-մորմոք՝ բութ ու անորոշ։

Գ. Մահարի

Դա առաջին համաշխարհային արհավիրքի տարին էր։ Իսկ 45 տարի անց՝ 1959 թվականին, նույն Գուրգեն Մահարին գրեց. «Մայրը չի նկատում, թե ինչպես աննկատելի աճում է երեխան։ Այսպես է մեր Երևանը՝ մեծ է ու շքեղ... Նա ավելի ու ավելի է մեծանում և շքեղանում։

Մեծ է Երևանը։ Մարդիկ կարող են տարիներ շարունակ ապրել Երևանում և իրար չտեսնել»։

ԵՐԵՎԱՆՆ ԱՅՍՕՐ

Պատկերացնելու համար Երևան քաղաքի մերօրյա զարգացման թափը, հենց թեկուզ վերցնենք այս թվերը. 2700 և 50։

Օտարերկրյա հրոսակախմբերի, տիրակալների ոտքի կոխան է եղել հինավուրց այս քաղաքը անցյալում։ Մեկ ավերողը հաջորդել է մյուսին, իր հետևից տարածելով մահ ու կոտորած, սարկություն ու զրկանք։

1920 թվականի նոյեմբերի 29-ը շրջադարձային կետ հանդիսացավ հայ ժողովրդի պատմության մեջ։ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր։

Եվ դարերի սարկությունը թոթափած Երևանցին նորից իր ձեռքը վերցրեց շինարարի մուրճը, հնչեց աշխատանքի, ազատության ու կառուցման երգը։ Երևանում ծնվեցին գործարաններ ու ֆաբրիկաներ, փողոցներ ու հրապարակներ, մշակույթի ու գիտության օջախներ։

Թափառող մայրաքաղաքների երկիր է համարվել Հայաստանը։ 2700 տարի շարունակ և՛ Էրեբունին, և՛ մեր լեռնաշխարհի տարբեր ժամանակաշրջանների մայրաքաղաքները՝ Վանը, Արտաշատը, Տիգրանակերտը, Արմավիրը, Դվինը, Անին և մյուսները, ավերվեցին օտարների, կամ բնության արհավիրքների հարվածներից։

Հոկտեմբերյան հեղափոխության ալիքները հասնելով Հայաստան աշխարհը, վերածնեցին հայ ժողովրդի մշակույթը։

Էրեբունին հառնեց իբրև փյունիկ, դառնալով սոցիալիստական Հայաստանի մայրաքաղաքը։

Անցած 50 տարում Երևանում ստեղծվել են 200-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց արտադրանքը այժմ հասնում է աշխարհի 70 երկիր, այդ թվում՝ Անգլիա, Ֆրանսիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ։ Երևանում այժմ գործում են գիտությունների ակադեմիա, 10 բարձրագույն ուսումնական և մի քանի տասնյակ գիտահետազոտական հաստատություններ։

30 հազար բնակիչ ուներ նախասովետական Երևանը։ Այժմ այստեղ ապրում է ավելի քան 800 հազար մարդ։ Միջնադարյան խարխուլ գյուղաքաղաք հիշեցնող Երևանում անցած կես դարում շինարարական վիթխարի աշխատանք է կատարվել։ Այո, հեքիաթային մանուկի պես է աճում մեր քաղաքը։ Նրա ժամանակակից սահմանները հյուսիսից նեռրառել են Քանաքեռի սարահարթը. արևմուտքում քաղաքը հասել է Հրազդանի աջ ափը, ստեղծելով «քաղաքի մեջ քաղաք» հիշեցնող Աջափնյակի թաղամասը։ Հենց այստեղ՝ Աջափնյակին կից բազմել է աշխարհի խոշորագույն արագա-

ցուցիչներից մեկը՝ Երևանյանը։ Զրվեժի հովտում Երևանը ձգվել է դեպի վեր, շրջանցել Էրեբունի ամրոցը ու տարածվել դեպի Արտաշատ։

Այժմ քաղաքի թաղամաս է դարձել նաև Նորքի բարձրավանդակը։ Կառուցվում է Երևանը իբրև մի վարդաժպիտ ճարտարապետական խոշոր համալիր։ Նրա շինարարները, ճարտարապետները՝ հիմք ընդունելով հանճարեղ Թամանյանի նախագիծը, ժամանակակիցը զուգորդում են հին հայկական լավագույն նմուշների հետ։ Գրեթե բոլոր շենքերը ձևավորված են ժամանակի քննությունը բռնած այնպիսի մոտիվներով, որոնք հնում օգտագործել են Էջմիածինը, Անին, Զվարթնոցը, Գառնին, Ախթամարը կառուցող վարպետները։ Երևանը հայ ժողովրդի տարեգրությունն է։ Նա հավերժացնում է հայ ժողովրդի ելևէջները հարուստ կյանքի շատ կարևոր իրադարձություններ։

ԵՐԵՎԱՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՄԲ

Ալ. Թամանյանը ծնվել է 1878 թվին, Եկատերինոդար (այժմ՝ Կրասնոդար) քաղաքում։ Ավարտելով Կուբանի Ալեքսանդրյան ռեալական դպրոցը, նա 1898 թ. ընդունվել է Պետերբուրգի Կայսերական գեղարվեստից ակադեմիայի գեղարվեստական ուսումնարանի ճարտարապետական բաժինը։ Դեռ ուսանողության տարիներին ապագա մեծ ճարտարապետը ստացել է կառուցումներ կատարելու իրավունք։

Ավարտելով ուսումնարանը, նա իրեն նվիրել է ճարտարապետությանը, Պետերբուրգում ապրելով մինչև 1918 թվականը։

Ալեքսանդր Թամանյանը 1923 թվականին Սովետական Հայաստանի կառավարության հրավերով գալիս է Երևան և աշխատանքի է անցնում ՀԽՍՀ ժողկոմխորհի տնտեսական խորհրդին կից տեխնիկա-ծրագրային գործերի խորհրդատուի պաշտոնով։

Սովետական Հայաստանի կառավարությունը 1926 թվականին որոշում է «Երևանի հատակագիծը մանրամասն մշակելու և այն կյանքում կիրառելու աշխատանքները հանձնարարել Ալեքսանդր Թամանյանին՝ ազատելով նրան ամեն տեսակի պետական-ադմինիստրատիվ այլ աշխատանքներից»։

Բազմաթիվ հասարակական, արդյունաբերական, բնակելի շենքերի նախագծերը, ինչպես նաև Էջմիածնի, Աբաբկիրի, Հոկտեմբերյանի, Ստեփանակերտի, Կիրովականի, Կամոյի, Հրազդանի, Սովետաշենի գլխավոր հատակագծերը ստեղծել է մեծանուն քաղաքաշինարարը։ Սակայն նրա գերագույն նպատակն է եղել կառուցել Երևանը։ Եվ հենց այդ նպատակի իրագործմանն է նվիրել իր ստեղծագործական բեղուն տարիները Ալեքսանդր Թամանյանը, որ կազմել ու իրականացրել է Սովետական Հայաստանի մայրաքաղաքի առաջին հատակագիծը։

* * *

Երևան քաղաքի շինարարությունը կարելի է բաժանել երկու մասի. հին՝ պարսկական և նոր՝ ռուսաց իշխանության օրոք,— ասել է Թամանյանը։

Սկզբում, պարսկական իշխանության օրոք, քաղաքի կենտրոնը բերդն էր, որի շուրջը եղել է գյուղանման մի բնակավայր, ուր ապրել է թուրք բնակչությունը, իսկ մի քիչ հեռու՝ բարձրության վրա՝ հայերը։ Բերդին շատ մոտ շինված էր շուկան՝ առևտրական մասը։ Երևանը սկզբում շատ փոքր է եղել, բայց աստիճանաբար աճել է՝ բերդի շրջանից դեպի բարձունքները։ Այժմյան Աբովյան փողոցի ձախ կողմում բնակվել են հայերը, իսկ աջ կողմում՝ թուրքերը։ Այդ մասերը քաղաքի կենտրոնական կերպարանքից զուրկ են, նրանց փողոցները եվրոպական իմաստով փողոց անվանել չի կարելի, որովհետև սրանք ավելի նեղլիկ ու անկանոն անցքեր են, որոնք հաճախ փակուղով են վերջանում։

Քաղաքն այս ձևով մնաց մինչև ռուսաց իշխանության հաստատումը այստեղ և այդ ժամանակից սկսվեց նրա կանոնավորումը։ Անհրաժեշտ էր անցք դեպի Քանաքեռի խճուղին, նա բացվել և այժմ կազմում է Աբովյան փողոցը, մի քանի այլ զուգահեռ փողոցներով։

Այս բանը Երևանին մի քիչ քաղաքի ձև տվեց։ Սակայն նույն դրության մեջ շարունակվում է մնալ մինչև այժմ. այդ անբավարար դրություն է, և թե այդպես շարունակվի, հետագայում անհաղթելի դժվարությունների առաջ կանգնած կլինի քաղաքը։

Դուք գիտեք, որ քաղաքում բնակելի տարածություն շատ քիչ կա։

Հրատարակված դեկրետի համեմատ, մենք չունենք անհրաժեշտ տարածություն. մեր ունեցածը 50 տոկոսով քիչ է, քան հարկավոր է բնակչությանը բավարարելու համար։ Մենք կանգնած ենք մի հարցի առաջ,— ընդարձակել քաղաքը,

մեծ թվով շենքեր կառուցել բնակչությանը տեղավորելու համար։ Քաղաքի շինարար աշխատանքներն այժմյան հատակագծի սահմաններում շարունակելը կստեղծի խոշոր խոչընդոտում, որը շատ վտանգավոր կլինի բնակչության, մանավանդ մատաղ սերնդի համար առողջապահական տեսակետից։ Ուրեմն, պետք է մեծ և համարձակ քայլեր անել, որպեսզի քաղաքի ընդարձակումը կատարվի անսխալ կերպով։

Մեր քաղաքը գտնվում է լեռնային ու դաշտային սահմանների վրա։ Հյուսիսային կողմից կա յուրահատուկ սարահարթ, իսկ հարավային կողմում դաշտային տնտեսություն։ Այս հանգամանքը քաղաքի զարգացմանը նպաստում է։ Եթե հարց դնենք, արդյոք լավ չէր լինի նոր քաղաք շինել այլ տեղում, այն ժամանակ ես կասեմ՝ իմ կարծիքն այն է, որ քաղաքի այժմյան տեղը շատ լավ է և հարմար. նրա շուրջը գտնվում են մի շարք բնակելի խոշոր վայրեր՝ Ղամարլու, Վաղարշապատ, Աշտարակ, Օշական, Ախտա և այլն։ Այս վայրերն իրենց տնտեսական կյանքով ձգտում են դեպի կենտրոն, այն է՝ Երևան։ Կենտրոն հանդիսանալու հանգամանքը խոշոր դեր է խաղում և ամենից առաջ հաշվի է առնվում և՛ Եվրոպայում և՛ Ամերիկայում և այդ նույնպես անհրաժեշտ է Երևանում, նա իր տեղում պետք է մնա, բայց պիտի փոխի իր ձևը նոր հատակագծման միջոցով։

Եթե հետաքրքրվենք՝ եղե՞լ է արդյոք դեպք, որ թույլատրվի քաղաքի ձևը փոխել, հինը քանդելով,—պատասխանը պատրաստ է, այդ մասին ճոխ գրականություն կա։ Եվրոպայում չկա քաղաք, որ այս վիճակին ենթարկված չլինի։ Հարյուր և ավելի տարիներ առաջ Եվրոպայում այս ուղղությամբ շատ

աշխատանք է կատարվել։ Այդ աշխատանքների արդյունքը այժմ մեր առաջ է դրված։ Փարիզը սրանից հարյուր տարի առաջ հիմնապես փոխվել է. նրա մի քառորդը քանդված և նորից էլ շինված, բոլորովին նոր ձևով՝ նոր պարտեզներ, լայն փողոցներ, հրապարակներ և այլն։ Դրա համար ֆրանսիան մեծ փոխառություն կնքեց՝ մեկ միլիարդ 200 միլիոն ֆրանկ, որը հնարավորություն տվեց այդ մեծ աշխատանքը կատարելու։ Նույնը նաև Բեռլինի, Լոնդոնի, Վիեննայի, Հռոմի և այլ մեծ քաղաքների մասին կարելի է ասել։ Ամենաարժեքավոր թաղամասերը քանդվեցին հիմնովին, նույնիսկ վեցից ութ հարկանի տներ։ Ուլմ քաղաքը ութսուն տոկոսով քանդվեց և նորից շինվեց։ Ավելի մոտենանք, այժմ նույն աշխատանքների առաջ կանգնած է Մոսկվան։

Մոսկվայի նոր հատակագիծը հաստատված է և արդեն գործում է։ Ուրեմն պետք է օգտվել Եվրոպայի ու Ռուսաստանի պատմական դասերից ու ունեցած փորձից ու ձեռնարկել աշխատանքի։ Պետք է ասել, որ Երևանի իմ կազմած հատակագծման նախագիծն արժանացել է մեր իշխանության հաստատմանը և արդեն հանձնված է իրագործման։ Տարածությունը ընդգրկում է 833 դեսյատին կամ 2 միլիոն քառակուսի սաժեն, որը կարող է տեղավորել մինչև հարյուրից 200 հազար բնակիչ, նայած այն բանին, թե ինչ տարածություն կորոշվի ամեն մի շնչի համար։ Զանազան երկրներում զանազան նորմաներ կան - 10,15,20 քառակուսի սաժեն և ավելի. Ռուսաստանում կան դեպքեր՝ մինչև 100 քառակուսի սաժենի։ Մենք, իհարկե, գիտենք, որ քիչ հող ունենք ու պիտի բավարարվենք մինիմումով. լավ կլինի վերցնել 15-20 քառակուսի սաժեն և այդ հնարավորություն կտա տեղավորե-



Արգիշտիի սեպագիր արձանագրությունը Էրեբունի բերդ-քաղաքի հիմնադրման մասին։



Էրեբունիի որմնանկարներից:



Հին կրակատեղ:



Էրեբունիի համայնապատկերը:

Տեսարան նոր Երևանից:

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի շենքը:

Երևանի Լենինի անվան հրապարակը:

Ստ. Շահումյանի արձանը Երևանում։

լու մինչև 150 հազար բնակչություն։ Եթե չեմ սխալվում, 60 հազար արդեն ունենք, այնպես որ 2,5 անգամ կավելանա բնակչությունը։

Այժմ գլխավոր փողոցը՝ Աբովյանը շատ է զբաղված հետիոտն անցորդներով, այնչափ, որ որոշ տարածության վրա ձիերի, կառքերի, ավտոմոբիլների երթևեկությունն արգելված է։ Այս պատճառով հաղորդակցությունը խանգարված և աննորմալ դրության մեջ է։ Հատակագծված քաղաքը կտա հարմարություն դրա համար։ Այս առաջին։

Երկրորդ՝ մաքրության տեսակետից մեր քաղաքը չունի որոշ հարմարություններ, գլխավորապես կոյուղի։ Եթե այժմյան հատակագծով շարունակենք շինարարական աշխատանքները, կրկնում եմ, կստեղծվի անտանելի դրություն, գետինը կկեղտոտվի և կառաջանա առողջապահական տեսակետից վտանգավոր դրություն։ Նոր հատակագիծը հնարավորություն է տալիս ունենալու սիստեմատիկ և օրինակելի կոյուղի։

Երրորդ հանգամանքը, որը ստիպում է նոր հատակագծման դիմել, այդ այն է, որ ազատ տեղեր չունենք և ստիպված ենք ազատ հողեր փնտրել տներ շինելու համար։

Ահա այս երեք հանգամանքն էլ ստիպում է անմիջապես անցնել Երևանի հատակագծման աշխատանքներին։

Ես առաջարկում եմ մի ձև, որը հեշտ իրագործելի է քաղաքի ներկա տափարակ և գեղեցիկ տեղում։ Ես առաջարկում եմ մի ձև, որը Եվրոպայում շատ է ընդունված։ Քաղաքը պետք է ունենա կենտրոն և մի քանի քաղաքամասեր, որոնք այնպես են դասավորված, որ շրջանակաձև փողոցների միջոցով ամենակարճ ճանապարհով իրար միացած լինեն, զանա-

զան ուղղությամբ հեշտ լինի հաղորդակցություն պահպանել քաղաքի կենտրոնի հետ։

Առողջապահական նկատառումներով քաղաքը պետք է ունենա կանաչ զոտեների փողոցներ և այգիներ, առանց շինությունների, այսպես կոչված, «քաղաքի թոքեր», որոնցով մաքուր օդ է անցնելու դեպի քաղաքի կենտրոնը։ Եթե այդ իրագործվի, ամեն մի շնչին կհասնի 2-3 քառակուսի սաժեն կանաչ տարածություն։ Քաղաքի մեկ վեցերորդ կամ մեկ յոթերորդ մասը, այսինքն 350-450 հազար քառակուսի սաժեն տարածություն կանաչով պետք ծածկված լինի։

Հաստատված այս նախագծով, քաղաքի կենտրոնում կա մի հրապարակ՝ Լենինի անվան, որը կտարածվի զբոսայգուց մինչև կուլտուրայի տունը՝ սահման ունենալով մի կողմից Աբովյան, մյուս կողմից Նալբանդյան փողոցները։ Արձանը հրապարակի վրա արդեն հիմնադրված է։ Նույն այս հրապարակի վրա ծրագրվում են պետական զլխավոր շենքերը, կենտրոնական գործադիր կոմիտեի, ժողովրդական կոմիսարների խորհրդի և հրապարակի շուրջը՝ մյուս պետական հիմնարկները։ Այս կլինի վարչական կենտրոնը՝ քաղաքամասը։

Այս կենտրոնին շատ մոտ, այժմյան տեղում գտնվում է առևտրական քաղաքամասը՝ շուկան. նա արդեն իր տեղն ունի, բայց եռանկյունի է. ես առաջարկում եմ սահմանները ուղղել և քառանկյուն դարձնել, այնպես որ սահման ունենա Մարքսի փողոցի շարունակությունը, Կոմունարների այգու շարքի խանութները և մյուս կողմից՝ այգուն զուգահեռ փողոցը։

Նույն տեղում կգտնվի բանվորական բորսան և քաղաքավարժկոմի շենքը։

Կոմունարների այգու մյուս կողմում մեծ հրապարակ է լինելու, որի վրա տեղավորվելու է երկաթուղու կայարանը. այդ հարցն արդեն լուծված է, և միայն որոշ հանգամանքներ խանգարում են կայարանի շենքի կառուցումն սկսելուն, չնայած այն բանին, որ Անդրկովկասյան երկաթուղու վարչությունը շտապեցնում է։

Նոր կայարանի կողքին տարածվելու է արդյունաբերական քաղաքամասը, ուր տեղ են գտնելու բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները՝ գործարանները։ Կան որոշ հարմարություններ, օրինակ՝ երկաթուղակայարանին շատ մոտ լինելը, որ կարևոր հանգամանք է։ Հետևյալ քաղաքամասը հյուսիս-արևելյան կողմն է տարածվում. դա համալսարանային քաղաքամասն է 22 դեսյատին հողի վրա, ներկա տեղում տեղավորված կլինի բժշկական ֆակուլտետը իր կլինիկաներով, իսկ մյուս ֆակուլտետները կգտնվեն Աբովյանի ձախ կողմում, կենտրոնական լսարանը կտեղավորի հազար մարդ։ Նույն տեղում կգտնվեն նաև ուսանողների կացարաններն ու դասախոսների բնակարանները։

Ներկա Սունդուկյանի փողոցի շարունակության վերջում բացվելիք հրապարակի վրա տեղավորվելու է պետական թատրոնը, իսկ մոտերքում՝ կոնսերվատորիան, գեղարվեստական տեխնիկական դպրոց, որոնց ներկա շենքերը շատ փոքր են և անհարմար։ Սրանց մոտ, քաղաքի հյուսիս-արևմտյան մասում կլինի ստադիոնը՝ մարզանքների հրապարակը։ Այժմ Եվրոպայում չկա մի մեծ քաղաք, որը ստադիոն չունենա. հիմա մարմնամարզությանը խոշոր տեղ է տրվում,

որովհետև մատաղ սերնդի ֆիզիկական զարգացումը առանցնակարգ կարևորություն է ստանում։ Մենք էլ հետ չպիտի մնանք այդ գործում։

Սարի վրա՝ Կոնդում, որտեղից շատ գեղեցիկ տեսարան է բացվում, տեղավորվելու է թանգարանային թաղամասը։

Քաղաքը պիտի տարածվի ի հաշիվ այգիների, և հավանական է, որ հարց տրվի, թե հապա ինչով պիտի փոխարինենք այն տարածությունը, որ խլում ենք այգիներից։ Այդ առթիվ կարելի է ասել, որ քաղաքի հարավային մասում կան անջուր հողեր. այժմ սրանց վրա կատարվում է հետազոտական աշխատանք՝ ջրելու հնարավորությունները պարզելու համար, և արդեն մշակված ծրագիր կա մոտ 7 հարյուր դեսյատին հողի մի մասը էլեկտրականության օգնությամբ ոռոգելու մասին։ Այսպիսով, հնարավորություն ենք ունենում այգիներից վերցված տարածությունը մի քանի անգամ ավելի չափով վերադարձել, քաղաքի շուրջը ստեղծելով օղակաձև կանաչ գոտի, այնպես որ յուրաքանչյուր քաղաքամաս կունենա իրեն մոտիկ զբոսավայրը։

Բացի սրանից, մի շարք նոր փողոցներ են բացվելու. այսպես, մեծ պողոտա, որը առաջանալու է այժմյան Բեյբության ու Յարսկայա փողոցների ձուլումից։ Այս պողոտայի շարունակությունը կուլտուրայի-տան հետևում է։

Մարքսի փողոցի շարունակության վրա՝ մինչև Թոխմախան լիճը, լինելու է մի այլ զբոսայգի, մի անկարան, որով նույնպես լավ օդ է մատակարարվելու արդյունաբերական քաղաքամասին։

Մի այլ փողոց տանելու է վարչական քաղաքամասից դեպի կայարան, մի փողոց, որով բացվելու է գեղեցիկ տեսարան դեպի Արարատ։ Մի երկրորդ փողոց տանելու է դեպի Հրազդան գետը, որն իր գեղեցկությամբ ծածկված է մեր տեսողությունից և տեսնել ցանկացողը ստիպված է անցնել մի շարք կեղտոտ փողոցներով։ Փողոցի շարունակությունը կըտանի Սայաթ-Նովայի պարտեզը։ Այս փողոցի կառուցումն արդեն սկսված է։ Սրա շարունակությունը պողոտայի հետ միանում է թունելի միջոցով, Կոնդի տակով։ Մեծ պողոտայից դեպի Արագած բացվում է գեղեցիկ տեսարան։

Մի քանի փողոցներ պետք կլինի լայնացնել՝ բնակարաններին անհրաժեշտ բնական լույս տալու նպատակով։ Մեր Աբովյան փողոցի լայնությունը $9^3/_4$ սաժեն է, մինչդեռ Թիֆլիսի Գոլովինսկի փողոցինը՝ 20 սաժեն։

Կառուցվելիք շենքերը բաժանվում են երկու տեսակի՝ համայնական նպատակների և մասնավոր բնակչության կարիքներին ծառայող. առաջինները երկու, երեք, չորս, իսկ երկրորդները՝ ոչ ավելի քան երկու հարկանի։ Եվրոպայում կան քաղաքներ, ուր չորսից ավելի հարկանի տներ կառուցելն արգելված է։

«Խորհրդային Հայաստան»
1924 թ. նոյեմբերի 4

(Ակադեմիկոս Ալ. Թամանյանի զեկուցումից՝ Երևանի հատակագծման մասին, 1924 թ.։ էջ 19—24—ը)

Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի նախագահ Ա. Կարինյանին
Ժողկոմխորհրդի նախագահ Ա. Մռավյանին
Ակադեմիկոս Շչուսևից

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժողտան մրցանակաբաշխության կապակցությամբ Երևան ժամանելս ինձ հնարավորություն տվեց ծանոթանալու Հայաստանի մայրաքաղաքի վերահատակագծման նախագծին, որը կատարել է ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը, ինչպես նաև տեղերում գիտելու պետական մարմինների շինարարական աշխատանքները՝ Թամանյանի նախագծի համաձայն։

Քաղաքի հատակագծման սկզբունքները և շրջանների բաժանումը. կենտրոնականը՝ վարչական, բնակելի, արդյունաբերական, թանգարանային, բարձրագույն դպրոցների և այլն, սրանց կապակցումը ծայրամասերի հետ շրջանաձև մայրուղիներով ու կանաչ զբոսայգիներով, փողոցային ցանցի մասնահատումի, ինչպես բնակելի թաղամասերի, այնպես էլ միջանցիկ շարժման մայրուղիների, հրապարակների սրամիտ տեղադրումը քանդելու ենթակա թաղամասերի միջև, այս ողջ աշխատանքը խնամքով մտածված է և հյուսված միաձույլ ամբողջության մեջ։

Քաղաքը, որ հաջող տեղավորված է հողամասի վրա՝ վայրէջքով հյուսիսից դեպի հարավ, հարավ-արևելք, ունի 830 դեսյատին տարածություն, հաշվի է առնված 150 հազար բնակչի համար, որը, մի դեսյատինի վրա հաշվելով երկու հարյուր մարդ,—չի գերազանցում քաղաքների կառուցապատման խտության ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ընդունած նորմաները, իսկ աչքի առաջ ունենալով

Երևանի աշխարհագրական լայնությունը (Պեկին, Մադրիդ) և փողոցի կանաչի, ինչպես նաև քաղաքը տապից ու փոշուց պաշտպանող շրջանաձև կանաչ գոտիների գոյության անհրաժեշտությունը՝ նախագծով ընդունված փողոցների միջին լայնությունը հանդիսանում է միանգամայն ռացիոնալ։

Կարելի է վստահությամբ ասել, որ հայկական ԽՍՀ-ն պետք է ամեն կերպ իրականացնի Ժողկոմխորհրդի հաստատած Ալ. Թամանյանի հատակագիծը, միայն թե այլ կողմ չշեղվի ճշմարիտ ու նպատակահարմար գաղափարից։

Նախագծային աշխատանքների հետևողականությունը չխախտելու համար անհրաժեշտ է առանց հապաղելու նախագծի հեղինակին հանձնարարել հատակագծի հետագա ճշգրտումը, տրամադրելով նրան ստույգ գծագրեր և տեղանքի նկարահանումը հորիզոնականներով։

Հատակագծի կատարելագործումը և ճշգրտումը պետք է իրագործվեն մոտավորապես մեկ տարվա ժամկետում, որի համար հեղինակին պետք է տրամադրվեն անհրաժեշտ միջոցներ, առնվազն 12-15 հազար ռուբլի, մի այսպիսի մեծ աշխատանքի համար, տեղանքի մոդելի հետ միասին։

Իբրև տեղեկանք կարող եմ նշել, որ նման աշխատանքի համար Դոնի—Ռոստովում, Բաքվում և մյուս քաղաքներում հատկացված են շատ ավելի մեծ միջոցներ։

Քաղաքային խորհուրդները առանձնապես կարիք ունեն նման աշխատանքի հողամասերը ճշտորեն մասնահատելու և աճող բնակչությանը վարձակալությամբ տալու համար։

Ի նկատի ունենալով, որ Երևանը դեռևս նոր է կառուցվում, նրա վերահատակագծումը այնքան դժվար չէ, որքան ուրիշ, ավելի խիտ բնակեցված քաղաքներինը։

Ինչ վերաբերում է հատակագծի հետագա իրագործման հերթականությանը՝ թեթևացված մանր և առավել կապիտալ կառույցների տիպերի ընտրությանը, ապա այն ամենը, ինչ հաջողվեց տեսնել 4, 3, և 2 հարկանի, ինչպես նաև միահարկանի խմբավորված տների տիպերը, ինչպես խորանարդ մետրի արժեքով, այնպես էլ նախագծումով միանգամայն ռացիոնալ են ու խնայողական։

Երևանի հատակագծման աշխատանքի ողջ գլխավոր մասը համարելով միանգամայն կատարված, ես մի անգամ ևս ընդգծում եմ, որ անհրաժեշտ է շուտափույթ գլուխ բերել ճշգրտված հատակագիծը իր բոլոր բացատրական հաշվումներով ու նորմաներով, որպեսզի իր ճիշտ և արամաբանական ավարտին հասցվի զեղեցիկ սկսված այս խոշոր գործը։ Իսկ նախապատրաստական աշխատանքների մեջ առաջին հերթին պետք է դրվի քաղաքի կոյուղու և ուրիշ ստորերկրյա կառուցվածքների նախագծերի հարցը, որոնք ազդում են փողոցների ցանցի համադասավորության վրա։

Ճարտարապետության ակադեմիկոս Ա. Վ. Շչուսև,

27 հոկտեմբերի 1928 թ., Երևան։

* * *

ՔԱՂՎԱԾՔ

ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի 25-ը հունիսի 26 թ. նիստի № 25 արձանագրությունից։

Լսեցին

15. Երևան քաղաքի հատակագծման աշխատանքները կանոնավորելու և ղեկավարելու համար Երքաղխորհրդի կողմից կազմված հանձնաժողովում ընկ. Ա. Թամանյանի աշխատանքների մասին.

(տեղեկանք, Երքաղխորհրդի 1926 թ. նախագահության հունիսի 10-ի նիստի № 7 արձանագրության 4-րդ կետի որոշումը)

Զեկ. ընկ. Հ. Պողոսյան

Որոշեցին

15 ա/. միանգամայն ժամանակին համարել ժողկոմխորհի կողմից հաստատված Երևան քաղաքի հատակագծի նախագծի մանրամասն մշակման աշխատանքների սկսելը։

բ/. Այդ աշխատանքները հանձնարարել Երևանի պլանավորման հեղինակ, ճարտ. Ա. Թամանյանին։

գ/. Երևան քաղաքի հատակագծի մանրամասն մշակված նախագիծը կյանքում կիրառելու համար Երքաղխորհրդին կից կազմել հատուկ հանձնաժողով ճարտ. ընկ. Թամանյանի նախագահությամբ։

Հանձնաժողովի մյուս անդամների ընտրությունը վերապահել Երքաղխորհրդին։

դ/. Առաջարկել Երքաղխորհրդին մշակել և ժողկոմխորհի հաստատության ներկայացնել սույն որոշման «Գ» կետում հիշված հանձնաժողովի կանոնադրությունը։

ե/. Սույն որոշման «Ա» կետում հիշված աշխատանքների հետ կապված բոլոր ծախսերը դնել Երքաղխորհրդի վրա և առաջարկել նրան համապատասխան գումարներ նախատեսել յուր բյուջեում։

զ/. Սույն որոշման «ա» և «գ» կետերում հիշված աշխա-

տանքների հաջող ընթացքի համար ազատել ճարտ. ընկ. Ա. Թամանյանին Պետպլանի շին-տեխնիկական սեկցիայի նախագահի պարտականություններից և մշտական աշխատանքից պետպլանում, թողնելով նրան պետպլանի նախագահության անդամ։

ժողկոմխորհի նախագահ Ս. Համբարձումյան
ժողկոմխորհի գործերի կառավարիչ Բ. Մալխասյան
ժողկոմխորհի քարտուղար Ա. Թոմմաջյան

Իսկականի հետ ճիշտ է արձ. մասի վարիչ (ստորագրություն)

30 հունիսի 1926 թ.
մ. ք. Հայկական ՍՍՀ
ՊԿԱ ֆ. 130. ց.1,գ.349։

* * *

ՕՐԱԳԻՐ № 5ա

ՀԽՍՀ ժողկոմխորհի 1924 թ. ապրիլի 3-ի գիշերվա ժամը 1-ի արտակարգ նիստի նախագահ՝ ընկ. Լուկաշին

քարտուղար՝ ընկ. Պարոյան

Լսեցին

1. Ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի զեկուցումը իր կազմած Երևան քաղաքի զարգացման և կարգավորման հատակագծի մասին։

Որոշեցին

1. Ակադեմիկոս Ալեքսանդր Հովհաննեսի Թամանյանի կազմած Երևան քաղաքի զարգացման և կարգավորման հատակագիծը հաստատել։

2. Անհապաղ ձեռնարկել հատակագիծը գծանշելու և նշանակելու օտարացնելիք կալվածքների սահմանները (կարմիր գծերը)։

Այսօրվանից արգելվում է թե՛ մշտական և թե՛ ժամանակավոր շենքերի կառուցումը, ինչ նպատակով էլ որ լինի այն հողամասերի վրա, որ պիտի օտարացվեն համաձայն հատակագծի։

Օտարացնելիք հողամասերի վրա գտնվող տները, նրանց հարակից շենքերը, ցանկապատերը, համաձայն հատակագծի, պետք է քանդվեն։ Այն տները, որոնք անբնակ և բոլորովին անպետք են բնակվելու համար, քանդել առաջին հերթին։ Բնակելի տները, բնակարանների պակասության պատճառով, կարելի է չքանդել, մինչև նրանց բոլորովին անպետքանալը, կամ թե մինչև այն ժամանակը, որ կնշանակե Երևանի քաղաքավարժկոմը ամեն մի դեպքում առանձին։ Այդ տները չպետք է վերաշինվեն, սակայն, բացառիկ դեպքերում կարելի է այդ անել միայն Գերագույն տեխնիկական բաժնի թույլտվությամբ։

Քաղաքի սահմաններում գտնվող և արդեն լցված հին կոզերի գերեզմանատունը փակել և արգելել հետագայում այնտեղ մեռելների թաղումը։

Առաջարկել Երևանի քաղաքավարժկոմին այս որոշման առթիվ հրատարակել հրահանգ։

Առաջարկել Երևանի քաղգավգործկոմին հատակագծի ղեկավարությամբ;

1. Մաքրել բոլոր հին տներից և փլատակներից այն հողամասերը, որոնք, համաձայն կարգավորման հատակագծի, պիտի օտարացվեն։

2. Անմիջապես ձեռնարկել բոլոր այն փողոցների հատակագծմանը, որոնք միացված են քաղաքին՝ քաղաքն ընդարձակելու նպատակով։

3. Մշակել քաղաքի կոյուղու ջրամատակարարման և ընդհանրապես այն բոլոր նախագծերը, որոնք կապված են քաղաքի բարեկարգման հետ։

Ժողկոմխորհի քարտուղար՝ Կ. Պարոյան

Ճիշտ է՝ ընդ. բաժնի վարիչ օգնական Գյանջեցյան

Հայկական ՍՍՀ ՊԿԱ. ֆոնդ 130,
ց. 1, գործ. 11, էջ 37

* * *

«Շնորհիվ Ալեքսանդր Թամանյանի, Երևանը պատկանում է Սովետական Միության այն փոքրաթիվ քաղաքների շարքին, որոնց աճը ենթարկվել է միասնական հատակագծի։ Պետք էր մեծ հավատ ընծայել սովետական ժողովրդի ու պետության ստեղծագործական հնարավորություններին դեռևս 20-ական թվականների սկզբներին, երբ ստիպված էին կառուցել դժվարին պայմաններում, ռեսուրսներ համար ապագա հիասքանչ մայրաքաղաքի կերպարը։ Երևանի գլխավոր հատակագծի և մի շարք հիանալի կոթողների, ինչպես, օրինակ, Կառավարական տան հեղինակ Ալեքսանդր Թամանյանը երազում էր նաև ժողովրդական վիթխարի տան շինարարության մասին, որի նախագիծը կազմել էր։

Ժողովրդական տան կառուցումը Թամանյանը դատում էր իբրև մեծ դարաշրջանի հուշարձան և պահանջներով էր մոտենում նախագծին. հիշում եմ, երբ ես շինարարությունը էժանացնելու նպատակով առաջարկեցի գրանիտե երեսապատումը փոխարինել բետոնե սեամեջ բլոկներով և գրանիտակերպ ֆակտուրայի արտաքին մակերեսով, նա վճռականորեն մերժեց այդ առաջարկը իբրև «բուտաֆորիա»։

Երբ ես նայում եմ դարաշրջանի կոթողին, ես ոչ միայն պետք է տեսնեմ, այլև զգամ շենքի մոնոլիտությունը, ասում էր նա։

Այժմ, երբ մենք անցնում ենք Երևանի փողոցներով, շատ բան է մեզ հիշեցնում հիանալի ճարտարապետին, սքանչելի մարդուն ու քաղաքացուն։ Հայ շինարարները բուռն թափով ստեղծում են գեղեցիկ ու հարմարավետ տներ, մարմնավորելով Ալեքսանդր Թամանյանի ստեղծագործական մտահղացումները։

Պերիակ Զավրիև
Սովետական ճարտարապետ

* * *

«Երևանն առաջին քաղաքներից էր, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ունեցավ իր մշտական հատակագիրը, և հատակագծով էլ դրվեցին առաջին շենքերի հիմնաքարերը։ Այդ Ալեքսանդր Թամանյանի մեծագույն նվերն էր մեր մայրաքաղաքին։

1929 թվականի վերջերին գեոդեզիստ Իգիթխանյանը (քաղսովետի գեոդեզիական բաժնի ղեկավարը և Երևան

քաղաքի նոր հատակագիծը տեղում առաջին կիրառողը) հայտնեց, որ Թամանյանը ցանկանում է ինձ տեսնել։

Անմիջապես գնացի նրա մոտ։

— Ինձ ասացին, որ դուք աշխատում եք որպես հատակագծող,— սկսեց Թամանյանը ռուսերեն։— Ղարաքիլիսայի հատակագծման համար ձեր կազմած կոնկուրսային նախագիծը ես տեսել եմ, վատը չէր։ Ցանկանում եմ, որ դուք աշխատեք Երևանի հատակագծի վրա։

Համաձա՞յն եք։

Ես մեծ ուրախությամբ տվեցի իմ համաձայնությունը և մի երկու օրից հետո աշխատում էի Թամանյանի արվեստանոցում։

Հենց առաջին օրը նա ինձ մանրամասն ծանոթացրեց քաղաքի հատակագծին, խոսեց նրա կոմպոզիցիայի, փողոցների ցանցի, հրապարակների դասավորության և Հրազդանի արհեստական լճի մասին։ Նկարագրեց համալսարանական, կուլտուր-կրթական թաղամասերի առանձնահատկությունները, խոսեց նաև քամիների ուղղության, Հրազդանի ձորի օգտագործման, կուլտուրայի և հանգստի զբոսայգում ստադիոնի տեղադրման մասին։

Այդ բոլորը պատմելիս ինձ թվում էր, թե նա ոչ թե հատակագծի մոտ է կանգնած, այլ կարծես քայլելիս լինի ապագա Երևանի լայն ու գեղեցիկ փողոցներով։

Ցուցափայտը պարզած նա կրկնում էր.

— Ահա այս Լենինի անունը կրող հրապարակն է, որ զարդարված կլինի հայկական ոճի խոշոր շենքերով. սա կլինի մեր պետական վարչական կենտրոնը։ Ահա ժողովրդական տունը, սա կոնսերվատորիան է, իսկ սա էլ գեղարվեստի տունը։ Ահա և կասկածը, որը հատակագծի հիմնական կոմպոզիցիոն առանցքն է կազմում և մեր քաղաքի տեսարժան վայրերից ամենագեղեցիկն է լինելու։

Թամանյանը պատմում էր մեծ ոգևորությամբ, պարզ ու հասկանալի։ Լսելով նրան, ինձ թվում էր, թե ես նրա հետ միասին արդեն տեսնում ու քայլում եմ վերակառուցված նոր Երևանում։

— Այս բոլորը հարկավոր է ամենայն սիրով ու խնամքով մշակել։ Մեր մայրաքաղաքը պետք է լինի ամենից գեղեցիկը,— նշեց նա ժպտալով և մի շարք գործնական ցուցումներ տալուց հետո, ասաց.

— Դե՛, անցեք գործի։

Ես մեծ լիցքով ու զգուշությամբ սկսեցի գծել նոր քաղաքի հատակագիծը։ Ամեն մի ինքնուրույն գիծ տանելիս, սիրտս բաբախում էր՝ կհավանի՞ արդյոք։

Թամանյանի մանրակրկիտ ցուցումներով վերամշակված Երևանի ընդհանուր հատակագիծը նոր էի ավարտել և զմայլվորել մեծ խնամքով ու սիրով, երբ նա մոտեցավ հատակագծին, ուշադիր դիտելուց հետո ասաց.

— Այս հանգույցը ինձ դուր չի գալիս, հարկավոր է փոխել։

— Բայց, Ալեքսանդր Իվանովիչ, արդեն հատակագիծը ներկված է և դժվար կլինի...

— Ոչինչ,— ընդհատեց նա,— ռադիալով կարելի է հանգիստ ջնջել։

Ի՞նչ արած։ Սկսեցի ուշադրությամբ ջնջել հատակագծի նշված մասը։ Մյուս օրը վերամշակված հանգույցն առանձին

թղթի վրա վարպետի հետ համաձայնեցնելուց հետո, անցկացրի գծագրի պրա և նորից մեծ խնամքով ներկեցի։ Համարյա նոր էի ավարտել աշխատանքը, երբ Թամանյանը մտավ արվեստանոց ու դիմեց ինձ.

— Գիտե՞ք ինչ,—դիշերը մտածեցի այդ հանդույցի մասին և դատա, որ լավ կլինի, ահա այսպես մշակել,— ասաց նա և գրպանից հանելով մի թերթ թուղթ, ցույց տվեց.

— Բայց ես արդեն անց եմ կացրել ձեզ հետ համաձայնեցրած հանդույցը և ներկել. մի՞թե երկրորդ անգամ պիտի ջնջեմ։

— Ոչինչ,— դժգոհելու կարիք չկա, հայտնի ճարտարապետ Կամերոնն ասել է. «Այն գծագիրը, որը մաշված չէ ռադոլով, լավ գծագիր չէ»։

Հետագայում կարիք եղավ մի երրորդ անգամ ևս ջնջել այդ նույն հատվածը, որից հետո միայն, ի վերջո, Թամանյանը գոհ մնաց։

Չնայած Ալեքսանդր Թամանյանը համառ կերպով պնդում էր քաղաքի բնակելի մասը զերծ պահել երկաթգծից, և այն տանել քաղաքից դուրս, բայց նախագծողների համառության պատճառով, Թամանյանի առաջարկը մնաց թղթի վրա։

Այդ կապակցությամբ քաղաքի կենտրոնական մասի մի հատվածը, Երևան-Աղստաֆա երկաթգծի կառուցման պատճառով կարիք եղավ վերանախագծելու։ Թամանյանը հանձնարարեց ինձ մի քանի վարիանտներ մշակել այդ հատվածի համար։ Ես երեք վարիանտ մշակեցի։ Նա մեծ ուշադրությամբ դիտեց վարիանտները, գծագրի վրա տարբեր ուղղություններով շրջեց միջամատը (հավանաբար մտքում նախագծում էր) և ապա ասաց.

— Փորձենք մի քանի վարիանտ ևս...

— Իմ կարծիքով այս վարիանտն ամենահաջողն է, կանգ չառնե՞նք սրա վրա,— ասացի ես,—ցույց տալով վարիանտներից մեկը։

— Ո՛չ, աշխատեցեք դեռ։

Ես համբերությամբ մի երեք վարիանտ էլ պատրաստեցի։ Մի քանի օրից հետո նա մոտեցավ իմ աշխատասենյակին, դիտեց վերջին երեք վարիանտները և խնդրեց, որ ցույց տամ նախկինները։ Մի քանի անգամ ամեն մի գծագիրն ուշադիր դիտելուց հետո՝ անջատեց վարիանտներից մեկը.

— Ահա սրա վրա կարելի է կանգ առնել, սա լավ է։

— Ալեքսանդր Իվանովիչ, սա հենց այն վարիանտն է, որի մասին ես անցյալ անգամ ասացի, թե ամենահաջողն է։

Նա դարձյալ ներողամտաբար ժպտաց և ասաց.

— Այո՛, բայց հարկավոր էր համոզվել, որ ավելի լավը չի կարելի անել։ Ոչինչ իզուր չի անցնում, այժմ այս մնացած հինգ վարիանտների բացասական կողմերը նկատի առնենք և սկսենք վերամշակել ընտրածը։

Թամանյանը մեր մայրաքաղաք Երևանի ամենաջերմ սիրահարն էր։ Նոր կառուցվելիք շենքին հողամաս հատկացնելիս, շենքը կառուցելիս, նոր նախագիծ կազմելիս նրա դեմքը պայծառանում, սիրտը լցվում էր անհուն բերկրանքով։ Նա ապրում էր Երևանի շինարարության համար բարձրացող ամեն մի քարով, նոր բացվող ամեն մի փողոցով, նորաստեղծ ամեն մի պուրակով և ծաղկանոցով։ Թամանյանը, կարելի է ասել, պաշտում էր Երևանը, պաշտում էր դարերի նիրհից ու թմրությունից արթնացող այս քաղաքը, որի վրայից նա իր մոդական ձեռքով մաքրում էր մոայլ անցյալի

կեղտն ու փոշին և, դրանով իսկ, ինքն էլ նոր շունչ ու նոր հոգի էր առնում։

Կառուցվում էր Սովետական Երևանը, անսահման բերկրանք բերելով ու ոգևորություն ներշնչելով Թամանյանին։

Արդյոք այդ չէ՞ր պատճառը, որ նա մի քանի անգամ ստանալով Մոսկվա տեղափոխվելու և այնտեղ աշխատելու հրավեր, միշտ էլ հրաժարվում էր, ասելով.

— Մոսկվան առանց ինձ էլ կկառուցվի, ես ուզում եմ Երևանը կառուցել։

Երբ պահանջվեց Լենինի անվան հրապարակի վրա հողամաս հատկացնել կենտրոնական փոստի շենքի կառուցման համար, ըստ Մոսկվայում կազմվելիք նախագծի, Թամանյանը համարյա աղաչում էր պատվիրատուին, որպեսզի այդ շենքի նախագծին անպայման կապված ու նույնատիպ լինի կառավարական տան հետ։

— Լենինի անունը կրող հրապարակի շենքերը պետք է զեղեցիկ լինեն և միևնույն ոճով կառուցված,— պնդում էր Թամանյանը,— իսկ եթե նախագծողները դժվարանան լուծել այդ խնդիրը, ես հանձն եմ առնում անվճար անել այդ, միայն թե չտուժեն հրապարակի ընդհանուր ոճն ու տեսքը։

Քաղաքի նոր հատակագծումը պահանջ առաջադրեց՝ Լենինի և Շահումյանի հրապարակների միջև ընկած զբոսայգին շարունակել դեպի հարավ-արևմուտք և հասնել մինչև Կարմիր Բանակի փողոցը։ Նախկին «Ղանթար» կոչված շուկայի և նրա շրջակայքի մերկ տարածության փոխարեն նախագծի վրա տեղ գրավեց ներկայիս Կիրովի անվան մանկական այգին։ Երբ Թամանյանի ցուցումներով նոր էի ավարտել այդ հատվածի նախագիծը՝ նրա հետ դիտեցինք այն և զրուցեցինք, թե

ի՞նչ պատկեր կստացվի իրականում, ինչպե՞ս կկապվի այն հրապարակի հետ և նախկինի համեմատությամբ ի՞նչ առավելություններ կունենա։

Նույն օրը աշխատանքի վերջում միասին դուրս եկանք փողոց, շրջեցինք քաղաքի մի քանի կարևոր կետերում, որոնք ըստ ծրագրի հետագա մշակման կարիք ունեին։ Վերադառնալիս անցնում էինք Շահումյանի փողոցի այն մասով, որի նախագիծն ավարտված էր։

Ես դիմեցի Թամանյանին հետևյալ հարցով.

— Արդյոք ե՞րբ կկիրառվի քաղաքի հատակագծի այս մասը։

Թամանյանը մի պահ կանգ առավ, նայեց շրջապատի անշուք տեսարանին ու պատասխանեց.

— Ավելի շուտ, քան մենք ձեզ հետ կարծում ենք։ Առաջ քաղաքները շափազանց դանդաղ էին կառուցվում, իսկ այժմ այդպես չէ։ Այժմ քաղաքները զարմանալիորեն արագ են կառուցվում։ Եվ այն, ինչ նախագծվում է այսօր, վաղը կարող ենք տեսնել իրականացած։

Այսօր, երբ անցնում եմ նոր Երևանի կառուցապատված ու բարեկարգ փողոցներով, որոնք քառորդ դար առաջ թղթի վրա տարված սոսկ գծիկներ էին, միշտ հիշում եմ անմահ Թամանյանի այդ խոսքերը։

Ի դեպ, Ալեքսանդր Թամանյանը Երևանի հատակագիծը կազմել էր առանց վարձատրման, և, երկար տարիներ աշխատելով նրա վրա, հատուցման ոչ մի պահանջ չէր ներկայացրել։

1936 թվականի սկզբներին «Խորհրդային Հայաստան» թերթում լույս տեսավ ճարտարապետ Կոնդախչյանի հոդվա-

ծը, որն անհիմն քննադատության էր ենթարկում Թամանյանի կազմած Երևանի հատակագիծը։ Հոդվածն ինձ անչափ վրդովեց։

Վերցնելով թերթի այդ համարը, գնացի Թամանյանի մոտ։

— Ես արդեն կարդացել եմ։

— Եվ ի՞նչ, անպատասխա՞ն պիտի թողնենք։

— Գիտե՞ք ինչ,—ասաց Թամանյանը հանգիստ,—այդպիսի հոդվածներին չարժի պատասխանել, ժամանակը ինքը կպատասխանի դրանց։ Եթե իմ նախագծերը լավ են, և ես ճիշտ եմ լուծել դրանք, ապա իմ գործը կմնա և կհիշվի, իսկ եթե ոչ՝ ապա կմեռնի, և ոչ ոք չի հիշի։

Ա. Մինասյան
ճարտարապետ,
(«Ալեքսանդր Թամանյան,
Հոդվածներ, փաստաթղթեր,
ժամանակակիցները նրա մասին»
1960 թ. Երևան)։

* * *

Ակադեմիկոս Թամանյանի
անմահ հիշատակին

Որքան նման է եղել պահն այդ՝ մարող կանթեղի

. . . . . .

... Նրա կոպերը երեկ երբ քարացել են խաղաղ—
Կապույտ բոցով բռնկված վերջին ջերմում ուղեղի
Նա տեսել է երևի արևային մի քաղաք...

Ինչպես մաքուր մարմարի կարույտ կողին նկարած
Արևային ժամացույց՝ քարտեզն ահա քաղաքի—
Պողոտաներ, փողոցներ՝ բոլորաձիգ երկարած,
Իսկ կենտրոնում երկնահաս, գրանիտյա մի բազին։
Ակնթարթում մի վսեմ, որ երկարում է դարեր,
Փոզփոզել են ուղեղում—սիրտ պայթելու չափ պայծառ—
Սյունաշարքեր, տերրասներ, աստիճաններ մարմարե,
Եվ պարտեզներ ոսկեզօծ, շատրվաններ երգաձայն...
Աշտարակներ երկնահաս և կամարներ կորանիստ,
Քանդակագործ կարնիզներ, պատուհաններ նուրբ հատած,
Եվ մարմարիոն մարմնագույն, և գանգրահեր գրանիտ,
Եվ վարդաբույր տուֆաքար, և բիլ բազալտ սրբատաշ...

. . . . . .

. . . . . .

Պարզել է ձեռքը դողդոջ դեպի ցնորքն այդ կապույտ,
Այնքան մոտ է, այնքան մոտ — կշոշափի նա հիմա,—
Բայց ծանրացել է հանկարծ ձեռքն հանճարեղ ու հմուտ,
Ընկել է վայր - չոր կրծքին... լռություն։ Մահ։
1936 թ. —

Եղիշե Չարենց
Սովետահայ բանաստեղծ

ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի մայրաքաղաքին մոտիկից ծանոթանալու նպատակով հատկապես վերջին տասնամյակներում աշխարհի ամենատարբեր երկրներից բազմաթիվ պետական, հասարակական գործիչներ, զբոսաշրջիկներ են եկել այստեղ։ Եկել են, ու վերադարձին, հիացած վարդաշեն մեր քաղաքի հին ու նոր կառույցներով, հայ շինարարների կերտումներով, թողել են իրենց սրտի խոսքը՝ ուղղված Երևանին ու նրա մարդկանց։ Երևանի գեղեցկությամբ ու զարգացման թափով ապրել են և՛ երևանցին, և՛ ոչ երևանցին, արվեստի, մշակույթի մարդիկ, պետական, կուսակցական գործիչներ։

Այժմ խոսքը տանք Հայաստանի մայրաքաղաքի ականատեսներին։

* * *

Կառուցումն առաջին բանն է, որ աչքի է զարնում, երբ մոտենում ես Երևանին։ Կաթսրավուն ամպերի ստվարկով արծաթագագաթ Արարատի մռայլ զանգվածի ֆոնի վրա՝ գորշ

քարերի այդ քաղաքը հեռվից ինձ վրա թողեց այնպիսի տպավորություն, որ նա պարփակված է շինարարական փայտամածների վանդակում, որոնց վրա բանվորների մրջնային ֆիգուրները նոր շենքեր են կերտում, ասես, անմիջապես բիբլիական լեռան զանգվածներին։

«Խորհրդային Հայաստան»
Թերթ, 1928 թ.

Մաքսիմ Գորկի
Թուս գրող

* * *

Կանցնեն արվեստի ընթացիկ շատ նվաճումներ, բայց Կառավարական տունը, այդ քարե սիմֆոնիան կմնա և կհիացնի ուրուանդներին։ Դա մի կոթող է, որ պիտի խոսի դարերի հետ, որովհետև կատարված է մի զարմանալի ինքնատիպ արվեստով ու բարձր հաշակով։ Հայկական ճարտարապետության լավագույն ավանդների խտացումը կա նրա մեջ և մեր ժամանակի լայն մտքի թռիչքը։ Մեր հին ճարտարապետության պայծառ գծերը այստեղ հանդես են եկել մեր նոր ստեղծագործական վերամշակումով, կամ՝ լավ է ասել, որ այդ գծերը պարզապես ստացել են այնպիսի գործադրություն, որ ընդունել են նոր որակ և ներկայացնում են խոսուն գեղեցկություն։ Քարերն այստեղ մեծ վարպետի կախարդանքով ազնվացել են, կենդանացել։ Եվ ամեն ինչ այստեղ ունի այնպիսի համաչափ ու նուրբ ներդաշնակություն, որի հանդեպ մարդու խոով հոգին անգամ խաղաղվում է։

Այսպես է ճշմարիտ արվեստի ուժը։

Եվ Թամանյանի Կառավարական տունը, իրոք, ունի այդ մոգական հմայքը։ Ոչ ոք չի կարող անտարբեր անցնել նրա մոտով։ Ուզում ես նայել նրան նորից, և որքան նայում ես, նա այնքան հմայում է քեզ։

Ես պիտի խոստովանեմ, դժվարանում էի պատկերացնել, և անգամ չէի հավատում, թե կավաշեն Երևանը կարող է մի օր վերակառուցվել այնպես, որ ժամանակակից քաղաք դառնալով՝ ներդաշնակի շրջապատին, լինի միաձույլ և օրգանական։

«Խորհրդային Հայաստան»
1928 թ., № 161։

Ստեփան Զորյան
Սովետահայ գրող,

* * *

Ի՞նչ քաղցր է նստել հայրենի հինավուրց հարկի տակ և հոգով հաղորդակից լինել դարերի խորհրդին ու երազին։

Մատենադարան, 1927 թ.

Ավետիք Իսահակյան

* * *

15 դարեր են լռում այս պատերի մեջ, և ես լսում եմ նրանց լռությունը։

Դերենիկ Դեմիրճյան

Մատենադարանի տպավորությունների մատյան, 1927 թ.

* * *

Մատենադարանը հարստացրեց իմ միտքը։ Ես երջանիկ եմ։

Հանրի Բարբյուս

21/X 1932 թ.

* * *

Երևանի Մատենադարանը ամենակուլտուրական ժողովուրդներից մեկի պատմությանը վերաբերող տեղեկությունների իսկական զմայլելի գանձարան է։ Միայն կարելի է նախանձել այն մասնագետներին, որոնք կարող են այստեղ գտնել ամենահարուստ նյութեր, ինչպես Հայաստանի, այնպես էլ նրա սահմանակից երկրների մասին։ Մեծ գոհունակություն են պատճառում ձեռագրերի պահպանությունը և քարտագրման ապշեցուցիչ կարգ ու կանոնը և գիտական տեխնիկան։

Մատենադարանի տպավորությունների մատյան, 1934 թ.

Ա. Յակուբովսկի
Սովետական գիտնական,
ակադեմիկոս

Այնքա՞ն հարուստ են Երևանի մատենադարանի այս ձեռագիր գանձերը, արձակն ու չափածոն... խորապես ամաչում եմ, որ չեմ կարող իմ մայրենի լեզվով կարդալ... Թերևս կրթարգմանեի մեկ-երկուսը անգլերեն...

Մատենադարանի տպավորությունների մատյան
1935 թ.

Վիլյամ Սարոյան
Գրող, ԱՄՆ

* * *

Հայաստանի Մատենադարանը անջնջելի տպավորություն է թողնում։ Կանգնած ես ամենակուլտուրական պատմական մի ժողովրդի դեմ—հանդիման, որը դասական հնադարից ընդհուպ մինչև ներկա ժամանակները հաշվվել է և հաշվվում է կուլտուրական ազգերի առաջին շարքերում։ Եվ որքան ուրախալի է, որ ժամանակակից հայ սերունդը այսպիսի սիրով ու հոգատարությամբ է վերաբերվում իր մեծ անցյալին։ Շատ արխիվներ կարող են սովորել՝ կազմել այնպիսի ապշեցուցիչ, խելացի գույքանկարագրություն, ինչպիսին է թեկուզ այն, որով Մատենադարանի սիրալիր և գիտնական արխիվավարները մի քանի րոպեի ընթացքում գտան իմ աշխատանքի համար շատ արժեքավոր փաստաթղթեր։ Նրանց հայտնում եմ իմ երախտագիտության զգացումը և անձնական շնորհակալությունը, ինչպես նաև իմ հիացմունքը այս հրաշալի գանձարանի նկատմամբ։

Մատենադարան,
1944 թ.

Ե. Տարլե
ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս

* * *

Խոր ուշադրությամբ ես հետևել եմ համաշխարհային հրաշակ վայելող այս թանգարան-մատենադարանի լուսապայծառ պատմությանը։ Ամբողջ քաղաքակիրթ աշխարհի գիտնականները շափազանց երախտապարտ են Սովետական Միությանը և հայ գիտնականներին՝ այն ջերմ հոգատարության համար, որ ցուցաբերում են նրանք այս համաշխարհային գանձարանի նկատմամբ։

Մատենադարանի տպավորությունների գիրք, 1945 թ.

Հյուլետ Ջոնսոն
Քենտբերիի առաքելական աթոռի ավագ երեց

* * *

Կյանքի քաղաքակրթության բարձր մակարդակի առավել նշանավոր ապացույցներից մեկը Սովետական Միության մեջ՝ դա Սովետական պետության և ժողովրդի վճռականությունն է՝ անցյալ մշակույթի գանձերը կենդանի ներկայի մասը դարձնելու գործում։ Այս քաղաքակրթության գերազանց օրինակն է հայկական ձեռագրերի աշխարհահռչակ Մատենադարանը Երևանում։

Մատենադարանի տպավորությունների գիրք, 1945 թ.

Էդվին Սմիտ
Ամերիկա-սովետական բարեկամության ազգային խորհրդի նախագահ

* * *

Անհնար է գլուխ չխոնարհել հարազատ հայ ժողովրդի հին և միջնադարյան մշակույթի առջև։ Անհնար է չհպարտանալ նրա հոյակապ պատմական անցյալով։ Անհնար է չուրախանալ այն բանի համար, որ իմ ժամանակակիցները այսպիսի սիրով ու ավյունով են ձեռնարկել այս թանկարժեք նյութերի ուսումնասիրությունը։

Չեմ կասկածում, որ Երևանը մոտ ապագայում կդառնա Սովետական երկրի մշակութային կենտրոններից մեկը։

Մատենադարանի տպավորություններից գիրք, 1945 թ.

Լեոն Օրբելի
ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս

* * *

Երևանը Հայաստանի հնագույն քաղաքներից է։ Մեր թվականությունից առաջ 8-րդ դարում կառուցված այդ քաղաքը հետագայում դարձավ Իրանը և Անդրկովկասը Փոքր Ասիայի հետ կապող քարավանների ճանապարհների խաչուղի և առևտրական կարևոր հենակետ։

Հոկտեմբերը զարգացման նոր հեռանկար բացեց Երևանի համար։ Երբեմնի կավածեփ խրճիթներով հայտնի Երևանը այժմ գիշերները ողողվում է պայծառ լույսերով։ Լեռնային Հայաստանում ջրի առատությունը լույսի առատություն է ծրնում Երևանում և հանրապետության ուրիշ քաղաքներում ու գյուղերում։

Գիշերային Երևանը ճառագայթում է, փայլատակում, լույսերը, ասես, միախառնվում են և պարզկա երկնքի ներքո, ստեղծում բոցավառվող մի ծով։ Երևանից Արարատը հեռու է տասնյակ կիլոմետրեր, բայց թվում է, թե հենց ձեռքդ մեկնես՝ կհասնի նրան։ Այդ արտասովոր լեռը, որ միայնակ հառնել է դաշտի մեջ, այնքան գեղեցիկ է ու ինքնատիպ, որ նրա նման երկրորդը չես գտնի աշխարհում։

Իսկ Զանգվի ձո՞րը... Ասես կենդանացել են երեկոյան Զանգուն ու նրա ափերը գարնան կանաչի շորշոփից։ Մեղմիկ խոխոջում է գետը. երեկո է. շուրջը լռություն է... և հանկարծ լռությունն սկսում է շնչել. ասես, լսում եմ հենց բնության

ձայնը, որը երգում է իր անմահ երգը... լռություն է... և հեռից լսվում է մեղմ, մելանխոլիկ մեղեդին... ինձ ծանոթ է այդ մեղեդին, իհարկե, Կոմիտասի մեղեդին է։ Լսել եմ Մոսկվայի և ապա Երևանի համերգասրահներում, իսկ հիմա լսում եմ այստեղ՝ Զանգվի ձորում, որ հիմա միայնակ է, և ուր մեղմիկ խոխոջում է ինքը Զանգուն, իսկ շրջապատը կանաչ թավիշ է հագել։ Անցնում եմ առուն, շարունակում ճանապարհս լանջն ի վեր, ալ են վառել մասուրի հատապտուղները, իսկ փշերը, մացառները ծակում են ձեռքերս։ Մոտիկ, շատ մոտիկ են ջութակի հնչյունները... քայլում եմ աչքս ակացիաներին ուղղած և այնտեղ տեսնում մեջքով դեպի ինձ կանգնած մի մանչուկի, որը իր ջութակի հետ ընկերացած՝ ձորի անդորրը մարում է անմահ Կոմիտասի մեղեդու հոգեպարար հնչյուններով։

Գեղեցիկ է գիշերային Երևանը, իսկ ե՞րբ գեղեցիկ չէ այդ հինավուրց քաղաքը՝ սիրտը Հայաստանի։

«Ճանապարհորդություն դեպի Երևան» գրքից, 1940 թ.

Լև Օվալով
Ռուս գրող և լրագրող

* * *

Խարազանի շաչյունի տակ, գերիներու գինի հանգույն,
Մենք որ բերդեր լեռնացուցինք օտար տիրոջ գահին հաշվույն,
Գիծի, գույնի ու կամարի ինչ տեսիլքներ ունինք փարթամ,
Որ նայվածքիդ արևին դեմ ապարանքներ պիտի դառնան...
Մարմար կառույցի ոստան Երևան։
Ինչ որ հեղեղն էր կուտակեր, պիտի տանի հեղեղ մ ուրիշ,
Պիտի սրբե սարբկության ամեն արատ և ամեն նիշ...
Հին քնարին նոր լար ված, հին Գողթանի մենք նոր գուսան,

Հազար ներբող պիտի հյուսենք, հազար մաղթերգ եղբայրու-
թյան,
Նոր դավանանքի մեհյան Երևան։
Ճառագայթի ճամփաներե, ակունքներե խոր ու ներհուն,
Երազն անհաս՝ հին ու գալիք բոլոր մարդոց ու դարերուն,
Պիտի հոսի լանջքիդ վրա, սեգ սարերուդ ջուրին նման,
Որ բարիքի, բեղուն լույսի դառնաս մառան ու ավազան,
Հանուր կոչունքի սեղան Երևան։

1945 թ.

Վահե-Վահյան
Սփյուռքահայ բանաստեղծ

* * *

Ես զարմանքով և հիացմունքով տեսա, թե հնագույն մշակույթի որքան շատ գանձեր են պահվել այստեղ՝ Հայաստանում... Հուսով եմ, որ Մատենադարանի այս գանձերը ապագայում կդառնան աշխարհի մյուս երկրների գիտնականների ուսումնասիրության առարկան։

Մատենադարանի տպավորությունների գիրք, 1946 թ.

Ալբերտ Օլզեր
Կոպենհագենի համալսարանի
պրոֆեսոր

* * *

...Մենք հիացած ենք Հայաստանի հին մշակույթի փառքով... Այսպիսի հին ձեռագրեր Չինաստանում շատ քիչ կան։

Մատենադարան, 1946 թ.

Մաո Դուն
Չին գրող

* * *

Որպես պատմաբան, որի համար հին ձեռագրերը մարդկության առաջընթաց շարժումն ապացուցող վեհագույն գանձեր են, արտահայտում եմ իմ երախտագիտության խոր զգացմունքը հայ տաղանդավոր ժողովրդին՝ համաշխարհային մշակույթի գանձարանում նրա կատարած հոյակապ ներդրման համար։ Ցանկանում եմ, որ մեր ամբողջ սովետական ժողովուրդը ավելի շատ ու ավելի լավ իմանա հայ ժողովրդի մշակույթի մասին։ ընդհանրապես և նրա թանկագին Մատենադարանի մասին՝ մասնավորապես։

Մատենադարան, 10/5—1947 թ.

Ն. Պանկրատովա
ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս

* * *

Նորից երջանիկ բախտ է վիճակվել՝
Մատենադարան կրկին գալ, տեսնել,
Նորից ողջույններ վեհ Հայաստանին՝
Ամենավսեմ երկրներից մեկին (գրել է հայերեն)։

Մատենադարանի տպավորությունների մատյան, 1947 թ.

Սերգեյ Գորոդեցկի
Ռուս բանաստեղծ

* * *

Տպավորությունը բառերով արտահայտելը դժվար է, գրեթե՝ անհնարին։ Տաղանդավոր հայ ժողովրդի հարուստ մշակույթը ոչ մի տեղ այնպես չի երևում, ինչպես այստեղ՝ Երևանի Մատենադարանում։

Փիլիսոփաներ, պատմաբաններ, գիտական-մաթեմատիկոսներ, բանաստեղծներ, աստվածաբաններ և համարյա այս բոլորը ինքնուրույն ստեղծագործություններով։

Էլ ո՞ր ժողովուրդը աշխարհում կարող է հպարտանալ՝ այսպիսի սիրով ու մաքրամաքնությամբ մինչև մեր օրերը հասցրած հարստությամբ։

Մատենադարանի տպավորությունների գիրք, 1948 թ.

Գ. Դեղևանի
Վրացական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

* * *

Մենք՝ մոսկվացի և լենինգրադցի պատմաբաններս, խոր հուզմունքով և երջանիկ զգացմամբ դիտեցինք հայ հնագույն հարուստ և հոյակապ մշակույթի այս բացառիկ հուշարձանը, նրա գիտության, նրա քերթության, նրա արվեստի հոյակապ գանձարանը։ Մեր սրտերը բաբախեցին սիրո և հարգանքի խոր զգացումներով եղբայրական այս ժողովրդի նկատմամբ, որը կարողացել է կերտել և պահպանել մշակույթի այսպիսի արժեքավոր հուշարձաններ։ Անկեղծորեն ցանկանում ենք, որպեսզի դրանք հրատարակվեն և մատչելի դառնան բոլոր նրանց համար, ում որ թանկ է հայ ժողովրդի ներկան ու անցյալը։

Մատենադարանի տպավորությունների գիրք, 1950 թ.

Ե. Կոսմինսկի
ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս

* * *

Ինձ հատկապես ուրախացրին հայ ժողովրդի հաջողությունները քաղաքաշինության ասպարեզում։ Նախկինում խուլ, հետամնաց քաղաքը Սովետական մարդկանց ջանքերի շնորհիվ կարճ ժամանակում դարձել է Հայկական Հանրապետության բարեկարգ քաղաքը։ Ազգային հարտարապետության սճով կառուցված բնակելի բազմահարկ շենքերը, ուղղաձիգ ու լայն պողոտաները և փողոցները, հատկապես Լենինի անունը կրող կենտրոնական հրապարակը ամենաբերկրալի տպավորությունն է թողնում։

«Երևան» թերթ, 1952 թ.

Կոզման Թանկրաց
Բուդապեշտի քաղաքագլուխ

* * *

Մեզ՝ մեքսիկացիներիս համար, որ սիրում ենք մեր ավանդույթներն ու մշակութային ժառանգությունը, այս հոյակապ Մատենադարանի օրինակը կհանդիսանա Մեքսիկայում կատարելիք մեր այն աշխատանքի չափանիշը, որ ձեռնարկում ենք մեր հին մշակույթի պաշտպանության համար, այն հաշվով, որպեսզի ամերիկյան մշակույթի ներկայացուցիչներին ապագայում ցույց տանք այն օրինակը, որի նմանը մենք այսօր տեսանք այստեղ։

Մատենադարան, 1952 թ.

Մեքսիկայի մշակույթի գործիչների պատվիրակություն

* * *

Ես համոզվեցի, թե ինչու Հայաստան են այցելում Սկանդինավյան երկրների շատ պատվիրակություններ։ Այդ փաստի պատճառները շատ են։ Դրանցից մեկն այն է, որ Հայաստանի արվեստը մեզ ավելի է հայտնի, և մենք գնահատում ենք այն. մյուս պատճառն այն է, որ մենք քաջ ծանոթ ենք և հասկանում ենք միջնադարյան ճարտարապետությունը։ Վերջերս մենք համոզվեցինք նաև, որ Հայաստանի արվեստը զարգանում է. իմ խոսքերի հաստատումն են կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները։

Տեխնիկական և մշակութային զարգացման տեսակետից Հայաստանն ունի իր ուրույն տեղը առաջավոր երկրների շարքում։

Ես հիացմունքով էի հետևում, թե որքան շատ բան է կատարված Հայաստանում կարճ ժամանակամիջոցում։

Ամենից առաջ ինձ հիացրեց ճարտարապետների աշխատանքը՝ թե՛ Երևանի հատակագծման, թե՛ բնակարանային շինարարության առումով։ Երևանը գտնվում է գեղադիր վայրում՝ բլուրների միջև, որը մեծ հմտությամբ օգտագործվում է ճարտարապետների կողմից։ Քաղաքը աչքի է ընկնում ինքնատիպ յուրօրինակությամբ և նույնիսկ ինտիմությամբ։ Երևանը մոնումենտալ քաղաք է, բայց նա չունի այն ճնշող մոնումենտալությունը, որը բնորոշ է ավելի շատ անթերի հատակագիծ, համաչափություն և զարգացման հեռանկարներ ունեցող քաղաքների համար։

Իսկ ինչ վերաբերում է շենքերի ճարտարապետությանը, ապա ես գտնում եմ, որ ժամանակակից հայ ճարտարապետական արվեստը շատ բան է վերցնում իր անցյալի անխառն ու վսեմ արվեստից։ Ես հիացած եմ նաև գեղեցիկ ու հազվագյուտ շինանյութերով, որ իրենց տրամադրության տակ ունեն Ճարտարապետները և քարի վրա փորագրության արվեստով՝ ապշեցուցիչ զարդերով ու խորաքանդակներով։

Ես ունեմ այլ, շատ ուժեղ տպավորություններ, բայց նրանք այժմ ցաք ու ցրիվ են, որի պատճառը Հայաստանին իմ հապճեպ ծանոթանալն է։

«Սովետական Հայաստան» թերթ,
7 Հունվարի 1954 թ.

Յուրան Շիլդ
Շվեդացի լրագրող, փիլիսոփայական գիտությունների դոկտոր

* * *

Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ շքեղ է քաղաքամայր Երևանը։ Ես հպարտանում եմ, որ դեռ շատ ու շատ հայրենաբաղձ հայեր պիտի այցելեն և հիանան նրանով։

«Երևան», 1954 թ.

Աբծուռնի Փախչանյան
ԱՄՆ-ի Տեխաս նահանգի
համալսարանի պրոֆեսոր

* * *

Հին Երևանը ընդունված է անվանել կաշեգործների, ներկարարների, տակառագործների, որմնադիրների ու այլ արհեստավորների քաղաք։

Պարսկական տիրապետության տարիներին և հետագայում արդյունաբերական քիչ թե շատ հայտնի ձեռնարկու-

թյուններ չկային Երևանում։ Իսկ այսօր Երևանում բազմատեսակ արտադրանք են թողարկում ավելի քան 600 արդյունաբերական ձեռնարկություններ։

Երևանը, իրոք, դարձել է Հայաստանի արդյունաբերական ամենախոշոր և Սովետական Միության խոշոր կենտրոններից մեկը։ Այստեղ են տեղաբաշխված արդյունաբերական շատ ճյուղեր և խոշոր ձեռնարկություններ։ Երևանին բաժին է ընկնում հանրապետության արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին։

Երևանյան մակնիշով այսօր թողարկվում են մի քանի հարյուր արտադրատեսակներ, այդ թվում՝ ալյումին, սինթետիկ կաուչուկ, ավտոդողեր, կաբելներ, մետաղահատ դազդահներ, շարժական էլեկտրակայաններ, ուժային տրանսֆորմատորներ, գեներատորներ, էլեկտրալամպեր, ճշգրիտ սարքեր, հաշվիչ մեքենաներ, կոմպրեսորներ, ավտոբարձիչներ, ժամացույցներ, ավտոմասեր, սառնարաններ, գործվածքներ։

Միութենական նշանակություն ունեն Երևանի Կիրովի անվան քիմիական կոմբինատը, ավտոդողերի, «Պոլիվինիլացետատ» գործարանները, որոնց արտադրանքի շատ տեսակներ առաքվում են ոչ միայն Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Գորկու, Սվերդլովսկի, Կազանի և բազմաթիվ այլ քաղաքների գործարաններին, այլև Մեքսիկա, Արգենտինա, Ինդոնեզիա, Պակիստան, Իրան։

Հանրապետության արդյունաբերության բալանսում մեծ կշիռ ունեն մայրաքաղաքի Ջերժինսկու անվան հաստոցաշինական, ավտոմասերի, կոմպրեսորների, ամբարձիչ տրանսպորտային սարքերի, հիդրոպոմպերի, սարքաշինական, կաբելի, էլեկտրատեխնիկական, ավտոմոբիլային գործարանները։

Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների ավելի քան 200-անոց ընտանիքում իր առյուծի բաժինն ունի Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանը։

Իրավացի է սփյուռքահայ գրող, հասարակական գործիչ Անդրանիկ Ծառուկյանը, որ մի առիթով ասել է, թե՝ միայն Երևանի Լենինի անվան «Հայէլեկտրո» գործարանը ավելի մեծ հզորություն ունի, քան արտասահմանում ապրող հայազգի գործարանատերերի կառուցած ձեռնարկությունները միասին վերցրած։

Նախասովետական Երևանը սննդի արդյունաբերություն չուներ, եթե չհաշվենք Էսապովի պահածոների և Շուստովի գինու գործարանները։

Իսկ եթե այսօր խոսելու լինենք Երևանի սննդի արդյունաբերության ձեռնարկությունների մասին, ամենից առաջ պետք է հիշենք, որ երևանյան կոնյակներն ու գինիները, բազմատեսակ պահածոները լայն պահանջարկ ունեն սպառողների շրջանում։

Շշերի մեջ պահված արևահյութ են արտասահմանում համարում Հայաստանի կոնյակները, իսկ պահածոյատեսակներից շատերը՝ դրախտի ուտեստ՝ միջազգային չափանիշի։

«Երբ հյուրի սեղանի շուրջ նստած զրուցում ենք ձեզ հետ,— 1953 թվականին գրել է Չեխոսլովակիայից Հայաստան այցելած ուսանողների պատվիրակության ղեկավարը,— միաժամանակ մտածում ենք, որ Հայաստանի կիզիչ արևը մեր սեղանակիցն է, այն մեր ամաններում է։ Ասես, դուք,

բարեկամներ, մեզ արևով եք հյուրասիրում այստեղ՝ Երևանի պահածոների գործարանում։ Թող միշտ խաղաղություն լինի աշխարհում, և միշտ սեղանները զարդարեն այսպիսի բարիքները»։

1954 թ.

Երևանի պահածոների գործարանի
ապավորությունների մատյան,

* * *

Ամեն անգամ, երբ խոսք է բացվում Հայրենիքի մասին, իմ սիրտը լցվում է համայնապարփակ սիրով, ու հոգիս պատում է մի անսահման ջերմ զգացում։ Ո՛չ Վենետիկի սուրբ Մարկոսի մարմարակերտ հրապարակը, ո՛չ Բեռլինի գոթական շենքերը, ոչ էլ Փարիզի հրաշալիքները չեն կարող փոխարինել այն վսեմ ու նվիրական զգացումին, ինչ ես ապրեցի, երբ աշխարհե-աշխարհ երկար դեգերումներից հետո ոտք դրի իմ սուրբ ու անմահ Հայրենիքի հողի վրա։

Ես նորից լսեցի Ախուրյանի մեղմիկ կարկաչը, ուռիների անուշ սոսափը, հիացա իմ կարոտած զմրուխտ Ալագյազով ու կապտակոհակ Սևանի ջրերով։ Շիրակի դաշտում զգացի նոր, սոցիալիստական կյանքի շունչն ու ավյունը։

Հոկտեմբերի մեծ արևով վերածնված իմ հայրենիքում կան աշխարհաշեն կառույցներ, որոնք կմրցեն Փարիզի հրաշակերտ շինվածքների հետ, ուրախ եմ իր կյանքի տերը դարձած բանվորի ու գյուղացու վաստակով։ Հայրենիքը ինձ համար ամեն բանից թանկ է ու վսեմ։

...Հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և մշակութային ապահովությունը հնարավոր է միայն խորհրդային երկրի ու ռուս մեծ ժողովրդի հետ։ Ընդունելով այդ փաստը, վերադարձա իմ ուժերի չափ աշխատելու և իմ տուրքը տալու Հայաստանի վերելքին։

Առաջին անգամ ոտք դնելով խորհրդային երկիրը, տեսա և այդ ինձ համար սիմվոլիկ բնույթ ունեցավ, թե ինչպես Միությունը իրականացնում է փոքր ազգերի ինքնորոշումը։

...Ահա և մեր քաղաքամայր Երևանը։ Նրա մթնոլորտը լցված է հայության ձայնով, հայերենով. Օրեցօր, ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկյան լցվում է հայությամբ, հայերով։ Ականջդ միալար հայության մեջ է, հայերի։ Պառկում ես և լսում՝ ծառերը հայերեն են սոսափում, թռչունները հայերեն են ծլվլում, առվակները հայերեն են խոխոջում, ամեն քար ու իր, աստղ ու երկինք հայերեն, հայկական, հայաշունչ։

«Երևան», 1954 թ.

Ավետիք Իսահակյան
Հայ մեծանուն բանաստեղծ

* * *

Ես շատ ուրախ եմ Հայաստանում ուղևորություն կատարելուս համար։ Իրականացավ իմ վաղուցվա երազանքը։

Հայաստան բառը նվիրական է ինձ համար։ Հիշում եմ, թե ինչպես տասը տարի առաջ մենք սկսեցինք «Սասունցի Դավիթ» էպոսի թարգմանությունը չինարեն։ Ահա, հենց այն ժամանակ էլ մենք մեր հայացքը ուղղեցինք դեպի Հայաստան, որը ինձ ձգում էր դեռ այն ժամանակ։ Երևան ժամանելուս հենց առաջին օրը ես տեսա արևային հիասքանչ մի քաղաք, որը իսկույն սիրեցի։

Ես շատ ուրախ եմ, որ հնարավորություն ունեցա ավելի մանրամասնորեն և ակնբախորեն ծանոթանալու հայ ժողովրդի պատմությանը, նրա մշակութային ավանդույթներին։ Ես հետաքրքիր շատ բան իմացա։ Հաճելի է գիտակցել, որ մեր ժողովուրդների մշակութային կապերը սկիզբ են առնում դարերի խորքից։

Մատենադարանում մենք տեսանք 5-րդ դարի մի մատյան՝ հայոց պատմիչ Մովսես Խորենացու աշխատությունը։ Պատմիչը մեծ համակրանքով է խոսում Չինաստանի ու չին ժողովրդի մասին։

Երևանում հանդիպումներ ունեցանք շատ մտավորականների հետ։ Նրանք բոլորն էլ հարազատ էին մեզ համարում։ Մեզ միմյանց հետ կապում է ինչ-որ մի ավելի մեծ բան, քան հյուրընկալի և հյուրի փոխհարաբերությունը։

«Սովետական Հայաստան» թերթ,
1955 թ.

Գե Բաո-ցիուան
Չին գրող

* * *

Այստեղ ապրում է հայ ժողովրդի մեծ մշակույթը և 1500 տարի ի վեր պահպանում իր գեղարվեստական հմայքը, գնբում մեզ իր շքեղ գեղագրությամբ, գույների ուժով և թարմությամբ ու գիրք կազմելու վարպետությամբ։ Կեցցե այն ժողովուրդը, որ պահպանել է այսպիսի արժեքներ։

Մատենադարանի տպավորությունների գիրք, 1955 թ.

Ի. Կասիյան
ՍՍՀՄ ժողովրգական նկարիչ,
Մ. Խմելկո, ՍՍՀՄ արվեստի վաստ. գործիչ

* * *

Մենք Սովետական Միությունն ենք եկել ճարտարապետների միջազգային կոնգրեսից, որ տեղի ունեցավ Հռոմում։ Հայաստանի և հայ ժողովրդի մասին շատ էինք լսել ու կարդացել։ Գրականության միջոցով արդեն որոշ գաղափար ունեինք նրա հնադարյան մշակույթի և արդի զարգացման մասին։ Սակայն չէինք սպասում, թե այսքան շատ լավ բան կտեսնենք։ Մենք զարգացման և առաջադիմության ականատես եղանք կյանքի ու գործունեության բոլոր ասպարեզներում։

Հայաստանի մայրաքաղաքի վերաշինության և զարգացման թափը մեզ հիացմունք պատճառեց։ Քաղաքի զարգացման պլանը հաջողությամբ է իրականացվում։ Մենք համոզված ենք, որ Երևանի շինարարները մոտ ապագայում կհասնեն ավելի մեծ նվաճումների։

Ուզում եմ հատկապես ընդգծել, որ մեր երկրի ճարտարապետությունը բավական տարբերվում է Սովետական Հայաստանի ճարտարապետությունից և՛ ոճի, և՛ ճաշակի իմաստով։ Սակայն չեմ կարող չնշել, որ Հայաստանում, որը ինքնուրույն ճարտարապետական ոճ ունեցող երկիր է, շինարարական արվեստը փայլուն հաջողություններ ունի իր հմուտ և կարկառուն վարպետների շնորհիվ։

Երևանում և այն քաղաքներում, ուր այցելեցինք Սովետական Միությունում շրջագայելու ժամանակ, մեզ մեծ գոհունակություն պատճառեց այն, որ ճարտարապետությունը ծառայում է ժողովրդին, ճարտարապետը կանգնած է իր

բարձրության վրա և լուրջ դեր է կատարում հասարակության կյանքում։

«Սովետական Հայաստան» լրագիր,
22 մայիսի 1955 թ.

Ի. Դա. Կոստապինա
Բրազիլիայի ճարտարապետների
պատվիրակության ղեկավար

* * *

Մոսկվայից և Լենինգրադից հետո մենք շատ էինք ուզում այցելել Հայաստան, որի մասին գիտեինք շատ տարիներ առաջ այստեղ եղած մեր հայրենակից Ֆրիտյոֆ Նանսենի նկարագրություններից։ Ծանոթանալով Երևանին ու նրա արվարձաններին, ես բացեիբաց կարող եմ ասել, որ այն ամենը, ինչ տեսանք, գերազանցեցին մեր սպասելիքները։ Հայ ժողովուրդը Սովետական իշխանության պայմաններում մեծ հաջողությունների է հասել։

Մեզ առանձնապես հիացրեց Երևանի շինարարությունը, որը լավ պլանավորված է, և որը հարստանում է ճարտարապետական գեղեցիկ շենքերով։

«Սովետական Հայաստան» լրագիր,
22 նոյեմբերի 1955 թ.

Տրյուվ վե Իվերսեն
Նորվեգացի կուլտուրայի գործիչների
պատվիրակության ղեկավար, Օսլոյի առողջապահության վարչության դիրեկտոր

* * *

Հաղթանակի զբոսայգուց մենք տեսանք Երևանը, տեսանք նրա գեղեցիկ ցերեկն ու գիշերը, ծանոթացանք նրա զարգացման պլանին, դիտեցինք հայկական կինոնկարներ, Պատկերասրահը, Մատենադարանը։ Իր ազգային ճարտարապետությամբ Երևանը աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկն է, որն ունի լայնարձակ փողոցներ, հասարակական ու բնակելի շենքեր, բարձրագույն ուսումնական հաստատություններ և գիտությունների ակադեմիա։

«Սովետական Հայաստան» լրագիր,
1955 թ.

Լյուդվիգ Օտերբան
Ավստրիայի լուսավորության մինիստրության աշխատակից

* * *

Հազարավոր տարիներ հայ վարպետի ձեռքը մարդկային մտքի ու հանճարի դրոշմ է դրել Հայաստանի բնակավայրերում, կառուցել է, շենացրել իր հայրենիքը։ Այսօր էլ, դարեր անց, Հայաստան այցելողը, լինի հնագետ, թե ուրիշ մասնագիտության տեր, չի կարող իր հիացմունքի ապրումները թաքցնել Զվարթնոցի, Գեղարդի, Գառնիի հազվագյուտ հուշարձանները դիտելիս, չի կարող իր զարմանքը չարտահայտել հազարամյակներից հետո չորս տասնամյակում ձեր երկրի հսկայական թռիչքի, մշակույթի աննախադեպ վերելքի առթիվ։

Հայաստանը երաժշտության երկիր է։ Այս բանը կրնանք հաստատել Երևանի օպերային թատրոնի, ֆիլհարմոնիայի սրահներուն մեջ, որոնք երկուքն ալ կգտնվին գեղեցիկ ու շատ գործնական ոգիով հղացված բոլորաձև շենքերի մը մեջ։

«Սուրիա» թերթ, 1955 թ.

Քառ Լավֆս
Գերմանացի երաժշտագետ,
պրոֆեսոր

* * *

Ես երբեք չէի երևակայում, որ Հայաստանում այդքան կարճ ժամանակամիջոցում կարող էին կառուցել սքանչելի նոր Երևանը իր գեղեցիկ հրապարակներով, լայնարձակ մայրուղիներով ու փողոցներով, ճարտարապետորեն ձևավորված շենքերով։ Դա վկայում է քաղաքաշինության զարգացման նկատմամբ Հայաստանի կառավարության հոգատարության մասին։ Կասկածից վեր է, որ առաջիկա տարիներս Երևանն էլ ավելի կլավանա ու կգեղեցկանա։

«Սովետական Հայաստան» լրագիր,
1955 թ.

Դավիթ Դավթյան
Ֆրանսահայ տուրիստ

* * *

Ինձ ցույց տվին հին Երևանի նկարը և ասացին, որ երեսունհինգ տարի առաջ մի քանի տասնյակ հազար բնակչություն ուներ քաղաքը։ Երբ ես դիտում էի նրա փողոցները, տները, ազգային ճարտարապետության ոճով կառուցված հասարակական շենքերը, եկա այն հաստատ համոզման, որ Սովետական իշխանությունը հայ ժողովրդին մեծ երջանկություն է բերել։

«Սովետական Հայաստան» լրագիր,
13 հունվարի 1956 թ.

Կարինան Զանդ
Հնդիկ գրող, հասարակական գործիչ

* * *

«Այս ամենամոտ ճանապարհն է դեպի լավագույն բարեկամը, թեկուզ նա հեռու է ապրում...

Մատենադարան, 1956 թ.

Իսլանդիայի մշակույթի
գործիչների պատվիրակություն

* * *

Մեզ հիացնում է այսպիսի գրավոր և նկարչական գործեր ստեղծող ժողովուրդը։ Մենք ուրախ ենք, որ այսպես լավ են պահպանվում հին հայկական մշակույթի հուշարձանները, որոնք մեծ նշանակություն ունեն համաշխարհային մշակույթի համար։

Մատենադարան, 1956 թ.

Հարավսլավիայի գրողների
պատվիրակություն

* * *

Չորս օր եղանք Երևանում։ Գերմանիայի գիտությունների ակադեմիայի հանձնարարությամբ ուսումնասիրեցինք Մատենադարանի գանձերը, մասնավորապես հունարեն ձեռագրերը։ Մենք մեծ երախտագիտությամբ ենք նշում մեզ ցույց տրված մեծ բարեկամությունը։ Հիացած ենք հայ ժողովրդի հարուստ պատմությամբ և նրա հոգևոր մշակույթով, որոնք ոգեշնչում են հայ գիտնականներին։ Հուսով ենք, որ սկսված

միացյալ աշխատանքը կշարունակվի նաև առաջիկայում ու իր ցանկալի արդյունքը կտա։

Մատենադարան, 1957 թ.

Կ. Ալանդ, Գ. Թրոյ, Ի. Կլաուս
Գերմանացի գիտնականներ

* * *

Իմաստության ու քերթության հին, սրբազան գրքերը այստեղ շարունակում են ապրել որպես չորացած վարդեր, որոնք լի են դեռևս անտեսանելի սերմերով։ Խոր զգացմունքով և հարգանքով եմ ես գրում այս գրքում։

Մատենադարան, 1957 թ.

Պաբլո Ներուդա
Չիլիացի գրող

* * *

Գեղեցիկ կայարանին շենքին առջև խմբված է դիմավորողներու բազմությունը, որու հետ հանդիպումը տեղի կունենա խիստ հուզումնալի պայմաններու տակ։ Կայարանեն կուղղվինք դեպի «Ինտուրիստ» պանդոկը։ Ամբողջ ճամփու ընթացքին լուռ արցունքներ կհոսին աչքերես, հուզումի փոթորիկ մը կալեկոծե զիս։ Կապրիմ բոպեներ, որոնք թերևս չկրկնվին իմ կյանքիս մեջ։

Երևանը գեղեցիկ քաղաք է։ Ասֆալտապատ լայն ծառուղիներ իրար կխաչաձևեն, պարտեզներ, ծառ ու ծառաստան, գեղեցիկ շենքեր, լավ ու սարքավորված խանութներ, հիշատակարաններ, անվերջ-անվերջ ինքնաշարժեր ու զվարթ ժողովուրդ մը կլեցնեն քաղաքի լայն պողոտաները։ Տեսնել

Երևանը ու չսքանչանալ հասակ նետող նորակառույց քաղաքի վրա՝ անկարելի է։

Մեր բաժանումը Երևանեն նույնքան հուզումնալի է, որքան մեր մեկնումը Սոֆիայեն։ Հազարավոր մարդիկ արցունքը աչքերուն եկած են մեզ համփելու։ Հանդիսավոր այդ պահուն բաժանումը որքան որ դառն է, պատկերը նույնքան զմայլելի է։ Եթե ճիշտ է, որ աշխարհի մեջ ոչ մեկ ուժ ի վիճակի չէ ջնջելու համար Մասիսի խորհրդանիշը մեր միտքեն, մեր հոգիներեն և մեր պատմությենեն, ապա ուրեմն, նույնքան ճիշտ է, որ ոչ մեկ ուժ ի վիճակի չէ ջնջելու հայ ժողովուրդի գոյությունը Արարատյան դաշտին մեջ, Սովետական Միության սահմաններուն մեջ։

Գնացքը ճամփա կելլե, և բոլորս մեր եռև կթողունք Երևանը՝ այս անգամ մեր հոգիները ամրացուցած այն հոյակապ հավատքով, որը մեզի ներշնչեց մեր հայրենիքը, որի հարատևուն բարգավաճման մեջ մենք տեսանք հայ ժողովուրդի երջանիկ ապագան։

Բուլղարահայ «Երևան» շաբաթաթերթ, 15 նոյեմբերի 1957 թ.

Ա. Հատավյան
Սոֆյուորահայ հասարակական գործիչ

* * *

Մենք Հայաստանի հողին ոտք դնելու առաջին իսկ պահից զգացինք այն մեծ փոփոխությունները, որ տեղի են ունեցել Երևանում և հանրապետության շրջաններում։ Վերջերս ես եղա Հնդկաստանում և տեսա վարդագույն տուֆից կառուցված Խայպուր քաղաքը։ Այստեղ՝ Երևանում ես հիացա վար-

գագույն տուֆով, որով զարդարված են քաղաքի գրեթե բոլոր շենքերը։ Այդ քարը, լույսի հետ միասին, քաղաքին տալիս է ժպտացող, երջանիկ տեսք։ Մեզ համար դժվար է բաժանվել մի այնպիսի ուրախ երկրից, ուր կարելի է ապրել մշտապես։

Մենք մեզ հետ տանում ենք լավագույն հիշողություններ հնադարյան Հայաստանից նրա երջանիկ ներկայի մասին և երջանկություն մաղթում հայ ժողովրդին։

«Գրական թերթ», 30 օգոստոսի 1957 թ.

Միգել Անխել Սստաուրիաս
Գվատեմալացի գրող

* * *

Իմ եռօրյա այցելությունը Երևան լի է կյանքի հարուստ փորձով։ Ես ուրախությամբ տեսա, որ մեծ Լենինի գաղափարները իրենց փայլուն արդյունքն են տվել Սովետական Հայաստանում։ Որպես ասիացի ես հպարտանում եմ, որ հայ ժողովուրդը 37 տարվա ընթացքում կարողացել է իրականացնել այսպիսի մի հիանալի ծրագիր՝ կյանքի բոլոր բնագավառներում։

«Արմենիա» հյուրանոցի տպավորությունների գիրք, 1957 թ.

Տարաս Զանդ Դասգուպտա
Հնդիկ լրագրող

* * *

Ես տեսա Երևանի բազմաթիվ նորակառույցները։ Ինձ թվում է, թե հայ ժողովուրդը ավելի մեծ նվաճումներ ձեռք

կբերի, եթե ժողովուրդները ապրեն խաղաղ, եթե պատերազմ չլինի։

«Սովետական Հայաստան» թերթ, 1957 թ.

Հեգել Ուորգեր
«Շոալանդիա—ՍՍՀՄ» բարեկամության ընկերության պատվիրակության քարտուղար

* * *

Իմ հուշերի մի աչքի մեջ տրդատակերտ չքնաղ Անին՝
Էրեբունի բլրին կանգնած՝ ես նայում եմ Երևանին,
Մի աչքովս ետ եմ նայում, մի աչքովս նայում առաջ՝
Կրշռում եմ նորն ու հինը, զույգ աչքերով կշեռք դառած,
Վեր ու վար են անում, սակայն, երկու թաթերն իմ կշեռքի,
Զույգն էլ քանզի իրենց վրա վաստակն ունեն հայոց ձեռքի։
Օ, չեմ կարող ես մի աչքով նայել ընկած հին հրաշքին,
Ում ավերակ մի տաճարն էլ հիացմունք է զոռոզ աչքին,
Նորի տված պատառ հացս թեկուզ լինի կաթն էլ իմ մոր՝
Նորից հինը մորս կեսն է, մյուս կեսը ելնողն է նոր,
Ընկած մորից երե՞ս դարձնեմ, լավ է երես դարձնեմ կյանքից,
Լավ է թաղվեմ, քան թե մի կեղծ շշուկ ծնվի իմ շրթունքից,
Ու նայում եմ Երևանին, կանգնած բլրին Էրեբունի,
Հին Անիս է վերածնվում բարուրի մեջ Երևանի,
Վեր կամարվում ժայռաբարուր հազարագեղ գմբեթներով,
Մի նոր հայոց հրաշք դառնում մայր Անիին նմանվելով,
Հազար ու մի եկեղեցիք փոխվում են ճոխ պալատների,
Սուրբ զանգերի զողանջի պես ժխորն է բյուր հայ մուրճերի,
Ելնում է նորն հնի ձևից, մասիսաչափ ձվից անմեռ,

Մեծ Տրդատից՝ Թամանյանը, Թամանյանից նորերը դեռ,
Ասես Մեսրոպ Մաշտոցն ինքն է մոնումենտավում նոր արձանով,
Վեր գմբեթվում հազարասյուն, հազարաձայն Երևանով։

Հովհաննես Շիրազ
Սովետահայ բանաստեղծ

* * *

Ես Սովետական Հայաստան մեկնեցա այս փոքր, բայց գեղեցիկ ազնիվ ու հերոս ժողովուրդին հանդեպ մնայուն հարգանքով և ջերմ սիրով։ Բազմաթիվ հայեր հասակ նետած են մեր միջավայրին մեջ, անոնցմե շատերուն հետ բարեկամ դարձած ենք, բաժնած ենք վիշտ ու հրճվանք։

Հարյուր քսանհինգ տարի առաջ ռուս մեծ բանաստեղծ Պուշկինը Հայաստանը շրջագայած է ձիու վրա ու «Երևանի մեջ ի՞նչ կա» հարցումին տված է իր վճռականությամբ ու ստատիչ բնույթով ահռելի պատասխան մը.

«Երևանի մեջ ժանտախտ կա»։

Սակայն քառասուն տարի առաջ կացությունը ավելի վարդագույն չէր։ Քաղաքն ուներ 31 հազար բնակիչ, ներկայիս ունի 400 հազար։ Քառասուն տարի առաջ Երևանը նկուղներու քաղաք էր, ներկայիս՝ գեղեցիկ քաղաք է։ Ոչ շողոքորթություն, ոչ ալ զովաբանություն պիտի ըլլա ըսել՝ Երևանը աշխարհի գեղեցկագույն քաղաքներեն մեկն է։ Անցնելով անոր փողոցներեն այն տպավորությունը կրեցի, թե հեքիաթային դղյակի մը մեջ եմ։

Երևանը հրապուրիչ է։ Քաղաքաշինության պլանի երևելի նվաճումն է նրա կենտրոնական՝ Լենինի հրապարակը. կիսաբոլորակ շարված հոյակապ շենքերը կհրապուրեն իրենց ճարտարապետական ձևերով, ուր հյուսված են հայկական ճարտարապետական ոճի մոտիվները։ Այդ շենքերուն մեջ տեղավորված են մինիստրներու խորհուրդը և այլ պետական ու կուսակցական հաստատություններ։ Հրապարակի խորքին վրա բարձրացող Լենինի հոյակապ արձանը նույն թանկագին մանյակի մարգարիտն է։ Քարագործությունը դարավոր ավանդություն է։ Քարտաշները ունին ճարտար ձեռքեր։

Ոմանք Երևանը վարդագույն քաղաք կկոչեն, թեև կան տարբեր գույնով ծեփված շենքեր։ Հարավային արևով ողողված կառույցները կփայլին գույներու զանազան ներբերանգներով։ Մեծ թիվ կկազմեն նոր փողոցներն ու պողոտաները։ Կիևյան փողոցը անոնցմե մինն է։ Երեք տարի առաջ այստեղ ամայի տարածություն էր, ներկայիս գեղեցիկ բնակարաններով փողոց մըն է։

Բազմաթիվ են հին, բայց միաժամանակ նոր քաղաքին ուսարժան վայրերը։

Հրազդանի ափին՝ ձորի մեջ կգտնվի մանկական պարտեզը (Խ. Աբովյանի անվան մանկական զբոսայգին)։ Այնտեղ կա գեղեցիկ շատրվանների շարք մը։ Յուրաքանչյուր շատրվան կկրե Սովետական հերոսի մը անունը, ինչպես Օլեգ Կոշևոյի, Ալեքսանդր Մատրոսովի քաջագործությունը կրկնող Հունան Ավետիսյանի, Սովետական Միության կրկնակի հերոս, օդաչու Նելսոն Ստեփանյանի։ Ան զոհված է Սովետական Հայաստանի համար, Լենինգրադի գորշ երկնքի մեջ։ Զոհված է Սովետական Միության համար։

Անմոռանալի էին հանդիպումները։ Երբեք չպիտի մոռնամ այն օրերը, որ անցուցի սքանչելի և երջանիկ հայկական երկրի մեջ, որու մասին 60 տարի առաջ ճանապարհորդ Յուրի

Վեսելովսկին գրած է. «Հայկական մեկուսի, ողորմելի ծայրամասը»։

Մի՞թե այս է մեկուսի, ողորմելի ծայրամասը»։

Օդանավը կսավառներ դեպի հյուսիս։ Իմ հետևս մնաց սպիտակ գագաթով Արարատը։ Հայ բանաստեղծ Գուրգեն Բորյանը երգեց իր Սովետական Հայրենիքի ուժն ու գեղեցկությունը.

Նայիր քո լեռներին, ձյունե մաքրությունդ դարձրած թագ,
Քո դաշտերին, ուր ամեն մի հասկը նիզակ է արդարության,
Նայիր Գեղամա ծովին, որ խաղաղ մեր երկնի տակ
Ծփում է օրորոցում քո հավերժական ազատության...

Այս քառյակի մեջ կարծես ըսված են Հայաստան երկրի մասին բոլոր գեղեցիկ խոսքերը։

Բուլղարահայ «Երևան»
շաբաթաթերթ, 1957 թ.

Մեթոդի Տաճև
Բուլղար լրագրող

* * *

Հսկայական տպավորություն է թողնում Հայկական Հանրապետության մայրաքաղաք Երևանը։ Դա բոլորովին նոր ու զարմանալի արագությամբ աճող քաղաք է։ Հիանալի շինանյութը՝ Արթիկի տուֆը քաղաքին տալիս է տոնական, ուրախ տեսք։ Երևանը ձեռք է բերում ճարտարապետական անկրկնելի յուրօրինակության գծեր։

«Սովետական Հայաստան»
թերթ, 1957 թ.

Ֆելիչե Պլասոնեն
«Իտալիա—ՍՍՀՄ» ընկերության
պատվիրակության ղեկավար, սենատոր

* * *

Նա, ով այսօր անցնում է Երևանի հին փողոցներով, դիտելով դրանք ժամանակակից մեծ շենքերի ֆոնի վրա, չի կարող չտեսնել, որ դրանք մնացորդներն են անցյալի, հուշերը անհետացած աղքատության։ Երևանում կարելի է տեսնել, թե ինչպես հին, նեղ, արևելյան քաղաքը վերափոխվում և դառնում է ժամանակակից գեղեցիկ քաղաք՝ տուֆակերտ, սքանչելի շենքերով և ծառազարդ փողոցներով։

Հայաստանի ռադիոյի
ձայնագրանի ֆոնդ, 1958 թ.

Խորալդ Ռուե
Դանիացի պրոֆեսոր

* * *

Այստեղ երևում է, որ ճակատագրի քմահաճույքով աշխարհի տարբեր երկրներում սփռված ժողովուրդը կարողացել է հավաքել և պահպանել իր մշակույթի գանձերը ավելի լավ, քան առավել բախտավոր ժողովուրդները։ Երևանի Մատենադարանը հազվագյուտ երևույթ է աշխարհում։

Մատենադարան,
1958 թ.

Լասլո Էրդոշ
Հունգար գրող

* * *

Մինչև Հայաստան գալս ինձ թվում էր, թե հայ արվեստի հետ ես շատ քիչ ընդհանուր բան ունեմ, հատկապես չունեմ իմ նախորդ նմանակը։ Բայց երբ տեսա Ներսիսյանի «Խնջույք Քոի ափին» թարմությամբ շնչող սքանչելի երփնագրված աշ-

խատանքը, համոզվեցի, որ հայ արվեստում էլ ես ունեմ իմ նախորդը և այդ ընդհանրությունը, իհարկե, անմիջական կապ է ստեղծում իմ և հարազատ ժողովրդիս արվեստի մեջ։

Այդ բոլորով հանդերձ, Հայաստանում ինձ ամենից ավելի հիացնողը Երևանն էր, նոր Երևանը՝ քարաշեն, գեղեցիկ մի մայրաքաղաք։ Ոչ միայն հայրենասիրական զգացմունքները, այլ նաև աշխարհ տեսած մարդու գլաստ գիտակցությունը ինձ թելադրում է Երևանի կառույցների մեջ տեսնել հայ ժողովրդի շինարարական անսպառ եռանդը, ճարտարապետական հանճարը։ Նոր Երևանը իմ ժողովրդի ստեղծագործ հոգու փայլուն արգասիքն է։

«Սովետական արվեստ»
№ 11, 1958 թ.

Գրիգոր Շլղյան
Իտալահայ նկարիչ

* * *

Երևանը իր վարդագույն շենքերով, ասֆալտապատ փողոցներով, ճարտարապետական հոյակապ կոթողներով ինձ շատ դուր եկավ։ Շատ կարճ մնալով ձեր քաղաքում ես չհասցրի լավ ծանոթանալ հայ ժողովրդի երաժշտությանը։

Հայը արվեստագետ է, նա ունի բարձր ճաշակ և մեծ սեր երաժշտության հանդեպ։ Երևանից ես մեկնում եմ վառ ու անջնջելի տպավորություններով, շատ մեծ ծանոթություններ հաստատած։

«Երևան» թերթ, 1958 թ.

Մոնիկա Ազ
Ֆրանսիացի դաշնակահարուհի

* * *

Տարիներ ի վեր երազում էի Խորհրդային Հայաստանի մասին։ Եվ ահա վերջապես, օդանավը վար է իջնում։ Պատուհաններից վար ենք նայում. մեր աչքերը լցվում են ուրախության արտասուքով։

Երևա՜ն... Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո Երևանը, ցարական Ռուսաստանի այդ հետընկած գավառական փոքրիկ քաղաքը, դարձավ Սովետական Հայաստանի մայրաքաղաքը։ Հետագա տարիներին Երևանը բուռն կերպով աճեց ու զարգացավ, կառուցվեցին հարյուրավոր արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, հիմնվեցին գիտական, մշակութային բազմաթիվ հաստատություններ։ Այժմ Երևանը համարվում է Սովետական Միության արդյունաբերական, մշակութային խոշոր ու գեղեցիկ կենտրոններից մեկը։

Երևանը ճարտարապետական նվաճումների բացօթյա մի ցուցահանդես է, որտեղ իրենց ստեղծագործություններով փայլում են մեր ճարտարապետներն ու կառուցողները, օգտագործելով հին հայկական և արդի ճարտարապետության լավագույն նմուշները։

Մեր ճարտարապետներն ստեղծել են մի նոր ոճ, որը բնորոշ է իր վեհությամբ ու պարզությամբ։ Այս նոր ոճը առանձնապես աչքի է ընկնում պետական ու հասարակական կառույցներում։ Նոր ճարտարապետության զարգացման հետ միաժամանակ վերածնվեց նաև Հայաստանի հին, նշանավոր արվեստներից մեկը՝ քարի զարդագրությունը։

Երևելի փորագրիչ վարպետների հմուտ ձեռքերի տակ քա-

ը փոխվում է և դառնում ժանյակի նմանվող զարդաքանդակ։

Գեղեցիկ են Լենինի, Միկոյանի, Օրջոնիկիձեի պողոտաները, Աբովյան, Տերյան, Մռավյան փողոցները, ուր կենտրոնացված են պետական ու հասարակական շատ հիմնարկներ, թատրոններ, կինոներ, հյուրանոցներ, խոշոր խանութներ։

Խիտ կանաչի միջից բարձրանում է Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի հոյակապ շենքը։ Կառուցվում են մի քանի մայրուղիներ՝ Կիևյան, Կոմիտասի, Այգեստան, որոնք մոտ ապագայում է՛լ ավելի կգեղեցկացնեն Երևանը։ Բաղրամյան փողոցը իրավամբ համարվում է մայրաքաղաքի գեղեցիկ փողոցներից մեկը։ Սա դիտարժան է նրանով, որ ճարտարապետական շքեղությամբ կառուցված՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, գիտությունների ակադեմիայի, Գերագույն խորհրդի նոր շենքերի կողքին կառուցվել են բազմաթիվ իրար նմանվող և մեկը մյուսից գեղեցիկ առանձնատներ, որոնք շրջապատված են փոքրիկ պարտեզներով և գեղազարդ ցանկապատերով։ Մայրաքաղաքի ամենագեղեցիկ մասը կենտրոնում՝ Լենինի հրապարակն է, որտեղ միանում են քաղաքի մի քանի գլխավոր փողոցներ։ Հրապարակում գրանիտե պատվանդանի վրա կանգնած է մեծ Լենինի պղնձակերտ հուշարձանը։ Հրապարակի շուրջը բոլորաձև բարձրանում է ստեղծագործական միևնույն մտահղացումով հասարակական շենքերի մի փառահեղ անսամբլ, որի զարդը կազմում է Հայաստանի Կառավարական տունը։

Քաղաքում կան մինչև 40 բարձրագույն հաստատություններ և տեխնիկումներ, բազմաթիվ դպրոցներ, գրադարաններ, ակումբներ, մշակույթի տներ, թանգարաններ, հրատարակ-

չություններ։ Հայաստանի գիտությունների ակադեմիան միավորում է մի քանի տասնյակ հետազոտական ինստիտուտներ։

Այսպիսին է այսօրվա Երևանը։ Նա շարունակվում է ընդարձակվել, բարեկարգվել, գեղեցկանալ։

«Լրաբեր», ԱՄՆ, 6 սեպտեմբերի 1958 թ.

Գ. Կաղզվանցի
Ամերիկահայ լրագրող

* * *

Մենք մեծ բավականություն ստացանք, այցելելով Հայաստան և առանձնապես Երևան... Հայ ժողովուրդը ստեղծել է հրաշքներ։ Այս երկիրը շարունակում է ծաղկել և բարգավաճել, դա զարմանալի չէ, քանի որ հայ ժողովուրդը այդքան կարճ ժամանակամիջոցում կարողացել է ստեղծել այդքան շատ բան։ Քաղաքի ճարտարապետությունը անչափ գեղեցիկ է և Երևանին տալիս է պերճաշուք տեսք։ Ժողովուրդը բարի, ջերմ և հյուրասեր է։

«Երևան», 1959 թ.

Մարկ Գրեգոր
Ամերիկացի հասարակական գործիչ

* * *

Մենք տարբեր քաղաքների և տարբեր մասնագիտությունների տուրիստներս բախտ ունեցանք ծանոթանալու տաղանդավոր հայ ժողովրդի հետ, որը արյան գնով է ապահովել իր ինքնուրույնությունը և ազգային ինքնատիպ մշակույթը։

Երևանը ճարտարապետական հաջողությունների ապատ

ցուցահանդես է, որտեղ ճարտարապետները և կառուցողները ցուցադրում են իրենց հիանալի ստեղծագործությունները։

Երևան, տուրիստական բազայի տպավորությունների գիրք,, 1958 թ.

Ի. Վասիլև
Ռուսաստանյան Ֆեդերացիայի տուրիստների խմբից՝ ինժեներ

* * *

Դարեր են եկել ու անցել Երևանի գլխով, անցել են՝ անհետ, անփառունակ...

Իսկ հիմա... դարեր չէ, դար արժեցող օրեր են գալիս ու անցնում Երևանի վրայով, անցնում բեղուն, արգասավոր, անցնում են գործարանների շռինդով ու ողկույզների փայլով, անցնում ուրախ, երգով ու ծիծաղով։

Դար արժեցող օրեր. այսպես է գրվում Սովետական Երևանի նոր պատմությունը։

Ինձ համար դժվար է սեղմ բառերու մեջ ամփոփել խանդավառ տպավորություններս։ Իրականացավ երկար տարիներու երազս, և ես կենդանի աչքերով կտեսնիմ հայրենիքիս հոգեպարար իրականությունը։ Պետք է խոստովանիմ, որ այն շատ ետ թողեց երևակայությունս։ Ես շատ ավելի գտա։ Ու այս պահուն, երբ կուզեմ տպավորություններս պատմել, սիրտս համակված է անսահման հրճվանքով և աչքերս՝ ուրախության արցունքներով։

Ես տեսա մեր սիրելի քաղաքամայր Երևանը։ Հարահուն կառույցներով, գեղեցկացած այդ վարդագույն գիշուհին ինձ արգար հպարտություն կտրեց. Լենինի հրապարակի գեղատերա, վիթխարի շենքերը, անոնց ճարտարապետական ոճը և

գեղեցկությունը, հոյակապ կառուցվածքը, պարզապես հիացում կպատճառեն ինձ։

Մեծ հաճույքով տեսա կենդանաբանական այգին, այցելեցի Մատենադարանը, պիոներներու պալատը, հպարտ զգացի ինձ, տեսնելով մեր հայրենիքի բազմակողմանի նվաճումները, որոնք ոչնչով չեն զիջեր եվրոպական մի շարք քաղաքներու առավելությունը։

Գիշերվա Երևանը նույնպես հրապուրիչ գտա ես՝ էլեկտրական լույսերու ողողումով, թատրոնով, օպերայով և ֆիլհարմոնիայով։

«Սովետական Հայաստան» ամսագիր, 1958 թ.

Գրիգոր Ներկարարյան
Բուլղարահայ հասարակական գործիչ

* * *

Չորս ամիս է, որ Հայաստանի կառավարության զովելի թույլտվությամբ հասել եմ ցանկալի քաղաքը՝ Երևան։

Անհուն է երջանկությունս ի տես այն վիթխարի առաջընթացին, որ կատարյալ է ու տակավին կկատարե վերածնվող Հայաստանը։

Ահա կդիտեմ Երևանը։ Լայն, կպրապատ փողոցներ, վարդագույն, կարմիր, դեղին տուֆերից կառուցված պալատաման հսկա շենքերը կգարդարեն քաղաքը, զայն վերածելով նախանձելի հրաշալիքի մը, հիացում պատճառելով և՛ հայ, և՛ օտարազգի զբոսաշրջիկներուն։

Քաղաքակրթությունը իր ամենալայն իմաստով մուտք է գործեր հոս, ուր 40 տարի առաջ խավարը կտիրապետեր։ Սո-

ցիալիստական կարգը վեր է առեր խավարի քողը։ վաներ է հինը, աննպատակն ու անիմաստը և հաստատեր է օգտակարն ու անհրաժեշտը առաջադիմական լույսով ողողուն։

Ամեն ինչ ի սպաս դրված է մարդուն։

Քաղաքում շարժման մեջ են օթոբուսները, տրոլեյբուսները, տաքսիները, որոնք օրն ի բուն կբանին փողոցներուն մեջ։

Կառավարությունը ժողովուրդի մշակույթի բարձրացմանը նպաստող ամեն միջոց իրագործեր է։ Սինեմաներ, օպերա, թատրոններ, կրկես, դահլիճներ, ստադիոն, լողավազաններ, կբոսայգիներ, տելեվիզիոն, իրենց նպատակային ուարքավորումներով տրամադրության տակ են ժողովուրդին, որը գունդ առ գունդ կգիմե նման տեղեր, իր ազատ ժամերը արժեքավորելու մշակույթի վայելքներով։

Չափ ու սահման չունի հիացումս ի տես մեսբոպյան տառերու, որոնք կզարդարեն հսկա խանութներու ճակատը։ Դա կնշանակե, որ մեսրոպյան տառերը գրագարաններու զարդ բլլալե զատ, ելեր են լույս աշխարհ և հայուն պետականությամբ հպարտ, պճնազարդեր են հայաքաղաքը։

Ահա և անմահ Աբովյանի անվան պողոտան, որ մանկամարզուհիներ և տղամարդեր դեպի սինեմաները, թատրոնները կշտապեն։

Ուղիղ, լայն ու ծառազարդ այդ պողոտայով կիջնեմ վարՀենինի հրապարակն եմ արդեն։ Մեծ առաջնորդին պատկառազդու արձանը, իր պատվանդանով, ճարտարապետական կատարյալ ստեղծագործությամբ զարդն է նույն այն հրապարակին, որ շրջանաձև ընդարձակությամբ մը և ավազանով

մը՝ երիզված պատկառազդու, մեկը մյուսեն գեղեցիկ, հոյակապ պալատներով։

Այստեղ է կառավարական տունը, գեղակերտ կառույց մը, որու աշտարակին վեհ ու խրոխտ վեր կխոյանա հայկական դրոշը կարմիր՝ կապույտով կիսված։ Կանգ կառնեմ. սա ինձ համար խոշոր, անշափելի դեմք մե։ Զգաստ... աչքերս վեր, Հայաստանի դրոշին հառած, վայրկյան մը լռություն կպահեմ։ Դա իմ հարգանքի առաջին տուրքն է, զոր կմատուցեմ հայկական դրոշին։

Հազիվ կբաժնվիմ հրապարակեն։ Անցյալի խորհրդածություններով անցեր եմ շատ մը փողոցներ և ահա դեմս է օպերայի և բալետի թատրոնը՝ պատկառազդու կլոր կառույց մը, իր զույգ դահլիճներով։ Ճարտարապետական ճշմարիտ կոթող մ՚է սա, ուր ամեն օր կուգան արվեստագետները՝ խընկարկելու արվեստի մուսաներուն։

Կդիտեմ շուրջս։ Գեղահարդար պարկով մը եզերված են հայ ժողովրդի 2 անմահներու՝ Թումանյանի և Սպենդիարյանի հսկա արձանները, որոնք առավել կշքեղացնեն այս հոյակերտ կառույցը։

Կշարունակեմ ճամփաս։ Ահա և նորաստեղծ Բաղրամյան պողոտան. հոս ևս ճարտարապետական նվաճումներ՝ գեղեցիկ, տուֆակերտ, պաշտոնատներ և բնակելի շենքեր՝ իրար գերազանցող... կհասնիմ Արաբկիր՝ նախկին արաբկիրցիներու այս ձեռակերտը, որ այժմ Երևանի գեղեցիկ մասերեն մեկն է իր լայն, ուղիղ փողոցներով, գրավիչ առանձնատներով, պետական ու հասարակական շինվածքներով։

Ամեն տեղ նույն տեսարանը՝ շինարարություն և շինարարություն։ Հայ ժողովրդի շինարար աշխատությունն այս ան-

գամ կհայտնվի որպես իր սեփականը։ Նա կկառուցանե բա-
ցարձակ գիտակցությամբ, նա գիտե, որ իր կերտածը իր ան-
կորզելի սեփականությունն է, այլևս ենթակա չէ ավերման,
ինչպես եղել է դարեր և դարեր...

ԱՄՆ, «Լրաբեր» թերթ,
13 նոյեմբերի, 1958 թ.

Հ. Փիրենց
Սփյուռքահայ տուրիստ

* * *

Ճիշտ 40 տարի է ի վեր բաժանված էի իմ սիրելի հայրե-
նիքեն։

Եվ ահա սավառնակին պատուհաններեն հիացմունքի
սարսուռով կդիտեմ այն վայրերը, զոր ձգած էի։

Առաջին հաստատությունը, զոր վիճակվեցավ մեզ բնակիլ՝
Հայաստանի հյուրանոցն է «Արմենիա» անունով, Լենինի ըն-
դարձակ հրապարակին վրա։ Տարիներ առաջ այդ վայրերը
Թողլքված վայրեր էին։ Զմայլանքով ոտք դրի հյուրանոցի
դարպասեն ներս. մուտքին իսկ նկատվեցավ հայկական խո-
յակներով օժտված սրահը, որուն հատակը ծածկված էր սև
մարմարե սալերով։

Վիեննայի լավագույն «Փրենս էոժեն» օթելը չի կրնար
ավելի պարծենալ, քան մեր «Հայաստան» օթելը։

Երևանի երեկվան շինված ցեխե և կղմինդրե տուներուն
մեծ մասը անհայտացած և փոխարինված է բազալտի մար-
մարի և պեմզայի շինանյութերով կառուցված շենքերով։ Իսկ
Արթիկի գունավոր տուֆը հիմնաքարն է շինանյութերուն։

Բառիս բուն առումով փոխված և նորոգված է նախկին

Երևանը։ Նախանձով բաժանվեցա Վիեննայի արձաններով,
պարտեզներով շրջապատված պողոտաներեն։

Նախանձս վերածվեցավ խանդաղատանքի, երբ շրջեցի
Երևանի լայնանիստ պողոտաները, գեղազարդված բոլոր մեր
մեծ մարդկանց արձաններով, ավելի վերասլաց և գաղափա-
րական։

Հատկապես ուզեցի տեսնել այն դպրոցը, որուն մեջեն
նախկին օրերը անոթութենեն մահացած գաղթականներու
դիակներ կհավաքեինք, նետելու համար գերեզմանոցի եղբայ-
րական լայն փոսին մեջ. ի՜նչ զարմանք... Այդ դպրոցին տե-
ղը այսօր կբարձրանա իմ սիրելի դասընկեր Ասքանազ Մռավ-
յանի անվան դպրոցը՝ բազմահարյուր խնդումներես աշա-
կերտներով։

Հայաստանի ռադիոյի ձայնագա-
րան, 1958 թ.

Աբսեն Կիտուր
Լիբանանահայ հրապարակախոս

* * *

Կա՞ արդյոք ավելի մեծ փափագ հայրենիքից հեռու գրա-
նըվող, մանավանդ հայրենիքը չտեսած մարդու համար, քան
հայրենի երկիր վերադառնալը, այնտեղ ապրելն ու գործելը,
մայր հայրենիքի ջերմ գուրգուրանքն զգալը և աշխատանքով
անոր առաջընթացին նպաստելը։

Այդ է եղել մեր՝ հայերուս փափագը, այդ է այսօր աշ-
խարհով մեկ սփռված հարյուր-հազարավոր հայերու նվիրա-
կան իղձը։ Օտարության մեջ գտնվող հազարավորների երա-
զանքը իրականություն կդառնա մի օր, ինչպես այսօր իրա-

կանությունը դարձավ իմ երազանքը։ Ես զտնվում եմ Հայաստանում և իմ ամբողջ սրտով ասում եմ նրան.

«Ողջույն հայրենիք»։

Առաջին ուրախությունը ես զգացի «Թբիլիսի—Երևան» գնացքում, ուր մեր վագոնի ուղեկցողը հայ էր, ուղևորներն էլ մեծ մասամբ հայեր էին։

Բուենոս-Այրեսում, երբ իմ հարազատների հետ շոգենավ նստեցի, հավատալս չէր գալիս, որ ես մեկնում եմ Հայաստան։ Բայց ահա և իրականությունը։ Գնացքը դուրս է գալիս Լենինականից։ Մոտենում ենք Արարատյան դաշտին, երկնքի կապույտ ֆոնի վրա զծագրվում են Մեծ և Փոքր Մասիսները իրենց վեհապանծ կատարներով։ Մենք Երևանում ենք։ Մենք արդեն սովետական քաղաքացիներ ենք, ինչպես Հայաստանի ամեն մի բնակիչ, այն տարբերությամբ միայն, որ դեռ չգիտենք մեր երկիրը, ծանոթ չենք նրան։

Առաջին բանը, որ տեսանք Երևանում, փառաբանված տուֆն էր, շինարարությունը, անխոնջ մարդկանց անընդհատ հոսանքը, սառնորակ ջրերը, գինին, կոնյակը, արամվայները... Եվ այդ ամենը յուրաքանչյուր վայրկյան համակենտրոնանում է մեր հիշողության մեջ, վերակենդանացնելով Երևանի պատկերը, վաղուց երազած, բայց առաջին անգամ տեսած մայրաքաղաքի պատկերը։

... Ճարտարապետի աչքով ես դիտում եմ Լենինի հրապարակը երիզող շենքերը, ու սիրտս լցվում է անսահման հիացմունքով։ Շենքերից ամեն մեկն ունի առանձին մի ձև, բայց բոլորի մեջ էլ պահպանված են հայ ճարտարապետության ոճական առանձնահատկությունները։ Ծանրանիստ հիմք, բարձրաբերձ կամարներ, զեղեցիկ սյունաշարեր, նրբորեն

կատարված զարդաքանդակներ... Եվ այդ բոլորը տուֆի ու մարմարի վրա, որոնք հիացմունք են պատճառում իրենց երանգներով։ Երևանի ճարտարապետությունը հայկական դասական ճարտարապետության ավանդույթների մտածված ու խելացի օգտագործումն է ժամանակակից վերամշակությամբ։ Այն իր ձևով ազգային է, բովանդակությամբ՝ սոցիալիստական։ Քիչ քաղաքներում կարելի է գտնել Երևանի ջրի նման առողջարար ջուր։ Երևանի բոլոր փողոցների վրա, գրեթե բոլոր խաչմերուկներում ցայտաղբյուրներ կան։

Ծածկած շուկայի մետաղակուռ ցանցադուռը հայ ճարտարապետության հրաշալի մի ստեղծագործություն է։

ԱՄՆ, «Լրաբեր», 1958 թ.

Մանուկ Խոդյան
Ամերիկահայ նկարիչ

* * *

Ես չեմ հիշեր այնպիսի դեպք մը, որ օտարերկրյա որևէ քաղաք գտնվիմ և ինձ զգացած չըլլամ գոնե քիչ մը օտարերկրացի։ Դուն կիյնաս հոսանքին մեջ, կերթաս մյուսներու հետ ու կանգ կառնես ցուցափեղկերու առջև, հերթի կսպասես որևէ լրագիր գնելու համար, մեկ խոսքով կաշխատիս որևէ բան ընել, զգալու համար, որ քու տանդ մեջ ես։ Բայց իզուր։

Երևանի մեջ ես կատարեցի ուրիշ փորձ մը։ Իջնելով «Ինտուրիստ» հյուրանոցը, ուրիշ օտարներու նման ես ձեռնամուխ չեղա հանգստանալու, ինչպես ինձ խորհուրդ կուտային ոմանք։ Վերջապես ինքնաթիռային մեկ գիշերվա ճամփորդությունը այնքան էլ հոգնեցուցիչ չէր։ Ես կշտապեի դուրս ելնել փողոց, կշտապեի տեսնել, ուսումնասիրել հայերու դեմ-

քերը, որ շատ մը գծերով այնքան նման են իտալացիներուն։ Ես համառորեն կուզեի դուրս ելնել։

Եվ ահա կթափառեմ փողոցներուն մեջ քաղաքի մը, որ ինձ համար օտար չէ բնավ։ Սակայն ո՞ւր է ասիական այն Երևանը, որ ես կպատկերացնեի գտնել։ Այն նկարը, որ կբացվի իմ առջև, կտավ մըն է, ուր նկարիչը վերանորոգել ու բաղմաթիվ ուղղումներ է մտցրել։ Զգվող փոքրիկ տուֆերու շարքի վրա վրձինը կարգավորեր է նոր և վիթխարի պալատներ, անցուցեր է կանաչ շերտեր շատրվաններու ջուրերու զուլալ շիթերու այն տեղերը, ուր հողը եղած է պապակ և սև։ Սակայն դու կնկատես այն տեղերը, ուր աշխատանքը դեռ չի վերջացած։ Այդպես կթվի ինձ Երևանը։

«Լույս Փարիզի» պարբերական,
1958 թ.

Մարի Բեննոչի
Իտալացի լրագրողուհի

* * *

Թերևս նախանձելի բախտավորություն մըն է, որ ինձ վիճակվեցավ երրորդ անգամ ըլլալով այցելել Սովետական Հայաստան։ Հայաստան այցելող որևէ հայ մարդ անպայման ինքզինքը հպարտ կզգա ու գլուխը բարձր բռնած կանցնի Երևանի լայն պողոտաներեն, կանգ կառնե Լենինի հրապարակին վրա, որ մեկ հատիկ է բովանդակ Սովետական Միության մեջ. կնայե հրապարակը շրջապատող տուֆակերտ շենքերուն. կառավարական տանը, որու վրա միշտ կծածանի Հայաստանի պետական դրոշը, փոստ-հեռագրի գեղեցիկ շենքը «Հայաստան» նոր հյուրանոցը, հսկա ավազանը, որուն շատրվանի կարկաչը օրորի նման կուգա գիշերվան լռության

մեջ ու հանգիստ քունի մը մեջ կպարուրե հյուրանոցի հաճախորդները։ Եվ ուրախության արտասուքները կաթիլ-կաթիլ կգլորին, սիրտդ կուռի, և կուզես գրկել կուրծքիդ սեղմել այդ բոլորը։

«Սուրբ» Թերթ, 31 հուլիսի,
1958 թ.

Հովհաննես Յազիչյան
Սփյուռքահայ տուրիստ

* * *

Չեմ կարող բառեր գտնել Հայաստանի վերելքը նկարագրելու համար։ Ես ասկե 40 տարի առաջ ապրած եմ Երևանի մեջ։ Այն ատեն սովի, թշվառության համատարած պատկեր մը կներկայացներ մայրաքաղաքը։ Փողոցներուն մեջ մեռելները փռված էին, և ամեն օր հարյուրավոր մարդիկ անոթի կիյնային։

Հիմա հայ ժողովուրդը բարգավաճ կյանք ունի։ Երկիրը առաջ գացած է ամեն ճակատի վրա։ Աչքերուս չհավատացի, տեսնելով Երևանի 4—5 հարկանի գեղեցիկ տուֆաշեն շենքերը, թատրոնները, Մատենադարանը, կառավարական պալատը, Լենինի հրապարակը։ Թշվառության ու մահվան ճիրաններեն ազատված մեր ժողովուրդը հրաշքներ է գործած։ Հսկա, հոյակապ, սքանչելի է ամբողջ պատկերը։

ԱՄՆ, «Լրաբեր», 1958 թ.

Վ. Շահինյան
Ամերիկահայ գրոսաշրջիկ

* * *

Շիտակը, ես Հայաստանը չէի գիտեր։ Անոր մասին լսած էի գիրքերեն ու պատմութենեն։ Ես Հայաստանը գիտեի, որ-

պես հողե տուներու և ավերակներու երկիր։ Սակայն հոս տեսա նոր ու գեղեցիկ քաղաք մը։ Հսկա կառուցումներ, նոր պողոտաներ, որոնք խորհրդանիշն են լուսավոր ապագային։

Սակայն, եթե այս հոյակապ շինությանը զուգակցվեր նաև առատ կանաչը, այս քաղաքը շատ ավելի գեղեցիկ պիտի ըլլար։

«Սովետական Հայաստան» ամսագիր, 1958 թ.

Մ. Հովակիմյան
Ֆրանսահայ գրոսաշրջիկ

* * *

Երևանը շատ գեղեցիկ և հետաքրքիր քաղաք է։ Գերմանիայում այդ քաղաքի մասին շատ քիչ գիտեն։ Մեզ՝ գերմանացիներիս համար շատ կարևոր է Երևան այցելելը։

«Արմենիա» հյուրանոցի տպավորությունների մատյան, 1958 թ.

Դոկտոր Հանս Լենցինգ
ԳԴՀ

* * *

Ես ծնած եմ Վանի մեջ։ Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ տաճկական համատարած կոտորածներեն ազատվելու համար ապաստան եմ գտած Երևանի մեջ 1919-են մինչև 1920 թվականը։ Հետո գացած եմ Պոլիս և ապա՝ 1922-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներու մեջ անցուցած եմ կյանքս։

1934-ին ես Հայաստան եկա որպես պատվիրակ Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ)։ Ես Երևանը չճանաչեցի, որովհետև նախկին 30 հազար բնակիչ ունեցող գավառական քաղաքին մեջ շինարարությունը այնպիսի թափով էր սկիզբ

առել, որ Երևանը դարձել էր 140 հազար բնակիչ ունեցող և մեծ ապագա խոստացող քաղաք։

Այսօր կրկին ես ինքզինքս կգտնեմ Երևանի մեջ, իբրև ղեկավար ամերիկահայ Ազգային խորհրդի կազմած, 45 հոգիե բաղկացած տուրիստներու ամենամեծ խմբին։

Մենք բախտ ունեցանք հյուրասիրվելու նորակառույց «Հայաստան» շքեղ պանդոկի մեջ։

Ամեն անգամ, երբ կբանամ սենյակիս պատուհանը, կապույտ հունի վրա դեմս կցցվի վեհապանծ Մասիսը։ Նույն պատուհանեն աչքիս առջև կփռվի Երևանը, բայց ոչ 1919 թվականի Երևանը, ոչ ալ 1934-ի Երևանը։ Սա ուրիշ քաղաք մըն է, կարծես, մեծ ու չքնաղ Երևան մը, որ մայրաքաղաքն է Հայաստանի, այն երկրին, որ մայր հայրենիքն է աշխարհի չորս ծայրերուն սփռված համայն հայության, կենսունակ, առողջ ժողովրդով, կես միլիոնի հասած բնակչությամբ, եռուզեռի մեջ, առաջադեմ ու ծաղկուն Երևանն է սա, որ զգլխիչ թափով, արծվի թևերով կճախրե դեպի կատարյալ երջանկություն։

Երևանը նշանավորված է իր բազմաթիվ հսկա գործարաններով, իր համալսարանով, մշակույթի բարձր հաստատություններով, դպրոցներով, պետական, հասարակական և բնակելի շենքերով, իր գիտության ու արվեստի տաճարներով և իր պայծառ ապագայի փայլուն ծրագրերով։

Ահա այս է նոր Երևանը՝ փառքը համայն հայության։ Դուրս կելլեմ հյուրանոցեն, կնայիմ շուրջս, սիրտս կթնդա անհուն բերկրությամբ, երբ կիջնեմ Լենինի հրապարակը, հրապարակ մը, որուն նմանը չկա ամբողջ աշխարհի մեջ և որը պարծանք պիտի ըլլար որևէ երկրի, որևէ մայրաքաղաքի։

Այո, կնայիմ և չեմ կշտանար, սա զմայլելի երևույթ է։ Մեծ Լենինի վեհ արձանի երկու կողմերով խումբ մը շենքեր կողողեն հսկա հրապարակը, հանդիպակաց ծայրերուն մեջ վեր կժայթքի շատրվանի խուրձ, որ կարծես ճերմակ ծաղիկներե և լուսնի շողերե հյուսված ըլլա, ավազանն ալ ժպիտի նուրբ ալյակներով։ Որպիսի ներդաշնակությամբ կառուցվեր, ստեղծվեր է այս հրապարակը, զոր շրջապատող գեղեցիկ և վեհապանծ շենքերը հայկական ճարտարապետության ցայտուն ոճի զուխգործոցներն են՝ կառուցված վարդագեղ տուֆով և գեղնագույն քարերեն։

Ահա սա է այսօրվա Երևանը։

Բոլոր այցելուներուն պես, ես ալ հիացած եմ այն մեծագործություններով և ստեղծագործություններով, որոնց ականատես եմ եղեր, ըսեմ սակայն, թե ամենամեծ նվաճումը, որ ես կնկատեմ, այդ վերածնված հայ ժողովուրդն է։ Սա հրաշքի համազոր փոփոխություն է, որ տեսնում եմ իմ ժողովրդի մեջ։ Թշնամիներու սպառնական սուրին, հիվանդության, քաղցի և, վերջապես, ամբողջական բնաջնջումին եզրին հասած հայ ժողովուրդը 1920 թվականին գտավ իր ազատությունը, և, շնորհիվ իր ստեղծագործ աշխատանքի, նա այսօր հասեր է այնպիսի ծաղկուն վիճակի, որ մոտ 2 միլիոն բնակչություն ունի ու հասեր է քաղաքակրթության բարձրագույն աստիճաններու, հասեր է կատարյալ երջանկության նախադռներուն։

ԱՄՆ, «Լրաբեր», 1958 թ.

Օգսեն Սարյան
Ամերիկահայ, այժմ
Հայրենադարձ լրագրող,
Հասարակական գործիչ

* * *

Ես չէի կասկածում, որ Երևանն էլ սովետական մյուս քաղաքների նման կառուցումների եռուզեռի մեջ է։ Սակայն այն, ինչ տեսնում եմ, ինձ անակնկալ նորության նման հրճվանք է պատճառում։ Հիմա նույն եռուզեռով բռնկվել են մեր քաղաքները ևս։ Լենինի հրապարակը, օպերայի և ֆիլհարմոնիայի հոյակապ շենքերը, Հոկտեմբերյան ու Բարեկամության պողոտաները, Կիևյան փողոցը, ո՞ր մեկը թվեմ, բոլորն էլ անջնջելի տպավորություն են գործում։

Բուլղարահայ իմ արվեստակից բարեկամները բազմիցս պատմել են ինձ Հայաստանի ողբերգական անցյալի մասին, որն այնքան նման է մեր երկրի անցյալին... Եվ հանկարծ մի այսպիսի ներկա... Հեքիաթային է, համարյա անհավատալի։

«Սովետական արվեստ» ամսագիր,
1958 թ.

Ժյուլ Լևին
Բուլղար կոմպոզիտոր

* * *

Որքան է փոխվել Երևանը այս կարճատև չորս տարիներին՝ մեր առաջին այցելությունից հետո... Սակայն չի փոխվել Երևանի երաժշտասեր ունկնդիրը, մնացել է նույնքան խստապահանջ, բայց և նույնքան հյուրասեր ու խանդավառ։ Մեծ է հաճույքդ, երբ կրկին հանդես ես գալիս այնպիսի լսարանի առաջ, ինչպիսին է Երևանը, կրկին նվաճում նրա սերն ու համակրանքը։

Բայց երևանյան այս այցելությունը մեզ մի մեծ զառնություն պատճառեց. դա այն էր, որ մենք չհանդիպեցինք մեր

լավ բարեկամին, հիանալի դիրիժորին ու երաժշտին, վառվռուն մարդուն՝ Միքայել Թավրիզյանին։ Թավրիզյանի կորուստը ծանր է ոչ միայն հայ, այլև օտարազգի արվեստագետների համար։

Հուսով ենք, որ մեզ կհաջողվի նորից գալ Երևան և մեր լավ բարեկամների հետ երգել Երևանի օպերային թատրոնի բեմից։

«Սովետական արվեստ»
ամսագիր, 1958 թ.

Եկատերինա Գեորգիևա,
Դիմիտրի Ուզունով,
Բոլշոյ արվեստի գործիչներ

* * *

Ես շատ ուրախ եմ Երևանում գտնվելուս համար։ Սքանչելի է Երևանը, հիասքանչ է Հայաստանի բնությունը, բայց ամենից հիասքանչը հայ մարդիկ են՝ սրտագին, հյուրասեր, իսկական բարեկամներ...

Շուտով թողնում եմ Երևանը, այցելությունս երկարատև չեղավ, բայց այն, ինչ տեսա ես այստեղ, երբեք չի ջնջվի իմ հիշողությունից։

«Սովետական արվեստ»
ամսագիր, 1958 թ.

Լյու—Շի Կուն
Չին կոմպոզիտոր

* * *

Ես եղել եմ սոցիալիստական համակարգի բոլոր երկրներում, բայց միայն Երևանում առաջին անգամ տեսա, թե ինչպես ապակին հալում է էլեկտրահնոցում։ Դա ձեր մեծ

նվաճումն է։ Մենք ուրախ ենք, որ կարող ենք ընդօրինակել մեր հայ ընկերների փորձը և արմատավորել մեր հայրենիքում։

«Սովետական Հայաստան» թերթ,
10 հուլիսի, 1958 թ.

Յարոսլավ Ստանիկ
Չեխ գիտնական

* * *

Մենք Հայաստան ժամանեցինք հուլիսի 29-ին։ Երևանը մի խոշոր քաղաք է՝ լայն փողոցներով ու պողոտաներով, ինքնատիպ գեղեցիկ շենքերով, եղանք արդյունաբերական ձեռնարկություններում, որոնց արդյունքը ուղարկվում է Սովետական Միության բոլոր շրջանները և արտասահմանյան շատ երկրներ։

«Սովետական Հայաստան» թերթ,
6 օգոստոսի, 1958 թ.

Ակսել Իգեմանոն
Նիգերիայի կոմկուսի ակտիվիստների ղեկավար

* * *

Աշխարհահռչակ գիտնականներ Վիկտոր Համբարձումյանի և Արտեմ Ալիխանյանի աշխատանքներին ծանոթանալու նպատակով ամերիկացի ականավոր ֆիզիկոս Միտչել Ուիլսոն եղավ Հայաստանում։

Երբ Երևանի վերակառուցումն ավարտվի, այն կդառնա աշխարհի գեղեցկագույն և իր ազգային ճարտարապետական ոճով ինքնատիպ քաղաքներից մեկը։

«Սովետական արվեստ»
ամսագիր, № 12, 1958 թ.

Միտչել Ուիլսոն
Ամերիկացի պրոֆեսոր

* * *

Ես խորապես երախտապարտ եմ այն մի քանի հետաքրքիր օրերի համար, որ անցկացրի Երևանում։ Այստեղ ես տեսա և իմացա շատ նոր բան։ Վերադառնալով Դանիա, իմ ժողովրդին կպատմեմ այս հետաքրքիր, օր-օրի բարգավաճող երկրի, նրա վարդաժպիտ մայրաքաղաքի մասին, կպատմեմ, որ հայ ժողովուրդը իր երկիրը, իր քաղաքներն ու գյուղերը այնպես է կառուցում, որ այդ գործում նրան կնախանձեին ամենաառաջավոր երկրի շինարարներն անգամ։

Ես սիրեցի Հայաստանը, նրա մայրաքաղաքը։

«Արմենիա» հյուրանոցի տպավորությունների մատյան, 1958 թ.

Սոֆի Պիտերսոն
Դանիացի աշխարհագրագետ

* * *

Ծովային ու ցամաքային երկարատև ճանապարհորդությունից հետո հասանք Երևան։

Երևան... դա կառուցումների քաղաք է։ Թեև այստեղ դեռ տեղ-տեղ երևում են մանր ու հին տնակներ, որոնք հուշեր են արթնացնում անցյալի մռայլ ժամանակաշրջանի մասին, բայց դրանց կողքին մենք տեսնում ենք բազմաթիվ նոր ու հոյակապ շենքեր, նորակառույցների մոտ վեր խոյացող վերամբարձ կռունկներ։ Դրանք տեսանելի են ամենուրեք։ Նոր կառուցվող շենքերի կարելի է հանդիպել ամեն քայլափոխի, այնքան շատ են դրանք։ Այդ ամենը վկայում է այն խոշոր միջոցառումների մասին, որ ձեռնարկում է Հայաստանի կառավարությունը՝ հանրապետության աշխատավորության կյանքի պայմանները բարելավելու համար։

Եթե նոր բնակելի շենքեր կառուցելու համար երբեմն անհրաժեշտ է լինում քանդել հին տները, ապա այս վերջինների բնակիչները նոր բնակարաններ են ստանում հարմարավետ նոր շենքերում։

Չնայած շինարարության լայն ծավալին ու արագ ընթացքին, աշխատավորների բնակարանային բավարարման հարցը դեռևս չի դադարում կառավարությանն անհանգստացնելուց։

Երևանում գոյություն ունեն մշտապես գործող օպերայի և բալետի, երաժշտական կոմեդիայի ու դրամատիկական թատրոններ. մինչև անգամ Երևանի պիոներներն ու դպրոցականներն ունեն իրենց մասնագիտացված թատրոնները։

Ամեն քայլափոխի ես գտնում եմ մի նոր առիթ հպարտանալու իմ Սովետական հայրենիքով, բայց ամենից շատ ինձ հիացնում է Հայաստանի ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսը, որ բացվեց մեր ժամանումից մեկ ամիս առաջ։

Այնտեղ տեսնելով այն ամենը, ինչ այսօր արտադրում է Հայաստանը, ես մեծ ուրախություն ապրեցի։ Իմ հայրենիքը այսօր բազմաթիվ երկրների մատակարարում է մեքենաներ, հաստոցներ, տրանսֆորմատորներ, կոմպրեսորներ, մոտորներ, էլեկտրական սարքավորումներ, ժամացույցներ, պլդինձ, շարժական էլեկտրակայաններ, մարմար, տուֆ և այլն։

Հայաստանում բոլորը հավատում են իրենց ուժերին և

միակ բանը, որ նրանք ուզում են, դա խաղաղությունն է ամբողջ աշխարհում։

«Սուրիա» թերթ,
26 օգոստոսի, 1958 թ.

Ալբերտո Ղայֆեջյան
Սփյուռքահայ զրոսաշրջիկ

* * *

Մենք ուրախ ենք, որ Հայաստանի մայրաքաղաք ենք ժամանել Սովետական Միություն այցելելու ընթացքում, որը մենք կատարում ենք ի պատասխան նորին գերազանցության ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ, պարոն Վորոշիլովի հրավերի։

Մեզ վրա մեծ տպավորություն գործեցին բնության ակնապարար գեղեցկությունները, ժողովրդի և իշխանությունների կողմից մեզ ցույց տրված ընդունելությունը, ինչպես նաև այն խաղաղ, ստեղծարար աշխատանքը, որ կատարվում է Սովետական Միության այն բոլոր վայրերում, ուր եղանք մենք։

Մենք հաստատ հավատում ենք, որ մեր այս այցելությունը կծառայի մեր երկու երկրների միջև առկա հարաբերությունների հետագա ամրապնդմանը և կապահովի գաղափարների ու փորձերի փոխանակությունը ի բարօրություն մեր ժողովուրդների։

Թույլ տվեք ձեզ բոլորիդ շնորհակալություն հայտնել այն սիրալիր ընդունելության համար, որ դուք ցույց տվեցիք մեզ և ձեզ բոլորիդ հայտնել մեր սրտագին բարեմաղթությունները։

Այսօր մենք մեկնում ենք ձեր հիանալի մայրաքաղաքից։ Չնայած մենք ձեզ մոտ եղանք ընդամենը մի քանի օր, այնուամենայնիվ մեզ հաջողվեց շատ բան տեսնել, որի համար և անկեղծ շնորհակալություն ենք հայտնում ձեզ։

Մենք վստահ ենք, որ մեր գալուստը կնպաստի մեր բարեկամական ու խաղաղ հարաբերությունների է՛լ ավելի ամրապնդմանը։ Ավելին. մենք համոզված ենք, որ ձեր ցույց տրված ընդունելությունը, ինչպես նաև բարեմաղթությունները ուղղված են ոչ միայն մեզ, այլև Նեպալի բովանդակ ժողովրդին։ Մենք մեծագույն գոհունակությամբ անկեղծ շնորհակալություն ենք հայտնում ձեզ Նեպալի ժողովրդի անունից։

Խաղաղության պահպանման գործում ձեր ջանքերը անկեղծ հիացմունք են պատճառում մեզ, իսկ այդ ուղղությամբ ձեզ ջերմորեն պաշտպանում ենք։

Մենք ընդմիշտ կհիշենք ձեր հնագարյան քաղաքը՝ Երևանը և ձեր բարեկամական ընդունելությունը։

Շնորհակալություն բոլորիդ։

Երևան ժամանելու և մեկնելու ժամանակ արտասանած ճառից «Սովետական Հայաստան» թերթ, 17—18 օգոստոսի, 1958 թ.

Մահենդրա Բիր Բիքրամ-Շահ Դևայ
Նեպալի թագավոր

* * *

Ես Երևան եմ եկել առաջին անգամ և պետք է ասեմ, որ Սովետական Հայաստանի մայրաքաղաքը ինձ վրա շատ լավ տպավորություն գործեց։ Ձեր Երևանը նման չէ ինձ ծանոթ քաղաքներից ոչ մեկին։

«Երևան» թերթ, 1 հուլիսի, 1959 թ.

Կլիմենտ Վորոշիլով
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ

* * *

Ես առաջին անգամ Երևանում եղել եմ 1931 թվականին։ Նվաճումներն այնպիսի երազային չափեր ունեն, որ բաղդատության եզք չկա այսօրվա և երեկվա միջև։ Երևանն ամբողջությամբ նորակառույց է իր շենքերով, պողոտաներով, այգիներով։ Նրա թանգարանները իրենց հարստությամբ կարող են առաջացնել Եվրոպայի շատ թանգարանների նախանձը։ Երևանի զարգացումը ամբողջական և անթերի իրականացնելու համար ցանկալի է, որ ավելի մեծ ուշադրություն դարձվի բարեկարգման ու ծառայության հարցերին։

Տարիներից ի վեր իմ գերագույն իղձն էր Հայաստանը տեսնել բարգավաճ ու փառավոր։ Հայ ժողովուրդը դարերից ի վեր ձգտել է դրան։ Բայց պատմության դժնդակ պայմանները միշտ խանգարել են։ Այսօր ուրախությամբ կասեմ, որ իմ իղձը իրականանում է։

«Սովետական Հայաստան» թերթ,
20 հոկտեմբերի, 1959 թ.

Մանասե Սևակ
Ամերիկահայ գիտնական, պրոֆեսոր

* * *

Իմ վաղեմի լավ ընկերոջ հրավերով այցելեցի Երևան և շատ զոհ մնացի այդ ուղևորությունից։ Սպասածիս հակառակ, Հայաստանի մայրաքաղաք դալս ինձ համար մեծ իրադարձություն հանդիսացավ։ Դրա պատճառը միայն այս երկրի, իրոք, հիասքանչ գեղեցկությունը չէ, որ գերում է յուրաքանչյուրին, առաջին իսկ վայրկյանից, և որով անհնար է հագեանալ։

Իմ հայրենակցի՝ ականավոր գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հուզիչ վեպից ես մի փոքր ծանոթ էի այն տառապանքներին, որ կրեց հայ ժողովուրդը հատկապես մեր դարի առաջին երկու տասնամյակում։

Հայ ժողովուրդը լիակատար իրավունք ունի հպարտանալու իր պատմությամբ և դարավոր մշակույթով, որոնց ես ծանոթացա Երևանի Մատենադարանում։

«Սովետական Հայաստան» ամսագիր,
հոկտեմբեր, 1959 թ.

Էրվին Յուկկեր—Շիլլինգ
Ավստրիայի կոմկուսի Կենտկոմի անդամ

* * *

Ես եղա Կարմիր բլուրում, Էրեբունի ամրոցում, Գառնիում։ Դրանք հազարամյակների անցյալ ունեն և պատկանում են տարբեր ժամանակների։ Որպես ճարտարապետական կոթողներ, դրանք բարձր արվեստի նմուշներ են և մեծ հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն մասնագետի համար։

Երևանն ապրում է մեծ քաղաքի կյանքով և աճում է ուղղակի մարդու աչքի առջև։ Հայ ժողովուրդը իրավունք ունի պարծենալու իր համալսարանով, Մատենադարանով, բազմաթիվ ինստիտուտներով և, ամենից առաջ, իր մասնագետներով։

Երևանը Պրահայից շատ հին է, բայց այնտեղ ավելի շատ հուշարձաններ կան, քան Երևանում։ Ինչո՞ւ։ Որովհետև Երևանը դարերի ընթացքում ավերվել է, ասպատակվել։

Հայաստանի ռադիոյի ձայնագրան, 1960 թ.

Յարոմիր Եղիշկա
Չեխ գիտնական-հայագետ

* * *

Սովետական Հայաստանի 40 տարիներին Երևանում ստեղծվել են բազմաթիվ միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Երևանը այժմ համարվում է մեր երկրի գիտական խոշոր կենտրոններից մեկը։ Այստեղ գործում է գիտությունների ակադեմիան՝ գիտա-հետազոտական հիմնարկների իր լայն ցանցով, իր անվանի գիտնականներով, որոնցից շատերը համաշխարհային հռչակ ունեն։

«Սովետական Հայաստան» թերթ,
29 նոյեմբերի, 1960 թ.

Հովհաննես Բաղրամյան
Սովետական Միության մարշալ

* * *

Սկսիմ լեռներո՞վ, թե մարդկանցով։ Իրականի մեջ, երկուքն ալ միևնույն բաներն են։ Բնությունը խիստ է։ Ամենուրեք այրած քար։ Լեռները կեցած ամփիթատ բռնի ձևով, կերկարին իրարու օղակված և կարծես կպաշտպանեն անսահման դաշտ մը՝ Արարատյան դաշտը։ Ծովու մակարդակեն 1000 մետր բարձրության վրա ենք։ Մեր դիմաց հպարտորեն կբարձրանա Արարատը։

Շրջելով Երևանի մեջ, քիչ անգամներ չէ, որ ես տեսա անցորդներ, որոնք զարմացած կնայեն այս լեռան։ Տուրիստներու երևույթ ունեին անոնք։ Բայց հետո հասկացա, թե տեղացիներ են, քանի որ ժայռանիստ վիթխարին միշտ տարբեր տեսք ուներ։ Ան կփոխեր իր դեմքը, գույնը, կխաղար ամպերուն հետ, կաներևութանար մշուշին մեջ, որպեսզի դարձյալ

ապշեցնե իր վերստին երևումով։ Անփոփոխ կմնար միայն մեկ բան՝ անոր հոյակապությունը։

Այս ժողովուրդը, ինչպես Մասիսը, հազարամյակներ շարունակ ենթակա եղավ ամեն տեսակ փորձություններու, հալածանքներու և աղետներու, և, սակայն, դիմացավ և այսօր կտեսնենք զայն ավելի երիտասարդ, քան երբեք։

Բնության խստությունը կընդգծվի բուսականության պակասով, այստեղ ալ սակայն կտիրապետեն հակադրությունները։ Այնտեղ, ուր ջուր մը կհոսի, ըլլա Արաքսը, Հրազդանը կամ ջուրի փոքր առվակ մը, փթթում է բուսականությունը։ Մերկ լեռներն անգամ, որոնք կհսկեն նայելու համար հովտին մեջ հոսող ջրի հայելիին մեջ, կարծես կհիանան։

... Հրաբուխները մոտեցան, երկրաշարժները այժմ ալ տեղի կունենան հաճախ։ Եվ եթե ճարտարապետական հինավուրց կոթողներու մեծ մասը կործանեցան օտար արշավանքներու պատճառով, անոնց կարևոր մեկ մասը ավերակ դարձած է երկրաշարժերու հետևանքով։ Անվերջ պայքար մը բնության ու մարդու միջև։ Բայց մարդը հաղթեց։ Բավական է նայել այսօրվա Երևանին, արդիական այս քաղաքին՝ հինգ հարյուր հազար բնակչությամբ, որ անցյալ դարու վերջը 15 հազարեն ավելի քիչ բնակիչ ուներ։ Տունները հիասքանչ են, շինված են վարդագույն, կապույտ, դեղին, կանաչ և սև գույներ ունեցող տուֆաքարով։ Շենքերը կբարձրանան ու կիջնեն բլուրների վրա՝ շարքով ավելի լավ տեսելու համար դաշտագետինը, որուն վրա պահակ կեցած է Պորփյուրե հսկան։

Սովետական Հայաստանի արդիական ճարտարապետությունը կշարունակե օգտագործել 5-7-րդ դարերու հին տաճարներու ոճը՝ հարմարեցված 4-5 հարկանի բնակարաններու

պայմաններում։ Ոճի ժուժկալությունը որևէ մանրամասնություն կատարյալ ամբողջության ներդաշնակ ռիթմին։ Հնամենի ժողովուրդ մըն է հայը՝ լի երիտասարդական կորովով. քարե հսկայի կենդանի մեկ պատկերն է այն։

Ռումինահայ «Նոր կյանք»
շաբաթաթերթ, 2 մայիսի, 1960 թ.

Զիք Տամատյան
Ռումինահայ նկարիչ

* * *

Վերջապես 1959 թվականի դեկտեմբերյան մի առավոտ ես ինձ գտա Երևանի օդանավակայանում։

Ամեն ինչ կատարվեց այնքան անսպասելիորեն, որ ես չէի իմանում երա՞զ է դա, թե իրականություն։

Երբ իջա ինքնաթիռից, ես ինձ զգում էի ինչպես մի ճանապարհորդ, որը մի քանի տարվա բանտարկությունից հետո վերադարձել է տուն։ Քաղաքի փողոցներով դեպի հյուրանոց գնալիս այն ամենը, ինչ տեսնում էի մեքենայի պատուհանից, այնչափ հարազատ էր թվում ինձ։ Ամեն ինչ այնպես էր, ինչպես որ տարիներ շարունակ պատկերացրել էի իմ երազներում, ինչպես որ տեսել էի լուսանկարների վրա, կինոնկարներում. ոչինչ օտար չէր ինձ համար։ Եվ չնայած դրան, ես զարմանում էի ամեն մի նորակառույցով, ամեն մի գեղեցիկ փողոցով... Սհա Լենինի անվան կենտրոնական հրապարակը, որը շրջապատող շենքերը հայկական ճարտարապետության սքանչելի գլուխգործոցներ են, իսկ Մատենադարանը, Օպերային թատրոնը և բազմաթիվ այլ կոթողներ, որոնք անջնջելի տպավորություն թողեցին ինձ վրա...

Առաջին իսկ օրը ես եղա Հայաստանի պետական պատ-

կերասրահում ու տեսա էջմիածնի հրաշակերտ վանքը... և ինձ համար հասկանալի դարձավ, թե որտեղից է գալիս Երևանի նորակառույցների գեղազարդ ճարտարապետությունը։ Իսկ երբ շոշափեցի այդ նորակառույցների խորաքանդակ նախշերը, ինձ համար հասկանալի դարձավ, թե որքան շատ է սիրում հայ ժողովուրդը իր երկիրը, իր բնությունը, իր հողը, նրա տված առատ պարգևները։

Մոնտեվիդեոն կառուցվում է ավելի քան 2 հազար, իսկ Երևանը, չնայած իր մոտ երեքհազարամյա պատմությանը, ընդամենը 40 տարի։ Եվ այսօր արդեն Երևանը ոչ միայն Սովետական Միության, այլև աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկն է։ Երևանում ես առաջին անգամ ձյուն տեսա, անչափ հաճելի է քայլել ձյան վրայով և ձնագնդի խաղալ։ Ես ինձ համարում եմ աշխարհի ամենաերջանիկ աղջիկը, որովհետև ապրում և սովորում եմ իմ հարազատ հայրենիքի մայրաքաղաքում։

ԱՄՆ, «Լրաբեր», 19 հուլիսի,
1960 թ.

Ռոսիդա Զաքչյան
Սփյուռքահայ ուսանողուհի

* * *

Գրեթե 15 օր է, որ ես ներկա եմ մի հիասքանչ տեսարան իմ հայրենիքն է, մեր այսօրվա ծաղկող Հայաստանը։

Մենք՝ հայերս տարբերվում ենք մյուս ժողովուրդներից մի այնպիսի հատկությամբ, որ ծնվում ենք երկրագնդի ցանկացած մասում։ Մենք ծնվում ենք ինչպես Ասիայում, այնպես էլ Աֆրիկայում, Ամերիկայում և Եվրոպայում, ու մենք ամենուրեք պահպանում ենք մեր դարավոր սովորությունները։

Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը աշխատանքին նվիրված մի երգ է։ Քաղաքի որ մասում էլ լինես, կհանդիպես ավարտված ու սկսվող կառույցների։ Ես կարծում եմ, որ այս քաղաքում հնարավոր չէ անցնել մի թաղամասով, ուր չլինի նոր շինարարություն, և եթե քեզ ուղեկցում է քաղաքի բնակիչներից որևէ մեկը, ապա հաճախ կլսես այս արտահայտությունը. «Սա նոր է...», «Այն շենքն էլ է նոր»։

Այս գեղեցիկ քաղաքում կառուցվել են 4—5 հարկանի բնակելի շենքերի ամբողջական թաղամասեր։ Ամեն մի թաղամաս ունի իր մշակույթի կենտրոնը, մթերային խանութները, դպրոցը և, քաղաքային տրանսպորտի շնորհիվ, կապված է կենտրոնի հետ։

Իմ կարծիքով, Սովետական Հայաստանում մի շատ կարևոր բան կա. դա այն է, որ այսօրվա հայը տիրապետելով գիտությանը և տեխնիկային, իր կամքն է թելադրում հայրենի դաժան բնությանը։

Ռումինահայ «Նոր կյանք»
շաբաթաթերթ, 16 հունվարի,
1959 թ.

Նուբար Մարգարյան
Ուրուգվահայ պատվիրակության
անդամ

* * *

Մասնագիտությամբ լինելով ճարտարապետ, ես մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրեցի ձեր հինավուրց երկրի պատմական կոթողները։ Հայ ժողովուրդը կարողացել է լավ օգտագործել անցյալի ճարտարապետական հարուստ ավանդույթները և ստեղծել նոր հիանալի կոթողներ։ Դրա լավագույն ապացույցը վարդատուֆ Երևանն է, հոյակապ ու շքեղ իր շենքերով, բազմահարկ իր նորակառույցներով։

Մենք շատ բան տեսանք ու սովորեցինք Երևանում։

«Երևան», 1959 թ.

Լե Դինե Դապ
Վիետնամցի ճարտարապետ

* * *

Եվ Աբովյանով իջնում եմ կամաց,
Հրապարակ եմ մտնում լռին,
Այս փողոցով է քաղաքն իմ սիրած
Կարծես միանում ողջ աշխարհին։

«Երեկոյան Երևան» թերթ,
1960 թ.

Կարլեն Շխիկյան
Սովետահայ բանաստեղծ

* * *

Հայաստանի մայրաքաղաք Երևանը չափազանց խոր տպավորություն գործեց մեզ վրա։ Երբ մենք քայլում էինք Երևանի կենտրոնական փողոցներից մեկով, մեզ ուղեկցողն ասաց, որ այն կրում է հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունը։ Իմանալով այդ մասին, մենք շատ հուզվեցինք։ Դա ևս վկայում է ժողովրդի բարձր մշակույթի, դեպի գրականությունը տածած նրա սիրո մասին։

Մեր տեսած հրաշալիքներից մեկը Մատենադարանն էր, հնադարյան թանկարժեք ձեռագրերի այդ սքանչելի շտեմա-

բանը։ Որպիսի՜ խնամքով ու գուրգուրանքով են պահված այդ ձեռագրերը, որոնք հայ ժողովրդի մեծ մշակույթի չխամրող վավերագրերն են։

Մենք հեռանում ենք լավագույն տպավորություններով։

«Դրական թերթ», 14 օգոստոսի, 1959 թ.

Ռոմեո Էլվիո, Դիյազ դե Մարեաս,
Մարիա Անտոնիետա
Պարագվայցի գրողներ

* * *

1960 թվականի դեկտեմբերի 5—12-ը Ֆրանսիայի Մարսել քաղաքում կազմակերպվեց հայկական ճարտարապետությանը նվիրված շաբաթ։ Ականատես Վարժապետյանը այդ առթիվ գրում է.

«ԺԱՖ»-ի ֆրանսահայ մշակութային միության Մարսելի շրջանային վարչության կորովի անդամներու փութաջանությամբ անմիջապես հարաբերության մտած տեղվույն ֆրանսիական ֆլամարիոն ընկերակցության հետ կազմակերպեցին առևտրական սենյակի դասախոսական սրահին մեջ կոնֆերանս մը ֆրանսիացի ազնիվ ժողովրդի համար, հայկական ճարտարապետությանը ծանոթացնելու դասախոս հրավիրելով Փարիզեն պետական ճարտարապետ, Տիար Էդուարդ Ութուջյան, որ Երուսաղեմի Սուրբ Հարություն համաքրիստոնեական տաճարի նորոգության աշխատանքները իրեն վստահված են։

Անդրադառնալով ներկա Հայաստանի ճարտարապետությանը, որի սկիզբը ավստրիական ու գերմանական ոճը եղած է, բայց շուտով վերադառնալով այլևս հայ ճարտարապետները խուսափած են ընդօրինակություններե։

Վերադարձած են մեր նախահայրերու ստեղծած զուտ հայկական ոճին և սկսած են օգտագործել և կատարելագործել այդ ոճը, որը վանքերու և եկեղեցիներու հատուկ է։ Այսօր հայկական այդ ոճն է, որ կտիրապետե ամբողջ Հայաստանի մեջ և ի մասնավորի Երևան, իր բոլոր հիմնարկներով, պալատներով, կայարանով, կամուրջներով։

Դասախոսը մեզ պատկերացուց հին ու նոր Երևանը։ Տեսանք հին Երևանը իր հողաշեն, ցածլիկ, միհարկանի տնակներով, որոնք, ըսավ, պակաս չեն Արևելյան քաղաքներեն։ դատ նույնիսկ Եվրոպային մեջ և Ֆրանսիա։ Մասսիվ Սանթրալի, Ռոանի շրջանը և Հարավային Ֆրանսիայի մեջ լեցուն են։

Մասսիվ Սանթրալի Օվերնեի շրջանի ժողովուրդը դասախոսը նմանցուց հայ ժողովուրդին իր զանգերով, սովորություններով, բնավորություններով և ստեղծագործություններով։

ԱՄՆ, «Լրաբեր», 5 հունվարի, 1960 թ.

Ս. Վարժապետյան
Լրագրող, ԱՄՆ

* * *

Տեսած եմ շատ մայրաքաղաքներ և մեծ քաղաքներ, բայց չեմ տեսած Երևանի պես գեղատեսիլ քաղաք՝ իր ճարտարապետական ոճով այնքան ինքնատիպ ու յուրօրինակ։

Նյու-Յորքը եթե ունենար Լենինի հրապարակի պես սկվեր մը, պիտի պարծենար անով։ Մարդ չի կշտանար դիտելով

Լենինի հրապարակը, զան երիզող հոյակապ շենքերու ներդաշնակ անսամբլը, շենքեր, որոնց ամեն կտոր քարը կարծես կհնչե որպես ձայնանիշ մը Հայաստանի նոր պետական կյանքը, ժողովրդի երջանկությունը փառաբանող սիմֆոնիայի մը։

Հայաստանի ռադիոյի
ձայնագրան, 1960 թ.

Մարտիկ Մարտենց
ԱՄՆ, ամերիկահայ լրագրող,
այժմ հայրենադարձ

* * *

Իմ չքնաղ, վարդագույն, ձյունեղ քաղաք Երևան։ Ես շատ երջանիկ եմ, որ ինձ վիճակվել է իմանալ քո գեղեցկությունը և այն մարդկանց, ովքեր ապրում են քո մեջ։ Վաղուց չէ, որ ես եղել եմ Հայաստանում, բայց ինձ թվում է, որ մեր բարեկամությունը միշտ էլ ամուր է։ Ինչպես էիք ջանում, որ ձեր երկրում ունեցած իմ կարճատև ուղևորությունը լցնեք ամենահաճելի տպավորություններով։ Ես դիտեցի ձեր հիանալի քաղաքը շատ հանգամանորեն։ Դրանում ինձ օգնեց Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի կոմիտեի հայկական ընկերության ներկայացուցիչը։ Ինչպիսի՜ սիրով ու հպարտությամբ նա ցույց էր տալիս ինձ ձեր ժամանակակից քաղաքը։

Ես երբեք չեմ մոռանա ձեր մշակութային հաստատությունների շենքերը, արդյունաբերական ձեռնարկությունները, օպերային թատրոնի հոյակերտ կառույցը և այն հսկա հյուրանոցը, որը հպարտությամբ կրում է «Արմենիա» անունը։ Ինչպես չմտաբերել բարեկամական այն սիրալիրությունը, որ

ես զգացի թե՛ թատրոնում, թե՛ հյուրանոցում, թե՛ խանութում։

Ինչպիսի՜ ուշադրությամբ և հետաքրքրությամբ դուք լսեցիք իմ Սաժենկան, Վաշեկի հետ կատարած իմ երգերը լսելիս ծիծաղեցիք և լաց եղաք իմ Ջիո-Ջիո-Սանի վրա։

Մի՞թե կարող եք մտածել, որ կարելի է մոռանալ բարեկամության հիանալի կապերը։ Ձեր խոսքերը մինչև հիմա ինձ սատարում են արտիստական իմ աշխատանքում, և եթե մենք նորից հանդիպենք ձեզ հետ, ինչպես խոստացանք միմյանց, ինձ համար մեծ բերկրանք կլինի։

Ցանկանում եմ բոլոր նրանց, ում ճանաչում եմ և նրանց, ում գուցե դեռ կճանաչեմ ձեր կախարդական վարդագույն քաղաքում և ձեր ամբողջ երկրում, նորանոր հաջողություններ 1960 թվականին՝ շատ արևային օրեր ու լավ եղանակ, հարուստ բերք։

Թող աճի և է՛լ ավելի գեղեցկանա ձեր արևաշող մայրաքաղաք Երևանը, թող երջանիկ լինեն այնտեղ ապրող բոլոր մարդիկ։

Հայաստանի ռադիոյի ձայնագրանի ֆ., 1960 թ.

Սլավկա Պոդխոզկովա
Պրագայի ազգային թատրոնի
մենարգչուհի

* * *

Անցնում ենք այդ հին և միաժամանակ երիտասարդ քաղաքի փողոցներով, ծանոթանում ենք նրա զբոսայգիներին, պուրակներին, հրապարակներին, նրա քանդակագործությանը և հարստարտեսությանը ու ըմբռնում իրենց քաղաքին

սիրահարված երևանցիների օրինական հպարտությունը, նրանք օրեցօր իրենց քաղաքը դարձնում են գեղեցիկ ու հրապուրիչ։

Կան հրապարակներ, որ կառուցվել են պատմական երկար ժամանակներում, ոճական տարբերություններով հանդերձ. ունեն անսամբլային միասնության և ամբողջության, միասնական տեսք։ Այսպիսիք են՝ սուրբ Մարկոսի հրապարակը Վենետիկում և Դվորցովայան՝ Լենինգրադում։ Այդ հրապարակների դեմքը համաչափ է ու ներդաշնակ, չնայած նրանց շրջապատող տեղանքի, ձևի ու դեմքի տարբեր լինելուն։

Կան հրապարակներ, որ կառուցվել են մի ոճով, երբեմն միասնական նախագծով ու մի ճարտարապետի կողմից (օրինակ՝ Վոգեզների հրապարակը Փարիզում՝ կառուցված Կլոդ-շատիոնի նախագծով 1604—1612 թթ. կամ Լոմոնոսովի անվան հրապարակը Լենինգրադում)։

Վերջապես կան հրապարակներ, որոնց անսամբլի բոլոր կառուցումներն ստեղծվել են միասնական ճարտարապետական պրիոմով։ Այստեղ ամեն մի ճարտարապետ զարգացրել է իր նախորդի օգտագործած մոտիվները։ (Լուվրը և Թյուիլրին Փարիզում)։

Այսպես, վերջին հիմունքով է կառուցվել Լենինի հրապարակը Երևանում։ Յուրաքանչյուր նոր կառույցում այստեղ ստեղծագործաբար յուրացվել է նախնիների ժառանգությունը։

Լենինի հրապարակը ձվաձև է և հիշեցնում է Հռոմի սուրբ Պետրոսի տաճարի հրապարակը։ Սակայն եթե այնտեղ հրապարակի կողմերը ստեղծվում են քառաշարք սյուներով, այստեղ հրապարակը շրջապատում են շենքերը։ Լենինի հրապարակը ունի միանգամայն ուրիշ ճարտարապետական արտա-

հայտություն։ Հրապարակում վեր է խոյանում Լենինի արձանը, որը ստեղծվել է ճարտարապետներ՝ Ն. Փարեմուզովի, Լ. Վարդանովի ու քանդակագործ, Սովետական Միության ժողովրդական նկարիչ Մերկուրովի կողմից, Սովետական Միությունում ստեղծված լավագույն արձաններից մեկն է։

Առավոտյան, վեհապանծ Արարատի ֆոնի վրա, Լենինի արձանը առանձնապես միասնական ու կենդանի է ընկալվում։

Հրապարակը զարդարող շենքերից մեկը՝ Կառավարական տունը մտել է նոր սոցիալիստական ճարտարապետության պատմության մեջ։

Իր ամբողջության մեջ՝ Կառավարական տան, Միությունների, փոստի, պատմության թանգարանի, «Արմենիա» հյուրանոցի ու մյուս շենքերի անսամբլով, Լենինի հոյակապ արձանով Երևանի հրապարակը արդարացիորեն կարելի է կոչել աշխարհի ամենագեղեցիկ հրապարակներից մեկը։

«Երևան» թերթ, 1960 թ.

Յուրի Յարալով

Ռուս գրող և լրագրող

* * *

Երևանից ես ինձ հետ տանում եմ ինձ հետաքրքրող հազվագյուտ վավերաթղթի միկրոֆիլմ։ Սա ապացույցներից մեկն է այն ծառայության, որ նման մի հաստատություն, ինչպիսին է Մատենադարանը, կարող է մատուցել համաշխարհային գիտությանը։ Դա մի փայլուն օրինակ է նաև այն բանի. թե ինչպիսի նվաճումների կհասնեն Ամերիկայի Միացյալ Նահանգների և Սովետական Միության գիտնականները, եթե

նրանք համագործակցեն բարեկամության մթնոլորտում։ Երևանում եղած ժամանակ ես խորապես ըմբռնեցի այն կարևոր ներդրումը, որ հայ ժողովուրդը ունի համամարդկային մշակույթի կերտման ազնիվ գործում։

Երևան կատարած իմ այցելությունը արտասահմանյան 40 երկրներում ուղևորությանս գագաթնակետը հանդիսացավ։

Հայաստանի ռադիոյի
ձայնադարանի ֆոնդ, 1960 թ.

Առնոլդ Շուլց
Չեկոսլովակիայի համալսարանի
պրոֆեսոր, հնագետ

* * *

Հայկական հիանալի երգերն ու պարերը, զորս առիթ ունեցա լսելու և տեսնելու այստեղ՝ Պուքրեշի մեջ, ինչպես և Սովետական Հայաստանի փառահեղ հաջողությունները բոլոր մարզերում մեջ, որոնց տեղեկացա, ինձի սիրելի դարձուցին աշխատասեր և տաղանդավոր հայ ժողովուրդը։

Ահա թե ինչու մեծ ուրախություն պատճառեց ինձի այն լուրը, թե առիթ պիտի ունենանք այցելելու Սովետական Հայաստան։

Այն ջերմ ընդունելությունը, որուն հանդիպեցանք մենք այս երկրին մեջ, այն սերը, որով շրջապատվեցանք ամեն բոպե և այստեղ մեր մի քանի օր մնալը ուժեղ տպավորություն թողեցին իմ վրա։

Երևան ժամանած օրվա հետմիջորեին մեր պատվիրակությունը մեծ ջերմությամբ ընդունվեցավ Հայաստանի Գերագույն Խորհրդի կողմե։

Երևանը սքանչացուց մեզ հինեն դեպի նորը իր կատարած թռիչքով։ Այցելելով քաղաքի պատմության թանգարանը, ուր կարելի է տեսնել, թե ինչ էր Երևանը անցյալին մեջ, ինչ որ է այսօր Սովետական Հայաստանի մայրաքաղաքը, կմնաս զարմացած և հիացած ի տես միայն չորս տասնամյակներու ընթացքին տեղի ունեցած իրագործումներուն։ Երևանի և ամբողջ երկրի մեջ բնակարաններու և գործարաններու կառուցումը կկատարվի վիթխարի չափով։

Մենք մեկնեցանք Սովետական Հայաստանեն անմոռանալի տպավորություններով այդ հիանալի երկրի մասին, որի ժողովուրդը խորունկ և հզոր բարեկամությամբ կապված է ռումին ժողովրդի հետ։

«Նոր կյանք», ռումինահայ շաբաթաթերթ, 29 հունվարի, 1960 թ.

Մարին Ֆլորեա
«Յունեսքոի» Առլուսի ընդհանուր խորհրդի փոխնախագահ

* * *

Երբ ինձ հայտնեցին, որ մեկնելու եմ Սովետական Միություն, նստեցի քարտեզի առջև ու սկսեցի մտածել, թե որ քաղաքներն այցելեմ։ Բայց մտորումները երկար չտևեցին, իսկույն ընտրեցի Կովկասը և առաջին հերթին Երևանը։

Զքնաղ քաղաք է Երևանը։ Ճիշտ է, այնտեղ դեռ կան փոքր, կավածեփ տնակներ, բայց նրանց տեսքը այնպիսին է որ կարծես թե մնացել են այն բանի համար, որպեսզի մարդիկ տեսնեն, թե ինչ է եղել Երևանը անցյալում. Քաղաքի մեծ մասը նոր է, նրա ամեն մի շենքում կարելի է տեսնել հայկական ճարտարապետության հոյակապ նմուշներ։

Ինձ հատկապես դուր եկավ «Ծածկած շուկան»։ Ես շատ

եմ ճանապարհորդել աշխարհով մեկ, բայց ոչ մի տեղ չեմ տեսել այսքան մեծ ու մաքուր շուկա։

Իմ հայրենիքից՝ Հունգարիայից 3 հազար կիլոմետր հեռավորության վրա՝ Երևանում, ինձ այնպես էի զգում, ինչպես սեփական տանը։

Երևանի ռադիոյի ձայնադարանի
Ֆ., 1960 թ.

Մատե Դեզդ
Հունգարացի լրագրող

* * *

Ես ցավում եմ, որ Հայաստանը առաջին անգամ տեսա կյանքիս մայրամուտին։ Ի դեպ, գուցե այդ ևս ունի իր լավ կողմը։ Ասում են, թե առաջին սերը ամենաուժեղն է լինում, թերևս ամենախելոքը։ Կյանքիդ վերջում ավելի լավ ես տեսնում ամեն ինչ, մի տեսակ ավելի լավ ես հասկանում։ Եվ Հայաստանը դրսևորեց ինձ համար շատ նորություններ։ Դժվար է մի քանի խոսքով պատմել այն հայտնությունների մասին, որ բացվեցին ինձ համար Հայաստանում։ Ես Հայաստանի մասին շատ բան գիտեի, ծանոթ էի Հայաստանի հետ՝ վերաբտադրված նկարների միջոցով, հայ հին ճարտարապետությամբ, գիտեի Սարյանին՝ իր ցուցահանդեսներով, թարգմանությամբ կարդացել էի հայկական պոեզիան, սկսած նրա էպոսից մինչև ժամանակակիցները։ Բայց այդ ամենը որոշ շրջանակների մեջ էր։ Անգամ Սարյանը, որը հիանալի ցուցահանդես կազմակերպեց Մոսկվայում, Երևանում ավելի շատ բացահայտվեց ինձ համար։

Վերցնենք ամենահասարակը՝ նոր Երևան քաղաքը, որը բարձրացել է համարյա դատարկ տարածության վրա։ Նրա

ճարտարապետները հաշվի են նստել շինանյութերի բնույթի հետ, այդ բանում նրանք ունեցել են հին ճարտարապետների հսկայական ավանդույթները։

Երբ նայում ես Հայաստանի հին ճարտարապետությանը, ես բաց եմ թողնում հիմա հելլենական շրջանը, վերցնում եմ յոթերորդ դարը, թեկուզ հենց Երևանի Զորավոր հուշարձանը, այնտեղ տեսնում ես պարզություն և ներդաշնակություն, տեսնում ես ամենաքիչ քանակի էֆեկտների, ձևերի միջոցով հայ մշակույթի ամենամեծ էությունը, հայ ժողովրդի հոգին արտահայտելու հմտությունը։

Ես միշտ սիրել եմ հայ պոեզիան, համարելով այն ամբողջ մարդկության մեծ պոեզիա, սկսած իր հին էպոսից մինչև մեր ժամանակակիցներից շատերը։

Ես երջանիկ եմ—որ ինձ վիճակվեց անձամբ ճանաչել Իսահակյանին, մեր դարի մեծ բանաստեղծին, որը հերքեց թվաբանության թեորիան։ Հայկական պոեզիան ուժեղ է, ոչ թե թվաբանությամբ՝ թե որքան է, ինչքան շատ է, այլ նրանով, թե ինչպիսին է։ Եվ ահա ոչ բազմաթիվ մի ժողովրդի ներկայացուցիչները վաղուց արդեն մտել են համաշխարհային պոեզիայի մեջ, նրան թարգմանում են բոլոր լեզուներով, նրան սիրում են։ Այդ մեծ բան է։

Ես առաջին իսկ օրը, երբ Երևան եկա, դուրս եկա փողոց և հանկարծ ընկրկեցի։ Ես տեսա արձանի մեջ մարմնացած այն բանաստեղծի դեմքը, որի հետ ես նույնպես ծանոթ էի, տեսա Չարենցին՝ ոգեշնչված, համարձակ Չարենցին։

Հայաստանում ու նրա մայրաքաղաքում ինձ ամենից շատ գերեցին մարդիկ։ Թեպետ ես շատ եմ սիրում արվեստը, բայց

արվեստից ավելի ինձ դուր եկան մարդիկ։ Թեպետ ես կյանքում շատ բարեկամներ եմ ունեցել, բայց ես այստեղ տեսա հայ ժողովրդին, մոտիկից մերձեցա նրա կենցաղին, և նա ինձ գերեց իր մարդկայնությամբ, իր իմաստությամբ, բարձրությամբ, ոգեշնչությամբ և միաժամանակ, իր զսպվածությամբ, իր ներքին կրքոտությամբ։

Ես երջանիկ եմ, որ եղա Հայաստանում։

Երևանի ռադիոյի ձայնադարանի Իլյա Էրենբուրգ

ֆ., 1960 թ. Սովետական գրող

* * *

Ես չափազանց բարձր եմ գնահատում հայ գիտնականների աշխատանքը, նրանց ավանդը գիտության զարգացման գործում։

Երևանի ուզածդ գիտական հաստատությունը կարող է համեմատվել Եվրոպայի և Ամերիկայի գիտական հաստատությունների հետ։

«Արմենիա» հյուրանոցի իմ սենյակի պատուհանից ես տեսա, թե Լենինի հրապարակում ինչպես հրավառվեց Դարաղաղի գազը։ Այդ բոցավառ ջահը նոր փայլ հաղորդեց Հայաստանի մայրաքաղաքի գեղեցկությանը։ Ձեր հիանալի երկրում մի քանի օրվա ընթացքում ես շատ բան տեսա։ Ինձ դուր եկավ Երևանը, որի ինքնատիպ ճարտարապետական կառույցներին կնախանձեն աշխարհի շատ ու շատ քաղաքներ։

Գեղեցիկ են ձեր լեզուն, երգն ու մշակույթը։ Ինձ առավել



Երևանի Ս. Սպանդարյանի անվան հրապարակը։



Անհայտ զինվորի գերեզմանը Հաղբատակի զբոսայգում:



1915 թվականի եղեռնի զոհերի
հիշատակը հավերժացնող հուշարձանը
Երևանի Ծիծեռնակաբերդի զբոսայգում:

Սասունցի Դավթի արձանը
Երևանի կայարանամերձ հրապարակում:

Տեսարան նոր Երևանից:

Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքը:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը:

Մատենադարանի ցուցասրահներում։

հիացրեց Սովետական երկրի ժողովուրդների անխախտ բարեկամությունը։

Երևանի պատմության թանգարանի տպավորությունների մասին, 1960 թ.

Զիլիկ Ստանիսլավ
Զեխ քիմիկոս-ինժեներ

* * *

Այս տարվա սկզբին իմ հայրենիքում՝ Դեսրոյտում, ինձ մոտ հյուրընկալվեց Սովետական պրեմիերի առաջին տեղակալ, պարոն Անաստաս Միկոյանը։ Մենք բարեկամացանք։ Անձնական զրույցի ժամանակ պարոն Միկոյանը ինձ ասաց.

«Երբ դուք, պարոն Սիսլեր, լինեք Սովետական Միությունում, անպայման այցելեցեք Հայաստան, Երևան։ Այնտեղ դուք շատ հետաքրքիր բաներ կտեսնեք»։

Օգտվելով այդ սիրալիր հրավերից, ես իմ գործընկերների հետ եկա Հայաստան։ Առանձնապես ուզում եմ նշել այն մեծ տպավորությունը, որ մեզ վրա թողեցին Հայաստանի ջրաէներգետիկական կառույցները։ Դրանք պատրաստված են ինժեներական բարձր մակարդակով և վկայում են հայ մասնագետների ու բանվորների վարպետության մասին։ Ցանկանում եմ նշել նաև բնակարանային այն մեծ շինարարությունը, որ կատարվում է ոչ միայն Երևանում, այլև շրջաններում։

Հեռանալով հյուրընկալ Երևանից, իմ և գործընկերներիս անունից հայ ժողովրդին մաղթում եմ հաջողություններ ու խաղաղ, ստեղծագործ կյանք։

Հայ ժողովուրդը իր ջերմ ընդունելությամբ հուզեց մեր սրտերը։

ԱՄՆ, «Լրաբեր» 1960 թ.

Ուոլկեր Սիսլեր
«Դետրոյտ քաղաքի Էդիսոն
կոմպանի»-ի նախագահ։

* * *

Իմ ապրած հյուրանոցի պատուհանը կնայե Լենինի հրապարակին վրա։ Անվերջ մարդկային բազմություններ, կարծեք անոնք խնդության ալիքներ են, որ կհոսին սրտիս մեջ... Որքան կենսունակ, որքան առույգ են անոնք, կարծես Երևանին թեժ արևը համբուրելու կուգա անոնց այտերը։ Կբարձրանաս Նորքի բարձունքի վրա և կդիտես Երևանը, ի՞նչ վեհ տեսարան կբացվի աչքերուդ առջև։ Լույսերու ծովին մեջ կլողան։ Հեռուն՝ Արարատյան դաշտի կանաչ ծովին վրայեն վեր կխոյանան Մասիսները՝ իրենց հավիտենական ձերմակ գագաթներով։

Եթե ճար ըլլար, կհանեի սիրտս ու կխառնեի Երևանի լույսերուն, որ ավելի զորեղ ըլլան անոնք։ Բայց Երևանը լույսերու պետք չունի, ան ինքը լույս կուտա ուրիշներու։ ան ինքը լույսի անսպառ հեղեղ մըն է՝ Սևանի ջուրեն սկսյալ։

Հայաստանի ռադիոյի
ձայնադարան, 1960 թ.

Ջոն Շանբագ
Եգիպտահայ իրավաբան,
լրագրող

* * *

Վերջին երեսուն տարիներին այցելել եմ աշխարհի շատ երկրներ, բայց դժվար թե տեսած լինեմ այնպիսի երկիր, որն այնպես արագ զարգացած լինի, ինչպես Հայաստանն ու նրա մայրաքաղաք Երևանը։

Հայաստանում ես լավ հասկացա այն արտահայտության իմաստը, որն ասում է. «Որպեսզի երկիրը լավ լինի, պետք է լավ քաղաքականություն»։

Երևանում մենք տեսանք բարեկարգ բազմահարկ շենքեր, որոնց մոտ դեռևս պահպանվել են փոքրիկ տնակներ։ Կարծում ենք, որ քաղաքի զարգացման ու կառուցման պլանի հետագա իրականացման ընթացքում, որի մասին մեզ պատմեցին այստեղ, հինը լիովին կչքանա նորի առջև։ Բայց այդ նորի մեջ ինձ թվում է, որ կպահպանվի ու կարտացոլվի հայ ժողովրդի հարուստ պատմական անցյալը։

Ինչպես Երևանում, այնպես էլ Մոսկվայում ու Լենինգրադում, ամենուրեք մեզ դիմավորեցին սրտագին ու հյուրընկալորեն։ Սովետական մարդկանց դեմքը պաշտոնական դրույցների ժամանակ, ինչպես նաև կարճատև հանդիպումների ընթացքում, միշտ բարեկամություն էր արտահայտում։ Մեզ համար հաճելի էր գիտակցել, որ նրանց հիշողությունից, ասես, լիովին վերացել է այն, որ տասը տարի առաջ հապոնացիները իրենց թշնամիներն էին։

Վերադառնալով Ճապոնիա, իմ հայրենակիցներին կպատմեմ Սովետական Հայաստանի, նրա շենշող մայրաքաղաքի

նորակառույցների, մարդկանց և այն ճշմարտացիության մասին, որում ես համոզվեցի Հայաստանի օրինակով։

ԱՕԿՍ-ի տպավորությունների գիրք, 1960 թ.

Կ. Օուտի
Ճապոնացի պրոֆեսոր

* * *

Մենք սիրեցինք ձեր շքեղ քաղաքը՝ Երևանը։ Նրա համարձակ ու հուսալի շենքերը արտահայտում են ազգային բարձր մշակույթի, մտավորականության աղնիվ ձգտումները։

Մենք սովորեցինք գնահատել ու սիրել այն մարդկանց, որոնք իրենց սոցիալիստական ազատ կյանքի պայմաններում այդպես հաստատակամորեն իրականացնում են նոր, երջանիկ Հայաստանի վերաբերյալ իրենց դարավոր երազանքը։

«Երևան» թերթ, 9 փետրվարի, 1960 թ.

Դոկտոր Բերանիկ
Ավստրիացի հասարակական գործիչ

* * *

Մենք կարծում էինք, թե Հայաստանը մի փոքրիկ երկիր է, իսկ նրա բնակիչները հիմնականում գյուղացիներ են։ Որքան ուրախացանք, երբ տեսանք ձեր գեղեցիկ, բազմամարդ մայրաքաղաքը, որն այնպիսի մոգական ուժով է կառուցվում, որ մենք ականատես եղանք նրա ամենօրյա աճին։ Դա վկայում է հայ ժողովրդի ստեղծագործական բնավորության մասին, այն մասին, որ նրա մշակույթը իր հետքերն է թողել ամբողջ ժողովրդի սրտում, որ հայ ժողովուրդը կենսունակ է, նա դիմացել է ժամանակի քննությանը։ Ժողովուրդը կառուցում է իր ճարտարապետության հազարամյա ավանդույթներով մշակված ծրագրով։

Հայաստանի ռադիոյի ձայնագրանի ֆ., 1960 թ.

Էդուարդո Պալասիո Բլանաս
Հավանայի համալսարանի պրոֆեսոր

* * *

Գեղեցիկ է Երևանը իր հրապարակներով, պուրակներով, վարդագույն ու սպիտակ շենքերով։ Այն Հայաստանի զարկերակն է, ուր, իբրև սրտում, գործում են բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ։ Նրանցից շատերը Երևանի համբավը տարածել են աշխարհի բազմաթիվ երկրներում։

Հայաստանի ռադիոյի ձայնագրանի ֆ., 1960 թ.

Հիրի Արլ
Չեխ տուրիստ

* * *

Զարմանքս հիացած եմ Երևան կատարած իմ այցելությամբ։ Հայ ժողովրդի, նրա մշակութային անցյալի մասին, կարծում եմ, գիտե հին ժողովուրդների պատմությանը տեղյակ ամեն մի զարգացած մարդ։ Ձեր գեղեցիկ քաղաքի մասին ես սիրով կպատմեմ իտալացի ընթերցողներին։ Կպատմեմ 40 տարիների ընթացքում մոխիրներից ծնված այս վարդագույն քաղաքի մասին, նրա հիասքանչ հրապարակների, լայնահուն պողոտաների, ծաղկածիծաղ պուրակների ու զբոսայգիների մասին, կպատմեմ, թե ինչպիսի անկրկնելի

կոթողներ է ստեղծել շինարար հայ վարպետների ձեռքը Ա-
բարատյան արևաշատ դաշտի հենց կենտրոնում։

Հայաստանի ռադիոյի ձայնադա-
րանի ֆ., 1960 թ.

Պալերմո Ռոքերսի
Իտալացի լրագրող

* * *

Երևանում երկու տարի առաջ էլ էի եղել, բայց այս կարճ ժամանակամիջոցում նրա զարգացումը հիացում ու զարմանք է պատճառում ինձ։ Երևանը աճում է ինչպես հեքիաթներում, և չեմ կասկածում, որ շատ շուտով այն կճանաչվի որպես աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկը։ Բայց Երևանը աճում ու զարգանում է ոչ միայն իր ճարտարապետական կոթողներով, իր բարձրաբերձ շենքերով։ Սովետական Հայաստանի վարդագույն ու կանաչապատ մայրաքաղաքը արագորեն աճում է նաև բազմապիսի գիտական հաստատություններով, աստիճանաբար դառնալով Սովետական Միության գիտության խոշոր կենտրոններից մեկը։ Պետք է ասել, որ գիտության որոշ մարզերում, ասենք տիեզերագնացության բնագավառում նա այդպիսին դարձել է վաղուց։ Գիտության շատ ուրիշ մարզերում, որոնց թվում նաև ֆիզիոլոգիայի բնագավառում, որը արդիական բնախուզության ու բժշկագիտության կարևորագույն ճյուղերին է պատկանում, Երևանը ընդհուպ մոտենում է այդ պատվավոր դիրքերին։

Հայաստանի ռադիոյի ձայնադա-
րանի ֆ., 1961 թ.

Էդգար Հասարյան
Սովետական Միության ԳԱ
թղթակից-անդամ

* * *

Ես եղել եմ շատ երկրներում, տեսել եմ շատ հնագարյան ու նոր քաղաքներ։ Բայց Երևանը գտնվելով ծովի մակարդակից ավելի քան հազար մետր բարձրության վրա, իր գեղեցիկ շրջապատով, իմ տեսած բոլոր քաղաքների մեջ միակն է, որը իր լազուր երկնակամարով, ճարտարապետական կառույցներով հիշողությանս մեջ անմոռաց կմնա։

Հաճելի կլիման, սառնորակ ջուրը, զովասուն պուրակները ավելի գրավիչ են դարձրել նոր ու գեղեցիկ Երևանը։ Զովաշունչ է Երևանի երեկոն։ Ոչ միայն Երևանը, այլև ամբողջ Հայաստանը ինձ հիշեցնում է Հարավային Իտալիան։

Երևանը ուրախ, կենսախինդ քաղաք է։

Հայաստանի ռադիոյի ձայնադա-
րան, 1961 թ.

Մարիոլդ Իոնֆ
Գերմանացի լրագրող

* * *

Երևանի դրամատիկական թատրոնը, բալետը, օպերան, ֆիլհարմոնիան, նկարչական ցուցահանդեսները ձեռք են բերել արդեն պատկառելի հասունություն, որ կարող են մրցել առաջնակարգ երկրների հետ։ Երևանում զգացվում է մի կարևոր և լուրջ աշխատանք արվեստի բոլոր ճյուղերի մեջ։ Ունենք առաջնակարգ քանդակագործներ ու նկարիչներ։ Դիտեցեք միայն Սասունցի Դավթի արձանը, կամ Մհերը և կհասկանաք, թե ուր են հասել մեր արվեստի մշակները։

Երևանում ես դիտեցի Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի ներկայացումը։ Չեմ կարծում, որ Սարոյանը ավելի լավ դերակատարներ ու բեմադրություն է ունեցել

Ամերիկայի մեջ։ Մեր դրամատիկ արտիստները եթե օտար լեզվով խաղային օտար բեմերու վրա, պիտի ունենային նույն տեղը, ինչ որ ունեն աշխարհի մեծ արտիստները։

Հայաստանի ռադիոյի ձայնադարան, 1961 թ.

Ռամոս Մեխիա
բրազիլահայ արվեստագիտուհի

* * *

Դյուցազնական մանուկ Դավթի նման Սովետական Հայաստանը ոչ թե տարիներով, ամիսներով, օրերով, այլ ժամ առ ժամ է առնականանում։ Նրա զարգացումը այնքան հսկայաքայլ է, որ երեկվա կատարվածը այսօրվա համար դառնում է պատմություն։ Առանձնապես հիացած եմ քաղաքամայր Երևանով, որը տնտեսապես բարգավաճող հանրապետության բաբախող սիրտն է, հայ ժողովրդի մշակույթի մշտավառ օջախը։

«Սովետական Հայաստան» թերթ, 2 դեկտեմբերի, 1961 թ.

Կարապետ Սիտալ
Ամերիկահայ բանաստեղծ

* * *

Երևանում իմ սովորելու տարիներին (1935—1938 թթ.) այստեղ անհամեմատ քիչ բան կար, քաղաքը դեռևս դուրս չէր եկել լայն հրապարակ։ Այժմ Երևանը անեղը ու հիսքանչ ոստան է դարձել հարյուրավոր արդյունաբերական ձեռնարկություններով ու մշակույթի օջախներով։ Աբովյան փողոցի վերին մասից մինչև ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես ավտոբուսով մոտ մեկ ժամում եկանք։

Նայելով Երևանին, ես մի պահ կարծեցի, թե ամբողջ հինավուրց Արարատյան դաշտը վեր է ածվել մի բուրաստան քաղաքի։

Եթե մեծանուն Բաֆֆին հրաշքով կենդանանար, «ծխացող ու ավերակ դարձած Արարատյան դաշտի առավոտի» փոխարեն, իրեն հատուկ վարպետությամբ կնկարագրեր հենց այս առավոտը՝ 2750-ամյա Երևանի լիաթոք շնչող առավոտը։

Հայաստանի ժող. տնտ. նվաճումների ցուցահանդես, 1961 թ.

Գուրգեն Արզումանյան
Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Վարդաշենի միջնակարգ դպրոցի դասատու

* * *

«Ես ուրախ եմ, որ այցելեցի Երևան՝ ասիական մայրցամաքի այս փոքրիկ, բայց հարուստ պատմություն ունեցող երկրի մայրաքաղաքը։ Երևանում դեռ պահպանվող հին տները է՛լ ավելի վառ կերպով են ընդգծում նորի վեհությունն ու շքեղությունը։ Առանց չափազանցելու կարող եմ ասել, որ Երևանը իր գեղեցկությամբ ու ճարտարապետությամբ կարելի է դասել Հարավային Ամերիկայի ամենագեղեցիկ քաղաքների շարքը»։

Հայաստանի ռադիոյի ձայնադարանի ֆ., 1961 թ.

Իմա Սումակ
Պերուացի երգչուհի

* * *

Իմ սերունդն աճել է Երևանի հետ։

Երևան. մի՞թե այն միայն հնագարյան ժողովրդի նորոգ օրերի ծաղկուն մայրաքաղաքն է։ Ո՜չ, այդ շատ քիչ է բնորոշելու Երևանի նշանակությունը հայ ժողովրդի համար։

Ես ուրախ եմ այն գիտակցությամբ, որ իմ քառասունամյա աշխատանքով Երևանի մի քարն էլ իմ բազում ընկերների դրած քարերի կողքին դրել եմ նաև ես։

Մեր ամեն ժամն ու վայրկյանը հագեցված է ստեղծագործական երկունքով. հագեցված է նոր մտահղացումներով, որը հետևյալ ժամին, հետևյալ օրը իրականություն է դառնում և ինքն իր հերթին խթան հանդիսանում նոր մտահղացման, նոր երկունքի։

Քայլիր Երևանի պողոտաներով ու փողոցներով, անցիր նրա բազմաթիվ պուրակներով, ելիր բարձունքները՝ Նորք ու Քանաքեռ, Կոնդ ու Սարալանջ, և դու ամեն քայլափոխի նոր հաճույք կզգաս, արյունդ կբոցավառվի քո երակներում, կթարմանաս, եթե հակվում ես դեպի ծերությունը։

Մի քանի օր է ինչ գտնվում եմ Երևանում, սակայն ինձ երբեմն թվում է, որ սխալ տեղ են բերել մեզ։ Սա չի կարող լինել այն երկիրը, որ ավերակների ու մոխրակույտերի մի աշխարհ էր։ Բայց նայում եմ Արարատի հովանու տակ փռված այս քաղաքին՝ հոյակերտ Երևանին, տեսնում նրա լուսավոր պողոտաները, մշակույթի, գիտության օջախները, ասում եմ. «Սա է հայրենիքը մեր, որ դեն է նետել որբուկի

իր ցնցոտիները և ոտքի է կանգնել ու կառուցել իր քանդված տունը՝ տուֆաքանդակ, գեղեցիկ Երևանը։

Հրաշք է սա, իսկ հրաշագործ է հայ ժողովուրդը։

Հայաստանի ռադիոյի ձայնադրանի ֆոնդ, 1962 թ.

Հայկ Գալուստյան
Լոնդոնահայ լրագրող, հասարակական գործիչ

* * *

...Հայաստանի պատմությունից ես շատ բան գիտեմ։ Անցյալի հետ համեմատելով այսօրվա Հայաստանը, պետք է ասել, որ դա այլևս նույնիսկ 15—20 տարի առաջվա Հայաստանը չէ։ Ես գիտեմ, որ դուք ունեք շատ խնդիրներ և լուծում եք ինքներդ, որ դուք միաժամանակ օթևան եք տալիս շատ ու շատ սփյուռքահայերի, որոնք հայրենիք են վերադառնում աշխարհի չորս ծագերից։ Ես տեսա լուսավոր գյուղեր ու ավաններ, տեսա դպրոց գնացող կենսախինդ երեխաներ։

Ինձ վրա մեծ տպավորություն գործեց հայ մշակույթի ծաղկումը։ Ինձ դուր եկան ճարտարապետական, պատմական հուշարձանները, ձեր հիասքանչ մայրաքաղաք Երևանը։ Բայց գեղեցիկ շենքերից է՛լ ավելի կարևոր են մարդիկ, որ ապրում են այդ շենքերում։ Մեծ հետաքրքրությամբ ծանոթացանք Երևանի Մատենադարանի հին ձեռագրերին, որոնք վկայում են համաշխարհային մշակույթի պատմության մեջ հայ ժողովրդի ներդրած մեծ ավանդի մասին։ Այժմ էլ սոցիալիստական Հայաստանը խոշոր ավանդ է ներդնում մեր ընդհանուր գործում։ Մատենադարանի գործունեությունը ունի ոչ միայն ազգային, այլև համաշխարհային նշանակություն։

Հայաստանը, հայ ժողովուրդը շատ են տանջվել, և աշխարհը մեծ պարտքի տակ է, որպեսզի կարողանա լավ գործերով փոխհատուցել։

Ուրախությամբ ուզում եմ նշել, որ չնայած ձեր տանջանքներին, դուք պահպանել եք ժպտալու ապշեցուցիչ շնորհը։

Ես գտնում եմ, որ աշխարհը ավելի շատ բան պետք է իմանա ձեր մասին, քան գիտե։ Ինձ անչափ դուր եկավ հայ ժողովրդի ճարտարապետական բացառիկ ճաշակը։ Ուրախալի է, որ օգտագործելով բնական գեղեցիկ քարերը, շինանյութերը, դուք ձեր մայրաքաղաքը զարդարում եք նոր, գեղեցիկ շենքերով։

Դեռ Լոնդոնում ինձ ասացին, որ հայերի հյուրընկալությունը հայտնի է ամբողջ աշխարհին։ Բայց միայն այստեղ զգացի, թե դա ինչ է նշանակում։

Հայաստանի ռադիոյի ձայնագրանի ֆ., 1962 թ.

Ջեննի Լի
Մեծ Բրիտանիայի կուլտուրայի մինիստր

* * *

Երևա՜ն... Երբ ուզում ես եղիր այդ քաղաքում՝ կիսատ որևէ բան կտեսնես, հաջորդին՝ այն ավարտված կլինի և մի նոր կիսատին կհանդիպես, և այսպես շարունակ։ Սովետական Միության գյուղերում և քաղաքներում երևույթները պետք է գնահատել ոչ թե առկայով, նրանով, ինչ տեսնում ես, այլ զարգացման հեռանկարում։

Երևանի օդանավակայանը... այո, այսօր մենք տեսանք նրա կմախքը՝ ճանապարհը դեպի քաղաք։ Իսկ վաղը Երևանի օդանավակայանը կմրցի Մոսկվայի և Օռլիի օդանավակայանների հետ, ճանապարհը կլինի գեղեցիկ շենքերով զարդարված։

Երևանի շինարարական թափը ֆանտաստիկական է, ամբողջական տեսքը՝ վարդագույն, և այդ մեղմ գույնը նրան դարձնում է ավելի հյուրընկալ, ավելի հմայիչ։

Գրքի նկատմամբ հարգանքն այստեղ ոչ միայն հին է, այլև՝ առասպելական։ Երևանի ամրոցները սոցիալիզմն է, համալսարանը, գրադարանները...

Փարիզ, «Յումանիտե» թերթ, 1962 թ.

Անդրեյ Վյուրմսեր
Ֆրանսիացի լրագրող

* * *

Նոր ուղիների աջ ու ձախ կողմերին խոյացել են նոր շենքեր, և դեռ կխոյանան ուրիշները՝ նոր շուք ու հմայք տալու համար մեր պանծալի մայրաքաղաքին։

Բարի ողջույն քեզ, մեր կյանքի, մեր պանդուխտ զավակների, մեր դարավոր իղձերի հանգրվան՝ պայծառ Երևան։

«Երեկոյան Երևան» թերթ, 2 դեկտեմբերի, 1961 թ.

Հմայակ Սիրաս
Սովետահայ գրող

* * *

Գեղեցիկ է ձեր քաղաքը, հրաշալի է Լենինի անվան հրապարակը։ Շատ ուրախ եմ, որ տեսա Հայաստանը։

«Երեկոյան Երևան» թերթ, 5 հուլիսի, 1962 թ.

Իրանի արքայազն Գոլյամ
Իզա Փեհլևի

* * *

Ես առաջին անգամ Հայաստան եմ այցելել յոթ տարի առաջ։ Այդ տարիներին հանրապետությունում կատարված մեծ փոփոխությունները ինձ վրա խոր տպավորություն գործեցին։

Ապշեցուցիչ է այն փաստը, որ Երևանի բնակչությունը կարճ ժամանակում աճել է 2 հարյուր հազարով։ Հին, կավաշեն խրճիթները իրենց տեղը զիջել են բազմահարկ գեղեցիկ շենքերին։ Երևանը շուտով կդառնա աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը։

«Երեկոյան Երևան» թերթ,
24 մարտի 1963 թ.

Ռ. Սոլման
Շվեդիայի դեսպան

* * *

Առանձնապես տպավորիչ էր ինձ համար Երևանում օդակաձև արագացուցիչի շինարարությունը և Արագած լեռան վրա կառուցված տիեզերական կայանների դիտելը։

Արագացուցիչների մեջ լիցքավորված մասնիկների ոչ դծային ֆիքսացման նոր, ինքնատիպ այն մեթոդը, որի մասին Դուբնայի կոնֆերանսում հաղորդեց Երևանի ֆիզիկայի ինստիտուտի երիտասարդ աշխատակից Յուրի Օուլովը, կենդանի հետաքրքրություն առաջ բերեց արտասահմանցի բոլոր գիտնականների մեջ։ Այդ գաղափարը այնքան կարևոր է, որ դառնալու է աշխարհի բոլոր երկրների ֆիզիկոսների բանավեճի առարկան։

«Սովետական Հայաստան» թերթ,
3 սեպտեմբերի, 1963 թ.

Վիլիբալդ Ենիշկե
Ավստրիացի պրոֆեսոր

* * *

Հիասքանչ Երևանը, ժողովրդական տնտեսության բուռն զարգացումը, հոյակապ արվեստը, տաղանդավոր ժողովուրդը, էլեկտրամեքենաշինական գործարանը, ականավոր գիտնականների պլեադան—այս ամենը իմ հիշողությունից երբեր չի ջնջվի։

«Երեկոյան Երևան» թերթ, 1963 թ.

Ս. Լուվսան
ՍՍՀՄ-ում Մոնղոլիայի ժող. հանրապ. դեսպան

* * *

Եթե այժմ մարդիկ մտածեին բոլոր դարերի քաղաքակրթության համաշխարհային հրաշալիքներից ընտրել յոթը, ապա Երևանի այս Մատենադարանը դարձյալ կշողար այդ յոթի մեջ։

Մեր մոլորակի ոչ մի անկյունում գանձերի այսպիսի ժողովածու չի եղել, հիմա էլ չկա։ Մատենադարանը հայ ժողովրդի հանճարի համաշխարհային անձնագիրն է։ Այս հնագույն ձեռագրերում փայլատակում է հայ մարդու ստեղծագործական քանքարը։ Հայ նոր սերունդը ինչպիսի՜ խնամքով ու հոգատարությամբ է պահում այդ գանձերը։ Ես ծանոթացա Մատենադարանի տնօրեն Լևոն Խաչիկյանի հետ։ Երիտասարդ, բարեհամբույր դեմքով այս մարդը գիտի հոյակապ պահոցներում գտնվող տասը հազար հայերեն ձեռագրերի կենսագրությունը։ Նա այնպես է պատմում հնամյա մագաղաթների մասին, որ կարծես ապրել ու աշխատել է բոլոր

ժամանակների հայ գրիչների և մատենագիրների հետ ու հրաշքով կենդանի մնացել 1.500 տարի։

ԱՄՆ, «Լրաբեր», 30 հուլիսի,
1963 թ.

Ռոքուել Քենդ
Ամերիկացի նկարիչ

* * *

Այստեղ՝ Մատենադարանում լսեցինք հետաքրքիր դասախոսություն անցյալ հազարամյակի մշակույթի մասին։ Հնագույն գրքերն ու փաստաթղթերը վկայում են, որ դեռ այն ժամանակ մարդկանց այդ գրքերը ոգևորել են ապրելու ապագայի հեռանկարներով։ Հայ ժողովուրդը դեռ վաղ շրջանում ստեղծեց իր հարուստ պատմությունը և հանձնեց դարերին։ Երևանը այդ պատմության հայելին է իր հինավուրց արժեքներով։

Մատենադարան, 1963 թ.

Հորստեն Նիմսոն
Շվեդիայի արտաքին գործերի
մինիստր

* * *

Հիացած եմ այն ամենով, ինչ տեսա Մատենադարանում։ Ինձ ամենից առաջ գերեց այդ սուրբ օջախի շենքը։ Միանգամայն բնական է, որ ձեռագրերի աշխարհում ամենալավ գրապահոցներից մեկը պետք է, որ ունենար այսպիսի հոյակապ կոթող՝ հայտնի նաև ճարտարապետական հնարանքներով։

Դժվարանում եմ գերագնահատել հազվագյուտ ձեռագրերի արժեքը՝ հայ ժողովրդի պատմության հայելին։

Մատենադարան, 1963 թ.

Դ. Ա. Օլասֆիչ
ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ

Հիացում բառը շատ տկար է արտահայտելու համար զգացածս հայ մշակույթի թաղարը հանդիսացող ձեռագրերու այս տունը այցելելուս առթիվ։ Քաղաքամայր Երևանում վեր խոյացած այս գրապահոցում ժողովված կարևորագույն փաստաթղթերով կարելի է իմանալ, թե որքան հին է հայկական մշակույթը։

Մատենադարան, 1963 թ.

Տոմոնոգա Սինիենտիրո
Ճապոնիայի գիտական խորհրդի
պրեզիդենտ

* * *

Երա՞զ, թե՞ իրականություն...

Հաղթական երգերով կգալենք ու կանցնենք Երևանի փողոցներեն և պողոտաներեն, մեր շուրթին վրա հնչեցնելով հայ ժողովրդի ստեղծագործ հանճարի բոցաշունչ երգը։

Յուրաքանչյուր քայլափոխ կանգ կառնես պահ մը ու ի տես կառուցողական այն վիթխարի ճիգին, հարց կուտաս. «Արդյոք հրաշքի համազոր չե՞ն քառասուն տարիներու կարճատև միջոցին մեր ժողովուրդի իրագործած նվաճումները հայրենի հողի վրա շինարարության, մշակույթի և գիտության բնագավառներու մեջ։

Հաճախ երգած ենք սփյուռքի մեջ «Գարուն Երևան, սիրուն Երևան, դու Հայաստանի զարդն ես, Երևան» երգը։ Որքան իմաստավորված դուրս կգան այս երգի բառերը շրթներես հայրենի հողի վրա, արդի հայության սիրտը նկատվող քաղաքամայր Երևանի մեջ։

Խորը երկյուղածությամբ մտանք Մատենադարան, ուր

պահված է հայ ժողովուրդի ամբողջ հոգևոր հարստությունը։ Որևէ հայ իրապես այս հարկին տակ կապրի իր հայ ըլալու հպարտությամբ։

Ի հեճուկս Թուրք բռնապետության անասնական կերքերուն, հայությունը աշխարհի երեսեն սրբելու իր անհեթեթ մտայնությամբ և ոճրածին գաղափարին, Արարատի ալեփառ փեշերուն տակ մենք գտանք հայ ժողովուրդը իր պետականությամբ, որ կանգնած է իր մտքի կաճառները, իր մտքի մատենադարանները, լույսի և գիտության վառարանները ցույց տալով, նաև հավաստելով իր ապրելու և ստեղծագործելու կամքն ու վճռականությունը։

Հայաստանի ռադիոյի ձայնադարան, 1963 թ.

Պեպո Սիմոնյան
Սփյուռքահայ բանաստեղծ

* * *

Հայ ժողովրդի վիպերգը պատմում է, որ երբ Դավիթը քշել, գնացել է Մսրա Մելիքի դեմ ու Լեռա սարի գլխից տեսել, որ «երկնուց աստղերին հաշիվ կա, էնոնց վրաններին հաշիվ չկա», որ «թշնամու զորք քան ծովու ավազ շատ է», որոտաձայն կանչել է.

Ով քնած է՝ արթուն կացեք,
Ով արթուն է՝ ձիեր թամբեք,
Ով թամբել է՝ զենքեր կապեք,
Ձասեք Դավիթ գող-գող եկավ,
Գող-գող գնաց...

Հետո շողացել և շողշողացել է Թուր-Կեծակին, ու Քուռկիկ-Ջալալին ներքև սլանալուց առաջ ծառս է եղել Լեռա սարի ժայռոտ բարձունքին։

Մեր նախնիները դար ու դարեր պատմել են իրար հրաշք վիպերգը, ու երբ պատումը հասել է այդտեղ, շունչները պահել ու սպասել են, թե ահա, ուր որ է, շառաչելու է արդար ցասման զարկը և ճիշտ երկու կես է անելու չար Մելիքին։

Հանճարեղ վիպերգի այդ պահն է, որ արվեստագետի զորավոր ձեռքի տակ բրոնզացել, արձանացել ու կոթող է դարձել Երևանի կայարանամերձ հրապարակում։

Նայել է արձանին հայ բանաստեղծը ու արվեստի կախարդական ուժով տեղափոխվել էպոսի աշխարհը։

Ե՞րբ են եղել այսքան բեղուն, այսքան բերրի հողերն հայոց,
Ե՞րբ են ծաղկել այգիները այսքան շռայլ ու վիթխոց,
Ե՞րբ է այսպես լուսարձակվել հայոց երկնի աստղը աստղակ։

Ե՞րբ է այսպես շատրվանել հայոց բախտի արևը բորբ,
Հույզ ու երազ ծիածանվել, հայոց հոգուն դարերով որբ,
Ե՞րբ է, երբ է եղել այսքան մեր գարունը լուսապսակ,
Ձմեռը մերկ՝ ջերմ ու թեթև՝ Մասիսների հայացքի տակ։
Ե՞րբ է տեսել հայն իր կյանքում այսօրվա պես մի Հայաստան,
Հեքիաթային ու լուսակերտ Երևանի նման ոստան,
Ու այսպիսի մի նոր սերունդ, աշխարհացունց մի նոր բանակ,
Ե՞րբ է աճել, ո՞վ է տեսել Մասիսների հայացքի տակ,

Ե՞րբ է եղել հայը այսքան մեծասքանչ ու հրաշագործ,
Ե՞րբ է այսքան հեռու թռել՝ աստղերի մեջ՝ միտքը հայոց,
Մեր վերելքի սանդուղքները դեպ երկնքի ծովը անտակ,
Ե՞րբ է եղել այսքան ամուր՝ Մասիսների հայացքի տակ։
Ե՞րբ է եղել հայն աշխարհում այսքան շենշող ու շինարար։
Ո՞վ է տեսել հրաշք մի նոր՝ մեծակառույց մի նոր աշխարհ,
Ու երգն հայոց ե՞րբ է հնչել այսքան խնդուն ու անպարփակ,
Այսքան ծաղիկ ե՞րբ է բուսել Մասիսների հայացքի տակ։
Ե՞րբ է եղել այսքան հզոր ժողովուրդը նաիրական,
Աղգերի հետ ե՞րբ է եղել այսքան մոտ ու եղբայրական.
Հազարամյա իր պայքարում աշխարհն հայոց ողբանվագ,
Ե՞րբ է այսքան խաղաղ ապրել Մասիսների հայացքի տակ։
Ե՞րբ է եղել ուղին հայի այսքան շիտակ ու ապահով,
Այսքան ճամփա ե՞րբ է անցել մեր երկնամերձ լեռնաշխարհով,
Դուռն աշխարհի բաց է մեր դեմ, ու դռները մեր անխորտակ
Բաց են հավերժ աշխարհի դեմ՝ Մասիսների հայացքի տակ։

ԱՄՆ, «Երաբեր» 7 մարտի 1963 թ.

Վաշագան Հովհաննիսյան
Հայ բանաստեղծ

* * *

Սիրելի Երևանը։ Այն գեղեցիկ է։ Հիացած եմ Լենինի հրապարակով։ Մարդիկ ավելի հոյակապ են, հյուրասեր։

Ես գիտեմ, որ Հայաստանը պատմական անցյալ ունեցող երկիր է, ժողովուրդը՝ հերոսական։ Գիտեմ, որ համաշխարհային պատմության շատ գոհարներ այս սրբազան հողի վրա են ծնվել։ Անչափ հաճելի է ինձ համար ղեկավարել Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը, որը կազմված է զուտ ազգային երաժիշտներից։

«Երեկոյան Երևան» թերթ,
1963 թ.

Էնրիկե Գոնսալես Մանտիլի
Կուբացի երաժիշտ

* * *

Մոխիրներու վրա նետված հունտ մըն էիր դեռ քառասուն տարի առաջ, այսօր դարձեր ես արդեն հաստաբուն կաղնի մը, որուն հովանիին տակ կապրի ժողովուրդ հերոս, որ քեզ տվավ հասակդ պարթև ու տեսքդ գեղանի։

Հյուղերու ավան մըն էիր, իսկ հիմա դարձեր ես տուֆաքանդակ վարդաթույր շենքերով քաղաք Երևան։

Սրտիս մեջ հայրենաբաղձության կապույտ բոց կար, երբ քեզի եկա, իսկ հիմա հպարտության, անհուն խինդի խարույկ կվառի հոն, կառուցվող իմ երկիր, ի տես սլացքիդ, ի տես անիդ հսկայական։

«Սովետական Հայաստան» թերթ,
3 սեպտեմբերի 1963 թ.

Ասատուր Կյուզելյան
Հնգկահայ ուսուցիչ

* * *

«Արմենիա» հյուրանոցը, ուր մենք իջևանած էինք, եվրոպական չափանիշով պատվաբեր պանդոկ մըն է թե պետության և թե հայ ժողովուրդին համար։

Դուք կարող եք հոն հանդիպել Արևելյան և Արևմտյան պետություններե եկած պաշտոնական և անպաշտոն ներկայացուցիչներու, զբոսաշրջիկներու, պարզ այցելուներու, որոնք ցույց կուտան, թե Հայաստանի մայրաքաղաք Երևանը միջազգային այն տեսարժան մայրաքաղաքներեն է, որոնք իրենց մեջ ունին հզոր մագնիսական ուժ, ամեն ազգի մարդիկ—թող ըլլան անոք ճերմակ, սև և դեղին, թող ըլլան քրիստոնյա, պուտտայական և մահմետական—իրենց քաշելու։ Երևանի այսպիսին լինելը առանձնահատուկ երևույթ մը կարելի է համարել այսօր մեր բազմադարյան պատմության մեջ։

Ես տեսնելուց հետո հայոց մայրաքաղաք Երևանը, ձեռքս խղճիս վրա դնելով կրնամ ըսել թե Հայաստանի կառավարությունը և Հայաստանի սահմաններեն ներս ապրող բովանդակ հայ ժողովուրդը կրնան հպարտորեն ըսել, ոչ միայն Սփյուռքի մեջ ցրված հայերուն, այլև ամբողջ մարդկության, թե հայ ժողովուրդը, ի ծնե շինարար, պատվախնդիր ժողովուրդ մը, ուզած է ապրել մարդկային ընկերության մեջ, և եթե չեն ուզեր հավատալ, թող գան ու տեսնեն դեռ ոչ իսկ լրիվ քառասուն տարիներու հսկայական շինարարություններն ու հրաշագործությունները։

Թող գան տեսնեն Երևանի վարդագույն, գեղատիպ շենքերը, գիտության անհամար օջախները և XX դարու մարդկության նորագույն օրրանը, որ իր էությամբ, տիպար մըն է աշխարհի մայրաքաղաքներու մեջ։

ԱՄՆ, «Լրաբեր» թերթ,
7 սեպտեմբերի 1963 թ.

Վահան Մալխասյան
Ամերիկահայ հասարակական գործիչ

* * *

Գիտեի, թե ինչ էր Երևանը քառասուն տարիներ առաջ և պատրաստված էի, անշուշտ, հոն տեսնելու հաջողություններ։ Բայց բնավ չէի երևակայեր նման Երևան մը։ Ու այս հաստատումը այլազան գետիններու վրա։ Հոն շփում ունեցա ամբողջ մտավորականության հետ... Գիտեի, թե Երևանի համալսարանական կազմի մեջ բարձրաստիճան ու մեծարժեք գիտուններ կան, բայց տեղյակ չէի, որ այդքան մեծ թվով մեծարժեք մտավորականներ կգտնվին հոն։ Ես այցելեցի համալսարանը, ակադեմիան, ինստիտուտներ, թանգարաններ, գիտա-հետազոտական կենտրոնը, բոլորն ալ հիանալի կերպով կազմակերպված։

Զիս սիրով ընդունեցին նաև ակադեմիայի հայագիտական, լեզվագիտական, պատմական, օտար լեզուներու, գրականության և այլ բաժիններու բոլոր աշխատողները, որոնց հետ ունեցա շահեկան շփումներ։

Հայաստան երկիրը չէի տեսած։ Աշխարհագրական շատ նոր տեղեկություններ ունեցա, գիտցածս գիրքերե միայն քաղված էր։ Հիմա աչքերովս տեսա զայն, տեսա հոն ապրող ժողովուրդը։ Տեսա շինարարությունը, որ պետք է ըսեմ, ոչ միայն հոյակապ աշխատանք մըն է, այլև, իմ կարծիքովս, ճա-

Զափազանցություն չէ բնավ, եթե ասենք, որ այս թաղամասը քաղաք է քաղաքի մեջ իր գործարաններով ու ֆաբրիկաներով, իր դպրոցներով ու ակումբ-կինոթատրոններով, իր հազար-հազար առանձնատներով ու բանուկ փողոցներով։

Բայց Նոր Զեյթուն եկողը առաջին հերթին ամենուր կհանդիպի նորակառույցների, երկինք միտող ամբարձիչ կռունկների, շենքերի գլխին աշխատող շինարարների։ Նրանք ետևում թողնելով նորաշեն տները, օր-օրի շարժվում են առաջ՝ ամայի բլուրներով ու դարավանդներով, ուր փողոցներ են ուրվագծվում, դրվում հիմքերը, կառուցվելիք տների։

Այնչափ հետաքրքիր է Զեյթունի համայնապատկերը, այնքան շատ են վերամբարձ կռունկները, որ թվում է, թե ուր որ է, նրանք պտույտներ գործելով կբախվեն իրար։ Անվերջ գալիս ու գնում են ծանր բեռնատարները, ամենուր լսվում է մեքենաների ու մուրճերի ձայնը։ Ականջ շոյող այդ աղմուկի մեջ են բարձրանում, ավարտվում նոր շենքերը։

Ա՜խ, ինչ գեղեցիկ են նոր քաղաքամայր Երևանի գիշերները։ Ցայտաղբյուրների եզերքները դրված են հանգստավետ նստարաններ, ամեն կողմ կատարյալ մաքրություն, քաղաքը լույսերուն մեջ կլողա, ժողովուրդը ուրախ է ու շեն։

Օր մը, երբ եղանք Սպենդիարյանի անվան օպերայում, քովս նստած Լիբանանի պատգամավոր՝ տիար Տաճատ Արազյան ըսավ. «Հայր Մաշտոց, այցելած եմ եվրոպական բոլոր քաղաքները, Ամերիկա և այս տեսակ հոյակապ թատրոն չեմ տեսած, կատարյալ պալատ մըն է ասիկա ճոխ կահավորումով»։

Երևանը նոր, արդիական քաղաք մըն է, Հայաստանի մայրաքաղաք մը ըլլալու վայել, որ հայեն զատ, օտարներուն ալ հիացում կպատճառե։

Քաղաքը կլողա լույսերու մեջ... Ա՜խ, երևանյան գիշերներ... Ամեն ինչ կառուցված է հայկական ճարտարապետության ոճով։ Հանրային պարտեզները, թվով քսան, դրախտավայրերու կնմանին, նմանապես մանուկներու խաղավայրերը ու մարզադաշտերը։

Մնայուն ցուցահանդեսը ընդարձակ տարածության վրա, ցայտաղբյուրներով, վարդաստաններով։ Հայաստանի պատմության թանգարանը, գեղարվեստի սրահները գլուխգործոցներ են։

Երևանը արձաններու քաղաք է։ Հոյակապ են արձանները Լենինի, Աբովյանի, Շահումյանի, Թումանյանի, Սասունցի Դավթի։

«Ամերիկ արծվաբույնը»
Նոր Զեյթուն և հայրենական
տպավորություններ, Բեյրութ,
1963 թ.

Մաշտոց ավագ քահանա
Ոսկերչյան

* * *

Տպավորություններս շատ են։ Ինձ ապշեցրին Երևանի Մատենադարանը և Հայաստանի գիտության զարգացման մակարդակը, բնակարանային շինարարության ծավալաչափերը և ժողովրդի բարձր մշակույթը։

Ես շատ գոհ եմ, որ այցելեցի Հայաստան։ Հայ ժողովուրդը իր առջև մեծ խնդիրներ է դրել և ամեն ինչ անում է դրանք կատարելու համար։

Իսկ ամենամեծ տպավորությունը ինձ վրա թողեցին հասարակ մարդիկ, որոնք մեզ ընդունում էին ջերմորեն։

«Երեկոյան Երևան» թերթ,
24 մարտի 1963 թ.

Ֆաճրի Կորուքուրֆ
ՍՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան

* * *

Երևանում մեր տեսածն ու ապրածը մի գեղեցիկ տարեգիրք է, մի խորախորհուրդ մատյան։ Իսկ Սովետական իշխանության տարիներին Երևանի անցած ճանապարհը հերոսական ու լուսավոր, դեպի գեղեցիկ բարձունքներ ձգվող վերընթաց մի ճանապարհ է։ Եվ երբ դու խորհրդի ես նստում քո սրտի հետ, զգում ես, որ Երևանյան հրաշքը (այլ խոսք, թերևս, անհնարին է գտնել) չես արտահայտի ու սպառի ոչ առօրեական խոսքով, ոչ բանաստեղծությամբ, ոչ գեղանկարչի վրձնով և ոչ էլ ամենակատարյալ երաժշտությամբ։ Այնքա՜ն անկրկնելի են նոր Երևանը ու նրա կյանքը՝ իրենց միասնության ու ամբողջության մեջ։

«Երեկոյան Երևան» թերթ,
6 նոյեմբերի 1963 թ.

Գուրգեն Բորյան
Սովետահայ գրող

* * *

Առաջին տպավորությունս այն է, որ Երևանը ինքնատիպ քաղաք է՝ իր նոր շենքերով, գեղեցիկ փողոցներով։ Ես առաջին անգամ եմ Երևանում, բայց գտնում եմ, որ այսպիսի հիասքանչ քաղաքը հաճախ կարելի է այցելել։ Ես հիացած եմ

այս արևային քաղաքով, նրանց հյուրասեր մարդկանցով, նրանց մեծ սրտով։

«Երեկոյան Երևան» թերթ,
28 դեկտեմբերի 1963 թ.

Յուրի Բելով
Ռուս դերասան

* * *

Երևանը, ինչպես և Հայաստանը ընդհանրապես, գեղեցիկ աշխարհագրական դիրք ունի։

Հայաստանի ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում մենք դիտեցինք բազմաթիվ հրաշալի մեքենաներ։ Ծանոթանալով ձեր մայրաքաղաքի նվաճումներին, մենք ասում ենք. «Ահա թե ինչ կարող է անել սոցիալիստական հասարակարգը»։ Վերադառնալով Ուրուգվայ, մենք մեր ժողովրդին ու նաև այնտեղ ապրող ձեր հայրենակիցներին կպատմենք շինարարական-գիտական այն հեքիաթային թռիչքի մասին, որ տեղի է ունեցել Հայաստանում ընդհանրապես և նրա մայրաքաղաք Երևանում մասնավորապես։

Հայաստանի ռադիոյի ձայնագրան, 1963 թ.

Լուիս Տորռ
Ուրուգվայի կոմկուսի պատվիրակության անդամ

* * *

Երևանը որպես աշխատանք և իրականացում հայ հոգին մեջ դարերով կուտակված իղձերու, տենչանքներու շղթայազերծ պոռթկում է, որով իր անցյալի դժբանտ ճակատագրին վրեժը կլուծե։ Կարծես մեր նախնիքը ևս ոտքի ելած կմասնակ-

ցին ձեռք-ձեռքի տված այս հայրենաշինության վիթխարի թափին, որուն մեջ, ափսոս, մեր քարինքը չենք կրցած խառնել դեպքերու, դիպվածներու, ձախորդ անդրադարձումով։

Թող աշխարհը Հայաստանը. Երևանը դիտե և դատե, թե Սովետական հասարակարգի շնորհած կարելիություններով ինչերու հասավ քառասուներեք տարիներու, պատմության չափանիշով կարճ ժամանակամիջոցի ընթացքին մեզի նման արյունաքամ ժողովուրդը մը իր քարուքանդ երկրով։

Հայաստանի ռադիոյի ձայնադարան, 1963 թ.

Միսսաք Կյուպեկյան
Ֆրանսահայ զբոսաշրջիկ

* * *

Երևանում կատարած մեկշաբաթյա ուղևորությունից հետո ես որքան ուրախ եմ, որ չեմ սխալվել ընտրելով այս երթուղին։ Լսել էի, բայց չէի պատկերացնում բիբլիական լեռան գեղեցկության ողջ հմայքը։ Ես կասեմ իմ ընկերներին, որ Հայաստանն այն երկիրն է, որը անպայման պետք է տեսնել։

«Արմենիա» հյուրանոցի տպավորությունների գիրք, 1963 թ.

Լ. Բիրստու
Ավստրալացի զբոսաշրջիկ

* * *

Հայաստանի, նրա նորօրյա մայրաքաղաք Երևանի անզուգական գեղեցկությունը, զգայուն, ապշեցնելու աստիճան, հյուրընկալ մարդկանց կերպարը ընդմիշտ կմնա իմ սրտում։ Հայ գրողների հետ ունեցած իմ զրույցները, հին, հոյակապ հուշարձաններին ծանոթանալս հնարավորություն ընձեռեցին

խորամուխ լինելու հայկական հին մշակույթին, հայ ժողովրդի պատմությանը։ Ուրախությամբ տեսա, որ հայ գրողները քաջատեղյակ են ամերիկյան գրականությանը, և միաժամանակ, պարզապես, ամոթ զգացի, որ շատ քիչ բան գիտեմ հայ հարուստ գրականության մասին։

«Սովետական Հայաստան» թերթ, 1964 թ.

Ջոն Ապդայկ
Ամերիկացի գրող

* * *

Շատ քաղաքներ տեսա, անցա,
Ու աղջիկներ տեսա բյուր,
Տեսա և՛ սեր, և՛ համբույր,
Դեռ քսանս չլրացած ողջ աշխարհը ման եկա,
Կանաչ գարունը սլացավ ճամփաներով հեռակա։
Եվ ամենուր տեսա քանի
Հրապույր ու քանի սեր։
Մինչ բերեցի Երևանին
Մատաղ կյանքը իմ նվեր։
Ու իմ անցած ամեն ճամփա
Մի թել թողեց իմ հոգում,
Երևանի սիրով սակայն
Այրվեց սիրտս մորմոքուն։
Ինչպես սիրած աղջկա մոտ
Կորցրեցի խելք ու միտք,
Ու Երևանը արևոտ
Աբբեցրեց ինձ ընդմիշտ.
Երգը շուրթիս անցնում էի

Փողոցներով ցնծագին.
Եվ զեփյուռը մեղմիկ-մեղմիկ
Փայփայում էր իմ հոգին։
Մի իղձ ունեմ, եթե մի օր
Մահը չոքի իմ դռան,
Ամբողջ հոգով կցանկանամ,
Որ դիս տարվի Երևան,
Թող որ հանգչիմ նրա գրկում
Նրա սրտում հավիտյան։

«Գրական թերթ», 13 մարտի 1964 թ.

Շարլ Ազնավուր
Ֆրանսահայ կոմպոզիտոր, երգիչ, բանաստեղծ

* * *

Ես եղել եմ Սովետական Միության մի քանի միջազգային հանրապետություններում, բայց Հայաստան այցելում եմ առաջին անգամ։ Ես շատ բան եմ լսել Հայաստանի ավելի քան քառասուն տարվա նվաճումների մասին և հիմա տեսնում եմ, որ ձեր Հանրապետությունում մեծ փոփոխություններ են կատարվել։ Հայաստանը ինչպես և Սովետական Միության մյուս եղբայրական հանրապետությունները, ծաղկում է։ Ինձ հայտնի է, որ անցյալում հայերը հարկադրված են եղել ճնշումից ու հալածանքից փախչել տարբեր երկրներ, այդ թվում և Հնդկաստան։ Հնդկաստանում ապրող հայերը աշխատասեր մարդիկ են։ Նրանք նպաստում են մեր երկրի տնտեսության և բարեկեցության բարձրացմանը։ Մեր երկու

պետություններն էլ երիտասարդ են, բայց նրանց ժողովուրդների պատմությունը հասնում է խոր անցյալ։

Ձեր Մատենադարանում ես տեսա գրքեր տարբեր գիտությունների՝ մաթեմատիկայի, բժշկության, պատմության և այլ ճյուղերի վերաբերյալ։ Դրանք գրված են հին ժամանակներում։ Ձեր ժողովրդի պատմությունը է՛լ ավելի հին է, և ուրախալի է, որ դուք պահպանում եք ձեր հին մշակույթը։

Ես տեսա հայկական պարերը, տեսա մայրաքաղաք Երևանը, տեսա ձեր համալսարանը, տեսա այն լաբորատորիան, որտեղ կիրառվում է հիդրոպոնիկայի մեթոդը։

Այս ամենի մասին ես անպայման կպատմեմ Հնդկաստանում ապրող հայերին, որոնք թեև ունեն հնդկական քաղաքացիություն, բայց ծագումով ձեր երկրից են։

«Սովետական Հայաստան» թերթ և Մատենադարան, 1964 թ.

Սարվապալի Ռադհակիրիշնան
Հնդկաստանի պրեզիդենտ

* * *

Երևանը զարմանալիորեն նման է Մադրիդին, իսկ հայերն իրենց արտաքինով, խառնվածքով՝ իսպանացիներին։ Չգիտեմ ա՞յդ է պատճառը, թե երևանցիների անմիջական, ջերմ ու սիրալիր ընդունելությունը, որ ես ինձ այստեղ զգում եմ ինչպես մեր տանը, մեր հայրենիքում, Մադրիդում։

Երևանի երաժշտասեր հասարակայնությունը գիտե գնահատել իսկական երաժշտությունը, զգայուն է նրա նկատ-

մամբ, մի բան, որ ես անմիջապես նկատեցի իմ տված առաջին իսկ համերգից։

«Սովետական Հայաստան» թերթ,
19 փետրվարի 1964 թ.

Խոսե Տորդեսիլյաս
Դաշնակահար, Իսպանիա

* * *

Պետական օպերան Երևանի ամենագեղեցիկ շենքերեն մեկն է, կարող ենք ըսել նույնիսկ՝ դափնեպսակն է իր մեծությամբ և հայկական ճարտարապետական ոճի ինքնուրույնությամբ, Թամանյանի հատակագծով շինված, կարծես Զվարթնոց եկեղեցիի մեկ վերարտադրությունն է՝ Երևանի Լենինյան պողոտայեն դեպի Տերյան փողոց առաջնորդող ճամփուն անկյունը։

Ասֆալտապատ լայն ուղի մը, որուն աջ ու ձախ կողմերը հանրային պարտեզներով զարդարված են, կլոր ու ընդարձակ հրապարակը, որու վերևին շրջագծին միացած հսկա շենքի բոլորաձև աստիճաններն ու պատերը ունին հսկա մահիկի մը ձև։

Առանց ավելի մանրամասնությանց մեջ մտնելու, կարելի է ըսել, թե ամբողջ Մերձավոր Արևելքի մեջ ասոր հետ մրցող որևէ շենք գոյություն չունի, իբրև օպերա, և Երևանը կրնա պարծենալ անորմով։ Ամերիկյան պատգամավորներեն մեկը նույնիսկ չէր ուզեր մեր օպերայի շենքը բաղդատել Նյու-Յորքի «Մետրոպոլիտեն» օպերայի շենքին հետ, որը «միայն չորս պատ է ասոր քովը»՝ կըսեր։

ՍՄՆ, «Լրաբեր», 1964թ.
(Թերթի սեպտեմբերի 5-ի խմբագրականից)

* * *

Քայլում ես Երևանի փողոցներով, նայում քաղաքը շրջապատող կանաչ բլուրներին, հիացմունքից բարձրանում է տրամադրությունդ, ուզում ես անվերջ երգել։ Ահա թե որտեղից են սկիզբ առնում հայ տաղանդավոր կոմպոզիտորների ստեղծագործությունները։ Մենք եղանք Հայաստանի շատ տեսարժան վայրերում, հիացանք նրա ճարտարապետական կոթողներով, նրա բնության աննման գեղեցկություններով, բայց մեզ ամենից շատ դուր եկան մարդիկ՝ բանվորները, կոլտնտեսականները, մտավորականությունը։ Նրանք գիտեն աշխատել, գիտեն ստեղծագործել, երգել։ Ես այժմ բավական լավ՝ գիտեմ հայկական երաժշտությունը. այն նման է ձեր երկրի բնությանը, բարձր է ձեր լեռների պես, ձեր ձորերի նման խոր։

Ձեր երգը հոգու խորքից է գալիս։

Այս կարծիքին են էստոնացի իմ բոլոր գործընկերները։

«Սովետական Հայաստան» թերթ,
21 սեպտեմբերի 1964 թ.

Բորիս Կովեր
Էստոնիայի կոմպոզիտորների միության նախագահ

* * *

Տարագիր և հայրենակարոտ հայության համար Արարատն ու Սևանը, Երևանն ու Լենինականը, ամբողջ Հայաստանը աշխարհագրական հասկացողություններ չեն միայն, այլ նաև տարաշխարհի հայի կյանքին իմաստ տվող զենք, գալիքին կապող մեծագույն ազդակներ։ Ես եղած եմ եվրոպական բազմա-

թիվ քաղաքներու մեջ, տեսել եմ նաև Մոսկվան իր մարդկային հոսող գետերով, իր հռչակավոր օպերայով, պատմական Կրեմլով ու այն դամբարանով, ուր կհանգչի անմահ Լենինը։ Բայց ահա, երբ ոտք կդնեմ պապերուս հողին վրա, ամենատարբեր, նույնիսկ մինչև այժմ էլ ինձ անհայտ զգացումներ կխլրտան հոգուս մեջ, ու ես կապրիմ անոնց ներկայությունը։

Ճմրթված հող հայրենի, իմ լեռնաշխարհ, քանի հազար ասպատակող սմբակ քեզ ըրած են ոտքի կոխան, ավերած քո գյուղերն ու քաղաքները, բայց ահա, վերջապես դուն հասար սոցիալիզմի դարին, քո կողքին կանգնեց Հոկտեմբերն ստեղծող ռուս ժողովուրդը։ Կես դար, ու մոխիրներեն դու բարձրացար որպես ծնունդը Վահագնի։

Հիմա ես կշնչեմ հարյուր կռիվ տեսած քո օդը, կհպարտանամ քո բոլոր նորակառույցներով, քո զավակների արդար քրտինքի պտուղ Երևանով, օպերայով, Մատենադարանով, բազում դպրոցներով։

«Սովետական Հայաստան» թերթ,
1964 թ.

Հակոբ Կեպենլյան
Լիբանանահայ գրոսաշրջիկ

* * *

Ինձ այստեղ հարցնում էին, թե ինչպե՞ս է, փոխվե՞լ է Երևանը։ Պատասխանս եղել է մեկ։ Երևանը, որին ճանաչել էի քառասունչորս տարի սրանից առաջ, չի փոխվել, այլ նրա հետքը չի մնացել, ստեղծվել է նոր, գեղեցիկ քաղաք՝ արժանի մեր այս գեղեցիկ հայրենիքին։ Դիտելով Երևանի թանգարանները, լինելով մշակույթի կենտրոններում, ես ամենուր տեսա աշխատանք, որը կատարվում է եռանդով։ Ես տեսա, որ մեր ժողովուրդի կամքով ջուրը Հայաստանի մեջ լեռն թ վեր է հոսում, եթե պետք է։

«Սովետական Հայաստան» թերթ,
21 սեպտեմբերի, 1964 թ.

Վարդգես Անառոնյան,
Սփյուռքահայ հասարակական գործիչ

* * *

Ձեմ հոգնում քայլելուց, ուզում եմ մեկ շաբաթվա ընթացքում տեսնել շատ ու շատ նորակերտ փողոցներ, ծանոթանալ այնքան ջերմասիրտ երևանցիներին։ Նման տուֆակերտ շինություններ՝ հեքիաթային զարդաքանդակներով, ես ոչ մի տեղ չեմ տեսել։ Առաջին անգամ եմ լինում Երևանում և չնայած դեռ ժամանակ կա, բայց արդեն զգում եմ այն կարոտը, որ պետք է ապրեմ Երևանից հեռանալուց հետո։

«Երեկոյան Երևան» թերթ,
14 սեպտեմբերի 1964 թ.

Տորդիկ Էվալդ
Տարտուի օպերային թատրոնի մենակատար

* * *

Երևանում սիրում եմ Աբովյան փողոցը, Լենինի հրապարակը, այգիների մեջ թաղված տներն ու լեռներից սրընթաց հոսող Հրազդանի աջափնյա թաղամասը. եթե ասեմ, որ այդ ամենը սիրում եմ որպես հարազատ, իմ սրտին մոտ տեղեր, ապա դրանում ամենափոքր չափազանցությունը չի լինի։

«Երեկոյան Երևան» թերթ,
14 հուլիսի 1964 թ.

Միրզա Իբրահիմով
Ադրբեջանցի գրող

* * *

Տասը օրից ավելի է, ինչ ես Երևանում եմ, որն ինձ համար հարազատ է, ինչպես Բաքուն։ Ամեն անգամ այստեղ ես նորություններ եմ տեսնում։ Անցած տարիների ընթացքում շատ է փոխվել ու գեղեցկացել Երևանը։ Բացվել են նոր պողոտաներ ու փողոցներ, արվեստի և մշակույթի նոր օջախներ։ Ես շատ ուրախ եմ, որ մեկ ամիս լինելու եմ Երևանում, նրա հյուրասեր ժողովրդի մոտ։

«Երեկոյան Երևան» թերթ, 1964 թ.

Նուարաբ Ֆաքուլլան
Ադրբեջանցի դերասան

* * *

Երկար տարիներ ապրում եմ Փարիզում ու տնօրինում Արևմտյան Եվրոպայի միակ հայկական աղջկանց գիշերօթիկ դպրոցը։ Եղել եմ աշխարհի շատ քաղաքներում, բայց Երևանը ինձ համար ուրիշ է։

Ընդամենը չորս տասնամյակներում իմ հայրենակիցները կերտել են այնպիսի հրաշալի քաղաք, ինչպիսին Երևանն է։ Եկ ու մի հուզվիր։ Այն, ինչ տեսա Երևանի դպրոցներում, կատարյալ դրախտային թվաց ինձ։ Այստեղ երեխաները իսկապես երջանիկ են։ Պետությունը նրանց համար ստեղծել է ամեն ինչ և մեծ չափերով։

Որպես մանկավարժ, ես կաշխատեմ շատ բան ընդօրինակել Երևանի ուսուցիչներից և այդ ուսանելին կիրառել մեզ մոտ՝ Փարիզում։

«Սովետական Հայաստան» թերթ,
13 սեպտեմբերի, 1964 թ.

Հռիփսիմե Գարագաշյան
Ֆրանսահայ ուսուցչուհի

* * *

Երևան, արևավառ մայրաքաղաք։ Կանգնել եմ հիմա քոսկե աշնան ջերմ արևի շողերի տակ և ամբողջ հայրենիքը հոգուս մեջ եմ զգում։

Երևանը իր մեղմօրոր և զովասուն պուրակներով, վարդագույն շենքերով գերել է ինձ։ Մի մեծ պարտեզ է Երևանը, որի մեջ բարձրացել են հարյուրավոր երկնամերձ շենքեր։

Հուսով եմ, որ ապագայում ինձ պատեհություն կտրվի, որպեսզի կրկին այցելեմ ոսկեծիծաղ երկիր Հայաստանի մայրաքաղաք Երևանը և, կանգնած Սասունցի Դավթի արձանի մոտ, դիտեմ ավելի ծաղկած ու գեղեցկացած Երևանը։

«Սովետական Հայաստան» թ.,
22 նոյեմբերի, 1964 թ.,

Աբա Հովհաննիսյան
Իրանահայ երգիչ-բանաստեղծ,
թարգմանիչ

* * *

Երևանում եղել եմ 1944 թվականին։ Անցած քսան տարում անճանաչելիորեն փոխվել է քաղաքը։ Մեր այս բարեկամական այցը հնարավորություն տվեց մեզ՝ կրկին համոզվելու, թե որքան անհրաժեշտ է խաղաղությունը ժողովրդին՝ տնտեսության և մշակույթի ծաղկման համար։ Մենք անչափ ուրախ ենք, որ աշխատասեր ու տաղանդավոր հայ ժողովուրդը հասել է վիթխարի նվաճումների։

«Սովետական Հայաստան»,
24 նոյեմբերի 1964 թ.

Թոմաս Ջեֆրի
«Մեծ Բրիտանիա—ՍՍՀՄ» ասոցիացիայի պատվիրակության ղեկավար, պահեստի գեներալ-մայոր

* * *

Շատերի նման ես էլ հեռուները մեկնելիս, ինձ հետ, իմ սրտում տարել եմ Երևանը։ Տարել եմ և ամենուր պատմել նրա մասին, հպարտացել։ Իսկ երբ մենակ եմ եղել՝ ինքս իմ տպավորությունների, իմ առաջ պարզված փողոցների ու շենքերի հետ, տեսածիս կողքին մտքիս մեջ ուրվագծել եմ մեր քաղաքը, համեմատել, նրա առավելությունների համար ուրախացել, պակասն ու թերին վերապրել նախանձով։

Երևանի պատմության թանգարան, Այցելու
1964 թ.

* * *

Պատկերացնելու համար, թե ինչ նվաճումների է հասել Սովետական Հայաստանը անցած քառասուն տարիների ընթացքում, բավական է լինել Երևանում, շրջել նրա գեղեցիկ փողոցներում, հրապարակներում և զբոսայգիներում։

Նա, ով տեսել է Երևանը 1920 թվականին, այժմ չի կարող ճանաչել այն։ Կյանքում հրաշքներ չեն պատահում, բայց տեսնելով Երևանի կերպարանափոխությունը քառասուն տարվա ընթացքում, չես կարող չբացականչել՝ «Բայց մի՞թե սա հրաշք չէ»։

Փոքրիկ, աղքատիկ, մի քանի տասնյակ հազար բնակիչ ունեցող գավառական Երևանը դարձել է Սովետական Միության արդյունաբերական և մշակութային խոշոր կենտրոններից մեկը, իսկ նրա բնակչությունը հասնում է ոչ թե մի քանի տասնյակ, այլ մի քանի հարյուր հազարի։

Հառաջացած տարիքի բերումով, դժբախտաբար, չկարողացա մասնակցել մեր խմբի շրջագայություններին։ Ինչ վերաբերում է մեր մայրաքաղաք Երևանին, որտեղ անցկացրել եմ երիտասարդությունս, պիտի հայտնեմ հետևյալը, որ կարճ է, բայց պերճախոս։ Եղբորս որդին կառքով ինձի պտտեցուց Երևանում։ Ժամեր տևող այդ պտույտից հետո տուն վերադարձա այն տպավորությամբ, որ շրջագայել եմ մի բոլորովին անծանոթ քաղաքում։

Երևանը, ֆրանսերեն բառերով ասած, մի հսկայական շանթին է (շինարարական հրապարակ)։ Իմ այս կարճ և զուսպ խոսքերը կարծում եմ կհասկացվեն իրենց իսկական իմաստով և ճշգրիտ բովանդակությամբ, ավելի ծանր կկշռեն, քան ավելորդ շռայլաբանությունները։

«Երեկոյան Երևան» թերթ, 3 սեպտեմբերի 1964 թ. Արշամ Խոնդկարյան
դաշնակցական կառավարության
նախկին մինիստր

* * *

Հայաստանում մենք ամենուրեք հանդիպեցինք մարդկանց, որոնք սեր ու հարգանք են տածում մեր ժողովրդի նկատմամբ։ Ես ամբողջ կյանքումս կհիշեմ Հայաստանի հեքիաթային մայրաքաղաք Երևանը, որը համատարած սովորողների քաղաք է և Սանահին լեռնային գյուղը, ուր մենք գիշերեցինք, զգալով Անաստաս Միկոյանի համագյուղացիների ջերմ հյուրասիրությունը։ Մենք լավ բաներ շատ էինք լսել ձեր երկրի մասին, բայց մեր տեսածը գերազանցեց բոլոր սպասածները։

Հայաստանը, հիրավի, դարձել է Սովետական Միության ծաղկուն երկրամաս։

«Սովետական Հայաստան», 23 մայիսի 1964 թ.

Սուխարչո և Սոլեյման
Ինդոնեզացի զբոսաշրջիկներ

* * *

Երևան, կայարանի առջևի հրապարակ։ Այստեղ տեսա բրոնզե նժույգի վրա, կիսամերկ, հսկայամարմին մի երիտասարդի։ Սասունցի Դավիթն է։ Արձանը զարմանք է պատճառում իր հզորությամբ, հերոսը, նժույգը, սուրը՝ ամեն ինչ հսկայական է շարժումով և ոճով առլեցուն։

Եվ ահա ես ավտոբուս նստած գնում եմ հրապարակով, նայում վարդագույն և դեղնագույն տուֆից կառուցված ժամանակակից տների, որոնք բնականորեն և պերճաշուք կերպով վերարտադրում են հայկական հին կառույցների ուղղագծերն ու նկարը, և ես մտովին ստեղծում եմ իմ հատուկ Երևանը՝ արտասովոր կերպով նման այն միակ Երևանին, որ կա իրականում, արտասովոր նման այն Երևանին, որ ապրում է ահա այդ փողոցներով քայլող հազարավոր մարդկանց մտքերում և, միաժամանակ բոլոր միլիոնավոր երևանցիներից տարբեր, իմ անկրկնելի քաղաքը։ Այնտեղ առանձնահատուկ կերպով են խշշում չինարիների աշնանային տերևները, այնտեղ առանձնահատուկ կերպով են ծլվլում ճնճղուկները։

Ես արդեն գիտեի, որ ակադեմիկոս Թամանյանը ստեղծել է նոր Երևանի ճարտարապետական ոճը, որը կրկնում է հնօրյա կառույցների ու եկեղեցիների ոճը։ Ես գիտեմ, որ ժամանակակից շենքերի մեջ վերածնված ավանդական հին զարդաքանդակը պատկերում է խաղողի ողկույզ, արծվի գլուխ։ Հետո արդեն երևանցիները ինձ ցույց տվեցին Հայաստանի ճարտարապետների կերտվածքները, ցույց տվեցին փողոցը առանձնատների, որոնցից յուրաքանչյուրը ճարտարապետական փոքրիկ գլուխգործոց է։

Բայց ինձ ցույց չտվեցին Երևանի հին տները և երևանյան ներքին բակերը, որոնք թաքնված են տաճարակերպ նոր տների ետևում, ցույց չտվեցին 19-րդ դարի շենքերը, որոնք Երևան էին մտել ռուսական հետևակազորի հետ մեկտեղ։ Ես դրանք տեսա Երևանում գտնվելու առաջին օրը։

Ներքին բակ։ Ահա Երևանի ներսը, նրա հոգին... տափակ կտուրներ, սանդուղներ և աստիճաններ, փոքրիկ միջանցքներ, պատշգամբներ, ու պատշգամբիկներ, չինարիներ, թթենիներ, խաղողի փաթաթվող ոստեր, սեղաններ, նստարաններ, անցումներ, նստարաններ։ Եվ այս ամենը ներդաշնակ ու միաձույլ, մեկը մյուսի մեջ մտած, մեկը մյուսից ելնող... տասնյակ հարյուրավոր պարաններ, արյունատար երակների և ջղերի նման իրար են կապում պատշգամբներն ու պատշգամբիկները։ Պարանների վրա չորանում է բազմաքանակ սպիտակեղենը։

...Մերունիները տերողամյա են զցում, անշտապ ծիծաղում, երեխաները շարաճճիություն են անում, ծխում են մանղալները, պղնձե թասերում եփվում է սերկևիլի ու դեղձի մուրաբան։

Ներքին բակ։ Նրա մեջ է ժամանակների կապը այսօրվա, երբ Իլ—18 ինքնաթիռի չորս մոտորները 3,5 ժամում մարդուն Երևանից հասցնում են Մոսկվա, և քարավանատների ուղտերի ժամանակների կապը։ Եվ ահա ես կանգնած, տես-

նում եմ այսօրվա Երևանը, վարդագույն տուֆը, բազալտը, ասֆալտն ու գլաքարերը, ցուցափեղկերի ապակին, Աբովյանի, Շահումյանի, Չարենցի արձանները, դեմքերը, խոսվածքը, մարդատար ավտոմեքենաների կատաղի սլացքը...

Ահա կենտրոնական հրապարակը՝ վարդագույն տուֆից կերտված չորսը շենք. «Արմենիա» հյուրանոցը, որտեղ բնակվում են իրենց հայրենիքը տեսնելու եկած սփյուռքահայերը, ժողովրդական տնտեսության խորհուրդը, որ տնօրենն է հայկական մարմարի, բազալտի, տուֆի, պղնձի, ալյումինի, կոնյակի, էլեկտրականության, Մինիստրների սովետի շենքը՝ իր կատարյալ ճարտարապետությամբ և գլխավոր փոստը, որտեղ հետագայում տազնապալի կուշ էր գալիս սիրտս, երբ դպրոցական նամակներ էի ստանում։

Ես տեսնում եմ այսօրվա Երևանը իր գործարաններով։ Բանվորների համար կառուցված բազմահարկ, նոր տների իր հսկայական թաղամասերով, իր շքեղ օպերային թատրոնով, արժեքավոր գրապահոցով և Մատենադարանով, գիտական ինստիտուտներով, գիտությունների ակադեմիայի ներդաշնակ ու պերճաշուք շենքով։ Այդ ակադեմիան փառաբանված է հայ գիտնականների լուսավոր մտքով։

Ես տեսնում եմ Արարատը. նա կախված է կապույտ երկնքում։ Փափուկ, նուրբ գծագրված, նա ասես ոչ թե գետնից, այլ երկնքից է աճում, ամպերից ու երկնի կապույտից է կոտակված։ Արևի տակ քայլող այս ձյունափայլ, ձյունաճերմակ լեռանն են նայել աչքերը նրանց, ովքեր Աստվածաշունչ են գրել։

«Գրական թերթ», 2 հուլիսի 1965 թ.

Վասիլի Գրոսման
Սովետական գրող

* * *

Հայաստանը շինարարական մի հրապարակ է։ Նրա մայրաքաղաքի երկնքում գծագրվում են այնքան շատ վերամբարձ կռունկներ, որ դժվար է դրանք հաշվել։ Ես անչափ ուրախ եմ այն հաջողությունների համար, որ հայերը ձեռք են բերել կյանքի բոլոր բնագավառներում։

Հայկական լեռնաշխարհին հատուկ թովիչ առավոտն է բացվում գարերի պատմություն ունեցող Երևանի վրա։ Հնուց ժառանգված այս քաղաքը, որը նույնպես ոչ շատ վաղ անցյալում իրենից ներկայացնում էր կավածեփ հյուղակներով, փոշոտված ու քարքարոտ, ծուռումուռ փողոցներով անշուք մի բնակավայր, այսօր այդ բոլորը քշել է թանգարան, միայն հուշ դարձրել։ Եվ այդ հուշ-փլատակների վրա նա այսօր խոյացել է վեր, իբրև իր ժողովրդի սիրո առհավատչյա, դարձել մշտադալար ծառերով, հազարագույն ծաղիկներով բուրումնալից պուրակներով ու երկնահաս շենքերով պարուրված մի քաղաք։

Ազգային նուրբ ճաշակի ճարտարապետական հսկա կոթողներն ու անսամբլները, բնակելի շենքերն ու կառույցները, հսկայական լայնությամբ երկարաձիգ մայրուղիները, անուշահամ ջրի ցայտաղբյուրները մի առանձին ճոխություն ու վեհություն են տալիս նրա մարդկանց։

«Արմենիա» հյուրանոցի տպավորությունների մատյան, 1965 թ.

Ժան Կազալբո
Ֆրանսիացի գրող,
հրապարակախոս

* * *

Երևանում դեռ պահպանված հին շենքերը է՛լ ավելի վառ կերպով են ընդգծում նորի վեհությունն ու հոյակապությունը։ Ես, որպես քաղաքային շինարարության հարցերով զբաղվող մարդ, շատ բան քաղեցի այս ուղևորությունից։

Հայաստանից մեկնում ենք մեր սրտերում տանելով ամենալավագույն տպավորություններ և խորին երախտագիտության զգացումներ։

Հայրենիք վերադառնալուց հետո մեր համերկրացիներին կպատմենք այն ամենի մասին, ինչ տեսանք հյուրընկալ այս երկրում։

«Սովետական Հայաստան»
Թերթ, 1965 թ.

Վան-Խան-Լու
Պեկինի քաղաքագլխի տեղակալ

* * *

Իմ հարազատ Կիևում ես քայլում եմ Երևանյան փողոցով, այստեղ՝ Երևանում հիանում մեր երկու մայրաքաղաքների բարեկամությունը խորհրդանշող Կիևյան փողոցով, և, ինձ թվում է, փողոցներն իրար են ձուլվում ու դառնում անխախտ բարեկամության մայրուղի։

Ես սիրեցի արևաշատ Հայաստանը, նրա աշխատասեր մարդկանց, նրա հրաշալի լեզուն, գրականությունն ու արվեստը։

Ես սիրեցի Զանգեզուրի ու Լոռու սեգ սարերը, Արարատյան դաշտի զարմանալի ոսկե աշունը, Հայաստանի կապուտակ աչքերը՝ Սևանը, աչքեր, որ պետք է խնայել։ Սիրեցի տուֆաշեն հրաշք Երևանը և նրա փողոցները։

Ես հպարտ եմ, որ իմ ուկրաինական ժողովուրդը տաղանդավոր, հնամենի և միշտ պատանի հայ ժողովրդի հետ կապված է խոր պատմական արմատներով։

Հայաստանի ռադիոյի
Ճայնադարանի Ֆ., 1965 թ.

Վիկտոր Կոշևսկի
Ուկրաինացի բանաստեղծ, հայագետ

* * *

Երևանում ես տեսա հայկական ազգային ճարտարապետության աքանչելի կոթողներ։ Ինձ թվում է, որ աշխարհի շատ երկրներ կհպարտանային, եթե ունենային այդքան ինքնատիպ ու բարձրարվեստ ճարտարապետություն։

«Երևկոյան Երևան» թերթ,
1965 թ.

Էժի Յարուզելսկի
ԼԵՀ լրագրող

* * *

Ես նախանձում եմ հայ ժողովրդին։ Եթե իմ Նովգորոդյան երկիրը ոչ մի անգամ տեղի չտվեց թշնամուն, դրա պատճառը մեր անառիկ անտառներն ու լճերն էին, որոնք, մեզանից բացի, ոչ ոք չի կարող շրջանցել։ Նրանց, ովքեր այնուամենայնիվ անցել են մեր անտառների ու ճահիճների պատնեշով, մենք կոչնչացնեինք, եթե ունենայինք մեր փառքի այսպիսի գրապահոց՝ այսպիսի Մատենադարան։

Մատենադարան, 1965 թ.

Լ. Յուրկին
Նովգորոդցի այցելու

* * *

Ձեռագրերի այս հոյակապ պահոցը Երևանում, թերևս, ամենից ավելի մեծ տպավորություն թողեց ինձ վրա նաև նրանով, որ այստեղ ասես զգացվում է հայ ժողովրդի հին մշակույթի նյութական մարմնավորումը։ Մեծ երախտիք ունեն մարդկային մշակույթի այս մարգարիտների՝ հինավուրց ձեռագրերի հավաքողներն ու փրկողները։

Մատենադարան, 1965 թ.

Կրեմեր Իա
ՍՍՀՄ ԳԱ գիտաշխատող

* * *

Աշխարհի մեջ ոչ մի քաղաք չէր կարող այսքան արագ թափով վերաճել, ընդարձակվել, ինչպես Երևանը։ Ճարտարապետական և գեղագիտական հոյակապ մտահղացումներով ոչ միայն թաղամասերը վերակառուցվել, զարմանալիորեն անճանաչելի են դարձել, այլև նախկին լերկ ու ամայի շրջանները տուփակերտ, գեղեցիկ բազմահարկ շենքերով մայրաքաղաքին են միացվել, նոր, կանաչապատ փողոցներու, ծառազարդ պողոտաներու, մաքուր հրապարակներու և զանազան զբոսայգիներու լայն ցանցով ու հուշարձաններով, գիտության ու մշակույթի արդիական շենքերով՝ Արևելքեն Արևմուտք, Հյուսիսեն Հարավ։

Այս ամենով ես հիացած, հպարտ եմ ու երջանիկ։

Ռադիոյի ձայնադարան,
1965 թ.

Պողոս Մելիքյան
Ամերիկահայ տուրիստ

Երբ եկա Հայաստան և Երևանը տեսա, այնպե՞ս բաբախեց սիրտս, երբ հրաշալի Մատենադարանը տեսա, զգացի, որ մենք փոքր արվեստագետներ ենք, մեր հին տաճարները ստեղծողներուն դիմաց, մեր հին գրքերի դիմաց... Ի՞նչ քաղաքակրթություն հաստատած ենք ժամանակին, այդ մեծ քաղաքակրթությունը պետք է ներկայացնենք աշխարհին, որպեսզի աշխարհը իմանա, թե մենք ինչպիսի ժողովուրդ ենք եղած։

Քառասուն տարիե ի վեր Հայաստանի, Երևանի մասին տեղեկացել էինք գիրքերե, թերթերե, բայց չէինք կրնար երևակայել, որ իրապես Հայաստան մը կա։

Տեսնելով Երևանի Լենինի հրապարակը, զգացի, որ ան գլուխգործոցներեն մեկն է, ոչ միայն Հայաստանի ճարտարապետության, այլև կրնա բաղդատվիլ որևէ երկրի գոհարներու հետ։

Հայաստանի ռադիոյի
ձայնադարան, 1965 թ.

Գառզու (Գառնիկ Զուլումյան)
Ֆրանսահայ նկարիչ

* * *

Հին ձեռագրերի հազվագյուտ գրապահոցը՝ Երևանի Մատենադարանը պատմական մեծ արժեք է ներկայացնում։ Փառք Սովետական Սոցիալիստական Հայաստանին, որը ստեղծել է այսպիսի գրապահոց և հարստացնում է։

Մատենադարան, 1965 թ.

Միխայիլ Սուսլով
ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղար

* * *

Հայաստանը, Երևանը, Մատենադարանը 1965 թվականին հյուրընկալեցին նաև Գերմանիայի սոցիալիստական Միասնական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Վալտեր Ուլբրիխտին։

Ծանոթանալով ձեռագրերի պահպանության այս յուրահատուկ գրապահոցին՝ Մատենադարանին, Վալտեր Ուլբրիխտը տպավորությունների մատյանում գրեց.

«Մենք հիանում ենք հայ մշակույթի մեծ ավանդույթներով։ Սովետական Հայաստանը, նրա մայրաքաղաքը պահպանում են այդ թանկագին ժառանգությունը։ Հայաստանը Սովետական Միության կազմում է՛լ ավելի է զարգանում ու չտեսնված բարձունքի հասցնում հայ մշակույթը։

Հայ ժողովրդին մաղթում ենք հետագա հաջողություններ իր մշակույթի զարգացման ասպարեզում»։

«Սովետական Հայաստան» թերթ,
1965 թ., 23 սեպտեմբերի։

Վալտեր Ուլբրիխտ
Գերմանիայի քաղաքական և
հասարակական գործիչ

* * *

Այս գրքերն ապրում են, չնայած այն հանգամանքին և հենց այն պատճառով, որ հազար ու հարյուրավոր տարիներ կիսել են իրենց ժողովրդի ճակատագիրը՝ փառք, արհավիրքներ, գերեվարություն, ճակատամարտեր և երջանիկ խաղաղության օրեր։ Այս մատյաններն այլևս մեռած առարկաներ չեն, իրենց ժողովրդի մեծ քաղաքացիներն են։ Եվ

հնարավոր չէ հասկանալ հայերի տոկուն ու ջանասեր լինելու պատմությունը՝ առանց ծանոթանալու այստեղ՝ Երևանի Մատենադարանում հավաքված գրքերի ճակատագրին։

Սերգեյ Բուռդին
Ռուս գրող

Մատենադարանի այցելուների
գիրք, 1965 թ.

* * *

...Ամեն հովտում և գետափին, լուսակապույտ երկնքի տակ,
Իր նոր ոճով գեղատեսիլ այսօր ծաղկել է նոր քաղաք,
Եվ Երևանը մեր չքնաղ, մայրաքաղաքը մարդաշատ,
Նրա առաջ կշրջեին ամեն Անի կամ Արտաշատ։
Ամենամեծ կոթողն է սա հազարամյա մեր պատմության,
Այստեղ կոփվում է մեր հոգին, և կառուցվում է ապագան։
Այստեղ բանվորը մեր հայոց նստած է իր երկաթե ձին,
Հայ գիտնականն է լուռ հակված բազմախոստումն փորձանոթին,
Այստեղ հառնել է, թև առել մեր հնավանդ հայոց ոգին
Եվ սավառնում է հյուսիսից մինչև արև ու Ծիր-Կաթին։

Երևան...

Դու հայոց պերճաշուք մայրաքաղաք, դու դարերի հավիտենական ճամփորդ, որ տառապանքի դժվարին ուղիներ անցնելուց հետո քո նորոգ կյանքի շահը վառեցիր աղատարար Հոկտեմբերի կրակից և վերածնվեցիր նոյեմբերյան մի առավոտ։

Այն ո՞ր հայը չի հպարտանում քեզանով, այն ո՞ր հայի սիրտը չի ցնծում, տեսնելով քո մեջ խտացված մեր դարավոր հանճարը հոյակերտ, բազմահարկ շենքերը, արևաշող,

շքեղ հրապարակները, լայնահուն պողոտաները, արվեստի, գիտության, մշակույթի հռչակավոր օջախները։

Այս ամենը քո ներկան է, այս ամենը Սովետական իշխանության պարգևն է։

Երևան... Դարերի հավիտենական ճամփորդ։ Քո շինարար որդիները, քո գիտնական զավակները, արվեստի գործիչները լավ գիտեն, որ այն, ինչ ստեղծել ու կառուցել ես, ինչ նվաճել ու ձեռք ես բերել կեսդարից էլ պակաս ժամանակաշրջանում, գերազանցում է այն ամենը, ինչ ունեցել ես դու քո ամբողջ գոյության 2700 տարվա ընթացքում։

«Սովետական Հայաստան» թերթ,
5 դեկտեմբերի, 1965 թ.

Նաիրի Զարյան
Սովետահայ գրող

* * *

Քալելով ճամփաներով, ես կփնտրեմ 1915—1917 թվականներուն իմ տեսած Երևանը, բայց չեմ գտներ։ Կտեսնեմ բոլորովին ուրիշ, նոր, շքեղ, հսկայական տարածությամբ Երևան մը։ Չնայած, որ շատ մը տարիներ առաջ ինծի նկարագրած էին Երևանը, բայց ես երբեք չէի կրնար պատկերացնել, որ մեր մայրաքաղաքը կրնա այս աստիճանի ընդարձակ ու հրաշալի քաղաք մը դառնալ, իր վարդագույն տուֆակերտ շենքերով, հիանալի հրապարակներով, կանաչազարդ պողոտաներով, զբոսայգիներով։

Այո, եկա, տեսա և հիացա։

Երբ երեկոյան բարեկամներով «Հաղթանակ» զբոսայգիեն դիտեցի Երևանը, այն ժամանակ զգացի, թե ինչքան սիրուն

ու մեծ է, տասնյակ-հազարավոր լույսերով ողողված հրաշալիք մը։

Մեր խումբեն բարեկամ մը ինծի հարցուց.

«Ինչպե՞ս կգտնեք մեր հայրենիքը»։

Պատասխանս պարզ էր...

Ես իրեն ըսի, որ մեր պարտականությունը պիտի ըլլա վերադառնալե ետք բոլորին ըսել. «Հայաստանը իմանալու համար պետք է գնաք ձեր աչքերով տեսնեք այդ հրաշալիքը, որ կառուցված է խորհրդային հայրենիքի աշխատավոր դասակարգի, ճարտարապետների ու կառավարության ջանքերի շնորհիվ։

«Սովետական Հայաստան» թերթ,
1965 թ., 26 օգոստոսի։

Վարդան Պանդիկյան
Ֆրանսահայ զբոսաշրջիկ

* * *

Երկնային ես, Երևան, կապույտ երկինք ես անծիր,
Սիրտս հիմա վառ աստղ է քո լուսավոր ճակատին,
Սիրեմ, սիրեմ ու փարվեմ քո լույսերին հրածին,
Դու իմ կյանքի, իմ հոգու աստեղափայլ Ծիր-Կաթին։

Դև

«Սովետական Հայաստան» թերթ,
1965 թ., 3 սեպտեմբերի։

Իրանահայ բանաստեղծ

* * *

Ես բանաստեղծ եմ հեռավոր երկրից,
Որ գտնվում եմ արդ քո երկնի տակ,
Այնքան հարազատ, ծանոթ ես դու ինձ,

Դու և՛ հին, և՛ նոր վարդագույն քաղաք։
Դու ինձ թվում ես մի կարմիր ծաղիկ,
Կապույտ երկնքում ժպտացող կրակ,
Դու ուրախ ճախրում աղավնիների,
Շատրվանների կարկաչյուն հստակ,
Դու երկինք հառած կռունկների թև,
Շքեղ շենքերի ինքնատիպ խոյակ,
Ճակատիդ կրակ, ճակատիդ վարդեր,
Ժպտացող զվարթ քարերի մանյակ։
Դու սևագագաթ աղջկա ժպիտ,
Սլացիկ հոնքեր քնքուշ աղջկա,
Դու սիրո քնար, երգ լուսափթիթ,
Որ ինչքան լսես, կդյութվես այնքան...
Դու հավատարիմ սիրտ բարեկամի,
Իմ ձեռքս սեղմող հարազատի ձեռք,
Սիրտս անունդ մտքից չի հանի,
Բարի, կենսուրախ, հյուրընկալ եղերք...

«Երեկոյան Երևան» թերթ,
1965 թ.

Իգոր Սիկիրիցկի
ԼԵՀ բանաստեղծ

* * *

Հայ գիտնականները ողբերգական ճակատագրով ավերված Զվարթնոցը վերագտան (ավերակները գտան) և ստեղծեցին ամենահարուստ մի թանգարան։ Նրանք Զվարթնոցը վերցրել են որպես դասական օրինակ և ստեղծել եռայարուս, ինչպես հնամենի տաճար, օպերային թատրոնի շենքը, «Արմենիա» հյուրանոցի, Հայաստանի Մինիստրների խորհրդի, կենտրոնական փոստատան շենքերը։

Իրավացի է ուղեկիցս՝ Վարդգես Բաբայանը, ասելով, որ «Մենք՝ հայերս սիրում ենք մեր հնամենի հողը։ Ով չի սիրում, ապրելու իրավունք չունի»։

«Երեկոյան Երևան»,
1966 թ., 11 նոյեմբերի։

Սերգեյ Կոնյուշկով
Ռուս նկարիչ-քանդակագործ

* * *

Երևանը, իրոք, արևային քաղաք է։ Արևելյան շքեղությունը հառնում է ձեր ամեն մի քարից, ու նրա վրա կարծես թե ասեղնագործված զարդեր կան՝ զարմանալի հին ու զարմանալի նոր նախշաքանդակներից։

Ճիշտ է, ես առաջին անգամ եմ լինում Երևանում, բայց նրա հրապույրը իմ մեջ կմնա անջնջելի։

«Երեկոյան Երևան»,
1965 թ., 28 մայիսի։

Ալեքսանդր Վեսելնիկով
ՌՍՖՍՀ վաստ. արտիստ

* * *

Կիսարթուն, կիսազառանցական վիճակում հասա Երևան։ Դեռ քաղաքը չտեսած, նրան արդեն ընդունել էի իմ ամբողջ էությամբ։

Եթե ամբողջ Երևանի փողոցներից մեկում կամ որևէ ամայի վայրում աճեր մեն-միայնակ չորացած մի խոտիկ, ապա այդ էլ բավական կլիներ ինձ համար, որպեսզի զգայի

վայրերի հեքիաթայնությունը, նրանց կենդանի հնությունն ու ուժը։

«Սպիտակ ծաղանը» Երևան,
1965 թ., էջ 206

Կոնստանտին Պաուստովսկի
Ռուս գրող

* * *

Ես լսել էի Հայաստանի առասպելական պատմության մասին և այդ պատճառով արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի համամիութենական ընկերությունում խնդրեցի, որ ինձ Հայաստան ուղարկեն։ Այստեղ համոզվեցի, որ սոցիալիստական համակարգը ամենալավագույնն է մարդկային երջանկության համար։ Հայերը, որոնց մասին հիշվում է դեռ անցյալի բիբլիական գրականության մեջ, անապատը վեր են ածել դրախտի։ Հայաստանի մայրաքաղաք Երևանը բարձրացել է իբրև դարերի խորքից եկող ժողովրդի հարուստ ճարտարապետության կանգուն վկա։

Հայաստանի և Չիլիի բնությունները նման են իրար։ Նման են նաև մարդիկ՝ հայերը և չիլիացիները։

Հայաստանի մայրաքաղաքում ես գտա այն գաղափարների կենսագործումը, որոնց հետևել եմ տարիներ շարունակ։

Հայաստանի ռադիոյի ձայնադարան, 1965 թ.

Ալեխանդրի Արթուրո Մատտե
Չիլիացի լրագրող

* * *

Երևանի Լենինի հրապարակը ճարտարապետական գլուխգործոց է համաշխարհային չափանիշով։ Եթե հազար բծախնդիր մասնագետ այսօր կազմելու լինեն աշխարհի յոթ հրաշալի հրապարակների ցուցակը, ապա երևանյանը կմտնի դրա մեջ։

Շինարարի երեքհազարամյա հռչակ ունեն հայերը։ Բայց Լենինը հարյուրապատկել է հայերի կառուցողական քանքարը։ Խոսուն վկան այս սքանչելի հրապարակն է, ուր խտացված է լավագույնը 3 հազար տարում կառուցված այն հրաշագեղ պալատների, որոնք հիմա կամ հողի տակ են, կամ կիսավեր վիճակում։

Սովետական իշխանությունը ստեղծարար այնպիսի ուժ է ներարկել 15 հանրապետությունների բոլոր ազգություններին, որ նրանք 45 տարում հազարամյա ուղի են անցել։

Ահավասիկ պերճախոս ապացույցը՝ Սովետական Հայաստանի հանրապետությունը, նրա հոյակապ մայրաքաղաքը, նրա փառահեղ հրապարակը։

«Սովետական Հայաստան» թերթ,
1965 թ.

Ռոմուել Քենդ
Ամերիկացի քանդակագործ,
հասարակական գործիչ

* * *

Մայթերը և փողոցի կենտրոնը կարգավորելուց հետո պատկոմներն ու կոմերիտականներս, շաբաթօրյակի կարգով, մայթերի եզրերին փոսեր փորեցինք և դալար շիվեր

տնկեցինք։ Այդ շիվերը ներկայումս հաստաբուն ծառեր են դարձել և զարդարում են Աբովյան փողոցը։

Ապա Աբովյանի վրա կառուցվեցին նորանոր շենքեր։ Ի դեպ, Աբովյանի վրա կար հայկական երկու եկեղեցի՝ Պողոս-Պետրոսը և Կաթողիկեն։ Այժմ Պողոս-Պետրոս եկեղեցու տեղում կանգնած է «Մոսկվա» կինոթատրոնը, իսկ Կաթողիկեի տեղում՝ գիտությունների ակադեմիայի ինստիտուտների շենքը։

Քաղաքի կենտրոնում բարձրանում էր ռուսաց եկեղեցու մեծ շենքը. այժմ նրա տեղում կանգնած է Ստեփան Շահումյանի արձանը։ Ռուսաց եկեղեցուց ներքև, դեպի արևմուտք, գտնվում էր հռչակավոր Ղանթարը, որը տուփաշեն էր և ուներ բազմաթիվ մուտքեր. դա քաղաքի ծածկած շուկան էր։ Այդ շուկան Ղանթար էր կոչվում, որովհետև նրա ներսում կար մի մեծ կշեռք (ղանթար), որի վրա կշռում էին բարձր սայլերը՝ եզներով։ Ղանթարի տեղում այժմ փռված է Կիրովի անվան մանկական գողտրիկ այգին։

Երկրորդ շուկան «Ղասաբ-խանան» էր. այսպես էր կոչվում, որովհետև այնտեղ էին կենտրոնացած մսավաճառ խանութները։ Բացի այդ, կային նաև մրգեղենի խանութներ, մի քանի ճաշարաններ ու փռեր։ Շուկայի ներքևի մասում տեղավորված էին դագաղի արհեստանոցները, դագաղագործությունը արագորեն զարգացավ դաշնակցության տիրապետության օրոք...

1932 թվականին Երևանի քաղխորհրդի նախագահ ընտրվեց Արամայիս Երզնկյանը։ Նա իր աշխատանքները սկսեց հին Երևանը քանդելով. դրա համար էլ, մտերմական շրջաններում նրան «Արամայիս քանդիչ» էին ասում։ Նա իր առաջին աշխատանքն սկսեց «Ղասաբ-խանայից»։ Այժմ «Ղասաբ-խանայի» տեղում կանգնած են «Սևան» հյուրանոցի և Արդարադատության մինիստրության շենքերը։

Քաղաքի հյուսիսային կողմում, Կոնդից վերև, գտնվում էր «Կողեր» կոչվող գերեզմանոցը, որի տեղում այժմ տարածված են Բարեկամության փողոցի վերնամասը և Պուշկինի փողոցը։ Քաղաքի հարավային կողմում գտնվում էին «Մլեր» և ռուսաց գերեզմանոցները։ Այժմ նրանց տեղում փռված է Կոմիտասի անվան զբոսայգին։

1934 թվականին տեղի ունեցավ գրքի պալատի (Հայպետհրատի) շենքի հանդիսավոր հիմնադրումը։ Ես էլ տոմս ունեի հիմնադրման հանդեսին մասնակցելու համար։ Գարեգին Լևոնյանի հետ գնում էինք դեպի գրքի պալատի հիմնադրման վայրը, որի ճանապարհը անցնում էր խիտ այգիների միջով։ Գարեգին Լևոնյանը զժգոհությամբ ասաց.

— Տեղ չեն գտել, եկել այս հեռավոր վայրում են հիմնադրում գրքի պալատը։

Այժմ այդ «հեռավոր» անկյունը դարձել է քաղաքի բանուկ և կենտրոնական մասերից մեկը։

Հին Երևանի «քարտեզի» վրա չկային Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Չարենցի, Թումանյան, Խանջյան փողոցները։ Չկար նաև Լենինի պողոտան. նրա տեղում գտնվում էր նեղ և անբարեկարգ մի փողոց, որը ցարական կառավարության օրոք կոչվում էր «Արմյանսկայա ուլիցա»։

Հին Երևանում չկային նաև Աջափնյակի թաղամասը, Զեյթունը, Սարի թաղը, Թբիլիսիի ընդարձակ պողոտան... Այժմ

հպարտորեն փռվել, տարածվել է մեր նոր Երևանը՝ Սովետական Հայաստանի բաբախող սիրտը։

«Երեկոյան Երևան» թերթ,
29 մարտի 1965 թ.

Վահրամ Ալազան
Հայ գրող

* * *

Իմ աշխատանքային գործունեության մեջ այդպիսի բան չէր եղել—ջերմություն զգալ հենց այն պահից, երբ ոտքդ դնում ես նոր քաղաքի շեմին, ջերմություն զգալ արևից, ծաղիկներից, շողարձակ ժպիտներից հավանության, ոգևորության բուռն ծափերից, արվեստագետների, մամուլի ուշադրությունից։

Կա՞ ավելի հաճելի զգացում, քան այն, որ քայլում ես այն քաղաքի փողոցներով, որի հյուրն ես ու ճանաչում են քեզ, որ մեկ ամսում դարձել ես ոչ թե հյուր, այլ այդ քաղաքի բնակիչ, սիրել ես նրա վարդագույն տուֆը, ջինջ երկինքը, պատմական հուշարձանները։

«Սովետական Հայաստան» թերթ,
3 օգոստոսի 1965 թ.

Ա. Կաց
Ուդմուրտ արվեստագետ

* * *

Այն ամենը, ինչ տեսանք Հայաստանում, հոյակապ էր։ Եվ ո՞ր այցելուն իր զարմանքը չի հայտնի Երևանի ճարտարապետական կոթողները դիտելուց՝ Զվարթնոց, Գեղարդ և Գառնի այցելելուց հետո։ Դրանք անկրկնելի կոթողներ են, որ իրենց մեջ բյուրեղացնում են տաղանդավոր մի ժողովրդի ստեղծագործական միտքն ու հոգին։

«Երեկոյան Երևան» թերթ,
7 հունիսի, 1965 թ.

Ա. Յուրլով
Ռուս երաժշտագետ

* * *

Ինձ համար ամենամեծ բանը ժողովրդին ծառայելն է։ Հայաստանի, հայ ժողովրդի հաջողությունները ինձ հիացմունք են պատճառում։

1935 թվականից հետո Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունները վիթխարի են։ Ես շատ քաղաքներ եմ այցելել, բայց չգիտեմ աշխարհում մեկ ուրիշ քաղաք, որն այնքան արագ աճած, այնքան գեղեցիկ լինի, որքան Երևանը։

...Ես կսիրեմ Հայաստանը ինչպես որ նա կա՝ իր որդեգրած դաղափարներով, իր ընտրած ճանապարհով։

«Սովետական Հայաստան» թերթ,
1965 թ.

Վիլյամ Սարոյան
Հայ գրող, ԱՄՆ

* * *

Ինձ համար ամենահմայիչը երևանյան գիշերներն են այս աննման քաղաքի, որ զարնանային թարմությամբ փռվել են Արարատյան դաշտում։

Ես սիրում եմ Երևանը, սիրում եմ հայ ժողովրդին։

Ձեր քաղաքի զարկերակներում հիմա խփում է նաև Ալեք-

տանդր Մելիք-Փաշաևի սիրտը, մի արվեստագետի, որի համար Հայրենի հողը սուրբ էր ու նվիրական։

Հիմա, տասնօրյակի այս օրերին, հյուրընկալվելով Հայաստանում, ես սիրով եմ երգում Խաչատրյանի, Մելիք-Փաշաևի, Լիսիցյանի, Զարուհի Դոլուխանյանի, հայրենակիցների համար, երգում եմ նորից հանդիպելու հույսը սրտումս, նորից Երևանում երգելու ցանկությամբ։

«Սովետական Հայաստան» թերթ,
5 հունիսի, 1965 թ.

Իվան Պետրով
Ռուս երգիչ
ՍՍՀՄ ժող. արտիստ

* * *

1945 թվականին Երևանում փաստորեն սկիզբ դրվեց մեր բալետային ինքնուրույն կյանքին։ Մեզ առաջին ծափահարողները եղան երևանցիները։ Երևանում ունեցած առաջին ելույթից անցել է 20 տարի։ Բայց երբեք չենք մոռանա մեր առաջին, դեռևս վեհերոտ ելույթները երևանյան բեմում։

Տարիներ անց մենք նորից եղանք Երևանում։ Որքան էր փոխվել քաղաքը, մեծացել, կառուցվել էին նոր շենքեր. գրեթե անճանաչելի էր դարձել Երևանը։ Սակայն մեր հիշողության մեջ ամուր տպավորվել էին պատանեկան տարիների Երևանը, առաջին այցելությունը, առաջին հանդիպումները։

«Սովետական Հայաստան» թերթ,
27 հուլիսի, 1965 թ.

Ռաիսա Ստեպչկովա
ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի

* * *

Չնայած ձմեռային եղանակին, ինձ վրա չերմ տպավորություն թողեց Երևանը։ Ես համոզվեցի, որ այն միայն ոսկի աշնան օրերին չէ, որ գեղեցիկ և հմայիչ է։ Այժմ էլ գեղագետի աչքերը կարող են նկատել հայ ճարտարապետության վսեմ դիմագծերը, որոնք չեն նսեմացել նույնիսկ ձմռան պայմաններում։

«Երեկոյան Երևան» թերթ,
10 փետրվարի, 1965 թ.

Աննա Անգելովա
Ռուս երգչուհի

* * *

Արարատի աչք շոյող պատկերը, Սևանի լազուր ջրերի մեղմ ծփանքը, ձեր գեղեցիկ մայրաքաղաքը իմ սիրտը լցրին անսահման ուրախությամբ։ Ըստ իս, Հայաստանում լինելը նման է կյանքում մի շատ բան կորցնելուն։

«Երեկոյան Երևան» թերթ,
29 հունիսի 1965 թ.

Մարիոն Ֆրանկ
Կանադացի լուսարող

* * *

Այն, ինչ տեսա Հայաստանում, ֆանտաստիկական է։ Ձեր հանրապետությունը վիթխարի առաջադիմության է հասել բոլոր ասպարեզներում։ Իմ առաջին այցելությունից հետո անցած տարիների ընթացքում Երևանը անճանաչելիորեն փոխվել է։ Ուզում եմ կրկնել մեծ Նանսենի 1925 թվականին արտասանած խոսքերը. «Միակ վայրը, որտեղ ներկայումս

կարելի է տեղավորել հայ գաղթականներին, Սովետական Հայաստանն է»։

Ես ողջունում եմ ձեր հայրենակիցների՝ Սովետական Հայաստան վերադառնալու ձգտումը։ Նրանք միայն այստեղ կարող են մասնակցել հայ ժողովրդի խաղաղ, ստեղծարար կյանքին։

«Սովետական Հայաստան» թերթ,
9 փետրվարի, 1965 թ.

Ռ. Ֆարբեկ
Նորվեգացի հասարակական գործիչ

* * *

Երևանում, ուր եկել ես պապերուդ հողին վրա օտարի մը պես կզգաս, որ հայ հոգին կհետապնդե քեզ, ուր ալ երթաս և որքան ալ զգայարաններդ խորթացած ըլլան ուրիշ երկիրներու տակ, ան կփորձե քեզ թարմացնել ամեն մեկ քայլիդ։ Մտիր պապերուդ ոստանի թանգարանները, փորձե շոշափել դարերը, որոնք շարված են դարակներու մեջ՝ իրենց փառքը պատմելու համար այցելուներուն, որպեսզի ամոթով, բայց և հպարտությամբ լեցվիս դուն. մտիր Մատենադարան, դիտե ինչպես մարդիկ երբեմն քամել են իրենց միտքն ու աչքերի լույսը, վտիտ մոմի մը ներքո, որպեսզի իմաստության կայծ և գեղեցկության գոհարներ հանձնեն իրենց հաջորդներուն, և փորձե, եթե կրնաս, ծունկի չգալ դուն պահ մը։

Որքան հուզիչ ողջագուրումներու ականատես կըլլա Լենինի հրապարակը, հոն, ուր մեր նոր մայրաքաղաքը իր սիրտը նորեկներուն կբանա օրվա բոլոր ժամերուն, և ուր հինհին ծանոթներ ու հարազատներ կուգան զրկախառնիլ իրենց

հուշերն ու կարոտները, պատմել տասնյակ տարիներու խորթ հացին մասին, զոր ստիպվեր էին ծամել օտար հողում։

«Հայրենիքի ձայն»
շաբաթաթերթ, 3 ապրիլի 1966 թ.

Հակոբ Սիրունի
Ռումինահայ
պատմաբան-հայագետ

* * *

Շատ հին է Հայաստանի մայրաքաղաք Երևանը։ Եվ այսօր մի հսկայական վերակառուցման հիմքն է դրված, էլեկտրական կայաններով, արդյունաբերական ձեռնարկություններով, զանազան կազմակերպություններով և ինստիտուտներով։ Որպես մշակութային կենտրոն, Երևանն ունի ձեռագրերի մի հավաքածու, որը համաշխարհային համբավ ունի։

«Գրական թերթ», 1966 թ.

Պոլ Թոմսոն,
Դանիացի լրագրող

* * *

Երևանում ինձ վրա մեծ տպավորություն թողեց Մատենադարանը։ Այստեղ ես տեսա հայ ժողովրդի մեծահարուստ մշակույթի կենդանի վկաները։ Այսպիսի մշակույթ և դիտություն ունեցող ժողովրդին չի կարելի փոքր ասել։ Ով ծանոթ է համաշխարհային մշակույթի ու դիտության ասպարեզում հայ ժողովրդի մատուցած ծառայություններին, նրա լեզուն չի բռնում «փոքր» բառը արտասանել հայ ժողովրդի հանդեպ։ Յուրաքանչյուր մարդ, ով իրեն կրթված է համարում, պարտավոր է գլխարկը հանել այսպիսի մշակույթ ունեցող

ժողովրդի առջև։ Այս համեստ, բայց իմաստուն ժողովուրդը, որը մշտապես երիտասարդ է մնացել, աշխարհին տալիս է այնպիսի վիթխարի դեմքեր, ինչպիսիք տալիս են մեծ ժողովուրդները։

«Սովետական Հայաստան» թերթ,
29 նոյեմբերի 1966 թ.

Իգոր Վիտզինոս
Լրագրող, ԳՖՀ

* * *

Հիշում եմ, թե ինչպես առաջին անգամ տեսնելով Հայաստանի հոյակապ լեռնաշխարհի վեհությունը և ծանոթանալով այդ լեռներն ու հովիտները այգեստանի վերափոխող անխոնջ մարդկանց հետ, ես չկարողացա հիացմունքով չբացականչել.

Ձորերի մեջ անդնդախոր
Ու լեռների գերդաստանում,
Որպես հրաշք, որպես խնձոր
Շողշողում է Հայաստանը։

Հուսով եմ, որ բարեկամության լուսաշող ճանապարհով արևավառ մայրաքաղաք՝ տուֆակերտ Երևան կգան ռուս երիտասարդ գրողներն ու բանաստեղծները, որպեսզի հայ բարեկամների հետ հաղորդակից լինեն հինավուրց ու հավերժ երիտասարդ երկրի, նրա մայրաքաղաքի հրաշալիքներին և ստանան անհատնում տպավորություններ, որոնցից ծնունդ են առնում բանաստեղծություններ ու պատմվածքներ։

«Սովետական Հայաստան» թերթ,
13 մարտի 1966 թ.

Նիկոլայ Տիխոնով
Ռուս բանաստեղծ

* * *

Ճապոնացի հայտնի նկարիչներ Իրի և Տոսիկո Մարակկիները եղել են Հայաստանում։ Իրենց ստացած տպավորությունները նրանք «Նիհոն-Նո Կոէ» («Ճապոնիայի ձայն») թերթի միջոցով հաղորդել են նաև ճապոն ընթերցողներին։

«Մենք ավտոմեքենայով Թբիլիսիից Երևան հասանք ութ ժամում։ Ճանապարհին տեսանք Սևանա լիճը, որ Հայաստանի ամենաաչքի ընկնող տեսարժան վայրերից մեկն է։ Անմոռաց է երեկոյան երկինքը։ Արշալույսին այն նուրբ վարդագույն է, սաղարթաշող, մայրամուտին՝ մանիշակագույն. ծիծեռնակներ են ճախրում այդ մանիշակագույն երկնքում, և նրա միջից մխրճվում է փառահեղ Արարատը... Փոքր Արարատը մեր Ֆուձիյամայի ճշգրիտ կրկնօրինակն է։

Նրանից աջ մեծ Արարատն է՝ ավելի քան 5 հազար մետր բարձրությամբ։ Լեռները շարունակ կերպարանափոխվում են։ Նրանցից մեկն ու մեկը մերթ սկսվում է նմանվել կնոջ, մերթ՝ ինչ-որ երևակայական էակի։ Վեհափառ այս լեռները որոշակի ինքնատիպություն ու գեղեցկություն են տալիս Երևանի բնանկարին։

Լեգենդը պատմում է, որ հենց Արարատի լանջին է ափ դուրս եկել Նոյի տապանը։

«Ճապոնական Ֆուձիյաման և հայկական Արարատը երբեք չեն կարող հանդիպել, բայց ահա մենք-դուք հեռավոր Ճապոնիայից, ես՝ Հայաստանից, բախտ ունեցանք կրկին հանդիպելու»—այսպիսի ջերմ խոսքերով, արցունքն աչքերին ողջունեց մեզ Երևանում քանդակագործուհի Ռուզաննան, որ անցյալ տարվա աշնանը Ճապոնիայում էր։ Հիանալի խոսքեր

հին գրանք՝ արտասանված մի մարդու շուրթերով, որ ծնունդն է հնագարյան մի երկրի, ուր գիր ու գրականություն է ստեղծվել 1600 տարի առաջ»։

«Երեկոյան Երևան» թերթ,
4 սեպտեմբերի 1966 թ.

Իրի և Տոսիկո
Ճապոնացի նկարիչներ

* * *

2750 տարեկան է Երևանը։ Այն, ինչպես հայտնաբերված սեպագիր արձանագրությունն է ծանուցում, հիմնադրվել է Մենուայի որդի Արգիշտիի օրոք՝ 782 թվականին մեր թվականությունից առաջ, իբրև քաղաք Էրեբունի։

Սակայն թող տարօրինակ չթվա, եթե ասենք, որ Երևանը 40—50 տարեկան է։ Չէ՞ որ այն ամենը, ինչ այժմ Երևան է կոչվում՝ Լենինի հոյակերտ հրապարակը, քաղաքի զեղեցիկ կոթողները, լավագույն բնակելի տները, կամուրջներն ու պուրակները ունեն ընդամենը 20—30 տարվա պատմություն, դրանց որոշ մասը՝ 5—10 տարվա կենսագրություն։

Եվ Երևանը, հին Երևանը ոչ այնքան մեր նախնին է, որքան հասակակիցը։ Իսկ նրանց համար, ովքեր կերտել են տուֆաքանդակ շենքերը, Երևանը որդի կաղեր։ Ամեն մի, նույնիսկ երիտասարդ քաղաքում կարելի է ցույց տալ հինը և նորը, այսօրվանը և երեկվանը։ Երևանում դա դժվար է, գրեթե անհնար։ Դարեր շարունակ պատերազմների թատերաբեմ դարձած այս հողի վրա ոչնչացվել են գրեթե բոլոր միջնադարյան քարե հուշարձանները... Մնացել են միայն այդ հին, շատ հին ամրոցները։

Դեռ մինչև վերջերս՝ 20-րդ դարի սկզբներին հայ արդյունաբերողները, ունևորները, գրողներն ու արվեստի գործիչները ապրում էին մեծ մասամբ Պոլսում, Բաքվում, Թիֆլիսում, Նոր Նախիջևանում, Պետերբուրգում ու Փարիզում։ Իսկ Երևանը պարսից խանի խուլ, հետամնաց նստավայրը, հետո էլ ցարական նահանգների խղճուկ կիսաքաղաքներից էր համարվում։

Կավաշեն տներ, հողե կտուրներով, կավակերտ հրապարակներ, նեղլիկ փողոցներ,—այսպիսին էր Երևանը՝ խանությունների և իջևանատների, եկեղեցիների և մզկիթների այդ գյուղաքաղաքը իր 10—11 հազար բնակիչներով։

Բավական է անցնել այսօրվա Երևանի լայնահուն պողոտաներով, տեսնել, տուֆակերտ և բազալտակերտ շենքերը, հրաշալի կոթողները, համոզվելու համար, որ Երևանը՝ հինավուրց այդ քաղաքը, իրոք, նոր քաղաք է։

Երբեմնի կավակերտ, խուլ քաղաքիկը այժմ դարձել է բարձր զարգացած արդյունաբերության և գիտության, էլեկտրոնային արագացուցիչի քաղաք, տիեզերանավերի համար կերճշգրիտ սարքեր թողարկող քաղաք, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ու լազերի, աստղաֆիզիկայի ու տիեզերական ճառագայթների ուսումնասիրության քաղաք։

«Կոմսոմոլց» թերթ, 1966 թ.

Գեորգ Էմին
Սովետահայ բանաստեղծ

* * *

Հայաստանին, նրա ժողովրդին մենք ծանոթ էինք դեռ այցելությունից առաջ՝ գրքերից, երաժշտությունից, երգերից։ Ձեր սքանչելի երկրի հետ, նրա պատմական հոյակապ հու-

ջարձանների հետ անմիջական շփումը մեզ թույլ տվեց ավելի լավ և խոր ճանաչել Հայաստանը։ Բայց ամենահրաշալին, որ մենք այստեղ տեսանք, մարդիկ են, սրտաբաց, աշխատասեր, տաղանդավոր մարդիկ, որոնց ձեռքերով ստեղծվում են հոգևոր նյութական արժեքներ, ձեր վերածնված հայրենիքի ամբողջ հարստությունը։

Բարեկամների շրջանում անցկացրած վեց օրերը մեր հիշողությունից երբեք չեն ջնջվի։ Մեզ հետ տանում ենք ամենաթանկ հիշողությունները Երևանի, Լենինականի և Կիրովականի մարդկանց հետ ունեցած հանդիպումներից, որոնք մեզ մեծ պատվի արժանացրին, ընտրելով իրենց քաղաքների պատվավոր բնակիչներ։

Մենք վկա եղանք, թե ինչպիսի բարեկամությամբ են ապրում Հայաստանում բնակվող հայերը, ռուսները և մյուս ազգերի ներկայացուցիչները։ Մենք տեսանք սովետական իշխանության տարիներին ձեր հանրապետությունում կատարված հիանալի վերափոխումները, տեսանք, թե հայ ժողովուրդը ինչ հաջողությունների է հասել փառապանծ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։

Մենք արևաշող Հայաստանի աշխատավորներին մաղթում ենք նոր, մեծ հաջողություններ աշխատանքում, երջանկություն կյանքում։

Շնորհակալություն, բարեկամներ, ամեն ինչի համար։

«Սովետական Հայաստան»,
1966 թ.

Վ. Տերեշկովա, Ա. Նիկոլան
Սովետական Միության հերոսներ, ՍՍՀՄ տիեզերագնացօդաչուներ

* * *

Տեսա հին Երևանը և նոր Երևանը։ Հակադրությունն այնքան մեծ է, այնքան շշմեցնող, որ չկրցա հասկանալ, թե կարճ ժամանակի մեջ ինչպես այսքան փոխվեցավ, այսքան ծաղկեցավ ավերակ Հայաստանը։ Ինձի զարմանք ու հիացում պատճառեցին իմ տեսած գործարանները, որոնց արտադրած մեքենաները, սարքերը և գործիքները ամբողջ աշխարհի մեջ մեծ ճանաչում գտած են։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 1966 թ.

Նիգար Խալիլ
Արաբ թարգմանիչ

* * *

1926 թվականին ես այցելել էի Երևան. իմ սիրտը ընդհանուր լեզու էր գտել արևավառ սարալանջերի, նրա քարերի ու գետերի հետ, ծանոթացել էի նրա հնադարյան ճարտարապետությանը, որը արևելա-եվրոպական ճարտարապետության ընդհանուր զարգացման թանկարժեք օղակն է։ Հիշողությանս մեջ մեխվել էին հայկական երգի մեղեդիները։ Ես աշխատում էի թափանցել պատմական այդ մեծ թատերաբեմի խորքերը և յուրացնել այն ոճը, որ այն ժամանակ սկսել էր կենդանություն պարգևել հայ ժողովրդին և նրան հավատ ներշնչել ապագայի աննախընթաց շինարարության համար։

Երբ ինձ ասում են Հայաստան, իմ հոգում ծնվում է ինչոր շատ հարազատ մի բան, որ նվիրական նստվածք է տվել սրտիս խորքերում։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 1966 թ.

Սերգեյ Շերվինսկի
Ռուս գրող

* * *

Ինչպես սրտերը վեհացնող երգերի հնչյուններ, զուլալ սահանքի ջուր է Երևանի ջուրը։

Ինչպես զգլխիչ զեփյուռների շոյանքը, հոգիները զովացնող ջուր է Երևանի ջուրը։

Ինչպես մայրական համբույրը, կենսապարգև ջուր է Երևանի ջուրը։

Ինչպես բոպե առ բոպե գեղեցկացող Երևանը, հմայքներով արբեցնող ջուր է Երևանի ջուրը։

Ինչպես աշխարհում աննման իմ հայրենիքը, անմահական ջուր է Երևանի ջուրը։

«Երեկոյան Երևան» թերթ,
31 հոկտեմբերի 1966 թ.

Սղապի Համբարձումյան
Հայ լրագրող

* * *

Առավոտ էր. արև. Երևանն ինձ թվաց ավելի երիտասարդ՝ իր նուրբ վարդագույն տներով և Լենինի հրապարակի հոյակապ ճարտարապետական անսամբլով, որը գիշերվա ընթացքում լվացվել էր անձրևից և այժմ ողողված էր արևի առաջին ճառագայթներով։

Ես տեսա սիրով ձևավորված ժամանակակից թաղամասեր, և նույնքան սիրով, խնամքով պահպանվող ալեհեր հնության հուշարձաններ, որոնք պարունակում են տաղանդավոր հայ ժողովրդի պատմությունը։

«Երեկոյան Երևան» թերթ,
19 մայիսի, 1966 թ.,

Վիկտոր Մելնիկ
Ուկրաինացի թատերական
գործիչ

* * *

Մեզանից յուրաքանչյուրը իր հոգու աչքերով է տեսնում, ընկալում Երևանը։ Մեկը նրան քարե վարդերի երգ է համարում, մյուսը՝ դրախտային ջրի ակունք, գիտության օջախ, սիրահարների կանաչ պուրակ։ Ինձ համար Երևանը, դրանց հետ միասին, և, ամենից առաջ, պետականությունն է կորուսված փառքի ու ինքնուրույնության վերագտնված իրականության։ 3 հազար տարվա կենդանի պատմություն է Երևանն ինձ համար։ Դեռևս մեր թվականությունից առաջ, 15—12-րդ դարերում մեր գարնան ու պտղաբերության էր աստծո տաճարն ու արձանը կար Երևանում, որին երկրպագելու և զոհեր մատուցելու էին գալիս Հյուսիսային Վանա ծովի ավազանից ու Եփրատի ափերից անգամ։

Ինձ համար հերոսական, պղնձե մատյան է Երևանը։ Ապա, Զորագյուղի ժայռերին կանգնեցեք ու նայեցեք Հրազդանի կիրճին։ Այստեղ Երևանն իր անունը հավիտենական փառքով պսակեց 1724 թվականի գարնանը, եղբայր ու կին զինվոր ու զենք դարձան, 60 օր ճակատամարտ տվին թուրքական 150-հազարանոց բանակներին։ Եվ երբ ես քայլում եմ այսօրվա հսկա Երևանի պողոտաներով, դարերի մշուշից տեսնում եմ երևանցի քաջարիներին, որոնք անհաշտ մնալով կերության ու ստրկության հետ, քաջության ու հայրենասիրության առասպելներով պսակեցին իրենց սրբազան շիրիմները։

Եվ էլի ու նորից դարեր ու ժամանակներ...

Ահա 1827 թվականի հոկտեմբերի մեկը, երբ Հայ կամավորական ջոկատները, ռուս զինվորների հետ, գրավում են

Երևանի բերդը և Երևանից կտրում պարսիկների ծանր կըռունկները։

Ապա 1920 թվական, ապա պետական դրոշակ մի հին շենքի գլխին՝ կարմիր բոցով և ապագայի պայծառ լույսով։ Երևանն արդեն սովետական է։ Հայաստանը պիտի ապրի։

Երևանը բոլոր, բոլոր հայերիս կյանքն է, սիրտն ու թեվերը։ Անխափան է նրա ճախրանքը, անմար նրա քարքարոտ հողի լույսը։

Առատ անենք այդ լույսը և ցնծությամբ ասենք.

—Ապրիր արևի ու աստղերի հետ, հավիտյան մեր սրտերի սիրտ, մեր Երևան...

Հայաստանում ինձ ամենից ավելի հրացնողը Երևանն է։ Նոր Երևանը, բարեշեն, գեղեցիկ մի մայրաքաղաք։ Ոչ միայն հայրենասիրական զգացմունքները, այլ նաև աշխարհ տեսած մարդու զգաստ գիտակցությունը ինձ թելադրում է Երևանի կառույցների մեջ տեսնելու հայ ժողովրդի շինարարական անսպառ եռանդը, ճարտարապետական հանճարը։

Նոր Երևանը իմ ժողովրդի ստեղծագործ հոգու փայլուն արգասիքն է։

Վենինական «Բանվոր» թերթ,
27 հոկտեմբերի 1966 թ.

Գրիգոր Նելոյան
Իտալահայ նկարիչ

* * *

Առաջին անգամ Հայաստան եկած եմ 10 տարի առաջ։ Երբ այս անգամ Երևան մտա, աչքերուս չհավատացի. մի՞թե սա իմ տեսած Երևանն է, մտածեցի։ Շատ փոխված է Երևանի դեմքը։ Նոր փողոցներ, նոր շենքեր, նոր պուրակներ, մարդիկ ալ փոխված են, լավ կհագնվին, շատ ավելի ինքնավստահ կքալեն ու հավատքով կնային, գիտեն, թե ինչու ճամփա ելած են, ուր կերթան և ուր պիտի հասնին։ Զգիտցողը երբեք չըսեր, որ փողոցներեն քալող այս բազմահարյուր առույգ երիտասարդ-երիտասարդուհիները 50 տարի առաջ ահավոր ողբերգության ապրած, թշվառության ճամփաներով անցած ժողովրդի մը ժառանգորդներն են։

«Արմենիա» հյուրանոցի
տպավորությունների մատյան,
1966 թ.

Այցելու՝

* * *

Ծիծեռնակաբերդ։ Այստեղ երբ փորվում էր 1915 թվականի հայկական եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի հիմքը, էքսկավատորը հայտնաբերեց դամբարանափոսեր։ Լույս աշխարհ ելան կճուճներ։

Այդ կճուճները, որ գունազարդ խեցեղենի լավագույն նմուշներ են, լայն տարածում են ունեցել ոչ միայն Հայաստանում, Անդրկովկասում և Սովետական Միության ուրիշ վայրերում, այլև ուրիշ շատ երկրներում, այդ թվում՝ Միջագետքում, Իսպանիայում, Փոքր-Ասիայում և Հարավային Ամերիկայում։ Դամբարանափոսերն ու դրանցից հանված կճուճները վկայում են, որ շուրջ 3800 տարի առաջ մեր նախնիները պատռել են բազալտե ժայռերի կուրծքը և իրենց սիրելի ննջեցյալների համար գերեզմաններ պատրաստել։ Այնպես որ, մեծ եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնող այս հուշարձանը բարձրացել է մեր դարավոր նախնիների շիրմաթմբերի վրա։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 3 ապրիլի 1966 թ.

Հարությունն Մնացականյան
Հայ պատմաբան

* * *

Գեղաքանդակ քո շենքերն են բարձրացել,
Քարիդ անդամ շունչ են տվել, Երևան,
Հայոց հողի ջահել սիրտն ես դու դարձել,
Լցվել հազար բերք ու երգով, Երևան։
Հայոց հոգու գանձերով վառ, Երևան,
Դու կմնաս հավետ անմար, Երևան։

«Երգարան», 1966 թ.
Ք. Երևան

Գուսան Աշոտ

* * *

Որ հավետ ապրի աշխարհում
Օ, Նորք, քո ցնորքը բուրյան,—
Այս թռիչքը մեր լայնահուն
Եվ բարբառը այս Նաիրյան։

Ե. Չարենց
Սովետահայ բանաստեղծ

* * *

Նայիր հիմա, անցորդ, դու լավ նայիր հիմա,
Քարե այս պատի մոտ դանդաղեցրու քայլդ։
Սանդուղքներ կան այստեղ, և այնտեղից ահա
Երևում է Մասսի ադամանդյա փայլը։
Եվ վաղ առավոտից լույսերի մեջ ահա,
Ուր աղբյուրի սիրտն իր երգի մեջ հալվում է—

Բանաստեղծի բեկված ճակատագրի առաջ
Կենսակոմի քարտուղարը գլխարկը հանում է։

«Հայրենիքի ձայն»,
16 օգոստոսի, 1967 թ.

Ալեքսանդր Գիտովիչ
Ռուս գրող, (Երևանում Չարենցի
արձանի հիմնաքարը
դնելու առթիվ)

* * *

Մեր պատկերացմամբ կոմունիզմը ավետաբեր թռչուն է, լուրեր բերող։ Այժմ Երևանի վրա հարյուրավոր աշտարակային կռունկներ կան։ Նրանք շատ են հիշեցնում կռունկներին։ Եվ այդ կռունկները մեզ՝ արտասահմանում ապրող հայերիս պատմում են արդեն բոլորովին այլ բանի մասին՝ բնակելի տների, դպրոցների, գիտական և մշակութային օջախների կառուցման մասին, ժողովրդի երջանկության մասին։

«Արմենիա» հյուրանոցի տպավորությունների մատյան, 1967 թ.

Շարլ Դաղայան
Սորբոնի համալսարանի
համեմատական քերականության
ինստիտուտի դիրեկտոր

* * *

Այս օրերում, երբ մենք կքալենք Երևանի լայն ու ծառազարդ պողոտաներեն, երբ կտեսնենք այդ անրնակայելի կառուցումներն ու նվաճումները, որոնք տեղի կունենան օրը-օրին, մեր հոգիին մեջ կկատարվի զարմանալի երևույթ մը, որ կհիշեցնե Արշակ թագավորին այն պատմությունը, որուն համաձայն հայ սեղ արքան Շապուհ թագավորին պալատին մեջ տկար ու խեղճ կզդար ինքզինքը, երբ կկոխեր պարսկական հողի վրա, իսկ ըմբոստ ու անկախ՝ երբ կայցելեր հայկական հողի բաժինը։

Երևանի համալսարանն իր բազմապիսի բաժանմունքներով կրնա մրցիլ աշխարհի լավագույն համալսարաններու հետ...

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 4 հոկտեմբերի 1967 թ.

Հայր Եփրեմ
Տեր-Ղազարյան
Սուրբ Ղազար կղզում լույս տեսնող «Բազմավեպ» հանդեսի խմբագիր

* * *

Երկու անգամ լինելով Երևանում, ես հայտնագործեցի, որ Երևանը չնայած իր հնագույն պատմությանը, իր տեսքով լրիվ սովետական քաղաք է։ Այսօր ես իրականացած եմ տեսնում բազմաթիվ մտահղացումներ, որոնց մասին ճարտարապետն ասում էր ինձ։ Այն, ինչ 3 տարի առաջ գոյություն ուներ նրա ձեռքերի շարժումների և երևակայության մեջ միայն, այսօր քարեղեն մարմին է դարձել, և նրա մեջ մարդիկ են ապրում։

Մեքսիկայում հայ ճարտարապետների մասին կպատմեմ, կասեմ, որ այդ ժողովրդի արարչագործ ձգտումն է որոշում նրա բոլոր շարժումները, կասեմ, որ նրա 5000-ամյա մշակույթը սիրով են պահպանում այսօրվա կառուցողները, որ սկսած Ուրարտուից և Գառնիից, եղել է մշակութային աճի զարգացման միասնական ընթացք, որը բերել է վարդագույն քարե ծաղիկ՝ Երևանը։

«Գրական թերթ»
9 հունվարի 1967 թ.

Էրակլիո Սեպեդա
Մեքսիկացի գրող

* * *

«Արուս». թերևս երկու տասնամյակ առաջ այս անունը կանացի Արուսյակ, Արուս, Վեներա անուններից դենը չանցներ։

Բայց այսօր «Արուսը» աշխարհին հայտնի է 2750-ամյա Երևանի, նրա գիտնականների խիզախ մտքի հետ միահյուսված։

Երևանի էլեկտրոնային օղակաձև արագացուցիչը՝ «Արուսը» արտաքինից նման է Զվարթնոցին. պատերը, որոնց հաստությունը երեք մետր է, հիշեցնում են միջնադարյան ամրոցների պարիսպները։ Երևանի արագացուցիչը վայրկյանում տալիս է հազար միլիարդ էլեկտրոն, մինչև վեց միլիարդ էլեկտրոն-վոլտ էներգիայով։ Գիտնականը նշել է.

«Արուսը» նոր, մեծ բազա է տարրական մասնիկների և ատոմային միջուկների բնույթի հետազոտման համար։ Կասկած չկա, որ այստեղ կատարվելիք գիտական հետազոտությունները նոր, խոշոր ավանդ կլինեն սովետական գիտության մեջ։ Արագացուցիչների համաշխարհային քարտեզում Երևանի արագացուցիչը իր արժանի տեղն է գրավում։

Վերջերս բարձր էներգիաների արագացուցիչների հարցերին նվիրված միջազգային կոնֆերանսում, որն այս տարվա սեպտեմբերին գումարվեց Քեմբրիջում (ԱՄՆ), ես զեկուցեցի Երևանի արագացուցիչների գործերի վիճակի մասին և պետք է ասեմ, որ ամբողջ աշխարհի գիտական հասարակայնու-

թյունը բուռն ծափահարություններով ընդունեց Հայաստանի դիտնականների հաջողությունը։

«Սովետական Հայաստան» թերթ,
27 հոկտեմբերի 1967 թ.

Արտեմ Ալիխանյան
ՍՍՀՄ Գիտությունների
ակադեմիայի թղթակից-անդամ

* * *

«Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»—սա հայերեն առաջին գրերով թարգմանված առաջին նախադասությունն է։ Աշխարհի մի քանի ազգերի թվում հայերն էլ հանճարեցին իրենց գիրը, որպես վահան ուծացման վտանգի, որպես սուր գոյատևման պայքարում, որպես ուղենիշ՝ իմաստությունը ճանաչելու, գիտության, հանճարի խոսքն իմանալու պատգամ։ Եվ հազար հինգ հարյուր ու ավելի տարիներ մեսրոպյան այդ լույսն ու պատգամը հայի շրթին է, էության մեջ, նրա հետ է իր պատմության բոլոր քառուղիներում, մինչև այսօր, երբ մոխիրների միջից հառնել է լուսե մի Հայաստան ու վարդագույն մի Երևան։

Քանաքեռ է կոչվում Երևանի հյուսիսային բարձունքը։ Ամեն հայ գիտե, որ այնտեղ է ծնվել իր աշխարհաբար գրականության հիմնադիրը, լուսավորիչը՝ Աբովյանը։ Քանաքեռն Արարատին է նայում, նրա հետ խոսում իր հին ու նոր խոսքը։ Հինը գարավոր է, դառն ու հանախ աններդաշնակ հայի խաղաղասեր ոգուն, աշխարհաշեն երազանքներին։ Նորը ուրիշ է. Քանաքեռը պահուստ չունի Արարատից, բաց ճակատով է նայում հայոց նահապետին, հպարտ է. նա իր ծոցում տեղ է տվել հայոց «Երազ»-ին, մի գործարանի,

որի ավտոմեքենաները սլանում են Հայաստանի ու Սովետական Միության մյուս հանրապետությունների ճանապարհներով։ Նա իր փեշերին փռել է հայոց ալյումինն արդյունահանող հսկայի շինությունները, որոնց արտադրանքը աշխարհի կապույտ երկնքով թռչող լուսաթև սավառնակների մարմին է դառնում. նա իր բազալտե լանջին կանգնեցրել է նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը, որ հոգամարդկության դեղն ու դեղամիջոցները... Քանաքեռն ասելիք շատ ունի, նա հավատարիմ է Մեսրոպյան պատգամին հազար հինգ հարյուր և ավելի տարիներ հետո էլ. նա իր կերծքում տուն է տվել Հայաստանի ակադեմիային և համալսարանի հաշվողական կենտրոնին, որ հայոց հանճարով մտածող-հաշվող մեքենաներ է ստեղծել ու ստեղծում է «Հրազդան», «Հրազդան-2», «Հրազդան-3», «Նաիրի» անուններով, շուտով էլ պատրաստ կլինի նորօրյա հայալեզու առաջին թարգմանիչ մեքենան։

Ինչպես հազար հինգ հարյուր և ավելի տարիներ առաջ հայոց գրերով հունարենից թարգմանվեց առաջին նախադասությունը, այդպես հազար ինը հարյուր վաթսունյոթ թվականի հունվարի տասնինին, ժամը տասն անց տասնհինգ րոպեին թարգմանող մեքենան ռուսերենից թարգմանեց առաջին փորձնական նախադասությունը՝ եթե այդ/այս կախվածություն տալ անալիտիկորեն, ապա կատացվի այսպիսի հավասարում.

* * *

Հիմա էլ Սովետական Հայաստանն աշխարհի մի քանի պետությունների թվում առաջիններից է, որ ունի հայ ժողո-

Վերդի լեզվի բառապաշարին ու քերականությանը ծառայող Թարգմանող մեքենա, հիմա էլ նրա որդիներն ու... նաև դուստրերը քայլում են իմաստնության դեռ չբացված ճամփաներով, որպեսզի ավելի հարստանա մայր գիտությունը, որպեսզի Հայաստանում լինի ավելի շատ լույս ու լուսավոր լինի ապագան։

«Մեքենական Թարգմանության հիմնական նպատակն է առաջին հերթին թարգմանել գիտա-տեխնիկական գրականություն։ Իսկ հետագայում մեքենան հետզհետե կընդլայնի իր հնարավորությունները։ Նա կթարգմանի ոչ միայն ռուսերենից, այլև անգլերենից և օտար այլ լեզուներից։ Էլեկտրոնային հաշվիչ մեքենան ի վիճակի է կատարելու մեքենական թարգմանություն, և կարելի է մշակել հայոց լեզվի քերականությունն ու բառապաշարը՝ մեքենային «սովորեցնելով» թարգմանել ռուսերենից հայերեն։

10—15 օրից մեքենան կխոսի իր ողջ կարողությամբ, կխոսի Երևանում շուտով գումարվող համաշխարհային նշանակություն ունեցող մեքենական թարգմանությանը նվիրված գիտաժողովում, որին մասնակցելու են ոչ միայն Սովետական Միության, այլև Անգլիայի, Ֆրանսիայի, ԳԴՀ-ի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի, ԱՄՆ-ի ու աշխարհի շատ ուրիշ երկրների խոշոր գիտնականներ՝ լեզվաբաններ և մաթեմատիկոսներ։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 19 մարտի 1967 թ.

Երևանում ստեղծված
Թարգմանական մեքենայի փորձարանի աշխատակիցներ

* * *

Լեհաստանում ասում են, թե լինել Երևանում և չտեսնել Մատենադարանը, դա նույնն է, ինչ որ՝ լինել Հռոմում և չտեսնել Պապին։ Բայց այնքան էլ մեծ դժբախտություն չէ Հռոմից մեկնել առանց Պապին տեսնելու, իսկ Մատենադարանը չտեսնել անհնարին է։

«Սովետական Հայաստան»
թերթ, 1967 թ.

Ռ. Դանիլովսկի
Լեհ լրագրող

* * *

Մի՞թե Երևանը 2750 տարեկան է, Բաբելոնի, Հռոմի հասակակիցը... Բայց չէ՞ որ չի երևում։

Եթե հետաքրքրվեք, Հայաստանի պատմության թանգարանում ձեզ ցույց կտան Սևանի ափից պեղված մի քանի սալ՝ սեպագիր նիշերով։ Այնտեղ հիշատակված է Էրեբունի բերդը, որ Ուրարտական թագավորն է կառուցել։ Իսկ վերջերս քաղաքի ծայրամասում պեղվել են նախքան մեր թվականության 8-րդ դարի այդ բերդի մնացորդները։ Ահա թե որքան հեռու է ձգվում քաղաքի պատմության թելը։

Բայց ի տարբերություն Թբիլիսիի, այդ թելը այստեղ չի երևում։ Քարե տարեգրության էջերը հրի են մատնված, ցաքուցրիվ են ու թաղված են հողի տակ... Մեր երկրի ամենահին քաղաքը առաջին հայացքից թվում է, թե գրեթե ամենաջահելն է։

Թափառելով անծանոթ փողոցներում, հայացքդ ակամայից ընկնում է նորակառույց շենքերի վրա։ Երևանում ես հանկարծ զգացի, որ հին տներ եմ փնտրում։ Սկզբում դա

ինձ առանձնապես չէր հաջողվում. ես զբոսնում էի մայրուղիներով...

Ասում են Երևանը Սովետական Միության ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է։ Ես դա ոչ կհաստատեմ, ոչ էլ կըժխտեմ։ Միայն մի բան կարող եմ ասել ամենավստահությամբ՝ ամենահաճելի ու ամենահետաքրքիր քաղաքներից մեկն է։ Իսկ Մատենադարա՞նը...

Անհրաժեշտ է լինել Մատենադարանում, պատկերացնելու, թե որքան մեծ է հայերի ավանդը մշակույթի համաշխարհային գանձարանում։ Այնտեղ հավաքված է այն ամենը, ինչ անվնաս է մնացել, ինչ փրկվել է վառվող գրադարաններից, դժվարությամբ պահպանվել փախուստի տարիներին։ Այնտեղ դուք կտեսնեք թվաբանական չորս գործողությունների՝ աշխարհում ամենահին աղյուսակը, աշխարհի երեսից վաղուց չքացած շատ ժողովուրդների այբուբեններ, իններորդ դարի հայկական ձեռագրեր, կոպիտ մշակված հորթի կաշվի վրա և Վենետիկում թղթի վրա տպագրված առաջին գրքերը (այդ քաղաքում հայ վարանդիները 1512 թվականին հիմնադրել են հայկական առաջին տպարանը)։ Այնտեղ դուք կիմանաք, որ դեռևս 15-րդ դարում հայ գիտնականները նկատել են բորբոսի բուժիչ հատկությունները և բանաձևել են նյութի պահպանման օրենքը։ Դուք կտեսնեք Աստվածաշունչը, որը հետագայում անվանվեց «Թարգմանությունների թագուհի» ֆրանսիացի գիտնական Լակրոզը հիացել է նրա տեքստի գեղեցկությամբ, ճշմարտությամբ, ճկունությամբ (անտիկ գրականության շատ ստեղծագործություններ կկորչեին անհետ, եթե չպահպանվեին նրանց հայկական թարգմանությունները)։

Մատենադարանի գանձերը անսահման են (միայն ձեռագրերի թիվը հասնում է տասը հազարի)։ Կան տեքստեր, որոնց դեռևս չի դիպել հետազոտողի ձեռքը։ Եվ մինչև այսօր էլ հայերը աշխարհի բոլոր ծայրերից Մատենադարան են ուղարկում աշխարհով մեկ ցրված հնություններ։

Ամենօրյա այցելուների համար բաց է այդ հարստությունների սոսկ չնչին մասը։ Ցուցահանդեսը մեծ չէ, բայց բավականին բազմազան է ընդհանուր պատկերը նկարագրելու համար։ Ես այնտեղ տեսա 12-րդ դարի շատ հետաքրքիր մի «ինքնահոս գրիչ», որ ապակուց է և գնդիկ ու անոթ ունի մելանի համար։ Տեսա թուրքական ֆիրմաններ, Ավիցեննայի, Ալիշեր Նավոիի ձեռագրերը, անձամբ Նապոլեոնի ձեռքով ստորագրված հրամանագիրը սպա Պիեռ Շամոին շքանշանով պարգևատրելու մասին... Տեսա երեսունչորս կիլոգրամանոց ձեռագիր, յուրաքանչյուր էջին գնացել է հորթի մի ամբողջական կաշի։ Ընդամենը յոթ հարյուր էջ է։ Հայ վարանդիները այդ գիրքը երկու մասի են բաժանել, որպեսզի վտանգի ծանր ժամին փրկեն այն։ Կեսն իրենց հետ փոխադրել են, մյուս մասը թաղել էրզրումում։ Այն գտել են ռուս սպաները։ Տեսա նաև ամենափոքրիկ ձեռագիրը. 15-րդ դարի գործ է, կշռում է ընդամենը տասնութ գրամ...

Բայց եթե հարցնեին, թե ամենից շատ ի՞նչն է ինձ այնտեղ զարմացրել, ես, թերևս, պատասխանեի՝ Թորոս Ռոսլինը։ Այդ վանական նկարիչը 1285 թվականին մանրանկարներով զարդարել է Կիլիկիայի Հեթում Բ-րդ թագավորի գրած «Ճաշոց»-ը։ Համարձակվում եմ ասել, որ աշխատանքը իր կենսունակությամբ, եթերային նրբությամբ զգալիորեն առաջ

է անցնում եվրոպական վերածննդից։ Ես զարմացել էի, տեսնելով ծավալի կիսաստվերային մոդելացումը և ռեֆլեքսները, որոնք շատ ավելի ուշ շրջանում են հաստատվել Արևմուտքի արվեստի մեջ։

Թորոս Ռոսլինի մանրանկարները կոլորիտային հազվադյուտ գեղեցկություն ունեն. հյութեղ գույները՝ ծիրանին, կապույտը, ոսկին համադրված են նուրբ մանուշակագույնի և կանաչավունի հետ։ Միջնադարյան դաժանության հոտն իսկ չկա։

«Անդրկովկասի գույները»,
Երևան, 1968 թ., էջ 144—146

Լեոնիդ Վոլինսկի
Ռուս գրող

* * *

Ուրիշ գինովության մը հպարտությունը կուտա մեզի գեղեցկությունը Երևանին, երբ դաշտերու շրջագայության կը հաջորդե քաղաքին շրջագայությունը։

Ո՞ր մեկուն տամ թվարկումիս առաջնությունը, Լենինի հրապարակի՞ն, որ բացօթյա հիասքանչ դահլիճ մըն է, որուն առաստաղը երկինքն է։ Բլրան մը կողին վրա ու լեռներու վեհափառին դիմաց շքեղորեն կառուցված Մատենադարանի՞ն, որ սրբավայրն է իմացական անմահության։ Լայնանիստ պողոտաներու ծաղկազարդ մայթերո՞ւն, որոնց գիշերային լույսերը տերևներու կանաչն մաղված, կուտան «Հազար ու մեկ գիշերներու» դյութական հմայքը։ Բազմաթիվ զբոսայգիներու կանաչի՞ն ու կառույցի հրապույրի՞ն, որոնց մեջ բացված վարդ մըն է Երևանը, թե՞ «Արա գեղեցիկ»-ներու և «Սպարտակ»-ներու արվեստագետ և մտավորական Երևանին, որ կուտա մեզի հայորեն ապրելու գիտակցությունը։

Ո՞ր մեկուն տամ թվարկումիս առաջնությունը, երբ հոգեվմայլ ու գեղեցիկ է ամեն ինչ հայրենիքիս մեջ»։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 12 հուլիսի, 1967 թ.

Զարեհ Մուրաֆյան
Ֆրանսահայ նկարիչ

* * *

Եթե գիտակների համար Երևանի ճարտարապետությունը և քաղաքի հատակագիծը մասնագիտական արժեք են ներկայացնում, ապա սովորական այցելուների համար դրանք հնչում են որպես պոեզիա։

...Որ ուղղությամբ ուզում ես գնա՝ դեպի աշխարհահռչակ Մատենադարան, թե դեպի օդանավակայան, կամ երկաթուղու կայարան, մի բան չես կարող չնկատել, դա ազգային ավանդույթի և մոդեռն ոճի տպավորիչ ու անմոռաց, օրգանական զուգորդումն է, որպիսին չես հանդիպի աշխարհում ոչ մի տեղ։

Երևանը, թերևս, աշխարհի ո՛չ միայն ամենահյուրասեր մայրաքաղաքն է։ Նրա քնակչությունը նաև գուցե ամենաջանասերն է մշակույթի և կրթության ասպարեզում։ Ամեն երեկո լեփ-լեցուն թատրոնները, քառասուն ամբիոն ունեցող համալսարանը, տեխնիկական և մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունները, միշտ մարդաշատ մշակույթի պալատները դրա պերճախոս վկայությունն են... Երևանը Սովետական Միության, ճիշտ է, փոքրիկ, բայց իր մարդկանց սիրալիրությամբ ու հյուրընկալությամբ հատկապես

սիրարժան հանրապետություններից մեկի մայրաքաղաքն է։

Ով մի անգամ սիրեց Երևանը, այլևս երբեք նրան չի մոռանա։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 28 հուլիսի 1967 թ.

Հանս Յոախիմ Մյուլլեր
Արևելա-գերմանացի
լուսաբան

* * *

«Երևանը կավաշեն տներով ու կեղտոտ փողոցներով գյուղաքաղաք է։ Մեր թղթակիցը երկու օրից ավելի չկարողացավ մնալ այնտեղ։ Խավարի ու հետամնացության մեջ խարխափող այդ գյուղում ամերիկացին ոչ մի լուսավոր բան չի կարող տեսնել,—1917 թվականին այսպես գրեց ամերիկյան «Աստշիեյտեդ պրես» թերթը։

Իսկ հետո՞... Ուղիղ հիսուն տարի անց Երևանը Ամերիկային այսպես հայտնի դարձավ։

«Եթե հիսուն տարի առաջ հայ ժողովուրդը գտնվում էր ֆիզիկական բնաջնջման եզրին, ապա այժմ մենք մեր երկու լավագույն դոկտոր ֆիզիկոսների վեց ամսով ուղարկում ենք Երևան, որպեսզի այնտեղ սովորեն տարբերական մասնիկների հետազոտման մեզ հետաքրքրող մի քանի մեթոդներ։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 1967 թ.

Ս. Լիվինգստոն
Ամերիկացի գիտնական

* * *

«Հավանաբար մի քանի տարի հետո հայերի մասին կըխոսեն որպես անհետացած ժողովրդի մասին»։ Այդ կարծիքին են ոչ միայն անգլիացի, այլև ֆրանսիացի քաղաքագետները,— 1917 թվականին այսպես գրեց անգլիական «Լոնդոն գազետ» թերթը։

Անցան տարիներ... Եվ ահա... 1967 թվականին Ֆրանսիայի ատոմային էներգիայի կոմիսարիատի գլխավոր դիրեկտոր Ռոբեր Հիրշին բախտ վիճակվեց այցելել Երևան։

Ես, ասաց Ռոբեր Հիրշը,—տեսա Երևանի էլեկտրոնային արագացուցիչը, որը խոշորագույններից մեկն է աշխարհում։ Անչափ գոհ եմ։ Հիացած եմ Հայաստանի գիտության անհրաժեշտության վերելքով։ Մենք՝ Եվրոպայի գիտնականներս, Սովետական Հայաստանի գիտնականների հետևից ենք գալիս։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 2 օգոստոսի, 1967 թ.

Ռոբեր Հիրշ
Ֆրանսիացի ֆիզիկոս

* * *

Ահավասիկ, ինը օրերն ի վեր կգտնվինք մայր Հայրենիքի հողին վրա, կշնչենք նրա բյուրեղանման օդը, կխմենք զուլալ ջուրերեն, կքալենք կանաչախիտ, ծառազարդ ու ասֆալտապատ պողոտաներեն, հիացումով կլսենք նաիրյան բարբառը, և այս բոլորը զգլխիչ հրճվանք են։ Եվ երջանկությունը ինձմե պահեր կխլե, զգացումներս լրիվ արտահայտելու համար, նամանավանդ, այս բացառիկ առիթով և տեսակին մեջ միակ պատմական նշանակությամբ և հիշատակության արժանի նոր Սերաստիայի հիմնադրության 40-ամյակը, որը կատնենք այսօր, 1967 թվականի սեպտեմբերի 23-ին, մայր

հայրենիքի ծոցին, լուսաշող և գեղատեսիլ քաղաքամայր Երևանին մեջ։

Հայաստանի ռադիոյի ձայնագրարանի ֆ., 1967 թ.

Համբարձում Խրիկյան
Սփյուռքահայ հասարակական գործիչ

* * *

Հայկական քաղաքակրթության ամենայուրահատուկ կոթողը Մատենադարանն է, իր 14 հազար 225 ամբողջական ձեռագրերով ու պատառիկներով։ Այս գանձարանը իր նմանը չունի ամբողջ աշխարհում։ Այժմ Հայաստան այցելել, տեսնելու համար թեկուզ միայն այս թանգարան-գրադարանը, ուր պահպանվում և գիտական ուսումնասիրության նյութ են դառնում հրաշքով փրկված այս ձեռագրերը, որ վկայելով մի փառահեղ անցյալի մասին, պահպանվել են միայն գրքի նկատմամբ հայերի ունեցած սիրով։ Այդ սերը դաժան դարերի ընթացքում ստիպել է կյանքից ավելի պահպանել ձեռագրերը։ Հայերը մեծ սիրտ ունեն, խելացի, մտածող, ճաշակի տեր, հումորի զգացումով և պայծառ երևակայությամբ օժտված ժողովուրդ են։ Նրանցից յուրաքանչյուրի մեջ կա մի բանաստեղծ։

Այո, Հարավային Ֆրանսիացին Հայաստանում իրեն ըզգում է ինչպես տանը։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 1967 թ.

Էմմանուել Ռոբլե
Ֆրանսիացի հասարակական գործիչ

* * *

Ես կարծում էի, թե պիտի տեսնեմ
Միայն մի երկինք՝
Քանի երկնքի համազարկ եղավ...
Ես կարծում էի, թե պիտի տեսնեմ
Լոկ մի ժողովուրդ,
Բայց թռիչքի մեջ
Աստվածացումը տեսա ես նրա...
Քաղաքը,
Ձայնը,
Ոսկիներն աշնան,
Արևոտ քարը.
Իմ աչքերի մեջ արտասուք դարձած
Դուրս էին հորդում։
Բացվում էր սերը,
Եվ նման էր նա այն անծանոթին,
Որ պահանջ ունի իրեն բացելու։
Ու ես կանգ առա
Մի զորության մեջ,
Որ հաղորդակցվիմ Երևանի հետ
Թափանցիկորեն,
Վերջնականապես։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 1 սեպտեմբերի 1967 թ.

Ալիսիա Կիրակոսյան
Արգենտինահայ բանաստեղծուհի

* * *

Բացի Արարատեն, օդեն ու ջուրեն ոչ մեկ նմանություն չեմ տեսներ 1920 թվականի իմ ճանաչած սովահար Հայաստանի և այսօրվա ծաղկուն Սովետական Հայաստանի միջև։ Երբ մտա Հայաստանի սահմանը, ամենուրեք տեսա կանաչ և ծիծաղ։ Երևանը իմ վրա ձգեց պայծառ, ծիծաղկոտ եվրոպական քաղաքի մը տպավորություն։

Հայաստանի ռադիոյի ձայնադաբանի ֆ., 1967 թ.

Վեռն Սյուրմեյյան
Ամերիկահայ գիտնական,
գրող, թարգմանիչ

* * *

Թող ինձ թույլ տրվի
Գոնե մի անգամ կյանքում պարծենալ,
Որ գրանցված եմ քո նոր՝
Փառակազմ տնամատյանում,
Որ քո անբաժան մի մասնիկն եմ ես,
Որ ես էլ, ես էլ, ինչպիսի՜ պատիվ,
Երևանցի եմ հաստատաբնակ։

1967 թ.

Գուրգեն Շահնազ
Սովետահայ բանաստեղծ

* * *

Վերջին տասնամյակում Հրազդանի աջ ափին կառուցվեց մի նոր թաղամաս՝ «Աջափնյակ» անունով։ Դա մի ուրույն քաղաք է՝ նորակերտ շենքերով ու փողոցներով։ Աջափնյակը

քաղաքի մյուս մասի հետ միացված է հսկա, լայնակամար և վեհաշուք կամուրջով, որի տակով, խոր կիրճի հատակով, հոսում է Հրազդան գետը։ Գետի երկու ափերով զուգահեռ անցնում են առափնյա ճանապարհները։ Այս գեղեցիկ ձորում է կառուցված մանկական երկաթուղին՝ իր գլխավոր կայարանով ու թունելով։ Այստեղ՝ Ծիծեռնակաբերդի և Կոնդի միջև ընկած մասում երեխաների համար ստեղծված է մի ուրույն աշխարհ։

Խաչատուր Աբովյանի անվան մանկական զբոսայգին քաղաքի հետ միացված է թունելով, որի դեպի ձորը բացվող մուտքի դիմաց՝ կողք-կողքի, տարբեր գույների քարերից, կառուցված են աղբյուր-հուշարձաններ՝ ի հիշատակ Հայրենական մեծ պատերազմում զոհվածների։

Մանկական երկաթուղուց քիչ ներքև՝ Հրազդանի կիրճի վրա կառուցված է մի այլ կամարակապ, գեղեցիկ կամուրջ, որով անցնող լայն ու շքեղ ճանապարհը տանում է դեպի էջմիածին։ Կամուրջի երկու կողմում գտնվում են «Արարատ» տրեստի գինու և կոնյակի խոշոր գործարանները, որոնց մառաններում պահվում են հնագույն բարձրարժեք գինիներ ու կոնյակներ։

«Սովետական Հայաստան» թերթ
(Հայրենագիտական ուրվագիծ),
Երևան, 1967 թ.

* * *

Մարդը դարերով մտածել է լուսեղեն քաղաքների մասին, հացի և ջրի մասին, սեր և բարեկամություն է տենչացել ու կռվել, մարտնչել հանուն ազատության ու երջանկու-

թյան։ Երջանկության տենչը երազանքներ է ծնում, ու ծընվում է ինքը՝ երջանկությունը, կոփվում պայքարում։ Իր մեծագույն երազանքները մարդը մարմնավորել է հեքիաթների մեջ, պատկերել նրանց մեջ քաղաքներ, ուր արևը ջերմորեն ժպտում է ամենքին, ուր շողշողում են լայնահուն փողոցները, հոգեթով երգի հետ ձուլված՝ թնդում է շինարարի ստեղծագործ աշխատանքի երգը, և ժպտում են մարդիկ իրար, եղբայրների պես, ու հորդում է կյանքը բեղուն, հորդում է երջանկությունը՝ լուսեղեն քաղաքում։

Լուսեղեն քաղաք... Ինչո՞վ Երևանը մարմնացումը չէ այսօր հին հեքիաթների։ Կանգնիր Քանաքեռի բարձունքներին ու դիտիր քաղաքը։ Նա փովել է այնքան հեռուները, որ թվում է, թե ուզում է ընդգրկել Արարատյան ողջ դաշտը։

Այսօրը իրականացումն է երեկվա երազանքի, և նրա վաղը առավել հարուստ կլինի երեկվա երազանքից։ Եվ այնքան հախուռն է կյանքը, իմաստնացած, որ տարին ակնթարթ է թվում։ Եվ ի՞նչ բան է տարին, երբ ասես երեկ էր, երբ լսում էիր հեքիաթը՝ ծարավ աղբյուրների մասին։

Շարունակում եմ շրջել Երևանում և հանկարծ աչքերիս չեմ հավատում... Որքան հիշում եմ, այստեղից սկսվում էր մի նեղլիկ, քարքարոտ փողոց, որի եզրով առվակի նման սողում էր Գետառը։ Փոքրիկ տնակներ կային այստեղ։ Դա անցյալ տարի էր։ Հիմա դրա փոխարեն փովել է իմ դիմաց լայնարձակ, ասֆալտապատ մի փողոց, որում սուլում են ավտոմեքենաները, զնգում են տրամվայները, և չնայած թեթև, աշնանային մառախուղին, աչքերս շլանում են էլեկտրաշայլերի արծաթափայլից։ Ու ձգվում է այդ ճանապարհը երկար, ասես, վերջ չունի։ Լարում եմ տեսողությունս ու կարդում մի շենքի անկյունին փակցված անունը՝ Խանջյան փողոց։

Հիշում եմ, անցյալ տարի Կարմիր Բանակի փողոցով տրամվայ չէր անցնում, բայց հիմա ինձ տանում է նա այդտեղով, իսկ ո՞ւր, չգիտեմ։ Ահա նա հատում է Լենինյան պողոտան և բարձրանում վեր։ Որքան գիտեմ, քաղաքի այդ մասում տրամվայի համար ոչ մի ճանապարհ չկար։ Հիշում եմ, թե ինչպես այդտեղ թեք ու անկանոն կտրվածքներով ձգվում էին նեղլիկ, անհրապույր փողոցները։ Այժմ իմ դեմ լայնորեն փովել է ընդարձակ ու սլացիկ մի փողոց։ Ամբողջ քաղաքը գիտի, որ այն կոչվում է Պիոներական։

Ասում են, որ Կիևյան փողոցի կամուրջի տակ Երևանցին կերտել է նաև մի հոյակապ նվեր իր քաղաքին։ Կիևյան և Բարեկամության փողոցների անկյունում իջնում եմ տրամվայից ու թեքվում ձախ, շարունակում եմ ճանապարհս...

Ահա այդ հոյակապ կամուրջը՝ ամրակուռ և խրոխտ։ Նրա տակ, Հրազդանի աջ ափով բացվել է մի նոր ճանապարհ, առափնյա փողոց։ Դարերով համբացած խոժոռ ժայռերը ադմուկով շարժվել են տեղից և հինգ մետր իջեցած։ Երևանցու աշխատասեր ձեռքերը այդտեղից դուրս են հանել 24 հազար խորանարդ մետր բազալտ և ժայռերի փշերով ճանապարհ հարթել դեպի Հրազդանի աջափնյա Բաղամասը։

«Երեկոյան Երևան» թերթ,
1967 թ.

Կարճ ժամանակով իր
ծննդավայրից բացակայած
Երևանցի

* * *

Երևանի յուրաքանչյուր ցայտաղբյուր արվեստի մի առանձին ստեղծագործություն է։ Ահա մեկը պատրաստված է բազալտից՝ լոտոս ծաղկի ձևով, մի ուրիշի ջուրը ժայթքում է ժանյակից ճիշտ այնպես, ինչպես ես տեսել եմ գնացքի լուսամուտից՝ երկրի հյուսիսի կիրճերից մեկում։ Բուլվարի ստվերախիտ ծառերի տակ տուֆից կերտված են ոչխարի գլուխներ, որոնք նայում են անընդհատ ցայտող զուլալ ջրին։ Ահա 18-րդ դարի հայ մեծ գուսան Սայաթ-Նովայի մարմարե հուշարձանը Սպիտակ սալերի առվակների միջով հոսում է զուլալ աղբյուրի ջուրը։ Գուսանը նայում է աղբյուրին, որին անընդհատ մոտենում էին երևանցիները՝ իրենց ծարավը հագեցնելու։

Արվեստագետներին վաղուց է գրավել հոսող ջրի և ճարտարապետության ու քանդակագործության զուգակցումը։

Դա Երևանում լավ է գտնված։

Մոսկվայում լույս տեսնող
«Նեդելյա» շաբաթաթերթի
խմբագրական, 1967 թ. (№ 25)

* * *

Հայաստանի պետական պատկերասրահի հարստացման գործում մեծ ավանդ ունի նաև ֆրանսիական կինեմատոգրաֆիայի գործիչ Հակոբ Առաքելյանը, որը, 1967 թվականին որպես Սփյուռքահայության հետ մշակութային կապի



Իսահակյան Մուշեղի պարսկերեն ձեռագիր արձանագրությունը։



Երևան քաղաքի կալվածները:



Երևանի բերդի գրավումը 1828 թվականին:



— 1 —

Божіею Милостію

МЫ НИКОЛАЙ ПЕРВЫЙ

Императоръ и Самодержецъ Всероссійскій

и прочая, и прочая, и прочая.

Объявляемъ всенародно.

Всемощный ниспосылаетъ благословенныя Россіи многолетнимъ миромъ, пользуясь коего, мы вошли съ Персіею, долговременно продолжавшимся, столкновеніемъ.

Среди мирныхъ и дружественныхъ сношеній, среди надежъ и упованій добраго согласія, вновь на границахъ Кавказа потрясенъ новой смутою тихій Нашъ народъ, и вновь, попрекая святости договоровъ, безстрастныя вторженія дерзнулось предпринять Россіи.

Надлежало отразить силу силою. — Въ скорбяхъ, непрестанемъ опустошеніи и почти непрерывной, преслѣдуя сто и въ то же время борясь съ силою природы, прежде могущи и пылкой злобствуя, и жестокостью лишь, храброе воинство Наше зоветъ всесильныхъ усилій покорную Эривань, доныѣ непреступный, и за Араксомъ за молочныя Аракаты утверждаетъ свои знамена и, углубляясь далѣе во внутренности Персіи, овладѣвъ столицею Тавризомъ и отправляя ему соотвѣтственно, Ханствы Эриванское по обѣ стороны Аракса и бывшее Нахичеванское — часть древняго Арасіи — предъ ногами Побѣдителя.

Дано въ Санктпетербургѣ, въ день Марта мѣсяца въ лѣто отъ Рождества Христова 1828, Царствованія Нашего въ третье.

На подлинномъ собственною Его Императорскаго Величества рукою написано тако:

НИКОЛАЙ.

Աստուածային Ողորմութեամբ

ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ

ԱՌԱՋԻՆ

ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԻՇԽԱՆ ԱՄԵՆԵՑՆ ՌՈՒՍԱՑ

և ապրի, և ապրի և ապրի.

Ցոյց տանիմք ՝ի սերՍՓՈՅ ամենեցուն.

Բարձրեալն ՝ի ներոյ գՀնեալոյ զմիաբանութեան ցանկալի խաղաղութիւնքս փոխանակ տանելոյ մերոյսն ՝ի Պարսկաստանի, զոր ստանալոյ անել ջանն բազումս.

Ի միջի խաղաղի և ընկերական քաղաքավարեալ, նա և ՝ի միջի անդրկովեան լուսոյ սիրելոյ բարեկամութեան գտանելոյս, զամենեցուն անդրադարձեալ ՝ի սահմանս կովասեան անդրադարձեալ հոգալով մեր ազգիս ՄԵՐՈՑ. և բանիւն, որ ընդդեմ որ տեսանի՝ լուսոյ խաղաղեալ զրոյ որոյ եկաս միշ, ՝ի սահմանս Իրանաստանի.

Հարկ ՝ի վերոյ ելն ունել զարտ զանգ զրոյն. Քաջերակ զոր ՄԵՐ՝ լուսերեալ, ՝ի թշնամեացն երկրի, որ զանեմն անանցանելի, պիղծոյ ցեղս նոցին, և անդրն ամենայն զասեմերաբարոյ ՀՆՉ ամենայն բանեմ, միանգամ լեալ քան զնոյն ասպարեզ, խոյանեալ սանանն, և զիրատեմ նեմանն, որ ուրեմն գնա սահման նրանց՝ նաև ամենայն զԵրևանեան Հանդերձեալ ցանոյ տեսանի և լոյն նոր Երուանայ ՝ի բարձունս Աստուածոյ՝ քանեցեալն զգոյշանս խրատեալոյ, և անդրկեն ամենայն զիրատեալ լուսոյ, ՝ի խրոյ Պարսկաստանի՝ ոչ միայն իսկ ՝ի Դարբնեալոյ և սահմանեալոյ նոցին խաղաղեան բանեալն Երևանայ, որ ցայս և լոյն ելոյ Երուանայ, և խուսանեալն Լանիցն անայ մեանենալն Հայաստանեան՝ և ՝ի Ներոյ Հիմնեալն Աստուածեալն.

Տուաք ՝ի Սանկտպետերբուրգ, ՝ի ութ տասներորդ ամենան Մարտի, լոյն Տեառն ՌՈՒ, և Յիսուսոյ Քրիստոսոյ ՄԵՐՈՑ.

Ի Ինքեանն գրեալ նոր խաղաղութեան ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԻՆՈՆ ՄԵԾՈՒԹԵՆՆ ստորագրեալ

ՆԻԿՈՂԱՅՈՍ.

Նիկոլայ Առաջինի հրովարտակը
Երևանը գրավելու առթիվ:



Երևանի բերդի բանալիները և արկերը:

Տեսարան հին Երևանից:



Մեծ քաղաքաշինարար
Ալեքսանդր Թամանյանի դիմանկարը:



Մատենադարանի տպավորությունների մատյանից մի էջ։

կոմիտեի հյուր, կնոջ հետ այցելեց Հայաստան։ Լինելով մեծահամբավ քանդակագործ Հակոբ Գյուրջյանի աշխատանքների արժեքավոր հավաքածուի ժառանգորդը, նա հայրենանվեր գործ է կատարել, բոլոր աշխատանքները նվիրելով հայրենիքին։ Երևանում եղած ժամանակ Առաքելյանը ասաց. «Չնայած վերջին չորս տարիներու ընթացքին երկրորդ անգամն է, որ այցելում եմ Հայաստան, սակայն ես ինձ համար Երևանը, հիրավի, հայտնաբերեցի միայն այժմ։ Ես հիացած եմ Հայաստանի մայրաքաղաքի բարգավաճմամբ. դա հոյակապ պլանավորված, եվրոպական տիպի քաղաք է։ Հիացմունք են պատճառում Երևանի թանգարանները, որտեղ պահպանվում են արվեստի մեծարժեք ստեղծագործությունները։

Մեծ տպավորություն են թողնում բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների լուրջ վերաբերմունքը ուսման նկատմամբ, նրանց հետաքրքրասիրությունների ծավալուն շրջանակը։ Դա հաղվադեպ է պատահում Արևմուտքում։

«Սովետական Հայաստան» թերթ,
15 հունվարի 1967 թ.

Հակոբ Առաքելյան
Ֆրանսահայ կինոգործիչ

* * *

Այցելեցինք Երևանի արդյունաբերական ձեռնարկությունները, դիտեցինք Հռոմին հասակակից այդ քաղաքը, ծանոթացանք Մատենադարանի ձեռագրերին։ Մենք՝ ուկրաինացիներս հպարտանում ենք Սովետական Հայաստանի մարդկանց հաջողություններով։ Մենք գիտենք, որ հայ մասնա-

գետների ձեռքերով ստեղծվում են հրաշալի սարքեր, հաստոցներ, առարկաներ, որոնք հայտնի են հանրապետության սահմաններից դուրս։

«Սովետական Հայաստան»,
21 ապրիլի 1967 թ.

Վ. Դրոզդենկո
Ուկրաինայի կոմկուսի
Կենտկոմի քարտուղար

* * *

Երևանը աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից է։ Հայկական հյուրասիրությունը ավանդական է, և այստեղ ասում են, որ հյուրասիրությունից հրաժարվելը վիրավորական է։

Լոնդոնի «Մորնինգ սթար» օրաթերթ, 11 հուլիսի 1967 թ.,

Ջոն Մոր
Անգլիացի հասարակական
գործիչ

* * *

Երևան քաղաքում նկատում ես մեր վաղվա ցայտունց գծերը, և միաժամանակ, այն, որ նա կապված է հնադարյան այն քաղաք-համայնքների հետ, որոնք իրապես մարդկային քաղաքակրթության նախակարապետը հանդիսացան։

Անտարակույս, Երևանը օրինակ է ծառայելու մեր քաղաքներից շատերի համար։

Մոսկվայի «Դեկորատիվնոյե իսկուսստվո»
հանդեսի խմբագրական (№ 4, 1967 թ.)

* * *

Մեզ՝ բելգիացիներիս, որ ընդամենը 2 օրով եղանք Երևանում, ընդունեցին այնպիսի սիրալիրությամբ, ասես, վաղեմի բարեկամներ լինեինք։ Հայկական հյուրընկալության մասին մենք շատ էինք լսել, բայց իրականում զգացինք շատ ավելին։ Երևանում՝ արվեստների ու գիտության այդ քաղաքում, ամեն ոք կարող է իրեն զգալ, ինչպես սեփական տանը։ Գոնե մեզ այդպես թվաց։

«Արմենիա» հյուրանոցի տպավորությունների մատյան, 1967 թ.

Տատյանա Դյուարիո
Բելգիացի, ռուսաց
լեզուն ուսումնասիրող
խմբի ղեկավար

* * *

Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի քաղբյուրոյի անդամ, Սովետական Միության Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինը 1968 թվականի ապրիլի 1-ին եղավ Երևանում։ Սովետական պետության ղեկավարը ծանոթացավ 2750-ամյա Երևանի տեսարժան վայրերին՝ դիտեց Լենինի հրապարակի Հարտարապետական անսամբլը, կոմունիստական կուսակցության և սովետական պետության հիմնադրի արձանը, ինչպես նաև վերակառուցված քաղաքային պուրակը, որի ցայտաղբյուրներից, իբրև Երևանի կենարար ակունքից, դեպի երկինք են ցայտում 2750 զուլալ ջրաշիթեր։ Ալեքսեյ Կոսիգինը և նրան ուղեկցող պաշտոնական անձինք այցելեցին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան։ Հետաքրքրությամբ դիտելով Մատենադարանի թանգարանի էքսպո-

զիցքան՝ հայ ժողովրդի հոգևոր մշակույթի հուշարձանները, պատվավոր այցելուների մատյանում Ալեքսեյ Կոսիգինը թողեց հետևյալ գրառումը.

«Ձեր ինստիտուտը վիթխարի ավանդ է բոլոր սովետական ժողովուրդների կուլտուրայի մեջ։

Շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր աշխատել ու պահպանել են այն պատմության համար։ Ձեր աշխատանքը կգնահատեն գալիք սերունդները։

Մատենադարան,
1 ապրիլի 1968 թ.

Ա. Ն. Կոսիգին»

* * *

Եղբայրական բուլղար ժողովրդի պատվիրակները Հայաստանին այս տարի սկսեցին ծանոթանալ՝ այցելելով հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը։

— Բուլղարիայի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, ներքին առևտրի մինիստր Պեկո Տակովը և Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության ժողովրդական ժողովի պատվիրակության անդամները մեծ հետաքրքրությամբ լսեցին Մատենադարանում հավաքված հազվագյուտ ձեռագրերին նվիրված զրույցը։ Նրանք իմացան, որ Երևանի Մատենադարանում կան փիլիսոփայությանը, իրավունքին, մանկավարժությանը, աստղաբաշխությանը և գիտության այլ բնագավառներին վերաբերող հազարավոր ձեռագրեր։

Բուլղարացի բարեկամները պատվավոր այցելուների

մատյանում արեցին հետևյալ գրառումը. «Մեծագույն հուզմունքով և ուրախությամբ ծանոթացանք հայ ժողովրդի հին պատմությանը։ Մենք դիտեցինք ձեռագրերը այն Մատենադարանի, որը կարելի է ամենայն իրավամբ մշակույթի գանձարան անվանել ոչ միայն հայերի, այլև ամբողջ աշխարհի ժողովուրդների համար։ Մեզ հիացմունք են պատճառում իմաստությունն ու ներհունությունը մեծ փիլիսոփաների, օրենսգետների, բժիշկների, բնախույզների, որոնց դարերի խորքում ծնել է ձեր ժողովուրդը։

Մատենադարան,
1968 թ.

Բուլղարիայի ժողովրդական ժողովի պատվիրակություն

* * *

Անգլիացի նշանավոր կովկասագետ Դեվիդ Լանգը այս տարի երկու շաբաթով հյուրընկալվեց Հայաստանում։ Երևանում նա հանդիպումներ ունեցավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի և ուրիշ ականավոր հայ գիտնականների հետ։

Երևանից մեկնելուց առաջ Լոնդոնի համալսարանի արևելագիտության ինստիտուտի հարգարժան պրոֆեսորը Հայաստանի հեռագրական գործակալության թղթակցի հետ զրուցելիս ասաց. «Այն աշխատությունը («նա աշխատում է «Քաղաքակրթության օրրանը» գրքի վրա), որ հիմա ես գրում եմ, գիտահանրամատչելի ակնարկ է լինելու հնադարյան հայ մշակույթի, նրա ականավոր մտածողների, ճարտարապետության գլուխգործոցների մասին։ Սկզբում ես ուզում

էի սահմանափակվել միայն այդ հարցերով, սակայն իմանալով, որ այստեղ հոգատար, ամենօրյա ուշադրություն է նվիրվում հոգևոր հարուստ մշակույթը, ազգային ավանդույթները պահպանելու և զարգացնելու նկատմամբ, ես որոշեցի իմ աշխատության վերջին գլուխները նվիրել Հայաստանի ներկայիս օրվան»։

Դեվիդ Լանգը այնուհետև նշեց, որ «Կարմիր բլուրի, Արինբերդի և այլ պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերը անգնահատելի հետաքրքրություն են ներկայացնում մարդկության պատմության ուսումնասիրության համար։ Երևանի թանգարանում ես տեսա մեր թվագրությունից առաջ երկրորդ հազարամյակի երկրորդ կեսին պատկանող եզակի սայլեր, որոնք գտնվել են Սևանա լճի ափին, Լճաշեն գյուղի մոտակայքում։ Սա փայլուն կերպով վկայում է, որ հայերը ընթացել են տրանսպորտային տեխնիկայի ստեղծման ավանգարդում։ Հիմա այս բանը ստիպված են խոստովանելու նույնիսկ առավել հոռետեսորեն տրամադրված արտասահմանյան գիտնականները։

Ուրախալի է, որ այս տարի դուք տոնելու եք Երևանի հիմնադրման 2750-ամյակը, այն քաղաքի, որը ավելի հին է, քան «հավերժական քաղաքը»՝ Հռոմը։

Ես երկրորդ անգամ եմ այցելում Հայաստան և պետք է ասեմ, որ ձեր երկիրը սրընթաց քայլերով է առաջադիմում։ Այստեղ նկատելի է ծավալուն շինարարությունը։ Երևանն ընդարձակվում և գեղեցկանում է հարաճուն թափով»։

«Սովետական Հայաստան» թերթ,
28-ը ապրիլի 1968 թ.

Դեվիդ Լանգ

Մանոթուր. Դեվիդ Լանգը նշել է Հայաստանի ականավոր մտածողների, ճարտարապետության գլուխգործոցների, հավերժական քաղաք Հռոմից էլ ավելի հնություն ունեցող Երևանի օր-օրի զարգացման մասին, Թոմաս Չերչիլը արձանագրում է «աշխատասեր ու տաղանդավոր հայ ժողովրդի վիթխարի նվաճումների մասին», իսկ Մեծ Բրիտանիայի կուլտուրայի նախկին մինիստր Ջեննի Լին խոստովանում է, որ Մատենադարանի գործունեությունը ունի համաշխարհային նշանակություն, որ աշխարհը ավելի շատ բան պետք է իմանա հայերի մասին, քան գիտե, որ աշխարհը մեծ պարտքի տակ է՝ կարողանալու համար փոխհատուցելու այն ամենի դիմաց, ինչը հնադարյան ժամանակներից բազում շարշարանքների, երբեմն նույնիսկ կյանքի գնով հայերը մեր սերունդներին են հանձնել համաշխարհային մշակույթի շատ գլուխգործոցներ։

Կարծում ենք, որ հարգարժան անգլիացի հյուրերը հայրենիք վերադառնալիս Հայաստանում իրենց տեսածի մասին դոնե ուշացումով պատմել են հայրենակիցներին։ Կարծում ենք, որ այդ մասին տեղեկացել են նաև անգլիացի այն վա՛յ էնցիկլոպեդիստները, որոնք չարամտորեն, օրը ցերեկով, սևով սպիտակի վրա իրենց հրատարակած հանրագիտարանում չգիտես ինչու նշել են, թե հայերը քոչվոր ժողովուրդ են և մինչև այժմ էլ բնակվում են վրանների տակ։

Ինչպիսի՜ միամիտ գուշակություն։

* * *

1967 թվականին Բյուրականի աստղադիտարանը հայտնագործեց նոր, երկնագույն գալակտիկաներ, որոնց ուսումնասիրությունը կարևոր տվյալներ է տալիս գալակտիկաների զարգացման օրինաչափությունների մասին։ Աստղագետների Պրագայում կայացած միջազգային 13-րդ համագումարում առանձնապես նշվեց հայ աստղագետների դերը այդ նույն բնագավառի ստեղծման և զարգացման գործում։

Հայ ֆիզիկոսներին հաջողվեց գործի դցել աշխարհի հզորագույն էլեկտրոնային արագացուցիչներից մեկը Երևանում։

Երևանում ստեղծվեց ֆիզիկային նվիրված մի նոր հաստատություն՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ֆիզիկական ուսումնասիրությունների ինստիտուտը։ Այդ նոր ինստիտուտը հոկտեմբերին Երևանում անցկացրեց չափազանց հետաքրքիր մի կոնֆերանս՝ նվիրված քվանտային էլեկտրոնիկային։ Դա առաջին կոնֆերանսն էր Հայաստանում, որին միաժամանակ մասնակցում էին 3 Նոբելյան մրցանակի դափնեկիրներ՝ համաշխարհային անուն վաստակած սովետական և օտարերկրյա ֆիզիկոսները։ Նրանց հետ միասին հանդես եկան նաև հայ երիտասարդ ֆիզիկոսներ, որոնք նորաստեղծ ինստիտուտում մշակում են լազերային օպտիկային վերաբերող հարցեր։

«Սովետական Հայաստան» թերթ,
1 հունվարի 1968 թ.

Վիկտոր Համբարձումյան
Հայաստանի ԳԱ պրեզիդենտ
աստղաֆիզիկոս

* * *

Հայաստանի պատմական բախտը այնպես է դասավորվել, որ նա գտնվելով երկու մայրցամաքների սահմանում, շարունակ ենթարկվել է ասպատակությունների, վերջին դարերի ընթացքում չի ունեցել պետական ինքնուրույնություն։ Տակավին վաղ միջնադարի շրջանում հայ ժողովուրդն իր հողում ունեցել է ճեմարան, համալսարաններ, դպրոցներ, թատրոններ։ Նա աշխարհին տվել է հին և միջին դարերի այնպիսի կարկառուն գիտնականներ, ինչպիսիք են հայ դպրության ստեղծող Մեսրոպ Մաշտոցը, պատմագիրներ Մովսես Խորենացին ու Կիրակոս Գանձակեցին, փիլիսոփա Դավիթ Անհաղթը, մաթեմատիկոս ու բնագետ Անանիա Շիրակացին, իրավագետ ու առակագիր Մխիթար Գոշը, բժշկապետ Մխիթար Հերացին, բանաստեղծ ու փիլիսոփա Գրիգոր Նարեկացին։

Սակայն հետագայում հայ ժողովուրդը գտնվելով օտար և սեփական շահագործողների լծի տակ, իր հայրենի հողում փաստորեն զրկվեց գիտական ու մշակութային խոշոր հաստատություններից, իսկ նրա քանքարավոր զավակները հարկադրված եղան թափառել օտար աշխարհներում և հովանավորություն որոնել ուրիշ երկրներում։ Պատահական չէ, որ առաջին հայերեն տպագիր գիրքը 1512 թվականին հրատարակվել է Վենետիկում։

Իսկ հիմա, Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի մաթեմատիկական մեքենաների ինստիտուտի կողմից մշակված «Նաիրի» էլեկտրոնային հաշվիչ մեքենան արտադրվում է ոչ միայն Հայաստանում, այլև Միության ուրիշ

քաղաքներում, Բյուրականի աստղադիտարանի հայ աստղաֆիզիկոսները բարձրորակ կադրեր են պատրաստում Սովետական Միության հանրապետությունների և սոցիալիստական լագերի երկրների համար։

«Պրավդա» թերթ,
14 հոկտեմբերի 1967 թ.

Անատոլ Քոչինյան
Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար

* * *

Երևանը նոր քաղաք է, նա ծնվել է արևելյան մեծ գյուղից, որտեղ այգիներով շրջապատված տնակներ էին։ Սովետական բոլոր քաղաքների նոր ճարտարապետությունը շատ քիչ տարբերություններ ունի, Տալլինի կուլտուրայի տունը, Բաքվի, Իրկուտսկի կուլտուրայի տների հարազատ եղբայրն է։

Երևանը ջոկվում է իր շինանյութով, տներն այստեղ վարդագույն են, այս քաղաքը ջոկվում է նաև մեկ ուրիշ բանով. 1959 թվականին ես տեսա բանաստեղծ Եղիշե Չարենցի հուշարձանը. հետո Սարյանի հետ Չարենցի կամարի մոտ գնացինք. այնտեղ քարի վրա նրա բանաստեղծության տողերն են, իսկ աչքերիդ առջև լեռները և Արարատյան դաշտը իր անսովոր կանաչությամբ։ Գլխավորը, որ առանձնացնում է Երևանը սովետական մյուս քաղաքներից՝ բնակիչների քնավորությունն է։ Չլինելով հիշաչար, նրանք ոչ մի կերպ չեն ուզում հրաժարվել հիշատակից, տեսնելով նրա մեջ մարդու առանձնաշնորհը։ Նրանք չտեսնված աշխատասեր

են։ Բավական է ասել, որ խաղողի բազմաթիվ այգիներ տնկված են լեռնոտ տեղերում՝ ուրիշ տեղերից բերված հողի վրա։ Ցամաքային ցածր ցրտերի նախօրեին, խաղողի վազերը ծածկում են, ինչպես վարդի թփերը Մերձմոսկովյան այգիներում։ Հայերը չունեն մեր «թերևս»-ը։ Միևնույն ժամանակ նրանք երազողներ են, փիլիսոփաներ, բանաստեղծներ։ Լինելով լիովին ժամանակակից մարդիկ, հիանալի ֆիզիկոսներ, աստղագետներ, քիմիկոսներ, տան խորքերում, ավելի ճիշտ սրտերի խորքում՝ նրանք հիշում են լեռնային աղբյուրի լեզուն։ Նրանք ինձ շատ բան սովորեցրին։

Ուզում եմ խոսել Մարտիրոս Սարյանի մասին. տեսնելով Հայաստանը, ես ավելի լավ հասկացա նրա նկարչությունը։ Դա արվեստի երկիր է։ Բավական է տեսնել հինգերորդ դարի տաճարի ավերակները, միջնադարյան քանդակը կամ ավելի ուշ ստեղծված Հովնաթանյանի դիմանկարները Երևանի պատկերասրահում, տեսնել հին մանրանկարների հավաքածուն, որպեսզի հասկանաս, ոչ միայն Սարյանի ստեղծագործությունը, այլև դարերի ընթացքում իրական արվեստով դաստիարակված հայկական աչքի առանձնահատկությունները։

«Գարուն» ամսագիր,
1968 թ., № 1

Իլյա Էրենբուրգ
Սովետական գրող,
հասարակական գործիչ

ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էրեբունի՜-Էրեբունի՜...
Քսանյոթ դար, նաև կես դար,
Ապրում ես հար ու անդադար,
Թե՛ վթարված, թե՛ անվթար,
Սակայն ընդմիշտ դու կենդանի,
Հավերժակա՜ն Էրեբունի՜,
Ի՜մ հայկական Էրեբունի՜։

Հավերժական Էրեբունի-Երևանի 2750-ամյակը շուքով տոնեց հայ ժողովուրդը։ 700-հազարանոց վարդաժպիտ քաղաքը սիրով դիմավորեց իրեն այցի եկած հազարներին՝ հայոց, ռուսաց, վրաց... երկրներից, հեռավոր Ամերիկայից՝ հարևան Իրանից, Լիբանանից,... Ֆրանսիայից... Եկան մարդիկ ու բազմեցին աթոռներին օպերային մեծ թատրոնի...

Համահայաստանյան հանդիսավոր նիստ Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում։

Լեփ-լեցուն դահլիճ, պանոններ՝ Էրեբունի-Երևանի տեսարաններով։

Սովետական Հայաստանի մայրաքաղաքի հոբելյանին նվիրված տոնախմբությունների ապոթեոզը եղավ այս հանդիսավոր նիստը։

Աշխարհի ամենատարբեր բնակավայրերից Էրեբունիին ողջունելու եկած պատվավոր հյուրերին է դիմում հոբելյանական հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Մինիստրների սովետի նախագահ Բաղալ Մուրադյանը։

Հարգելի հյուրեր, թանկագին ընկերներ, այս առավոտ ամբողջ հայ ժողովուրդը, մայր հայրենիքում և նրա սահմաններից շատ հեռու, զարթնել է մի բացառիկ տրամադրությամբ։ Այսօր տոն է, հոբելյանը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության, պատմության հողմերով աշխարհով մեկ սփռված համայն հայության մայրաքաղաքի, մեր գեղատեսիլ Երևանի։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի և Մինիստրների սովետի անունից ջերմորեն ու սրտանց ողջունում եմ հանդիսավոր նիստի մասնակիցներին և ի դեմս նրանց՝ Սովետական Հայաստանի բոլոր աշխատավորներին, ամբողջ հայ ժողովրդի փառապանծ տոնի, Երևան քաղաքի հիմնադրման 2750-ամյակի առթիվ։ Քսանյոթուկես դար է մեզ բաժանում այն հեռավոր օրերից,

երբ ուրարտական Արգիշտի հզոր թագավորը գալիք սերունդներին գրավոր հիշատակ թողեց Էրեբունի-Երևանի հիմնադրման մասին։

Սրբատաշ բազալտի վրա հատված ուրարտական հավաստագիրն է լուր աշխարհի ազդարարում էր Էրեբունիի հիմնադրումը։ Արգիշտիի քարե վկայականը անցավ 27 դարերի միջով և Արին բերդը անընդհատ, տարեց-տարի նոր հայտնագործություններով հարստացած, պատմում է այն քաղաքի կյանքի տարբեր էտապների մասին, որը հաստակիցն է Բաբելոնի և Պերսեպոլիսի՝ իրենց գոյությունը վաղուց դադարեցրած և ավերակների մեջ պառկած քաղաքների։

Պատմությունը անհերքելիորեն վկայում է այն մասին, որ Երևանը եղել է հայ ժողովրդի մայրաքաղաքներից մեկը, մեր քաղաքում կյանքը հարատևել է քսանյոթեկես դար անընդհատ, նրա ճակատագիրը նման է իր ժողովրդի դաժան ճակատագրին, նա մշտապես կառուցվել է ու քանդվել, սակայն վերստին հառնել է փլատակներից և մայրություն արել իր տարաբախտ զավակներին։ Երևանը բազմիցս ընկել է թշնամու գրոհներից, սակայն նա ընկել է որպես ծանր վերքերից վիրավոր մի զինվոր, որպես մի վիթխարի կաղնի, որ դեռ ընկած էլ պետք է ապրեր՝ հողի մեջ խարսխելով նոր արմատներ, արձակելով նոր ճյուղեր։ Երևանի՝ պատմության նոր ժամանակաշրջանը անքակտելիորեն կապված է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման հետ։ Արևելյան Հայաստանի ու Երևանի միացումը Ռուսաստանին չնայած դարձել է բավական հեռավոր մի անցյալ, սակայն ամենևին էլ չի խամրել նրա պատմական մեծագույն արժեքն ու նշանակությունը։ Այդ նշանավոր

իրադարձությամբ հայ ժողովուրդն իր ճակատագիրը առհասպետ կապեց ռուս մեծ ժողովրդի ճակատագրին։ Երևանի դերը վճռականորեն բարձրացավ որպես հասարակական-քաղաքական մտքի, հեղափոխական ակտիվ պայքարի կենտրոնի։

Մեր հարազատ քաղաքն իր հեղափոխական պայքարով ստեղծում էր ապագա սոցիալիստական մեծ քաղաքին վայել մայրաքաղաքի իսկական պատմությունը, որը սկսվեց, երբ հայ ժողովուրդը գնաց դեպի լուսաշող գալիքը՝ հովանի ունենալով Հոկտեմբերի ազատարար դրոշը։

Երևանի նոր վերածնունդը, աննախադեպ թափով նրա երընթաց զարգացումը, և պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, 4—5 տասնամյակի ընթացքում, տնտեսությամբ, վարչա-քաղաքական դերով ու մշակույթով նշանավոր քաղաքի վերածվելը պայմանավորված էին սոցիալական ու հասարակական-քաղաքական կոնկրետ նախադրյալներով, որոնք ամենից առաջ, մարմնավորվեցին դարերի ընդմիջումից հետո հայ ժողովրդի պետականության վերականգնման և, դրանով իսկ, նրա պետական ազգ դառնալու մեջ։ Սովետական կարգերի շնորհիվ հայ ժողովրդի ձեռք բերած ամենամեծ նվաճումը նրա պետականությունն է, այն հզոր զենքը, առանց որի ոչ միայն անհնարին էր նրա անտեսության և մշակույթի մինչ այդ չտեսնված առաջընթացը, այլև նրա ուրույն գոյությունը իր հայրենիքի արևելյան մասում։

Պատմությունը դեպքերի և իրադարձությունների սոսկ թվաբանական գումար չէ։ Օրեր ու տարիներ կան, երբ հա-

սարակական ու տնտեսական, հոգևոր և նյութական առումներով ազգը, պետությունն ու քաղաքը դարով են հասունանում։ Երևանի համար ճիշտ այդպիսի դեր են կատարել սովետական շրջանի 48 տարիները։ Քաղաքները կառուցվում են դարերով, մեր հոբելյարն էլ դարերի ընթացքում է կառուցվել, սակայն դարերը չեն ծերացրել նրան, և այն քաղաքը, որ մենք տեսնում ենք այսօր, դեռևս ջահել է, մանավանդ քաղաքի համար մանուկ է միայն, ընդամենը 48 տարեկան։

Քառասունութ տարի առաջ Երևանում հաստատված սոցիալ-քաղաքական նոր իրադրության պայմաններում վերածնվեցին քաղաքաշինության այն հարուստ ավանդությունները, որ ստեղծել է հայ ժողովրդի կառուցողական տաղանդը դարերի ընթացքում։ Եվ այսօր Երևանը մեր հանրապետության համար վերածվել է քաղաքաշինության մի դպրոցի, որտեղ ազգային դասական ոճի և ժամանակակից փորձի, ժամանակակից նվաճումների հաջող զուգորդման շնորհիվ ստեղծվում են ճարտարապետական այնպիսի գործեր, որոնք մի նոր շրջան են նշանավորում մեր քաղաքաշինության ամբողջ պատմության մեջ։

Հայաստանի մայրաքաղաքը մեր մեծ Միությունում և նրա սահմաններից դուրս հանրահայտ է նաև որպես մշակութային խոշորագույն կենտրոն, գիտության, կրթության և արվեստների քաղաք։ Երևանի 2750 տարիները իրենց մարմնավորումն են գտել նրա բարձր զարգացման հասած մշակույթի մեջ։ Չկա հայ գրականության, գիտության, ճարտարապետության, երաժշտության, թատրոնի, գեղանկարչության, կինեմատոգրաֆիայի ասպարեզում աչքի ընկնող որևէ

երևույթ, որ առնչված չլինի Երևանի հետ։ Եվ այսօր Երևանի ուժը նրա նյութական և հոգևոր արժեքների մեջ է, ամենից առաջ այդ արժեքները ստեղծող մարդկանց մեջ։ 2750 տարեկան մեր մայրաքաղաքը նրա 100 հազարանոց բանվոր դասակարգն է, նրա 10 հազարանոց գիտական աշխատողների բանակը, նրա տաղանդաշատ մտավորականությունը, նրա 250 հազար աշակերտներն ու ուսանողները։ Երևանը հենց նրանք են, նրա մարդիկ։

Երևանը մայրաքաղաքն է ոչ միայն Սովետական Հայաստանի, այլև պատմության հողմերով աշխարհով մեկ սփռված ամբողջ հայության։

Շքեղագեղ Արարատի հայացքի տակ սքանչելիորեն հառնած մեր մայրաքաղաքը այն լուսավոր փարոսն է, որին ուղղված են հայ ժողովրդի տարագիր զավակների կարոտած հայացքները։ Նրանց համար Երևանը սոսկ քաղաք չէ, հայ նոր պետության խորհրդանիշն է նա, հայկական վերածննդի մարմնացած ոգին։ Երևան ասելով հասկանում ենք Հայրենիք, տուն, տունդարձի ճանապարհ, վերադարձ տարագրությունից։

Եվ այսօր, մեր համաժողովրդական տոնախմբության այս օրերին, Երևանին ողջույն տալու և Երևանից ողջույն առնելու են եկել մեր բազմաթիվ հայրենակիցները։ Նրանք Երևանի վրա հպարտորեն ծածանվող հայկական պետական դրոշից, Երևանում զվարթորեն կարկաչող մայրենի բարբառից նոր ուժ, հոգեկան նոր կորով առած վերադառնում են, որ կարողանան անվթար գոյատևել օտար ափերում։

* * *

Դիմելով հավաքվածներին, Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը ասում է.

— Հարյուրամյակներ և հազարամյակներ է բոլորել Երևանը։ Ժամանակները եկել, անցել են Էրեբունի բերդաքաղաքի պարիսպների առջևով, մաշել են նրանց բազալտե քարաժայռերը, մինչդեռ Երևանը՝ մեր ժողովրդի մշտական բախտակիցը, դիմանալով բոլոր փորձություններին, ոչ միայն մնացել է հավերժ կենդանի, այլև այսօր, իր պատմության ընթացքում առաջին անգամ, տոնում է իր պանծալի հոբելյանը։

Թեև Երևանը հիմնադրվել է 2750 տարի առաջ, սակայն այժմ, իրավամբ, նա կարող է աշխարհի ամենաերիտասարդ քաղաքներից մեկը համարվել։ Նրա հոյաշեն պողոտաներն ու հրապարակները, ստվերախիտ պուրակները, հայելապատ ջրավազանները, ամեն ինչ նոր է, նորի նման լավ ու գեղեցիկ։ Նրա գործարաններում ու կոմբինատներում ամեն օր լսվում է մեր շունչալից դարի հնչը, շոշափվում ժամանակի զարկերակը։ Գիտության տաճարներում՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայում, պետական համալսարանում, ինստիտուտներում և գիտահետազոտական հաստատություններում, ամենուրեք դուք կհանդիպեք մարդկային մտքի նորագույն նվաճումներին։

Այո, նոր ու երիտասարդ է մեր հնամենի Երևանը։ Մեր սիրելի քաղաքի նոր պատմությունն սկսվում է 1920 թվա-

կանի նոյեմբերից, երբ Հոկտեմբերով ոգեշնչված հայ ժողովուրդը ազատվեց հոգեվարքի ճիրաններից և ուղղեց վերածնության շեմին։

Այսօրվա Երևանը խորհրդանշում է մեր ժողովրդի ազատատենչ ձգտումների, անկախության և ազատության համար նրա բազմադարյա ծանր պայքարի հաղթանակը։

Ճշմարտության և արդարության որոնումների հազարամյա ուղին, բազմիցս խոտորվելով պատմության կեռմաններում, եկավ, հասավ այսօրվա Երևանին, որպեսզի մարմնավորվեր Լենինյան, Հոկտեմբերյան, Բարեկամության, Ազատության պողպատներում։ Բոլոր դեգերումների արահետները դարձան լայնարձակ մայրուղիներ, որոնք նրան կապում են քաղաքամայր Մոսկվայի, եղբայրական հանրապետությունների մայրաքաղաքների, իր բոլոր հարազատ քույրերի ու եղբայրների հետ։

Հայաստանի աշխատավորների ցնծությունը հարյուրապատիկ ավելացավ, երբ մեզ հասավ Սովետական Հայաստանը Լենինի երկրորդ շքանշանով պարգևատրելու մասին բերկրալի լուրը։ Դա Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության ու մտավորականության հերոսական աշխատանքի, ստեղծագործական ընդվզումների ամենաբարձր գնահատականն է, հայ ժողովրդի նկատմամբ Սովետական Միության կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և Սովետական կառավարության ջերմ հոգատարության նոր, վառ վկայությունը։

* * *

Երևանի պատմության սկիզբը հասնում է հեռավոր դարերի խորքը,— իր զեկուցման մեջ նշեց ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Լյուդվիգ Ղարիբջանյանը։— Հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել,— ասաց նա, որ Երևանի ներկա տերիտորիան և շրջապատը բնակելի են եղել անհիշելի ժամանակներից։ Ուրարտական շրջանում (մեր թվագրությունից առաջ 9—6-րդ դարեր) դրանք եղել են ամրությունների մի հանգույց, դրանց մեջ առանձնապես հայտնի էին Էրեբունի, ապա Թեյշեբաինի (Կարմիր բլուր) բերդաքաղաքները։ Ռուս հնագետ Մ. Նիկոլսկին, որը տակավին 1893 թվականին զբաղվել է Արին բերդի պեղումներով, այն կարծիքն է հայտնել, որ «Երևան» անվանումը ունի մինչհայկական—ուրարտական ծագում։

Երևանը, ինչպես և հայ ժողովուրդը, անցել է պատմության մահաբեր մրրիկների միջով, բայց հաղթանակով է դուրս եկել գոյամարտերում։ Օտարերկրյա բազմաթիվ նվաճողներ կողոպտել, ավերել են երկիրը, բայց մշտապես թևածել է ժողովրդի ազատատենչ ոգին։ Ամենածանր պայմաններում անգամ նա ստեղծել է մշակույթի անզուգական արժեքներ։

Դարերից սոցիալիստական հասարակարգ հասած Երևանը մեր օրերում նոր թափով է զարգանում։ Ամբողջ Սովետական երկրում հայտնի են Երևանի ձեռնարկություններում թողարկվող շարժական էլեկտրակայանները, տրանսֆորմատորները, գեներատորները, էլեկտրաշարժիչները և

էլեկտրական շատ այլ մեքենաներ։ Իրենց բարձր որակով Սովետական Միությունում և նրա սահմաններից դուրս մեծ պահանջարկ են վայելում երևանյան էլեկտրական չափիչ սարքերը։ 1966 թվականին թողարկվեցին առաջին «Երազ» ավտոմեքենաները։ Հանրապետության մայրաքաղաքի ձեռնարկությունների թողարկած ավելի քան 150 արտադրատեսակներ արտահանվում են արտասահմանյան 70 երկրներ։

Երևանը իրենով նոր փուլ է նշանավորում նաև մեր ժողովրդի քաղաքաշինության պատմության մեջ։ Հայաստանի ճարտարապետական միտքը իր ամենաականավոր ներկայացուցիչ, ժողովրդական ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի գլխավորությամբ քաղաքի կառուցապատման ընթացքում գնացել է խիզախ պրպտումների ուղիով, հետապնդելով գերագույն նպատակ՝ ծառայել ժողովրդին։

Հայաստանի մայրաքաղաքը դարձել է ապահով հանգրվանը այն բոլոր հայագիտական արժեքների, որ ստեղծել է մեր ժողովուրդը արհավիրքների միջով հասցնելով մեր օրերը։ Այս իմաստով առանձնահատուկ է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի դերը։ Երևանը նաև գեղարվեստների քաղաք է, գեղարվեստական մշակույթի զարգացման ազգային կենտրոն։

Քաղաքի մեծ երախտավորներից մեկը Ալեքսանդր Սպենդիարյանն էր, որը հաստատվեց Երևանում՝ լի հուսավառ ու հարատևող ջանքերով, որ պիտի նոր կյանք տար Հայկական հինավուրց երգին ու մեղեդուն, ստեղծեր ազգային օպերան։ Մայրաքաղաքի երաժշտական կյանքում արժա-

նավոր տեղ գտան Արմեն Տիգրանյանն ու Ռոմանոս Մելիքյանը, հրապարակ եկավ Արամ Խաչատրյանը՝ Երևանի պես պայծառ ու բազմերանգ։ Եկավ, որ նոր փառք ու հռչակ բերի մեր ազգային երաժշտությանը՝ այն բարձրացնելով համամարդկային մակարդակի։ Երաժշտական արվեստի խոշոր կենտրոնը՝ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի պետական ակադեմիական թատրոնը, բարձրացրին Շարա Տալյանն ու Հայկանուշ Դանիելյանը, Կոնստանտին Սարաջյանն ու Միքայել Թավրիզյանը, իսկ հետո եկան նորերը՝ Պավել Լիսիցյան, Գոհար Գասպարյան, Տաթևիկ Սաղանդարյան և ուրիշներ։

Մարտիրոս Սարյանը, որ Երևան եկավ իր մեծ հայրենակցի՝ Մյասնիկյանի հրավերով, ի դեմս նոր քաղաքի, տեսավ իր վերածնված ժողովրդի լուսավոր դեմքը։ Ու նկարիչը ստեղծագործական նոր երկունք ապրեց, կտավին հանձնելով մի անկյուն հին Երևանից, դրան հակադրելով նորը, բնության հրաշքը, արևն ու երկինքը։ Սարյանը ապրում է Երևանով, և Երևանը՝ Սարյանի հետ, նրանով հարստացած։ Հայ թատերական արվեստի պարծանքը հանդիսացող Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնը բարձր մակարդակի են հասցրել Հովհաննես Աբելյանը, Վահրամ Փափազյանը, Արուս Ոսկանյանը, Հրաչյա Ներսիսյանը, Վարդան Աճեմյանը, Վաղարշ Վաղարշյանը, Օլգա Գուլազյանը, Գուրգեն Ջանիբեկյանը, Ավետ Ավետիսյանը և շատ ուրիշներ։

Երևանը ծաղկող գրականության, պոեզիայի քաղաք է։ Մեր քաղաքում են ստեղծագործական հասակ առել, Երևանը արվեստով ու գրականությամբ հարստացրել, բազմաբովանդակ դարձրել Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը,

Եղիշե Չարենցը, Ստեփան Զորյանը, Ակսել Բակունցը և հաջորդ սերնդի ուրիշ տաղանդավոր ներկայացուցիչներ։ Այստեղ՝ մայրաքաղաքում է հիմնվել հայ ազգային կինոարվեստը։ Համո Բեկնազարյանը, այդ բնիկ երևանցին, որի անունն է կրում «Հայֆիլմ» կինոստուդիան, իր ստեղծագործական կյանքի ամենահասուն և արգասավոր տարիները նվիրել է Երևանին։

Երևանն այսօր հայ պետականության հպարտ խորհրդանիշն է, որի գրկում հարություն են առել ու ծլարձակել հայոց երբեմնի անհետացած փառքերը և մոռացությունից նոր կյանքի կոչվել նվիրական շատ անուններ։ Մեր պատմական կյանքի վերածնված հիշատակներն են Նոր Արաբկիրը, Նոր Խարբերդը, Կիլիկիան, Զեյթունը, Սեբաստիան ու Մարաշը։ Երևանի հիմքերի վրա բարձրացած Նոր Երևանը մի բոլորովանդակ աշխարհ, լույսի և հույսի փարոս է պատմության հողմերով՝ աշխարհով մեկ սփռված հայրենաբաղձ հայերի համար։ Նա քաղաքամայրն է համայն հայության։

Դարերից եկող և դարեր գնացող մեր քաղաքը այսօր հառնում է Արին բերդից իբրև նորօրյա ջահել ու շքեղ, մեր բեղուն կյանքով իմաստնացած հայոց նոր ոստան, որը վեհաշուք Արարատի հայացքի տակ իր կախարդական ուժով դեպի մայր Հայաստան է ձգում տարագիր հայությանը։

Երևա՜ն...

Թանկ ու նվիրական անուն։ Դա հայ մարդու հոգու ծննդավայրն ու բնակատեղին է, նրա լուսե ուխտատեղին, հույսերի միակ ապավենը, կյանքի ապահով հանգրվանը, նրա վերջնական հասցեն։

* * *

Մոսկվացիները, Սովետական բոլոր մարդիկ ուրախանում և հպարտանում են տաղանդավոր հայ ժողովրդի աշխատանքի հիանալի արդյունքներով,— իր ելույթում նշեց Մոսկվայի քաղաքային սովետի գործկոմի նախագահի տեղակալ Լ. Բախմետկովը։ Հաղորդելով մոսկվացիների ջերմ ողջույնը 2750-ամյա Երևանին ու նրա մարդկանց, Բախմետկովը ասաց, որ Հայաստանի ու նրա մայրաքաղաքի նվաճումները Սովետական Միության Կոմունիստական Կուսակցության և Սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի, մեր հայրենիքի ժողովուրդների անխախտ բարեկամության արգասիքն են։ Մոսկվացի պատվիրակը նիստի նախագահությանը հանձնեց ՍՄԿԿ Մոսկվայի քաղկոմի և քաղսովետի գործկոմի ողջույնի ուղերձը ու գեղարվեստական մի սկահակ։

Ոչ բոլոր քաղաքները կարող են հպարտանալ այնպիսի մի պատմությամբ,—իր ողջույնի խոսքում ասաց Լենինգրադի քաղսովետի գործկոմի նախագահի տեղակալ Ե. Գոգոլևը,— ինչպիսին վիճակվել է Երևանին։ Մենք՝ լենինգրադցիներս, լավ գիտենք ձեր քաղաքը, նրա արդյունաբերությունը, որը թողարկում է էլեկտրամեքենաներ և հիդրոպոմպեր, ալյումին և զանազան հաստոցներ, հաշվիչ մեքենաներ ու ավտոմոբիլներ։

Լենինգրադցի հյուրը հավաքվածների բուռն ծափահարությունների ներքո նախագահությանն է հանձնում հերոս քաղաքի աշխատավորների նվերը՝ Լենինի կոմպոզիցիոն քանդակը։

Կիևցիների ջերմ ողջույնը ներկաներին է հաղորդում Ուկրաինայի մայրաքաղաքի սովետի գործկոմի նախագահ Վ. Գուսևը։

— Ահա մի քանի տարի է, ինչ մեր երկու քաղաքները,— ասում է նա,—հանդիսանում են մրցակից եղբայր քաղաքներ։ Դա հնարավորություն է տալիս մեզ ոչ միայն կատարել փորձի փոխանակում, այլև նպաստում է հայ և ուկրաինական ժողովուրդների բարեկամության էլ ավելի ամրապնդմանը, ժողովրդական տնտեսության ու մշակույթի բոլոր բնագավառներում նոր նվաճումների հասնելուն։ Դրանում մենք տեսնում ենք պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության Լենինի ավանդած գաղափարների կենսահաստատ ուժը։

Ինձ, որպես մասնագիտությամբ ինժեների, առանձնապես Երևանը ապշեցրեց իր ճարտարապետական անսամբլներով, հատակագծմամբ, շենքերի լուսապայծառ երանգներով։ Նույնիսկ դժվարանում եմ հավատալ, թե այսքան երիտասարդ քաղաքը արդեն 2750 տարեկան է։

— Հինավուրց Երևանի տարեգրությունը,— ասում է կուսակցության Մինսկի քաղկոմի առաջին քարտուղար Վ. Շարապովը,— լի է հիանալի իրադարձություններով, հայ ժողովրդի անցյալի ու ներկայի վառ արտահայտությամբ։ Ժամանակակից մեքենաները, առաջնակարգ սարքավորումները, գիտական մտքի հայտնագործումները, ստեղծագործ մտավորականության տաղանդը համաշխարհային փառք բերեցին երիտասարդ Երևանին։

— Երևան ուղարկելով իրենց պատվիրակությունը,—

ասում է Վ. Շարապովը,— Մինսկի աշխատավորները խնդրեցին ձեզ հանձնել Վ. Ի. Լենինի փայտաքանդակը, այն մարդու, որի անունը անսահման թանկ է սովետական ժողովրդի համար։ Մենք բերել ենք նաև հայ ժողովրդի պանծալի զավակի՝ Բելոռուսիայի կոմունիստական կուսակցության կազմակերպիչներից մեկի՝ Ալեքսանդր Մյասնիկյանի դիմանկարը, որը ստեղծել է բելոռուս նկարիչ Պավլովսկին։

Ուզբեկ ժողովրդի ողջույնն է հաղորդում Տաշքենդի քաղսովետի գործկոմի նախագահ Խ. Ասամովը։

— Մենք շատ ուրախ ենք,— ասում է նա,— որ բարեպատեհ առիթ է ներկայացվել տեսնելու ձեր հինավուրց ու երիտասարդ երկրի բարգավաճումը։ Դա առանձնապես ցայտուն է երևում մայրաքաղաք Երևանի օրինակից։ Երկրագնդի վրա քիչ են այսքան հին և այսքան նոր քաղաքներ, ինչպիսին է Երևանը։

— Այսօր ձեզ մոտ ազգային մեծ տոն է,— իր ողջույնի խոսքում ասում է կուսակցության Թբիլիսիի քաղկոմի առաջին քարտուղար Օ. Լոլաշվիլին։— Հայաստանի մայրաքաղաքի հոբելյանը նշում է մեր ամբողջ երկիրը, Սովետական Միության բազմազգ ժողովուրդը։ Մենք՝ Թբիլիսցիներս, ինչպես որ վայել է անկեղծ բարեկամներին ու եղբայրներին, ձեր տոնը համարում ենք նաև մերը, բաժանելով ձեր ուրախությունը։

Մեր քաղաքները դրկից, եղբայր քաղաքներ են։ Թբիլիսիում լավ գիտեն աշխատավորական Երևանի առօրյան։ Առաջին տարին չէ, որ մենք սոցիալիստական մրցության պայմանագրեր ենք կնքում, իսկ փոխադարձ օգնությունն ու համագործակցությունը մեծապես նպաստում են երկու քաղաքների ծաղկմանը։ Ապրիր ու փթթիր կրկնակի շքանշանակիր արևավառ Հայաստանի մայրաքաղաք, շինարար քաղաք, բարեկամության և եղբայրության քաղաք։

— Մենք երջանիկ ենք ներկա գտնվելու այս հիանալի տոնահանդեսին և երևանցիներին հաղորդելու մեր բոցավառ սալամը,— ասում է Բաքվի քաղսովետի գործկոմի նախագահ Ռ. Աբդուլաևը։— Մեր ժողովուրդների լեզուներում դժվար թե գտնվի այնպիսի բառ, որ ավելի վսեմ լինի ու հպարտ, ինչպիսին է դրուժբա-դոստլու-բարեկամություն։

Որպես ժողովուրդների անխախտ բարեկամության արտահայտություն, Բաքվի աշխատավորները Երևանի հոբելյանին են ուղարկել այն հուշարձան-կոմպլեքսի մակետը, որ Ադրբեջանի մայրաքաղաքում կանգնեցվել է 26 կոմիսարների հիշատակին։

— Ամբողջ լատիշ ժողովուրդը հպարտանում է, որ հայ ժողովրդի փառապանծ զավակ Ստեփան Շահումյանը սովորել է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում, որ սովետական ականավոր զորավար Հովհաննես Բաղրամյանի հրամանատարությամբ գործող զորքերը ֆաշիստական հորդաներից ազատագրել են Լատվիան ու նրա մայրաքաղաքը։— Այս խոսքերով է ավարտում իր ողջույնը Ռիգայի քաղկոմի առաջին քարտուղար Ա. Զիտմանիցը, նշելով, որ Լիտվայի ժողովուրդը մարշալ Բաղրամյանին համարում է նաև իր զավակը։

Իրենց քաղաքների աշխատավորների անունից Երևանի 2750-ամյակի առթիվ Սովետական Հայաստանի մայրաքաղաքի, հանրապետության բոլոր աշխատավորներին ուղղված

ջերմ ողջույններով հանդես են գալիս Ալմա-Աթայի, Վիլնյուսի, Քիշնևի, Ֆրունզեի, Դուշանբեի, Աշխաբադի, Տալլինի, հերոս քաղաքներ Վոլգոգրադի, Սևաստոպոլի, Օդեսայի, ինչպես նաև երկրի հնագույն քաղաքներից մեկի՝ Սամարղանդի ներկայացուցիչները։ Որպես հիշատակ բազմադարյան Երևանի հոբելյանին՝ նրանք բերել են իրենց աշխատավորների ջերմ զգացմունքները, ժողովրդական վարպետների ձեռքի նուրբ աշխատանքները։

Հայաստանի մայրաքաղաքի հոբելյանը հանրապետության քաղաքների պատվիրակությունների անունից ողջունում է կուսակցության Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար Մ. Մուրադյանը, Հայաստանի շրջանների պատվիրակությունների անունից՝ կուսակցության Արտաշատի շրջկոմի առաջին քարտուղար Ա. Մկրտչյանը, իսկ Երևանի աշխատավորների անունից՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Դավթյանը։

Սփյուռքահայության անունից ողջունելով ամենայն հայոց մայրաքաղաքի հոբելյանը, ամերիկահայ գրող Կարապետ Սիտալը ասում է. «Էրեբունու հիմնադրումից մինչև մեր պանծալի նոյեմբերը լավ ու արևոտ օր շատ քիչ է տեսել մեր ժողովուրդը։ Նոր, սովետական կարգերն էին, ռուս մեծ ժողովրդի մեծահոգի օժանդակությունը, որ հնարավորություն տվեցին մեր ժողովրդին գոտեպնդվելու, վերակառուցման և ստեղծագործ աշխատանքի նվիրվելու։ Եվ 2702 տարեկան կիսաքանդ ու անուրախ Երևանը հնության ու քայքայումի փոշու տակից հառնեց նոր դիմագծերով, նոր տեսքով և ստեղծագործական նոր շնչով։ Սովետական տարիներին հրաշագործումների տիտանական աշխատանքի մի

փայլուն շրջան բոլորեց հայ ժողովուրդը։ Ողջույն ներկայով բախտավոր, ստեղծագործական ջանքերով հզոր, շատ հին, բայց էությամբ միշտ նոր, իմ գեղեցիկ, իմ թևավոր Երևանին։

«Սովետական Հայաստան»,
20 հոկտեմբերի 1968 թ.

20-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1968 ԹՎԱԿԱՆԻ

Վաղ առավոտից մայրաքաղաքի Էրեբունի անունը կրող լայնահուն փողոցով դեպի հնադարյան ԷՐԵԲՈՒՆԻ քաղաքամրոցն էին շարժվում հարյուր-հազարավոր երևանցիներ, եղբայրական հանրապետություններից ու արտասահմանից ժամանած հյուրեր։ Նրանք գալիս էին մասնակցելու Երևանի հիմնադրման թանգարանի հանդիսավոր բացմանը։

Ուղիղ ժամը 10-ին Հայաստանի Կոմունիստական կուսակցության և կառավարության ղեկավարները բարձրացան տրիբունա, և սկսվեց հանդիսավոր նիստը։

— Սիրելի երևանցիներ, թանկագին հյուրեր,— բացման խոսքում ասաց կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Լյուդվիգ Ղարիբջանյանը,— մեր ժողովուրդը ցնծությամբ ու անհուն բերկրանքով է տոնում Երևանի հոբելյանը։

Այսօր մենք հավաքվել ենք Արին բերդ բլրի ստորոտում, ուր քսանյոթուկես դար առաջ ուրարտական Արգիշտի Առաջին թագավորը հիմնադրել է Էրեբունի բերդաքաղաքը։ Էրե-

գունի—Երևանը, հետագա դարերի ընթացքում դառնալով հայ ժողովրդի կենսական կենտրոններից մեկը, կարևոր դեր է կատարել նրա տնտեսության ու մշակույթի զարգացման գործում։ Որպես իր ժողովրդի հազարամյակների պատմության ուղեկիցը, Երևանն ունեցել է հայ ժողովրդի դաժան ճակատագիրը, և՛ ավերվել է, և՛ կառուցվել, ընկել է ու ոտքի կանգնել, ենթարկվել բազում արհավիրքների։ Երևանը դառնալով Սովետական Հայաստանի մայրաքաղաքը, ծաղկման ու բարգավաճման անսահման հնարավորություններ ստացավ։ Այսօր նա Սովետական Միության խոշոր քաղաքներից, տնտեսական ու մշակութային կենտրոններից մեկն է։

Հայաստանի Մինիստրների սովետի պետական շինարարական հանձնաժողովի ճարտարապետական և պատմական հուշարձանների պահպանման ու վերականգնման վարչության պետ Կ. Հովհաննիսյանը խոսում է հնագիտական այն պեղումների մասին, որոնք հնարավորություն տվեցին հազարամյակների փոշուց մաքրելու քաղաք-ամրոցը, նոր լույս սփռելու Երևանի անցյալի պատմության վրա։

— 18 տարվա պարբերաբար կատարվող պեղումների շնորհիվ,—ասում է Հովհաննիսյանը,— մինչ այդ անխոս ու համարյա անհայտ բլուրը այժմ ներկայացնում է աշխարհի հնագույն քաղաքներից մեկի պատմությունը։

— Այսօր մեզ համար կրկնակի տոն է,— իր ողջույնի խոսքում ասում է բանաստեղծ Պարույր Սևակը։— Դարավոր, բայց նաև պատանի Երևանը իր հոբելյանի նախօրյակին մեծարժեք պարգև է ստացել իր եղբայր Մոսկվայից, Հայաստանը պարգևատրվել է Վլադիմիր Լենինի երկրորդ շքանշանով։ Եկեք իրար շնորհավորենք այս թանկագին պարգևի առթիվ։ Թող մեր սիրելի ու սիրասուն մայրաքաղաքը ապրի այնպիսի բարեբախտ կյանքով, որ նրա արդեն կառուցված, կառուցվող և կառուցվելիք շենքերն ու կոթողները հավերժելով հավերժեն։

Հայաստանի կոմկուսի ու կառավարության ղեկավարները և հյուրերը մոտենում են թանգարան տանող աստիճաններին։ Կառավարական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Մինիստրների սովետի նախագահ Բագրատ Մուրադյանը կտրում է թանգարանը երիզող կարմիր ժապավենը...

...Բազալտե աստիճաններով նրանք բարձրանում են դեպի թանգարանի հոյակապ կառույցը։ Անվանի ճարտարապետներ Բ. Արզումանյանի և Շ. Ազատյանի նախագծով հուշարձանը կերտվել է ուրարտական ճարտարապետության ոճով։ Շենքի դրսի պատերը զարդարված են Էրեբունիի պատմության դրվագները պատկերող հարթաքանդակներով, որոնց հեղինակն է քանդակագործ Ա. Հարությունյանը։ Թանգարանի երկրորդ հարկի ընդարձակ սրահում ցուցադրված են Արին բերդ ամրոցից հայտնաբերված հարյուրավոր ցուցանմուշներ։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ուրարտուի մակետ-քարտեզը, ամրոցի հիմնադիր Արգիշտի Առաջինի անձնական իրերը, սեպագիր արձանագրությունները, զենքերը, շենքերի վերակազմությունների հատակագծերը։ Այստեղ ցուցադրված են նաև Սովետական Միության եղբայրական հանրապետություններից ստացված հուշանվերները։

Դուրս գալով Էրեբունի թանգարանից, ընկ. ընկ. Ա. Քո-

ջինյանը, Ն. Հարությունյանը, Բ. Մուրադյանը, Հայաստանի կոմկուսի և կառավարության մյուս ղեկավարները, Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանը, զրահատանկային զորքերի մարշալ Հ. Բաբաջանյանը, ավիակոնստրուկտոր Ա. Միկոյանը ծառեր են տնկում։

Հետաքրքիր տեսարան է բացվում բարձունքի կատարին։ Կարծես կյանք է առել հազարամյակներ նիրհած ամրոցը։ Վեր են խոյացել բերդապարիսպները, ընդարձակ դահլիճներն ու մյուս շինությունները։ Ուրարտական զինվորի տարազ կրող 150 երիտասարդներ՝ հետևակներ ու հեծյալներ, ողջունում են երևանցիներին ու հյուրերին։

Ահա և Էրեբունիի գլխավոր մուտքը։ Ավանդության համաձայն, նրա պահապանները հարցնում են եկողներին։

— Ո՞ր երկրից եք։

— Հայաստան երկրից,— լսվում է պատասխանը։ Այդ խոսքերը պահակները փոխանցելով միմյանց՝ հասցնում են ամրոցի խորքը։ Մեկ րոպե չանցած, հայտնվում է ընդունման հրամանը։ Ամրոցն ընդունում է շրջակայքից եկած այցելուներին։ Բաժանվում են ժամապահների խաչաձևված նիզակները։ Գլխավոր մուտքը բաց է։

Այցելուները դիտում են Էրեբունիի շինությունները, ծանոթանում վերականգնման աշխատանքներին։ Բլրի լանջին կանաչին են տալիս նոր հիմնված այգու 2750 ծառերից շատերը։

«Սովետական Հայաստան» թերթ,
22 հոկտեմբերի 1968 թ.

* * *

Երևանի 2750-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների մասսայական ու շքեղ եզրափակումը համաքաղաքային միտինգ-տոնահանդեսը եղավ, որ տեղի ունեցավ նույն օրը հոկտեմբերի 20-ին, հանրապետական ստադիոնում։ Հավաքվել էին քաղաքի աշխատավորության մոտ 40 հազար ներկայացուցիչներ, հյուրեր։

Ներածական խոսքով բացելով միտինգը, աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործկոմի նախագահ Գ. Հասրաթյանը հերթով ամբիոն էր հրավիրում հոբելյարին ողջունողներին...

Ցնծում է բազմադարյան Երևանի ժողովուրդը,— իր ողջույնի խոսքում ասում է բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը։ Նրա երջանիկ այսօրը կերտող սերունդը նախնիների պատվիրանով ստեղծում ու կառուցում է գալիքի համար։ Եվ որպեսզի դու, սիրելի Երևան, մնաս հավետ կանգուն ու անսասան, քո սրտի մեջ հոյակերտեցինք Լենինի շքեղ հրապարակը, քո սրտից սկզբնավորեցինք եղբայրության ու բարեկամության նոր ճանապարհներ։ Եվ եթե օժտելով քեզ այն ամենով, ինչը քաղաքը քաղաք է դարձնում, չկառուցեցինք բերդեր ու պարիսպներ, սոսկ այն պատճառով, որ քեզ հուսալիորեն պաշտպանում են սովետական հայրենիքի գրանիտե պարիսպները։ Թող բարի լինի քո երթը գալիք հազարամյակներում, մեր հավերժական Երևան։

Միտինգն ավարտված է, հնչում են երևանյան ռադիո-

ազգանշանները։ Սկսվում է հոբելյարին նվիրված տոնահանդեսը։

2750 մարդուց բաղկացած երգչախումբը կատարում է Էդգար Հովհաննիսյանի «Երևան» երգը։

ԷՐԵԲՈՒՆԻ — ԵՐԵՎԱՆ

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք։

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի։
Քո Մասիս հորով, քո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երևան։

Մենք արյան կանչեր ունենք մեր սրտում,
Անկատար տենչեր ունենք դեռ շատ,
Մեր կանչն առանց քեզ՝ իզուր կկորչի,
Առանց քեզ՝ մեր տաք տենչն էլ կսառչի։

Կյանքում ամեն սեր լինում է տարբեր,
Իսկ մենք բոլորս ենք քեզանով հարբել,
Տաք է սերը մեր՝ շեկ քարերի պես,
Հին է սերը մեր՝ ձիգ դարերի պես։

Կանաչ դաշտի շուրջը բոցավառվում են ութսուն ջահեր։ Հանդիսականներին է ներկայացվում Երևանի հիմնադրմանը նվիրված թատերականացված պատկեր։ Հաղորդավարը ավետում է Էրեբունիի հիմնադրի՝ Արգիշտիի ժամանման լուրը։ Նա հայտնվում է շքեղ մարտակառքով, որին ուղեկցում է պահակախումբը։ Շինարարները բերում են բազալտե հսկա ժայռաբեկորը և տեղադրում դաշտի կենտրոնում։ Սեպերի ռիթմիկ զարկով նրանք քարի վրա փորագրում են Էրեբունիի «ծննդյան-վկայականը»։

Հնչում են փողերը, սկսվում է Արին բերդի նախկին բնակիչների տոնահանդեսը։

Մոտ 28 դար է անցել Երևանի հիմնադրումից, բայց հայ ժողովրդի և նրա հինավուրց քաղաքի վերածնունդը հաշվվում է 1920 թվականի նոյեմբերից, երբ մեր լեռնաշխարհում ծածանվեց ազատարար Հոկտեմբերի դրոշը։ Կինոկադրերը հանդիսականին մի պահ փոխադրում են դեպի ոչ հեռավոր հեղափոխական անցյալը։ Դաշտում ծայր է առնում ազգային տարազներ հագած խմբերի ուրախ պարը։

Խրոխտ քայլերգի և խանդավառ բացականչությունների ուղեկցությամբ հայտնվում է 11-րդ հաղթական կարմիր բանակը, որ 48 տարի առաջ հնագարյան Երևանում ծածանեց ազատության դրոշը։ Հնչում են սովետական պետության ստեղծող Վլադիմիր Լենինի շնորհավորական հեռագրի խոսքերը, իսկ կինոկադրերը պատմում են վերածնված Երևանի այսօրվա վերելքի մասին։

Սկսվում է սոցիալիստական Երևանի արդյունաբերության տոնական երթը։ Վագոնուղիներով պատվավոր շրջան են կատարում միմյանց հաջորդող ավտոմեքենաները, որոնք զարդարված են մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի նմուշներով։

Տոնահանդեսի 40 հազար մասնակիցներ ջերմ ծափահարություններով են ընդունում իրենց փառաբանված շատ

հայրենակիցների, որոնք բարձր են պահում ազգային մշակույթի դրոշը։ Մեքենաներով, տրիբունաների առջևից անցնում են Գոհար Գասպարյանը, Ավետ Ավետիսյանը, Թաթուլ Ալիխանյանը, Պավել Լիսիցյանը, Առնո Բաբաջանյանը... Ներկաները ջերմորեն են դիմավորում Թբիլիսիից հեռուստոն Երևան ժամանած յոթ երիտասարդներին, որոնք այստեղ են բերել իրենց համաքաղաքացիների սրտագին ողջույնը՝ 2750 ստորագրությամբ։

Վազքուղի մտնող հեծանվորդները ազդարարում են սպորտային տոնահանդեսի սկիզբը։ Կենսախինդ պատանիների ու աղջիկների, մանկական սպորտային դպրոցների սաների ելույթը խանդավառում է բոլորին։ Մի ակնթարթ ադադ վերակազմելով շարքերը, նրանք կանաչ դաշտի վրա «գրում են» Երևանի հասակը խորհրդանշող «2750» թիվը։ Եվ ահա մեջտեղ է բերվում մետաղակուռ աշտարակը, որի վրա տեղեր են գրավում սպիտակ ու կապույտ սպորտային զգեստներ հագած պատանիներ ու աղջիկներ։ Կենդանի Աշտարակը երաժշտության ներքո ընդունում է տարբեր ձևեր, խորհրդանշելով հնադարյան Երևանի երիտասարդությունը, հզորությունը, գեղեցկությունը։

Ստադիոնով մեկ ձայնասփռվող երաժշտությունն ընդհատվում է հուժկու որոտների ձայնից։ Աշնանային երկնակամարը լուսավորվում է բազմերանգ հրթիռների շողերով, որոնք ազդարարում են մեծ տոնախմբության՝ Երևանի 2750 ամյակին նվիրված հանդիսությունների ավարտը Հայաստանում։

«Սովետական Հայաստան» թերթ
22 հոկտեմբերի 1968 թ.

* * *

Եվ այսպես, սկիզբ առնելով Հայաստանից, 2750-ամյա Երևանին նվիրված տոնահանդեսությունները շարունակվում են համայն աշխարհում։

Լիբանանի հայաշատ գաղթօջախում մշակութային տարբեր կազմակերպություններ մեծ շուքով և հայրենասիրական զգացումների վառ դրսևորումով նշեցին ամենայն հայոց մայրաքաղաքի հոբելյանը։ «Գրական շրջանակից» և «Նոր սերունդ մշակութային միություն»-ից հետո Երևանի հոբելյանը նշեց «Լիբանան—ՍՍՀՄ» մշակութային կապի ընկերակցությունը։ Ազգային կրթության և դեղարվեստից նախարարության շենքի դահլիճում տեղի ունեցած հանդիսությանը մասնակցեցին սովետական դեսպանատան ռուս և հայ ներկայացուցիչներ, արաբ և հայ ականավոր գրողներ, ճարտարապետներ, լրագրողներ, արվեստագետներ, որոնց թվում նաև ՏԱՍՍ-ի ու օտարերկրյա հեռագրական գործակալությունների թղթակիցներ։ Հանդիսությունը բացեց «Լիբանան—ՍՍՀՄ» մշակութային կապի ընկերակցության նախագահ, անվանի արաբ գրող, դոկտոր Ժ. Հաննան, որը 1964 թվականին եղել է Երևանում։ Նա գովքն է հյուսել տոկուն, աշխատասեր և ստեղծարար հայ ժողովրդի։

— Ամեն մի լիբանանցի մտավորական գեթ մի անգամ պետք է այցելի հայոց տուֆակերտ մայրաքաղաքը, որպեսզի կարողանա խորապես ճանաչել աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկին, որը գոյատևել է ոչ թե զորական ուժի, այլ իր ստեղծագործական ընդունակությունների շնորհիվ,— ասաց արաբ գրողը։

Լիբանանցի բանաստեղծ Սայիտ Աքլի նախագահությամբ Երևանի 2750-ամյակը նշեց նաև լիբանանահայ ուսանող երիտասարդությունը, որն իր այս հանդիսությունը անվանեց «երիտասարդական տոնահանդես»։ Առանձնակի հանդիսավորությամբ Երևանի հոբելյանը նշեց Թեքեյան մշակութային միությունը։

Կյուլպենկյան սրահի բեմի խորքում դրվել էր Արին բերդի ճակատը խորհրդանշող մի համայնապատկեր՝ սեպագիր արձանագրություններով, որի առջև հեթանոսական տիմի պար կատարեց Բեյրութի բալետի աստղերից մեկը՝ տիկին Ա. Լրքուրը։ Բացելով հանդիսությունը, Թեքեյան մշակութային միության ատենապետ և Վահան Թեքեյան վարժարանի տնօրեն Երվանդ Պապյանը ընդգծեց, որ Երևանը մայրաքաղաքն է համայն հայության, և սփյուռքահայությունը նրա 2750-ամյա հոբելյանը նշում է որդիական ջերմ սիրով ու հպարտությամբ։

«Զարթոնք» թերթի խմբագիր, հասարակական ակնառվոր գործիչ Գերսամ Ահարոնյանը հոբելյանին նվիրված իր խոսքում ասաց. «Եթե Խալդյան մեծությամբ Արգիշտին Մենուայան այս բերդը հոյակապ կառուցեց և կոչեց Էրեբունի, ապա հրաշագեղ վերածնունդ ապրող հայ ժողովուրդը Երևանը՝ այս քաղաքը հոյակապ կառուցեց և կոչեց Երևան՝ մայրաքաղաք Սովետական Հայաստանի»։

* * *

Բեյրութի առաջադիմական կանանց կազմակերպություններից «Շաքե» միությունը սփյուռքահայ կանանց բոլոր

կազմակերպությունների մեջ առաջինը նշեց Երևանի հոբելյանը։

Կանանց կազմակերպած հանդիսությունը մեծ ոգևորություն առաջացրեց ներկաների մեջ։ Միության ատենապետուհի, տիկին Մարի Չիլինկիրյանը ներկաներին բացատրեց Երևանի, նրա հետ սրտագին կապ հաստատելու նշանակությունը սփյուռքի հզորացման և դոյատևման գործում։ Երիտասարդ մտավորական, աղջկանց ամերիկյան կոլեջի դասախոս, տիկին Ազատուհի Սիմոնյանը խոսեց էրեբունի-Երևանի ապրած մերօրյա մեծ առաջադիմության և վերելքի մասին։ «Ամեն մեկ հայ կին պետք է իրեն մեկնագետ դարձնե սփյուռքահայ օջախներուն մեջ ըլլալ դեսպանը հայրենիքի և հայ մշակույթի, որպեսզի ընտանիքի անդամները կարենան քիչ մը ավելի հետաքրքրվիլ հայ դպրոցով, հայ մանուկով, հայ արվեստներով և հայ մշակույթով։ Եթե հինգերորդ դարում գտնվեցան խումբ մը տիկիններ, որոնք ծիրանի և բեհեզ զգեստները թողած և մեկդի ըրած ամեն շքեղանք, պատասխանեցին հրամայականներուն և մինչև այսօր արժանի են հարգանքի, ապա, ուրեմն, որքան ավելի կարևոր է, որ քսաներորդ դարու երկրորդ կեսին ապրող հայ կինը բերի իր պատվավոր մասնակցությունը ազգային հրատապ հարցերու։ Երևանը իր լավագույնը կընե, կմնա, որ անոր 2750-ամյակին առթիվ մենք ևս վճռենք պատրաստ ըլլալ գործելու վասն հայրենյաց և վասն հայ մշակույթի»։

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, 12 փետրվարի 1969 թ.

* * *

Կահիրեում, Հայկական ընթերցասրահի դահլիճում, երկու անգամ տեղի ունեցավ Երևանի հոբելյանին նվիրված շքեղ հանդիսություն։

«Երևանը սիրուն է Հայաստանի և հոգին հայ ժողովրդի», «Երևանը ամենահին, բայց ամենաարդիական քաղաքներից մեկն է», «Երևանը դարձած է ճարտարապետական մեծ կենտրոն մը»։ Այսպիսի վերտառություններ կրող պաստառներով և մայրաքաղաքի տեսարժան վայրերի լուսանկարներով էին զարդարվել հանդիսասրահի պատերը։

Առաջին երեկոյի գլխավոր բանախոսները՝ հայտնի երգիծաբան Ալեքսանդր Սարուխանն ու «Ջահակիր» շաբաթաթերթի խմբագիր Սարգիս Պալայանը, որոնք երկուսն էլ ափիթ են ունեցել լինելու Երևանում, պատմեցին ամենայն հայոց մայրաքաղաքից ստացած իրենց տպավորությունները։

«Երևանը հայ ժողովուրդին համար լույսի այն փարոսն է, որուն պետք է ուղղե ան իր հայացքը գիշեր, թե ցերեկ, անկե ներշնչվելու և ոգևորվելու համար,— իր ելույթում ասաց Սարգիս Պալայանը, իսկ Ալեքսանդր Սարուխանը շեշտեց, որ չնայած Երևանը 2750 տարեկան է, բայց իրականում, վերջին 48 տարիների ընթացքում է նա հասել այսօրվա իր ծաղկուն վիճակին։

Երևանի 2750-ամյակը մեծ շուքով է նշվել արտասահմանի շատ գաղթօջախներում, այդ թվում՝ Հեռավոր Արգենտինայում, Բուենոս Այրեսի «Ֆեդերասիոն դե Սոսիետատես Կաժեկաս» ընդարձակ հանդիսասրահում։

Ելույթ են ունեցել արգենտինահայ հասարակական գործիչ Խուան Տիմիճյանը, «Նոր Հաճբն» հանդեսի խմբագիր Աբրահամ Գրաճյանը և հյուրաբար Բուենոս-Այրեսում գտնվող, Բեյրութի «Արարատ» թերթի խմբագիր Ժիրայր Նաիրին։

Բեյրութի «Արարատ» թերթը նկարազարդ մի գեղեցիկ էջ է նվիրել «Նոր սերունդ» մշակութային միության» նախաձեռնությամբ Լիբանանի ազգային երաժշտանոցի սրահում կազմակերպված գեղարվեստական երեկոյին՝ նվիրված Երևանի 2750-ամյակին։

Երևանի 2750-ամյակը,— գրել է «Արարատ» թերթը,— ինքնագիտակցության և հպարտության նոր ու գեղեցիկ ափիթ ստեղծեց սփյուռքահայության մեջ, հպարտություն, որ արտահայտվեց հայրենասիրական զգացումների մակընթացությամբ։ Երևանի հաղթական ձայնին արձագանքը հանդիսացան Մոնտեվիդեոյի «Արմենիա», Կանադայի Մոնրեալ քաղաքի «Թեքեյան ձայն» հայկական ռադիոժամերը, որոնք ամբողջական հաղորդումներ նվիրեցին մայրաքաղաքի հոբելյանին, պատմեցին հայոց վերածնված ոստանի, հայ ժողովրդի կյանքում նրա խաղացած անգնահատելի դերի մասին։

Մոնրեալի Թեքեյան մշակութային միությունը չբավարարվեց միայն այս ռադիոհաղորդումով։ Քաղաքի լավագույն հանդիսասրահներից մեկում՝ «Ֆլենդրրս հոլի» մեջ կազմակերպեց մի շքեղ հանդիսություն, որտեղ ելույթ ունեցավ միության ատենապետ, Երևանյան հանդիսությունների օրերին որպես հյուր Հայաստանում գտնված երիտասարդ գիտնական, դոկտոր Արշավիր Կյոնեյանը։

ՓԱՐԻԶ, 16 ՀՈՒՆՎԱՐԻ 1969 ԹՎԱԿԱՆԻ

ՏԱՍՍ-ի թղթակից Ռ. Սերեբրյաննիկովը հաղորդում է.

Հունվարի 15-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի սրահներից մեկում տեղի ունեցավ Երևանի 2750-ամյակին նվիրված հանդիսավոր երեկույթ։

Տոնահանդեսին, որ կազմակերպել էին «Ֆրանսիա—ՍՍՀՄ ընկերությունը» Ֆրանսահայ մշակութային միությունը և Ֆրանսահայ երիտասարդաց միությունը (ԺԱՖ), մասնակցում էին մշակույթի ու գիտության ֆրանսիացի և հայ բազմաթիվ գործիչներ, ինչպես նաև սովետական պատվիրակությունը, որին գլխավորում է աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Արամ Արամյանը։

Ֆրանսիայում Սովետական Միության դեսպան Վալերիան Զորինը ներկաներին պատմեց Սովետական իշխանության տարիներին Հայաստանի ձեռք բերած նվաճումների մասին։ Երեկույթի վերջում ցուցադրվեց Երևանին նվիրված կինոնկար։

ՓԱՐԻԶ, 17 ՀՈՒՆՎԱՐԻ 1969 ԹՎԱԿԱՆԻ

ՏԱՍՍ-ի թղթակից Բ. Բուբնովը հաղորդում է.

Փարիզի «Քիմիայի սրահում» երեկ տեղի ունեցավ Հայաստանի արտիստների համերգը, որոնք Փարիզ են եկել՝ մասնակցելու Երևանի 2750-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումներին։ Համերգին մասնակցում էին կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը, Սովետական Միության ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը, Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության և Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական արտիստ Սուրեն Քոչարյանը, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական արտիստ Հովհաննես Բաղալյանը, վաստակավոր արտիստուհիներ Հրաչուհի Ջինանյանը և Անահիտ Ցիցիկյանը։

Համերգն սկսվելուց առաջ նախասրահում, բանաստեղծ Գևորգ Էմինը բաց արեց լուսանկարների ցուցահանդեսը, որը պատմում է Սովետական Հայաստանի ներկայի մասին։ Քաղաքի կյանքի և նրա զարգացման հեռանկարների մասին ներկաներին պատմեց Երևանի գլխավոր ճարտարապետ Էդվարդ Պապյանը։ Փարիզաբնակ կոլեկցիոներ Մաքս Կապանովիչը Երևանի քաղսովետի գործկոմի նախագահի տեղակալ Ա. Արամյանին հանձնեց Մարտիրոս Սարյանի «Էյֆել Մառնի վրա» նկարը, որ հեղինակը ստեղծել է 1927 թվականին։

...Այս երկու հակիրճ ինֆորմացիաներից հետո Ֆրանսիայի հայ և օտար թերթերը գրեցին այն մեծ խանդավառության մասին, որ ապրեցին ֆրանսահայերը և նրանց օտար բարեկամները հունվարի 15—31-ը, երբ Փարիզում, Լիոնում, Վալանսում և Մարսելում, «Ֆրանսիա—ՍՍՀՄ» ընկերության Ֆրանսահայ մշակութային միության և Ֆրանսահայ երիտասարդական կազմակերպության (ԺԱՖ) նախաձեռնությամբ նշվում է քաղաքամայր Երևանի 2750-ամյակը։

«Մենք հավաքված ենք այս սրահում,— իր ֆրանսերեն խոսքում ասաց Ֆրանսիայում Սովետական Միության դես-

պան Վալերիան Զորինը,—նշելու մշակութային մեծ նշանակություն ունեցող մի իրադարձություն՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի հիմնադրության 2750-ամյակը։ Եվ այն փաստը, որ այս հանդիսությունը տեղի է ունենում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնում, ընդգծում է նման միջոցառումների կարևորությունը ժողովուրդների մերձեցման գործում։

Երևանը երկար, հաղարամյակների ուղի է անցել։ Նրա կենսագրությունը բաժանված է երկու անհավասար մասի. 2700 տարվա գոյության համար պայքարի, և ապա՝ բարգավաճման 50 տարի։ Այսօր Երևանը դարձել է Սովետական Միության ամենագեղեցիկ քաղաքներից մեկը։ Նա տնտեսական կյանքի, գիտության ու մշակույթի կարևոր կենտրոն է։ Տարբեր մասնագիտությունների նշանավոր գիտնականներ, գիտության, տեխնիկայի ու մշակույթի նվիրված մարդկանց մի բանակ է ապրում և աշխատում այնտեղ։

Աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Արամ Արամյանը իր զեկուցման մեջ մանրամասնորեն անդրադարձավ Էրեբունիի հիմնադրման պատմությանը և քաղաքամայր Երևանի առօրյային։

Ֆրանսահայ անվանի ճարտարապետ, գետնափոր ճարտարապետության միջազգային միության ընդհանուր քարտուղար Էդվարդ Ութուջյանը, որը մասնակցել էր Երևանում կայացած տոնահանդիսություններին, մեծ խանդավառությամբ խոսեց հայրենական համաժողովրդական հանդիսություններից ստացած իր անմոռանալի տպավորությունների, Երևանի անցյալի ու ներկայի մասին։

Ներկաներին շատ հուզեց ֆրանսիացի մեծ հայասեր Դրնի, Կոշենի թոռան ամբիոնում երևալը։ Նա Երևանի Մատենադարանին նվիրեց 16-րդ դարի հնություն ունեցող այն ձեռագիր մագաղաթը, որը ժամանակին Ռաֆայել Մարկոսյանը, որպես հայ ժողովրդի երախտագիտության առհավատչյա, ընծայագրել է իր մեծ հորը։

Հաջորդ երկու օրերին հունվարի 16-ին և 17-ին Փարիզի ընդարձակ սրահներից մեկում՝ Սալլիմիրում (Քիմիայի սրահ) տեղի ունեցավ գեղարվեստական ճոխ երեկո, որին մասնակցեցին հայրենի արվեստագետներ Գոհար Գասպարյանը, Էլեոնորա Ոսկանյանը, Անահիտ Ցիցիկյանը, Հովհաննես Բաղալյանը, Առնո Բաբաջանյանը, Սուրեն Քոչարյանը, Հրաչուհի Զինանյանը։

Ֆրանսիական թերթերը տեղեկացնում են, որ այնուհետև Հայաստանյան պատվիրակությունը մեկնեց Լիոն, Վալանս և Մարսել՝ մասնակցելու այդ քաղաքներում Երևանին նվիրված հանդիսություններին։

«Բոլոր ձեռնարկները պսակվեցին մեծ հաջողությամբ,— իր նամակում գրեց «Աշխարհ» թերթի խմբագիր Ավետիս Ալիքսանյանը։ Շիմիի սրահի մեջ բազմաթիվ հանդիսականներ ոտքի վրա մնացին ունկնդրելու համար հայրենի արվեստագետները»։

Փարիզի թաղապետական խորհրդի նախագահ, պարոն Բեռնար Ռոշեն կազմակերպեց ընդունելություն ի պատիվ Հայաստանյան պատվիրակության։ Ընդունելությանը ներկա եղան նաև Սովետական Միության դեսպան Վալերիան Զորինը, դեսպանատան առաջին քարտուղար Մարատ Խա-

բազմանը և ֆրանսիացի ու հայ բազմաթիվ անձնավորություններ, մամուլի ներկայացուցիչներ։

Բեռնար Ռոշեն իր բարի գալուստի խոսքում ջերմորեն արտահայտվեց հայ և ֆրանսիացի ժողովուրդների միջև գոյություն ունեցող բարեկամության, Ֆրանսիայում ապաստան գտած հայերի ստեղծագործ ոգու, աշխատասիրության, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ մղված պայքարին հայորդիների բերած քաջարի մասնակցության մասին։

«Հայերը,— ասաց Բեռնար Ռոշեն,—լինի Սովետական բանակում, լինի Ֆրանսիայի դիմադրական շարժման մեջ, հերոսաբար կռվեցին հիտլերականների դեմ։ Բավական է հիշել Մանուշյանի խումբը։ Մեր քաղաքապետության որոշումով Փարիզի փողոցներից մեկը այժմ կրում է նրա անունը։ Հայ ժողովրդի այս կենսունակությունը, մի ժողովրդի, որ դարերի ընթացքում շատ հալածանք ու տառապանք է տեսել, իսկապես ապշեցուցիչ է և վկայում է այն մասին, որ չնայած իրենց անցած դժվարին ճանապարհին, հայերը միշտ հավատացել են ապագային, մի բան, որ ոչ միայն նրանց ապրելու կորով է ներշնչել, այլև նրանց մղել է իրենց հնամյա քաղաքակրթությունը հարստացնելու նորանոր արժեքներով, մի բան, որի համար նրանք իրավացիորեն կարող են հպարտանալ։ Եվ այսօրվա Երևանը, որի բնակչությունը վերջին հիսուն տարում երեսուն հազարից հասել է մոտ ութ հարյուր հազարի, որը ունի համաշխարհային ճանաչում ունեցող Մատենադարան, գիտահետազոտական բազմաթիվ ինստիտուտներ, գիտնականների մի մեծ փաղանգ և մշակութային հարուստ կյանք, հայ ժողովրդի կենսունակության, նրա նախաձեռնող ոգու, տոկունության և աշխատասիրության լավագույն խորհրդանիշն է։ Փարիզը ուրախ է Ձեզ ընդունելու և հանձինս Ձեր իր հարգանքը մատուցելու իր պատկառելի տարիքի ավագին՝ Երևանին, որովհետև երբ ծնվեց Փարիզը, Երևանը արդեն 700 տարեկան էր։

Փարիզյան ընդունելության ժամանակ աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Արամ Արամյանը Բեռնար Ռոշեին հանձնեց Երևանի քաղաքային սովետի գործկոմի նվերը՝ հայ մանրանկարչության շքեղ հատորը և Հայաստանի անտառներից կտրված ու հղկված մի փայտի վրա ամրացված պղնձյա բարձրաքանդակ, որը ներկայացնում է կենաց ծառը՝ երկու կողմերում Արգիշտի թագավորը և թագուհին։

Հայրենի հյուրերի պատվին ճոխ ընդունելություն կազմակերպեց նաև «Աշխարհ» թերթի խմբագրությունը։

* * *

Թեհրանի բարեկամության տան դահլիճում նշվեց Երևանի 2750-ամյակը։ Հանդիսությանը ներկա եղան Սովետական Միության հետ մշակութային կապի իրանական ընկերության անդամները, գրականության և արվեստի գործիչներ, Իրանում սովետական դեսպանության պատասխանատու աշխատողներ և մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ,— տեղեկացնում է թղթակիցը։

Բացելով հանդիսավոր երեկոն Սովետական Միության հետ մշակութային կապի իրանական ընկերության գլխավոր քարտուղար Ֆորուշանին ասաց, որ Սովետական իշխանության տարիներին Հայաստանը դարձել է զարգացած ճարտարվեստի երկիր, հասել գիտության, արվեստի և մշակույթի բարձր մակարդակի։

Վերջին տարիներին ասաց նա,—Իրանի և Սովետական Միության միջև տեղի ունեցած մշակութային կապերի ընդլայնումը նշանակալի չափով վերաբերում է Հայկական Սոցիալիստական Հանրապետությանը։

Երևանի 2750-ամյակի մասին զեկուցումով հանդես եկավ Իրանի հետ մշակութային կապի սովետական ընկերության վարչության նախագահի տեղակալ Արտավազդ Խաչիկյանը։ Նա խոսեց Երևանի պատմության, սովետական իշխանության տարիներին Հայաստանի ապրած մեծ վերածննդի և իրանագիտության զարգացման ասպարեզում սովետահայ գիտնականների կատարած աշխատանքի մասին։ Երեկոյի վերջում ցուցադրվեց վավերագրական կինոնկար՝ Իրանի շահի Հայաստանում գտնվելու մասին, ինչպես նաև «Ժողովրդի զավակները» ժապավենը։

Բարեկամության տան սրահում հանդիսատեսները դիտեցին Երևանը պատկերող լուսանկարչական ցուցահանդեսը։

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ուժերս ներածին չափով ամփոփեցինք «Հավերժական քաղաք» Հռոմից էլ տարեց Երևանի համառոտ կենսագրությունը, նրա հարյուր-հազարավոր այցելուներից շատ քչերի տպավորությունները, ջանացինք ընթերցողին ներկայացնել Հայաստանի նորօրյա մայրաքաղաքի անցյալը և ներկան, նրա կառույցների, պատմական անցքերի, մարդկանց համառոտ բնութագիրը, տնտեսության, գիտության ու մշակույթի ասպարեզում նրա ունեցած դերը համաշխարհային չափանիշով։

Մեր միակ ցանկությունն է շարունակել 2754-ամյա այս քաղաքի պատմության էջերը գալիք տարիների (ուրիշները՝ դարերի) այցելուների տպավորություններով, որպեսզի հավերժության ճանապարհը բռնած այս ուխտավորի մասին ապագա սերունդները փոքր ի շատե լրիվ գաղափար ունենան, որպեսզի բանաստեղծ Վաչագան Վարդանյանի տողերով ասած՝ «Հրաշքը տեղի ունենալու ժամանակ» Երևանը

հիշվի և՛ Էրեբունիի վկայականով, և՛ նրանից հետո՝ հարյուր հազար տարվա հրաշագործությամբ.

Հրաշք եղավ, ու ես մահվան քնից ելա,
Ողջույն տվեցի քեզ հարյուր հազար թվին,
Ուրիշ լույսեր էին քո մայթերի վրա,
Այլ փողոցներ՝ փոխված ամբողջովին։
Ճանաչեցի ես քեզ քո հայկական ոճից,
Քո հայերեն խոսքից սիրտս բացվեց քո դեմ,
Կառուցածն իմ չկար, բայց կար մի մաս ինձնից՝
Աբարելու խորհուրդ, կառուցման տենդ վսեմ։
Եվ ես հպարտ անցա փողոցներով քո նոր,
Որպես քո շինարարն ու նոր քաղաքացին,
Երախտապարտ խոսքով ու լույսերով քո բորբ
Մեծարեցիր դու ինձ հարյուր հազար թվին։

Սարգիս Փիլիպոսի Մուրադյան
Վարուժան Սերգեևի Ոսկանյան

Էրեբունի — Երևան

Խմբագիր՝ Ժ. Ն. Ավետիսյան
Հրատ. խմբագիր՝ Է. Ա. Մակարյան
Նկարիչ՝ Գ. Ա. Խուդինկյան
Գեղ. խմբագիր՝ Ա. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Օն. Ս. Փանիկյան
Վերատեսող սրբագրիչ՝ Ա. Ս. Աբրահամյան

Հանձնարարված է արտադրության 22/VI 1972 թ.
Ստորագրված է տպագրության 3/V 1973 թ.
Թուղթ տպագրական № 1 70×108 1/32 տպ. 9,62 մամ. = 13,47 պայմ. մամ. Հրատ. 9,7 մամ. + 12 ներդիր պատվեր 351
ՎՖ 03106 Տպաքանակ 10000 գինը 59 կ.
«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան № 91։